





792(47.325) [25/1/85] 22003

2-70 25 July, 9.

25 2/3 2/3 2/3 2/3 142.



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ
материалы по истории армянского искусства

ГЕВОРГ ЧИМИШКЯН

МОИ
ВОСПОМИНАНИЯ

Подготовка текста и примечания
МЕЛИКСЕТЯНА С. А.



ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН **1953**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

Հյուսիսային Հայ արվեստի պարսնակաշան

792(47.925)(092 ԳՖԼԵՍԿ)

ՄԱՌԻՆՈՎ Ե. 1907 թ.

Զ. 70

ԳԵՎՈՐԳ ԶՄԵԿՅԱՆ

ԻՄ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Տեխն. պատրաստեց և ծանոթագրեց
Ս. Ա. ՄԵԼԻՔԵԹԵԱՆԸ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1953

22.003

1432

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ



Յեզեքի Զեփյան



ԳԵՎՈՐԳ
ՉՄԵԿՅԱՆ



Գետրգ Չմշկյանը հայ թատերական կուլտուրայի խոշորագույն ներկայացուցիչներից մեկն է։ Նա թատերական և հասարակական տաղարեզ մտավ 19-րդ դարի 60-ական թվականներին և մեծ դեր կատարեց հայ պրոֆեսիոնալ թատրոնի ստեղծման գործում։

Չմշկյանը իր ամբողջ կյանքը նվիրել է ռեալիստական թատրոնի զարգացմանը, առաջ քաշելով ռուսական թատերական առաջավոր արվեստի, ռուսական ռեալիստական դրամատուրգիայի տրագիկոններով հայ թատրոնը զարգացնելու անհրաժեշտությունը։

Նա մեծ դեր է կատարել Անդրկովկասի եզրայրական ժողովուրդների թատերական-կուլտուրական կապերի, հատկապես հայ-վրացական թատերական կապերի ամրապնդման գործում։

Հայ առաջագեմ դեմոկրատական հոսանքի պահանջներին արձագանքելով, Չմշկյանը իր մի քանի գերասան ընկերների հետ միասին հակադրվեց արգեն իր ժամանակն ապրած հայկական հին ողբերգության թատրոնի գաղափարա-գեղարվեստական ողջ սխառմին։

Զրացատելով նոր շրջանի հայ թատրոնի արշալույսին պատմական ոռոմանտիկական ողբերգությունների կատարած նշմարելի դերը, առավել ևս բնավ նպատակ չունենալով միտելու պատմական ողբերգությունների ժանրը, Չմշկյանը իր համախոսների հետ կրակը կենտրոնացրեց կեղծ ու անարվեստ ողբերգությունների վրա։ Խոսելով այդ կղերա-ավատական ողով և հին կանոններով զրված ողբերգությունների մասին, Չմշկյանը և նրա գաղափարակիցներն իրենց ելույթներում նշում էին, որ այդ բանահմա ու բանեռոնի բարոգատերերը թատերասրահը վերածում էին բնայոց պատմությունից՝ ասպակալի ճառեր լսող մի աուդիտորիայի։ Դրանք բերասանին փոխանակ ոգևորելու ճշմարիտ զգացմամբ, հեշտացնում և կապում են նրա սիրտը և թե հոգին։

Չմշկյանը արտառոց էր համարում նաև այգօրինակ անկենդան գործերի խադի ոհր։ Երգային բարձրաձայն արտասանություն, խիստ պայմանական, արհեստական շարժումներ, ըստ մեծի մասին ստատիկայնություն, ճիշ ու աղաղակ, գործող անձերի բեմական արարքների նափաղանցում. ահա սրանք էին դերահասարներին խադի հիմնական գծերը, որոնց նկատմամբ խորը անբավականություն էր տածում կենսական ուժեղ ընկալումներ ու զգացումներ ունեցող Չմշկյանը։

կգերական և բուրժուական շրջանների պաշտպանած հին ոգրերգութ-
յան թաւրոնը մերժելով՝ Չմշկյանը կանգնեց ժողովրդական թաւերախա-
ղերի դեմոկրատական՝ աւալիստական արագիցիաների և ուսւս առաջավոր
գրականութեան քննադատական սեւալիզմից ներշնչված հայ աւալիստական
թաւերագրութեան շաղկի վրաս։ Իրական կյանքի ճշմարտացի արտացոլումը
և ուսւս նշանավոր հեղինակ Օսարովսկու օրինակով ազգային լիարժեք կո-
մեդիաներ ստեղծելը դարձավ նրա զեկեղարած «Անկախ գերաստանական
ընկերութեան» գլխավոր նպատակը։

Իր մի հոգովածում Չմշկյանը նկատում է, որ երբ Գարբիել Սունդու-
կյանի «Ժաթարալան», «Էլի մեկ զոհ», Միքայել Տեր-Իրիզորյանի «Երևոյի
Նշնվիր» 60-ական թվականներին տարձանացան հայ թաւրոնի բնմի վրաս,
նրանք «կիսաառասպելական և կիսապատմական» պիեսներին «կարգացին
ոգրաշարժ սեկվիներ»։

• • •

Շահագործող դասակարգերի հարստահարումը ինչքան ավելի անո-
ղոք էր դառնում, աշխատավորի ընտանեկան հարկի տակ կարիքն ու
հոգսն այնքան ավելի էին լսնանում։ Այդ դաժան իրականութունը բուր-
ժուական մորալի ծնած դարձիկ իրևոյթներից ավելի էր մթաղնում, դե-
մոկրատական մտավորականութեան, այդ թվում և Չմշկյանի հոգում արթ-
նացնելով բուռն վրդովմունք ու հակակրանք։

Այդ իրականութեան դեմ մտառելու համար անհրաժեշտ էր թա-
ւրոնը մտեցնել արդիականութեանը և կենդանի ու վառ պատկերների, ախ-
պարների միջոցով ցույց տալ «եկեղախ մեջ թաղված» հայ բուրժուազիայի
կյանքը և գրախու հասարակական տաժանելի տարքերի դեմ ընդդռնողների
ձգտումները։ Այդպես մտածելով Չմշկյանը կարծում էր, որ հասարակու-
թեան մեջ առաքինութեան դիմակի տակ ապրող «փռած», բայց կենդանի և
չորս կողմը սարսափ տարածող ուժը» թաւերաարանի առաջ մերկացնելով ու
առասիկ զանգեծելով՝ թաւրոնը հանդիսականին կմզի լուրջ խորհրդածու-
թյունների ու եղբակացութունների։

Հայ թաւերագրութունում Չմշկյանն իր այս մտքերի գրական
իրագործման հոգը ուժը միայն Սունդուկյանի մեջ տեսավ։ Եվ հիրավի,
բուրժուական հասարակութեան վրա սուր հայացք սեւոող և, Չմշկյանի
առած՝ «այդ մարմնի ամբողջութեան զզվելի և դարձահոտ մասերը» հուժ-
կու գրչով ցուցադրող Սունդուկյանն էր, որ հատու զենք տվեց գերա-
ստաններին, իսկ վերջիններս էլ կարողացան հիանալիորեն զնահառել ու
օգտագործել այդ զենքը և սունդուկյանական անգերազանցելի կերպար-
ների բնական մարմնացմամբ ուժգին թափով ազդել հանդիսականի վրա։
Այսպիսով, ինչպես հեղինակները, նույնպես և գերաստանները աշխատում
էին արդարացին իրենց թաւրոնին վերապահված հասարակական շատ կա-
րևոր գերն ու նշանակութունը։

Եթե գեմոկրատական մտավորականութունը մտահոգվում էր Չմշկյանի
գլխավորած թաւրոնի վիճակով և աշխատում էր խորհուրդներով ու կոնկրետ
գործերով օգնել նրան, ապա բուրժուական խավերից ելած ինտելիգենցիա-
յից շատերը վարկաբեկելով այդ թաւրոնը, կծու հեղանքով նրա վիճակը
հայտարարել են «կիսամեծ» իսկ Չմշկյանին «կամակոր»։ Նա այդ գրպար-

առաջումն համարելով, ներքին խոր համոզւութամբ շարունակել է գործը, ասելով թիզ քեզ պարսպակնէ իմ սիրած գաղափար, թիզ քեզ Հնչեւ, հալածեն զանազան Փիթոններ (հայ հարուստ—Ս. Մ.)... դու կաս և կմաս անձաւ:

Այս անկեղծ, սրտաբուխ խոսքերը հայ թատրոնի գործի մեջ և նրա համար այրվող, տոշորվող մարգու ազնիվ սրտի պոռթկումներ էին:

* * *

Ռուս առաջավոր դրականությունն ու թատերական ռեալիստական արվեստը Չմշկյանի գրական և թատերական ըմբռնումների վրա խոր դրոշմ էին թողել: Բեյլինսկին, օրինակ, այն հեղինակներից էր, որի գաղափարական և գեղարվեստական սկզբունքները նրան միշտ ուղղություն են տվել:

Չմշկյանը մեծ հետաքրքրութամբ հետեւում էր ռուս ժամանակակից գրական-թատերական կյանքին, ուսումնասիրում էր անվանի արտիստների ստեղծագործական ուղղությունները և նրանց առանձնահատկությունները, ջննում նրանց կերտած կերպարների գաղափարական և գեղարվեստական կողմերը, ինչպես և նրանց աշխատանքի մեթոդները: Ջննական հայացքով գիտում էր 60—70-ական թվականներին Թիֆլիսի բեմում հանգես եկած ռուս տաղանդավոր դերասաններ Յարլոշկինի, Մուզիլի, Սոկոլով-Դրագովի, Անսկու, Պրավդինի և ուրիշների ռեալիստական խաղը, նրան միշտ գրավել է բնական, կենսային, ճշմարտացի ստեղծագործությունը:

Թատրոնն հասկացողության մեջ գաղափարա-բարոյական մեծ իմաստ զննելով Չմշկյանը թատերական գործիչներից պահանջում էր բեմի հանգեպ անհանգեւ և անձնուրաց լինել: Զայրույթով էր արտահայտվում այն ինքնակոչ ու բախտախնդիր Եղերասաններին՝ մասին, որոնք բեմը զարմնում էին հանարակութունից փող կորզելու միջոց, արհամարհելով նրա կրթագաստիկական լուրջ նպատակները: Այդ պատճառով նա մեծ նշանակություն էր տալիս բեմի աշխատողների բարոյական նկարագրին՝ գտնելով, որ թատրոնի այս կամ այն ընթացքը կախված է նաև զրանից:

Խոսելով ռեպերտուարի հարցերի մասին, Չմշկյանը գտնում էր, որ ժամանակակից կյանքը զրահորդ ինքնուրույն երկերով թատրոնն ավելի հասկանալի կդառնա ժողովրդին և ավելի կմտնենա նրա սրտին, եթե նրանք չիմնված լինեն ճշմարտության, բնականության և կենդանության վրա: Դրանք ոչ թե կյանքի սովորական լուսանկարը պիտի տան, ինչպես Մ. Տեր-Դրիգորյանի պիեսներից մի քանիսի մասին արտահայտվելիս նշում է Չմշկյանը, այլ գեղարվեստական խտացած ձևով, տալու են նրա բնորոշ գծերը, այս ու այն երևույթի առաջացման պատճառներն ու հետևանքները, օրիպական հատկություններով օժտած անձնավորություններ, մտքերի բազմակողմանի հարստություն և այլն:

Չմշկյանի կյանքը լի էր ինքնուրույն ժամանակակից դրամատուրգիան զարգացնելու համար մղած մաքառումներով: Նա աշխատել է նոր հեղինակներ գտնել և նրանցից շատերի գործերը բեմադրել, զրգել, հորդորել է եղած թատերագիրներին, ինքն է գրել պիեսներ, դրավոր ելույթներով քաջալերել սկսնակներին:

Սակայն երկու հեղինակ՝ Գ. Սուեդուկյանն ու Մ. Տեր-Դրիգորյանը միշտ Չմշկյանի ուշադրության կենտրոնումն են եղել, իսկ երբ վերջինս

վախճանվեց, Սոււնդուկյանը դարձավ նրա թաւորոնի գլխավոր գրամատուրգը, որին բոլորից շատ բարձր էր գտնում և՛ առհասարակ իր մամանակի հայ գրականութեան մեջ նրան համարում էր մի խոշոր երևույթ: Նրան էր հասել իր հայացքը, նրանից էր սղասում հայ թաւորոնն առաջ մղող պիեսներ, Սոււնդուկյանի ամեն մի խոշոր երկը նա ընդունում էր ցնծութեամբ և դիտում ոչ միայն որպէս հայ սեպիստական գրականութեան նոր նվաճում, այլև իրրեւ հայ թաւորոնի ներթափան հաղթանակ: Եվ, արգարե, Սոււնդուկյանի ամեն մի, մանավանդ նշանավոր երկի առաջին ներկայացումներից, տոնական հանդերձների էին վերածվում: Սոււնդուկյան և հայ թաւորոն—նրա համար նույնանիշ հասկացողութեաններ էին: Նա ոչ միայն մեծատաղանդ արվեստագետ էր, այլև իր գործնական աշխատանքներով հայ թաւորոնի գործի զարբնողներից, նրա բեմի սեպիստական ուղին հարթողներից էր:

Ձմեկյանը գտնում էր, որ հենց այդ ուղիով համարձակ առաջ ընթացու առեղծադրածական մեծ լիցք էր տալիս Սոււնդուկյանի գրամատուրգիական հիմնալի միջոցը: Պանի-քանի անգամ Ձմեկյանն իր իսկ կամքով հանձն է առել սեւ, տեխնիկական աշխատանքներ, որպէսզի օգնի Սոււնդուկյանին թղթի վրա անցկացնելու նրա ստեղծագործական հղացումները: Այսպէս է վարվել նրա հետ ճեպարարայնա, շէպոնա, շէլի մեկ զոյնը, մասամբ և Ամուսինները ստեղծելու մամանակ:

Դառնալով թարգմանական պիեսների՝ Ձմեկյանը անհրաժեշտ էր համարում հայ հանդիսականներին ծանոթացնել այլ ժողովուրդների կյանքի և գրականութեան հետ ու զեռես շատ առհմանափակ խաղացանկը հարցնալու: Դեռևս 1861 թ. հայ մեծ ուսուցիչին զեմուրատ Միք. Նալբանդյանն ասել է, թե ընդ ամենայն թաւորեզ, որ կարող է երևի որեիցե եզրուական քաղաքներում, հարմար է հայկական բեմին: Այդի առաջ ունենալով այն պիեսները, որոնց մեջ ժմրուական ընտանեկան բարքի զեղխութեանը և ավերանքը, որպէս քաղաքակրթութեան հատկութեանը և ներկայացրած, նա այն միտքն է հայտնում, որ այդպիսի հատկութեանները չպետք է պատմաստվեն հայկական ընտանիքի վերա, դա թշվառութեան կրքի: Ապա ավելացնում է. Վերջին աստիճանի քնքուշ է թաւորգութեանը ընտրութեանը. վերջին աստիճանի զգուշութեան կարոտն¹:

Թարգմանական պիեսների ընտրութեան մեջ Ձմեկյանն աշխատում էր շատ զգուշ լինել և նույնն էլ պահանջում էր ուրիշներից:

Նա չէր կարող հավանութեան տալ, օրինակ, եզրուական այն մեղուգրամաներին, որոնցում բուրժուական սեպիցիոն հայեցակետով առաջ էին քաշվում քարաւ և չարիք գաղափարներ: Նա չէր կարող տարվել նաև այն պիեսներով, որտեղ բուրժուական ընտանիքի անկումը միայն ու միայն մեկնաբանվում էր քրիստոնեական—բարոյախոսական տեսանկյունից: Այդպիսի պիեսների օգտագործման տեթիվ նա տնում էր. շէթի մեր թաւորոնի նպատակն է եղել և է առողջ գաղափար տարածել բեմի միջոցով հանդիսականների մեջ, սերնեմ նա պիտի զգուշանա գանազան անխմատ մեղուգրամաներից, գանազան զուգլաներից, շէթեր գ'Արեցոններից և այլ ցնդարանութեաններից, և աշխատեւ միշտ մտնեալ բնականութեանը²:

¹ Մ. Նալբանդյան, Երկեր, հատ. 2, էջ 310:

² Մեղու հայտատանք, 1861 թ., № 222:

Ինքը խաղում ու բեմագրում էր թարգմանական այնպիսի պիեսներ, որոնց, նրա կարծիքով, պարսեանակում էին սողոջ ու լուսավոր դադափաբներ, որոնց այս ու այն չափով քննադատական վերաբերմունք կար սոցիալական ասնադարանաբնականներին, իրավաբանական, գաղափարային նեղ նախադրումներին և բուրժուական կենդ մտային դեմ:

ՔՏ հասարակության պահանջները, քՏ թատերախմբի ստեղծագործական հնարավորությունները և քՏ մանավանդ պիեսների օգտակարությունը՝ նկատի առնելով, Չմշկյանը միշտ ձգտել է ակտիւրաւորը թարմացնել թարգմանական նորանոր գործերով, նրա խնդրանքով, Գրեքերով ու միջնորդութեամբ մի խումբ մտավորականներ պիեսներ են թարգմանել ռուս և այլ մտղավարդների գրամատուրգիայից։ Թարգմանել և փոխադրել է նաև ինքը։ Նա առաջինն էր, որ դեռևս 60-ական թվականներին Քիֆիւսում բեմադրեց ու խաղաց ռուս կլասիկներին Ա. Օստրովսկիի «Ուրբիշի սանակին» մի նստիւր և Ա. Սուխով-Վորիլինի «Գրեչինսկու հարսանիքը», իսկ Շեքսպիրին «Օթելլոյի» և «Լինստրիկի վաճառականին» որոշ գործողություններ (հետագայում խաղաց զերթեւ լրիվ), 70-ական թվականներին բեմադրեց ու խաղաց Շիլլերի «Ամադանները», «Սիւր և խորգավան»-ը։ Նրա հրահրումով «Քիֆիւրի թատերական կոմիտետն» հայ գերատնտեսական խումբը 1881 թվականին առաջին անգամ խաղաց Ա. Գրիբոեդովի «Ենկիթի» պատուհանը։

Ընդհանրապես հայ պրոֆեսիոնալ թատրոն մուտք գործած զերտա-
նական խաղի ռեալիստական ոճի, պրոֆեսիոնալ պատմաթյան սկիզբն առնչված
է Զմէկյանի, Սունդուկյանի, Տեր-Գրիգորյանի, զերտաաններ Ամբիկյանի,
Արամյանի, Ս. Զմէկյանի, Միրազյանի և ուրիշների անունների հետ։ Այնու-
հանգերձ վճռական զերք պատկանում է Զմէկյանին, Սունդուկյանին և Ամ-
բիկյանին, որոնք և՛ իրենց ստեղծագործական տաղանդով և՛ մանավանդ
իրենց բազմաջան, ախտեմատիկ ու համառ աշխատանքով, կարողացել են
բեմում ռեալիզմի սկզբունքներն արձատացնել։ Նրանց համար միշտ լա-
վագույն օրինակ են ճանդիտացել ուսն թատերական ռեալիստական ար-
վեստն ու նրա փայլուն ներկայացուցիչների բովանդակալի ստեղծագոր-
ծությունները։

Վերևում, ասվեց, որ Չմչկյանը գերասանական անրնական ու շինծու խաղի զեմ ըմբռնացել է գեոևս իր բնմական զարծուևնության հենց առաջին տարվանից սկսած: Նրա վերաբերմունքն ալիելի ամբողջողվեց, երբ ծանոթացավ 1885 թ. Թիֆլիս եկած գերասան Թ. Յասուլյանի խաղի ուժին: ԵԴուրս եկավ, — գրում է Չմչկյանը իր Հելիատտակարանում, — որ սաստիկ փառած և հին չկուլայի աշակերտ է եղել. նա ամեն մի խոսքն արտասանում էր մի առանձին շեշտադրությամբ և խոսում էր երգելով, իսկ երբ հասնում էր էֆեկտի սեղրին, հանկարծ այնպես էր զոռում և խաղււյն կտրում խոսքը, որ մինք չէինք կարողանում լսել առանց ծիծաղի:

Ֆասուլյանյանը պղտաճաշ բեմի ուժերից էր, որտեղ 60-ական թվականներին թեն զեռ իշխում էր յուրահատուկ արտահայտություն ստացած կլանիցիտատական պայմանական, կենսապոլարի խաղաղերպը, բայց նրա կողքին առաջացել էր սանտիմենտալ գունավորումով կեղծ մեկոլոգամատիկ-առմատիկական ոճի խաղաձևը, տեղ-տեղ խառնած ևնտիզմի որոշ տարրերով: Սղ պաշ պատանառով զերտաններից ոմանք համակուլություն ունենին ներքաշողնին զա որոշան ևնտիցատական ուղղություն: Վերջինիս հատուկ էին

հետեւյալ գծերը. երգային արտասանություն, որը համաշափություն չէր պահպանում, մերթ ևայնը հասնում էր զոռոցի, մերթ հանկարծակի կաշքովում ու անմիջապէս իջնում՝ չունենալով ոչ մի արամաբանական իմաստ. խաղի ծայրահեղ չափազանցություն և ընդգծում, պոռթկուն շարժումներ, հակադրություններն ուժեղացնելու նպատակով որոշ սանտրիմենտալ գույնավորում, որը երբեմն հասնում էր փաղցրայնության, արտաոցը լինելատարային և այլն: Առաջին խաղակերպը զործադրվում էր ողբերգություններ, երկրորդը՝ մելոդրամաներ խաղալիս: Առաջինի մասին Չմէլյանն ասել է, թե Պուլի հայ բեմում շատաւ հասկացած կլասիցիզմի ուղղությունը ստեղծեց մեկ տեսակ նոր դույնի կլասիցիզմի ողբերգական արհեստ. գերասանը երգում էր ու լաց էր լինում, զոռում և դեռ ու դեռ ընկնում՝ զարհուրելով բեմի վրա և զարհուրացնելով հանդիսականներին, իսկ երկրորդի մասին հեղնանքով նկատել է, թե դա բնույթ հասկացած սեւալական մի խաղակն է: Դրա առիթով այն միտքն է հայտնում, թե Եվրոպայում բեմական արվեստի ուղղությունների մրցությունից առաջ եկավ տասնամիկ շատուստուսություն, որ ծնեց Ֆրանսիայում, Իտալիայում և ուրիշ տեղերում հազար ու մեկ անընական պիեսներ անընական խաղի գերասաններով և սեւալական ուղղությամբ վերնագրով: Այդ ավելացնում է՝ այդ ուղղությունը բաժանվելով մեծ, կանոնավոր բեմերից, սկսեց թափառել այս ու այն կողմը... բնականապէս հասավ Պուլի ֆրանսիացոց և իտալացոց արկածախնդիրների շնորհքով:

1879—82 թթ. Թիֆլիս եկած մի խումբ պոլսահայ գերասանների խաղի ոճի մասին խոսելիս Չմէլյանը ելնում էր գարձալ սեւալիզմի պաշտպանության գիրքերից: Նա նշում էր, որ նրանց մեջ, բարեբախտաբար, կան բեմական տաղանդներ, որոնք աշխատում են ընթանալ իսկական սեւալիզմի ուղիով: Հիշատակում է գերասանուհիներ Լրաշային, Ասադիկին, Միրանույշին, Վերդինե Գարեգայանին, Մարի Նվարդին և այլն: Յույց տալով, որինակ, գերասանուհի Լրաշայի ստեղծագործության սեւալիստական գծերը, այնուամենայնիվ քննադատում էր սեւալիզմին հակասող նրա խաղի որոշ կողմերը: Նա միանգամայն անընդունելի էր համարում բնականը, անկեղծը, հիմարիտը անբնականի, կեղծիքի, սառի հետ հաշտեցնելու միտումը:

Թեև Չմէլյանը բեմական սեւալիզմի մասին ունեցած իր տեսակետներն առանձին չի շարադրել, սակայն նկատի առնելով այս կամ այն հեղինակի, պիեսի, գրքի ու գերասանի մասին զանազան առիթներով հայտնած նրա թույցիկ ակնարկները՝ կարելի է հետեւյալ կարծիքը կազմել.

Չմէլյանը միշտ իր առջև խնդիր է գրել, և նույնն էլ պահանջել է գերասաններից, ոչ միայն պիեսն ուսումնասիրել, նրա կերպարների էությունը փնտել իր բոլոր մտքամասերով, կազակցված հեղինակի նկարագրած իրականության ձեռ, այլև քննել իրենց շրջապատի կյանքը, ըմբռնել այն ամենը, ինչ գտնվում է իրենց շուրջը: Դերասանն իր գրքի բովանդակությունը պետք է ուսումնասիրի այնպես, թինչպես հետազոտում է յուր առօրյան բնությունը քննող ուսումնականը: Որպեսզի հեղինակի գծադրած կերպարին բեմում ավելի բնականություն ու կենդանություն տրվի, գերասանը պետք է այդ կերպարի բնատրվերը որոնի կյանքում և ուշագիւր դիտի նրանց յուրատեսակ գծերը: Այդ ամենից բացի, նա պետք

¹ Շեքսպիր. Հայաստանի, 1981 թ., № 238:

է քեմական կերպարի մեջ զնտեղի կյանքում իր զգացածն ու ապրածը, ինչպես նաև մտածի, զգա գործող անձի հոգեվիճակը, փպտութիւնը և նրանեա դառնա թմեկ հոգի և մեկ մարմին, իսկ բացասական կերպար խաղալիս՝ լինի նրա անխնա դատաւորը: Բազմական չի ուսումնասիրել տիպը, նրա շրջապատն ու գասային հանգամանքները, նրա կյանքը, կամ դիտել իրեն՝ զերառանին շրջապատող իրականութիւնը և քաղել այն, ինչ անհրաժեշտ է քեմական կերպարը մշակելու և կատարելագործելու համար, հարկավոր է նաև արվեստագետի ստեղծագործական երևակայությամբ քեմական կերպարը լրացնել նուրբ դիւրով ու երանգներով, որոնք, սակայն, չպիտի հակասեն տվյալ գրական կերպարի բովանդակությանը: Պարզության, հասկոթյան և ցայտունության հետ միասին, քեմական կերպարը պիտի կառուցված լինի ճշմարտության վրա. գերասանը նրան ներկայացնելիս պետք է լայն ու խոր իմաստ հաղորդի և ընդհանրացնի:

Ձմէկյանը ներկայացման մեջ մեծ նշանակութիւն էր տալիս զերասանների խաղի կուռ համաձայնեցվածությանը, գտնելով, որ անսամբլային մշակված, հղկված խաղարկութիւնն անհամեմատ բարձրացնում է ներկայացման և՛ իմաստը, և՛ նրա զեղարվեստական որակը:

Ինքը որպես Թատերական գործիչ, միշտ առաջնորդվել է վերոհիշյալ սկզբունքներով: Նույն մոտեցումով է զնահատել ու արժեքաւորել Թիֆլիսի Թատերախմբի անդամ-դերասանների ստեղծագործական աշխատանքները և զանազան խորթներով նշել նրանցից շատերի լավագույն գերակատարութիւնները: Այդպես է վերաբերվել նա իր դերասանական զեղարվեստական աշխատանքներին, ստեղծելով քեմական այնպիսի խոր կերպարներ, որպիսիք են Պեպոն, Միքայելը, Բրիլիանտովը, Գուլաբնից Օսեկը, Վիլորենը (Էմիլիոյի սահնակին մի նստիք), Կրեյնսկին (Եղեյնսկու հարսանիքը), Սիլոլովը (Ենկէթից պատուհաս), Վերինը (ըստ Ա. Պուշկինի Բոհոտային կայարանում), Թիլիլին (համանուն պիեսում), Կարլ Մորը (Եմպազակներ), Շեյլովը (Եղեյնսկի վաճառական) և այլն:

Ձմէկյանը հայտնի էր ոչ միայն որպես տաղանդավոր դերասան, այլ նաև որպես հմուտ սեփայնոր Էմեթիոյորը միևնույն է խմբի համար, ինչ որ հոգին մարմնի համար, ասել է նա մի առիթով: Ձմէկյանը Սունդուկյանի հետ միասին նպաստել է Միհրդատ Ամբիկյանի տաղանդի հասունացմանը, դասել ու զորացրել է դերասաններ Գեորգ Միրզայանին, Միլերիչ Ավայանին, Գեորգ Տեր-Պալթյանին, Շամբրամին, նրա անդուլ պարագմունքների շնորհիվ անկն հե դերասաններ Սարգիս Մեհրաբյանը, Քեթևան Արամյանը, Սեֆիկ Մելիք-Նազարյանը, Սաթնիկ Ձմէկյանը, Ամիրան Մանգրիյանը, Արտաշես Սուքիասյանը և ուրիշները: Նրանք բոլորն էլ Ձմէկյանի հետ դարձան անցած դարի 60—70-ական թվականների քեմի աչքի ընկնող ուժերը:

Ձմէկյանի և նրա մերձավոր ընկերների շնորհիվ հայ քեմը 1865 թվականից սկսեց մուտք գործել հայաբնակ գավառներում ապրող ժողովրդի մեջ (Շուշի, Ալեքսանդրապոլ, Երևան, Ախալցխա, Գորի):

Նա չէր սահմանափակվում միայն Թատրոնի գործնական կյանքով: Հոգավածներ էր հրապարակում հայ Թատրոնի պաշտպանության համար, կրակոտ պրոպագանդա էր մղում, պայքարում, առաջարկութիւններ անում, քննադատութիւններ գրում ներկայացումների և ինքնուրույն պիեսների

մասին, կազմում այս կամ այն թատերական գործչի կենսագրությունը, պիեսներ էր խմբագրում, օգնում նրանց հրատարակության գործին և այլն։ 1872 թ. մինչև 1889 թ. ընդհատումներով Չմշկյանը գրել է «Հիշատակարանը», որն ընդգրկում է XIX-րդ դարի հայ թատրոնի զոյսթյան 60—70-ական թվականները։ Դա թատրոնի և նրա գործիչների մասին շատ կարևոր և արժեքավոր տեղեկություններ հաղորդող լավագույն հուշագրություններից մեկն է։

Նա գրադիվ է նաև հասարակական-կուլտուրական այլ տիպի գործունեություններ, ինչպես և հրապարակախոսություններ։

Կյանքով Անդրկոմկասի ժողովուրդների սերտ բարեկամության ամենաշնորհ շատագովիներից մեկը, Չմշկյանը վրաց և ադրբեջանական ժողովուրդների ներկայացուցիչների հասարակական-կուլտուրական ամեն մի նախաձեռնություն իր սրտին շատ մոտ էր ընդունում և բոլոր դեպքերում աջակցում էր։ Օրինակ, զանազան առիթներով ընդգծելով վրաց թատրոնի արդյունավոր գործունեությունը, նա շատ էր ուրախանում վրաց դերասանների հաջողություններով։ Մասնակցում էր վրաց թատերասերների ներկայացումներին, ինքը վրացերեն լեզվով ներկայացումներ էր կազմակերպում, իր հոգովածներում նշում էր վրաց թատրոնի առաջադիմությունը։ Այսպես հետաքրքրական, բուռն ու բազմակողմանի կերպով է ընթացել թատերական այդ բեղմնավոր գործչի կյանքը, որի գործունեություն հիմնական մգիչ ուժը եղել է նրա անուն ժողովրդասիրությունը։

Կըքոտ ու անձնուրաց կերպով մարտնչելով հայ առաջխաղացող թատրոնի հաստատման համար, այդ խիզախ ու անհոգող գինձորը ձգտում էր հաղթահարել թատրոնի ընթացքի առաջ ծառացած խոչընդոտները և նրա զարգացման առաջ լայն ճանապարհ բանալ։ Անս հենց զրա համար էլ այսօր մեր սովետահայ թատրոնի, սովետահայ կուլտուրայի գործիչները բարձր են գնահատում առաջխաղացող թատրոնի այդ առաջամարտիկի կատարած գործի պատմական նշանակությունը։

* * *

Գեորգ Չմշկյանի «Իմ հիշատակարանը» առանձին գրքով առաջին անգամ է հրատարակվում։

Այս հատորի տեքստը պատրաստելու համար հավաքվել, համակարգվել ու կազմվել են ոչ միայն պարբերական մամուլում ջրված և տարբեր տարիներին տպված նրա «Թատրոնական հիշողությունները», այլև այն հուշերը, որոնք թեպետ թատերական չեն, բայց առնչվում են իրեն՝ Չմշկյանի կյանքի հետ։ Նկատի են առնված նաև նրա արխիվում պահպանված որոշ ձեռագրերի այն հատվածները, որոնք չեն հրապարակվել մինչև այժմ, ինչպես նաև հուշերի ձեռով գրված հոգվածների համապատասխան պատասխանները։

Նպատակահարմար համարվեց ներկա հատորում չգետնող նշանավոր արտիստ Գևորգ Աղամյանի՝ Քիֆիսում անցկացրած առաջին թատերաշրջանին (1879—1880 թթ.) վերաբերող Չմշկյանի հուշերի այն հատվածը, որով նա ավարտել է իր հիշատակարանը։ Այդ հատվածը հանդիսանում է Չմշկյանի և Աղամյանի զուտ անձնական փոխադրարարությունների ար-

տահայտութիւն, որը նրանց թառերական գործունեութեան բնութագրման համար առանձին արժեք չի ներկայացնում:

Հիմնական տեքստին կցելով բեմի գործիչներին, թատերագիրներին և հայ թատրոնի անցած ուղու մասին Չմշկյանի գրած կենսագրական կամ ընդհանուր բնույթ կրող ակնարկներին և հոգւածներին հաճելիութեւն՝ «Թատերական գործիչներ» խորագրով, նպատակ է դրվել, ինչքան հնարավոր է, Չմշկյանի ներկայացրած հայ թատրոնի կյանքի պատկերն ու նրա գործիչների կերպարներն ամբողջացնել, հուսալով, որ հայ թատրոնի տարբեր շրջանները հշտրտ պատկերող հեղինակի այդ նյութերը մի տեղ ամփոփվելով՝ արժեքավոր տեղեկութիւններ կտան ընթերցողին և որոշ չափով կզյուրացնեն հայ թատրոնի պատմութեան հարցերով զբաղվող մասնագետներին գործը:

Գրքի խորագիրը վերցված է Չմշկյանից, նրա հուշերը մամուլում լույս են տեսել «Թատրոնական հիշողութիւններ» վերնագրով, սակայն հուշերի ձեռագրերի ծրարի վրա գրել է «Իմ հիշատակարանը»:

Ըստ հնարավորին վերացված են մամուլում հրապարակված հուշերի այս կամ այն տողի, բառի ազավագուծները: Որոշ դեպքերում վերականգնված են խմբագրութիւնների կատարած ֆնջումները:

Համապատասխան տեղերում իր իսկ հեղինակի գրած այլ նյութերից յրացուցներ են արված:

Քանի որ Չմշկյանը իր թատերական հուշերի բազմաթիւ դրվագներին համար համապատասխան վերնագրեր է դրել, կազմողը նույն սկզբունքը կիրառել է այդպիսիք չունեցող հատվածներում, ըստ որում այդ վերնագրերն առնված են սուր փակագծերի մեջ:


Էջատակում աստղանիշերով արված ծանոթութիւնները, երբ Չմշկյանին են, նշված է «Մամոք. հեղինակի», որտեղ այդպիսի նշում չկա՝ տեքստը պատրաստողին են:

Ս. Մելիքսեբյան



ԻՄ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ





Գարբիկ Սունդուկյանը, երևելի Պեպո պիեսայի հեղինակը, սովորություն ուներ ամառվա ամիսներն անցկացնել Քիֆլիսից զուրա, Կրծանիս անվանված շրջակայքում, մեկ այգիի մեջ, որը պատկանում էր Նորա կնոջ հորորը: Սունդուկյանի հետ ես կապված էի սերտ բարեկամական հարաբերություններով, հայ Թաթրոնական դադափաթի պատեռնով: Նա սիրում էր այդ դադափաթը և համակրում էր Նորան այնքան, ինչքան երբեք չէր կարող սիրել մեկ ուրիշը Նորա կենսական թի պաշտոնական գրության մեջ գանձելով:

1871 թվականին Պեպո կոմեդիան առաջին անգամ (Քիֆլիսի Քաղաքային Թատրոնում) ներկայացնելուց հետո, Սունդուկյանի ընտանիքին ծանոթ մեկ ֆրանսիացի օրիորդ, Լիզա Վադե անունով, որը Պեպոյն գրելու ժամանակ Կրծանիսում միշտ անբաժան էր մեզանից ու որին մենք մահն մեկ քանի տեսարաններ գրելուց հետո իսկույն Թաթրոնում էինք գրած-ներխ բովանդակութունը, նվիրեց ինձ մի փոքրիկ տետր, բազկացած մոտավորապես 15 թերթից, կազմված ութական ծալով ժաշուր թղթից, Կազմի մեկ երեսին օրիորդը կարել էր գարուսի թելով զեղեցիկ գուլպական տեսարան, իսկ մյուս երեսին տպված էր սկիզբոս առերեմով Պեպո:

Հանձնելով ինձ այդ տետրը, հարզելի օրիորդը ցանկացավ, որ ժամանակով ես գետեղեմ Նորա մեջ իմ Թաթրոնական գործունեությունից ստացած տպավորություններս: Պեպո-ի հեղինակը Նույնպես գրեց ինձ վերա մեկ քաղցր լուծ, այն է՝ բխստովանել ելծարտությունը:

Սկսենք ուրեմն ելծարտությունից և պատմենք այն, ինչ որ եղել է և անցել Նորա սրբազան սահմանագծում:

Սո պիտի սկսեմ շատ հեռու անցյալից, որով և առիթ պիտի տամ իմ անձնականության զեմ նախապաշարված անձանց կարծել, որ գրելով այս տողերս, ես կամենում եմ բերոսանալ... Տխուր և ծագրելի կարծիք...

Իրավունք եմ տալիս ինձ քրթրել իմ ծննդյան օրիցս, Նիշդուկյանս չափ: Եվ եթե անաշտ ընթերցողս տեղտեղ կդանե հետաքրքրության արժանի հարցեր, որ ստիպեն Նորանց մասին մտածել, դա կլինի ինձ վարձատրություն:

Հեղինակ

* Այս Վերջու խոսքը Զմեկանը գրել է 1880-ական թվականներին:

<ՍԿՋՐԵԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>

1

1815 կամ 16 թվականին հայրս գաղթել էր Մշուց, Թոփրաղ-Ղալա անվանված գավառից, յուր հոր ու նորա ամբողջ ցեղի հետ:

Գաղս, իբր ամենքից հասակավորը յուր ցեղի մեջ, դառել է պարս-գլուխն այդ գաղթականութան:

Նոքա գաղթել են միշտ զեպի էջուտիս, ինչպես ավանդված է եղել ամբողջ այդ ազգատոհմին նորանց մեջ հեղինակութուն ունեցող մեկ ձե-րունուց:

Անցնելով Ալեքսանդրոպոլից, որը այդ ժամանակ անվանվելիս է եղել «Գյումրի», այդ ցեղի ընտանիքներից մեկը Մեում է այդտեղ. մյուսները շարունակելով յուրյանց ընթացքը զեպի հյուսիս, թողնում են մեկ ուրիշ ընտանիք «Բարալագյոզ» լեռան ստորոտիքում: Վերջապես պաղս, զեց թե-յոթը ընտանիքներով, հասնում է Թիֆլիս¹:

Հայրս այստեղ պսակվում է մի զեղեցիկ օրիորդի՝ մորս հետ², ծա-գումով վաղարշապատից, վարդանաբարյան ազգատոհմից, և ամուսնության ութերորդ պտուղը լինում եմ ես:

Հայրս որմնադրի արևեստի պարագամունքից անցնում է Հովհաննես կա-թողիկոսի «փոքրավորի» պաշտոնին, հետո դառնում է քահանա և այդ ժա-մանակ աշխարհ եմ գալիս ես, երրորդ արական զավակս³, 1837 թ. մարտի 7-ին, ուրբաթ օրս⁴: Իմ երեխայության հիշողությունս սկսվում է այն րոպեից, երբ ես առաջին անգամ զգացի հացի ճաշակը, որն ինձ շատ քաղցը թվաց:

Երկրորդ նշանավոր ապավորություն ունեցող հանգամանքն այն էր, որ հայրս տարավ ինձ սբ. Սարգիս անվանված եկեղեցու Հովհաննես տի-րացուի ծխական դատաւարանը, մոտավորապես 1845—46 թվականներին, ուր գտա երկու հսկայազեմ աշակերտներ՝ «Ղարամանիայի»⁵ վրացերեն ձեռագիր հաստ գիրքը ձեռներին, զեբրի էությունը փոքրիկ մանուկներին բացատրելիս:

Այդ հսկայազեմ անձնավորություններից մեկի անունը էջուտիս Սար-գիս էր, մյուսին, որ Սարգսից վիթխարի, մոտավորապես 22 տարեկան անձնավորություն էր, և որից սարսափում էին ամենքն, անվանում էին «Փիրագով»:

Ուսումնարանի միակ կառավարիչ և ուսուցչիչ պաշտոնակատար անձն էր՝ մեծաքիթ տիրացու Հովհաննեսը, որը և ուսուցանում էր «այր-վե-ջե-

քառ հայերեն և թագ-բուհի-վեդի-գլազու (գլազու) ուսանեան, աջ ու ձախ խնչելով և քանոնի հարգածներ տեղադրով սորա-նորա զլխին, բացի երկու հսկայական զիթթարիններից, որոնց վրա նայում էր պատկառանքով միայն:

Ահա իմ սկզբնական կրթության պարագայքը: Վերոհիշյալ հսկաններից Վարամանիային առիթով (որի պատմությունը ես անգիր գիտեի իմ բիձա Խնչոյից) վրացերեն բանա-բանա և տիրացու Օհանեսից ուսանեան շեղեցի-գլազու սովորելուց հետո, հայրս ինձ տարավ Ներսիսյան ուսումնարան:

Այստեղ շեղեցի-գլազուին փոխանակ, ուսուցիչ լեզվի մեկ ինչ որ ուսուցիչ, տիտուլյարնի սովետնիկ, ազգանունով Գապարյանի պատանեցի, անագին ծանրակշիռ քանոնը ձեռքին:

Թե ինչքան իմաստության տեր դարձաւ այդ սքանչելի տիրացու ձով-հաննեսի Վարամանիային, շեղեցի-գլազուին և տիտուլյարնի սովետնիկ ուսուցչի ազգեցությանց ներքո, չեմ հիշում, միայն այսքանը գիտեմ, որ 1847 թվականին մոտավորապես, պատանեցի միենույն Ներսիսյան ուսումնարանում ինձ համար անհասկանալի ուսուցիչներ, որոնցից մեկը ֆրանսերեն շարիկոնֆլեքս* և Եկոնկոմորա** ծաղրելի ինձ համար արտասանություններով էր խեղդում ամբողջ դասատունը, ինքը գերմանացի Բիրոն ազգանուն կրելով, մյուսը՝ Կիրիլենկո անունով պատկանելի ուսուցիչն էր, որը սուրբ պարտականութիւն էր համարում յուր համար դասատուն մտնելու պես պահանջել նախ բողոքի, հետո Ձիմիշկով, այսինքն ինձ:

Այս պարոնը նախ հարցնում էր ինձանից. «Что такое остров?», ես էլ օտարով (կղզի) բառի նշանակութիւնն այնքան էի հասկանում, ինչքան մեր ֆրանսերեն լեզվի ուսուցիչ գերմանացի Բիրոնը հայերեն:

Հետեապես աշխարհագրության պրոֆեսոր Կիրիլենկոն ինձ պատկեցնում էր Դաստան մէ! ունի, հասալի վրա և բողոքու լուսավորող հարգածները թափում էին քամակիս:

«Օտարովի» հետ հրապարակ եկավ պոլուստարով (թերակղզի): Ես բթացա, Կիրիլենկոն կրկնապատկեց բողոքու հարգածների քանակութիւնը: Ես բողոքեցի մորս, նա կարեց ինձ համար հաստ արխալուզ, որի հովանավորության ներքո և, ես օտարով եստ պոլուստարով արտահայտելով, քաջի նման, չսպասելով Կիրիլենկոյի հրամայական լոծիսին (պառկիթ) ձգվում էի հասալի վրա հերոսութեամբ, առանց որեիցե ցավ զգալու, առնում էի բողոքու հարգածները, թեև ցույց տալու համար հարգելի պրոֆեսորին, որ ցավում է՝ ազգականում էի:

Այդ ամեն բանը կատարվում էր մեկ հաղթանդամ հայ մարդու հրաշարարության իրավասության ներքո, որին անվանում էին իշխան Արդուախնիկ:

Հետո... 1848 թվականին, եթե չեմ սխալվում, տեսուչ նշանակվեց նույն ուսումնարանում Պետրոս Շանշյանը:

* Ֆրանսիական ուղղադրական-ֆոնետիկական նշաններից մեկը, որ զօրժ է անվում օ և 1 ձայնավորների վրա:

** (Ֆր.) Վարունգ:

Հիշում եմ, որ մենք, բոլոր աշակերտներս, մեկ սաստիկ բուռնությամբ արհեստական զենք ինտրիգներ լարելու պատեհառով:

Հետո այլևս ոչինչ չեմ հիշում, մինչև հայր Գաբրիել Պատկանյանի տեսչությունը:

2

Այդ անցքը պատահեց Ներսիսյան ուսումնարանի ամենամտաբխալիս ժամանակամիջոցին: Շանյանին հետաքրքել էին, կարծեմ, զանազան ինտրիգների գրգռմամբ:

Հայր Գաբրիելը, տեսուչ լինելով, հանձն էր առել և անցնել բնագահուր պատմություն բարձր դաստասան մեջ, որի թվում գտնվում էի և ես 1849 թվականին:

Այդ թվականից սկսած մինչև 1854 թվականը իմ վերջնական ուսում ավարտելու արժուենական հոգաշտփական փակ ուսումնարանում, երբեք ևս չէի պատահել այդպիսի մի հետաքրքիր ուսուցչի, որ կարողանար գրավել այնչափ աշակերտների ուշադրությունը առանց շինծու արտիստական միջոցների:

Նա պատմում էր մեզ Տրոյացվոց պատերազմը: Բայց ինչպես էր պատմում... Նորա պատմելու ժամանակ մենք զգում էինք մեզ այդ հին, անցած, հոմերոսական առասպելական դարում: Ձգում էինք մեզ այն երկրների վերա, Միջերկրական ծովի ափում, հելլենական ցեղերի շրջանում, ապրում էինք նորանց կյանքով, ախրում կամ զվարճանում, նայելով թե ինչ անցք էր պատմում մեզ նորապար հետաքրքիր:

<ՌՈՒՍԱՆՍԱՆՈՒՄ>

3

Գաբրիել Պատկանյանին հետաքրքին, թե ինքը հետաքրքիր, ինչ հայտնի չէ, միայն ես ևս կարճ միջոցում հետաքրքիր Ներսիսյան ուսումնարանից, ձգտելով ըստ ցեղական ավանդության՝ զեպի շնչուսիս:

Մտեցնելով, Պետերբուրգ իմ երեսակայությունս համար մեկ տեսակ ավանդական աշխարհ էր, ուր գիտությունը և կյանքը, ամեն տեսակ հաջողությունները պիտի թափվեին զլիսիս, ուր ևս շատ մեծ և շատ լավ մարդ պիտի գտնայի:

Երեսակայությունս սկսում էր հոգնել քաղցր հուսով լի ապագայի նախատեսությունից, և ես, օրըստօրե, առավել զրգովելով, վերջապես ստիպեցի խեղճ հորս ուղարկել ինձ զեպի այդ ավետալուց երկիրը:

4

Հիշում եմ, ինչպես հայրս հանձնեց մեկ լեհացի աստիճանավորի 70 ասուրի, մեծք բերած ով գիտե ինչ տիտուր միջոցներով, և օրհնելով ինձ, նախապես զցեց այդ լեհացու հետ, որը երբեք մատաղահաս երեխաներով (երկուսը իր սեփական զավակներն էին, իսկ երրորդը որդիկ էր) գնում էր Պետերբուրգ, ուր, հուսով էր հայրս, ևս կգտնեմ իմ ավագ եղբայր Գրիգորին կամ նորա բարեկամներին, որ կարող էին ինձ բուրդություն անել:

* (Ծբ.) Հմբատություն, Կուզմունք:

Երեսուն օր ճանապարհորդում էինք: Վերջապես հասանք Պետերբուրգ: Մասնք այդ քաղաքը լուսնյակ գիշեր: Հունիսի սկիզբն էր:

Ի՞նչ փառավոր գիշեր էր և ինչ համար բնության նոր արտահայտություն...

Ես նկատեցի ցերեկը զեպի գիշեր փոփոխվել: գիշերն այնպես լույս էր, որ տասներկու ժամին գիշերվա Պետերբուրգ մեր մոտ ժամանակը, ինչ թվում էր, որ լույս ցերեկ է: Քաղաքը մանկիս, մենք անցանք մեկ անտառով:

Արթուն նստած էի իմ հոգաբարձու լեհացու գիմաց, սրի մանուկները քնել էին, աշքերս ու ականջներս սրած զես ու զեն էի նայում:

— О, чисто европейский город, — բացականչեցի ես, երբ, անցնելով Օրուխովսկի անվանված փողոցով, հաժախեցի մեկ մեծ շինություն մտաջ կանգնած արձանի, որի ստորագրություն իրարու գրկած մեկ տղա ու աղջիկ տեսա:

— Դու լոբբ, հիմար զուխ, — վանց լեհացի հոգաբարձուս, — այս քո Թիֆլիսը չէ:

Ես վերադարձվեցի և այնուհետև մինչև մեր հյուրանոց իջնելը, ոչընչով այլևս չհափշտակվեցի:

Առավոտը կանուխ գուրս թոս հյուրանոցից, վերցրի մեկ ավանկաձ (մեկձիանի կառք) և քեցի ուղղակի Նեսկի պրոսպեկտ անվանված փողոցը, որ իմ երեխայական երեսակայությունս վրա հիմնվելով, ես պիտի իսկույն ամեն տեսակ հաջողություն գտնեի:

Երբ մոտեցա այդ հռչակավոր փողոցին, կառապանն ինչ հարցրեց, թե ո՞ւր եմ կամենում իջնել: Ես անվանեցի հայոց եկեղեցին: Կանգ առանք մենք մեծ շինություն առաջ, որի բակի մեջտեղը դանվում էր եկեղեցին: Ի՞նչ, և վճարելով կառապան Վանկային, եթե չեմ սխալվում 30 կոպեկ, մոտ այդ մեծ շինությունս բակը: Վանկան հեռացավ, ես Մնացի մենակ: Նայեցի շուրջս և զգացի, որ ես որը եմ, անտեր, առանց ապավենի, առանց ծանոթի, որ կարողանար ինձ բացատրել, թե մեր եմ ես, ում պիտի գիմեմ, որ հոգան իմ մասին:

Հինգ բուպի չափ Մնացել էի անշարժ: Դարձյալ նայեցի շուրջս և նկատեցի եկեղեցու մուտքը:

Այստեղ երեի մզախ (ժամկոչ) կա, մտածեցի ես, նա ինչ կբացատրի...

Վազեցի զեպի այդ մուտքը, դուռը կողպած է...

Դարձյալ նայեցի շուրջս, ո՛չ ոք... Արտասուքը վազեց աշքերիցս, ես սկսեցի լալ և հուսահատ բնկա քարի սանդուղների վրա...

Թիֆլիսը, պատկանելի քահանա հայրս, եղբայրներս, քույրս, դասակից բնակիչներս ֆանտասմագորիայի նման անցան աշքիս առաջ իրարու ետևից:

— Ա՛խ, աստված, աստված, — բացականչեցի ես ու թմրեցի հուսահատությունիցս...

Մեկը մոտեցավ ինձ:

Մոտեցավ, որովհետև նորան գրավեց, կարծեմ, իմ հագուստս: Մոռացա ասել սկզբում, որ Թիֆլիսից գուրս գալու օրիցս, ես չերեզվ անվանված հագուստով էի, այսինքն կովկասյան լեռնաբնակ ժողովրդական հա-

դուստրով։ շաւից բռնկոն, բրդի գլխարկ և մեջքիցս կախ տրած փռքրիկ խոնչաւ։ Սթափփեցի և կանգ առաւ։

— Ո՞վ ես գու և ո՞ւմ ես ուզում,— հարցրեց ինձ կիսախիսա, կիսամեղմ ունով մեկ եմբողական հագուստով երիտասարդ։

— Իմ ազգս Զմշկյան է, քահանայի որդի եմ,— պատասխանեցի տրտապօքով։

— Զմշկյան, իմ դասակից Ալեքսանդրի կրօնքը։

— Այո՞...

— Որք հազարյանց ճեմարանում ավարտեց իր ուսմամբ։

— Այո՞...

— Իսկ գու ինչո՞ւ համար ես եկել այստեղ։

Պատասխանեցի հայացքով, աչքերս լի տրտապօքով։

Պարոնք հասկացավ։

— Արի, զնանք ինձ ձոտ, տեսնենք...—ասով Աղափիրյանը, Գորպատի համալսարանի երրեմեի ուսանող, այժմ, տղերս գրելու մասնակ, եպիսկոպոս է, որի այդ ծայրագոյն հոգերս աստիճանի դրության մեջ կբածն աշանունը գիտեմ և աշո՞ւր լինելը։

Գնացի՞նք պարոնի հետ, բարձրացանք շատ սանդուղներով և մասնք իբարու հետ կից լուսավոր և մաքուր սենյակներ։

Առաջին սենյակը մանկու պես Աղափիրյանը մայն ավեց, գիմելով գեղի մյուս սենյակը։

— Գողթի՞ս...

— Ո՞վ է,— հարցրեց մեկ մայն և գուրս եկավ մեկ լավ կազմվածքի տեք, հաստ և պինդ, միջահասակ երիտասարդ։

Նա նայեց ինձ համարձակ, իսկ ես աչքերս գետին գցեցի մահապարտի նման։

Աղափիրյանը բացատրեց պարոնին գերմաներեն իմ ով լինելու, և ես ըմբռնեցի նորա ասածը, քեկ ոչ մի խոսք չգիտեի գերմաներեն, որովհետեւ շատ անգամ կրկնփեցավ այդ լեզվով «Զմշկյան, Զմշկյան» ազգանունս։

Մինչև նոքա զբաղված էին իրանց, կարծեմ, կիսաուսում գերմաներենով, ես աչքի տակ առաւ մտած սենյակիս որդիսությունը և դառա, որ նորա մեջ շատ հայերեն գրքեր կան։

— Ո՞ւմ հետ եկար գու, այստեղ,— վճռեցին հարցնել ինձ հայերեն պպ. Աղափիրյան և Գողթիյան գերմանագետ երիտասարդները։

— Գոսնիժսկու հետ,— պատասխանեցի ես, համոզված, որ նոքա գիտեն պարոն Գոսնիժսկու ով լինելը։

— Բայց որան՞դ իջաք։

— Ձեմ գիտի,— պատասխանեցի հուզված ու լռեցի։

— Բայց ո՞ւմ ձոտ ես եկել,— տանջեց ինձ Աղափիրյանը։

— Ձեմ գիտի, ես ունեմ նամակներ ու մի բան գիտեմ,— շարունակեցի ես վստահութամբ,— որ այստեղ կա մեր նախկին տեսուչ Շանչյանը և որ իմ մեծ եղբայր Գրիգորն այստեղ շատ բարեկամներ ունի և ինքն էլ գուցե այստեղ է։

— Ա՛,— բացականս Աղափիրյանը, և օկվեց գերմանական գիտնողաբանությունը։

Ի՞նչ աշխարհ միշտ ուղղված էին դեպի Վենետիկի տաղաքություն դե-
ղեցիակազմ հայերեն գրքերը:

Եստ երկար խոսելուց հետո, երկու նորագյուտ բարեկամներս հան-
կարծ սկսեցին սանրվել, զարդարվել ու գուրս գնացին սենյակից, դռից
բանալիքով պինդ կողպելով գուռը:

Ես Ֆեայի միայնակ չորս պատի մեջ. ուրեմն պետք էր, որ հետա-
քաքսվեի իմ շրջակայքովս, նկատած կարմիր կազմով հայերեն գրքերովը,
որոնց մեջ ես հույս ունեի գտնել հայր Գաբրիելի՝ մեզ, ներսիսյան ուսում-
նարանի աշակերտներին ավանդած Տրոյական պատերազմի անցքերի մա-
սին տղված տեղեկություններ:

Բանալիքի վերջին չիկոցը լսելու պես, իսկույն հարձակվեցի կար-
մբարկազմ գրքույկների վրա և գտա իմ ցանկացած ստուգությունները
հոմերոսական պատմության՝ վերաբերյալ:

Առաջին գրքույկի երկրորդ և իսկ երեսին մեկ հազթանգամ մարդու
նկարված պատկերի տակ կարդացի՝

Լիցիա և գուռը և ես
Բաշ արուստից շուք աղբի:

Ուրեմն սա, վճռեցի ես, չեկտորն է. քաջ, ազնիվ, միշտ հազթող, յուր
կրասեր եզրոր Պարիսի՝ անբարոյական ընթացքին զոհ գնացող հերոսը՝
հանուն արոյական ցեղի պատվի:

Այդպես ես, հափշտակվելով՝ այդ գրքույկով և նորա միջի պատկեր-
ներով, շնորհակցի, թե ինչպես անցավ մամանակը, որը մոտ էր կեսօրին:

Փորս քաղցեց, բանաստեղծական հափշտակությունս անցավ. Մո-
սացել էի, որ գուռը վրես կողպել էին, մոտեցա որ բանամ և... ձեռքս
չհասցրած դռանը, հիշեցի, որ ես կողպված եմ սենյակի մեջ:

Ընկա տխուր մտածմունքների մեջ:

Ինչ՞եւ եւ ինչ բանաբանել, մտածեցի ես, մթթե այդ երիտասարդները
կարծում են, որ ես անբարոյական երեխայի մեկն եմ, որ կարող եմ, օգուտ
քաղելով նորանց հյուրասիրությունից, կողպպալել նորանց... Եվ ինչ՞...
մււր տաներ կողոպուտը:

Սկզբում շվարեցի, հետո հուսահատվեցի և տպա անիծեցի իմ Թիֆ-
լիսից գուրս գալու օրս:

Ինչքան մամանակ Ֆեայի փակ դռն աստի՜ կանգնած, դառը մոտատան-
ջություն մեջ, չեմ հիշում, միայն վերջապես գուռը բաց արին դռից և մոտն
ինչ բանաբանող բարեկամներս և հրավիրեցին գնալ նորանց հետ ճաշելու:

Այդ երկու նորագյուտ բարեկամներս շատ տարօրինակ մարդիկ էին:
Երկուսն էս մի տեսակ հասկացողություն, կարծիքի և ըստ երևույթին մի
բնավորության տեր մարդիկ էին: Երկուսն էս Լազարյանց ճեմարանի
աշակերտ և, կարծեմ, Գորպատի համալսարանի կիսավարժ ուսանողներ
էին, բայց հաստատ բնավորության տեր հայ երիտասարդներ էին:

Աղափիրյան, Դոդոն, երբեք ես ձեռ չեմ մոտանա...

Ես շատ ափսոսալով հեռացա բանաբանության սենյակիցս, ուր Ֆեայ
իմ հոմերոսի կարմրակազմ գրքույկը, բայց և ուրախացա, կարծելով, թե

լամ կ'ընտրասիրեն ինձ, երկար ժամանակ իրանց ուսումնազարդ սենյակում
անսթի թողնելուց հետո:

Բայց, ա՛մա՛հ, Զանազան ծառածուռ փողոցներով երկար պատելուց
հետո մասնաճ մեկ սենյակումն ահա, ուր միայն մեկ պալլադորկա (չոր-
քա) ուտեցրին:

Այստեղից բարեկամներս առաջարկեցին ինձ գնալ տեսակցության
Շանշյանին, որին ես սաստիկ ցանկանում էի տեսնել, հուսալով, որ նա
կհոգա իմ մասին:

Այդպես էլ եղավ: Պետրոս Շանշյանը ինձ տեսնելու պես զրկեց, փայ-
փայեց և շնորհակալություն անելով իմ նորագյուտ բարեկամներս, որ
ինձ տարան իրա տուն, ինձ պահեց չուր մօտ, տեղավորելով մեկ սիրուն
փոքրիկ սենյակի մեջ, լի զանազան զեղեցիկազմ գրքերով:

— Մնա այստեղ, զավակա, — ասավ նա ինձ, — մինչև կհոգանք քո
մասին:

Օհ, ինչ լավ էր այդ փոքրիկ սենյակում, որի երկու պատուհանը
նայում էր մաքուր քարանձակին: Մենյակ մտնելու պես, վերցրի փոք-
րիկ զրադարանից մեկ հասա պատկերազարդ Փրանսերեն գիրք և սկսե-
ցի թերթի, երբեմն ուշադրություն դարձնելով մեկ քանի նախադասու-
թյունների վերա, որի մեջ, հիշելով Բերանից ավանդած ինձ, ի շարս ժղոն-
կամբք և այլ խրթին բաների, և *mère, père, fils*,* բառերի նշանակու-
թյունը, որից, բոտ իմ երեխայական հասկացողության, եզրափակում էի
մի զազափար, համեմատ զեղեցիկ պատկերների իմաստին:

6

Մի քանի օրից Շանշյանն իմ նորագյուտ բարեկամներս հետ խոր-
հրդակցելուց հետո, որոշեց առաջ ինձ ուսանելու մեկ օրերից արհեստ,
որովհետև արքունական ուսումնարան մտնելու համար ես չունեի հետա-
յիմ ծննդյան վկայականս:

Մյուս առաժոտն Աղափիրյանը տարավ և հանձնեց ինձ մեկ հարուստ
ոսկերչի գործարան նեակի պրոսպեկտում:

Սկզբում այդ գործարանն ինձ դուր եկավ, բայց երբ երեկոյան ցույց
աճին իմ ննջելու տեղս, ուր, մտնելու համար պիտի առանց սանդուղի
մի սաժեն բարձրանայի մեկ հաստակազմ աշակերտի օգնությամբ և հետո
մտնելի մեկ կատարյալ հավարուն կամ արջի բնակարան, որտեղ կարելի
էր միայն նստել և քնել առանց սաքի վրա կանգնելու, երկու հաս շոր
առխառակի վերա, այն ես երկու հոգով, ես, անիծելով ոսկերչությունն էլ,
և ամեն տեսակ լուսավորությունն էլ, թողի գործարանը և փախա, գնացի
Շանշյանի մօտ:

— Չէ՛, պարոն տեսուչ, — ասացի ես, — այդ իմ տեղս չէ, ես այդտեղ
ոչինչ արհեստ չեմ կարող սովորել:

Իմ ննջարանս նկարագրելուց հետո ավելացրի, որ Պետերբուր-
գում ես բան չեմ կարող շինել, ուրեմն լավ կլիներ, եթե գառնայի հայ-
րենիքս, ուր կարող էի մեկ ելք գտնել ինձ համար:

* (Չբ.) Մայր, հայր, որդի:

Վերջապես փախա Պետերբուրգից:

Նկա Մոսկվայա Մյգանդ եւ ուզեցա փորձել մաքաւելու իմ բախտիս զեմ:

Նմե ինձ չհաջողվեց մտնել տրքունական ուսումնարան, չհաջողվեց սահերշտիթյուն սովորել, մտածեցի եւ, մեկ խոսքով, եթե ինձ չհաջողվեց Պետերբուրգում, կհաջողվի գուցե Մոսկվայում, մանավանդ, որ այնտեղ էր Լազարյանց ճեմարանը, հայ երիտասարդութեան համայն շտեմարանը, որտեղ սովորուել էր յուր ուսումը եղբայրս և նորա մեկ քանի ընկերները, որոնք համարվում էին Թիֆլիսում այդ ժամանակ ամենակատարյալ ուսումնականներ:

Այստեղ ընկա մեկ բախտախնդիր տիրացուի ձեռքը, որը լսելով, թե եւ կամենում եմ փորձել Լազարյանց ճեմարանը մտնելու, խորհուրդ տվեց դիմել ուղղակի Շնորին գերազանցութեան, չգիտեմ որ Լազարեին, որ այդ ժամանակ գտնվում էր Մոսկվայում և ամեն օր համարյա այցելում էր ճեմարանը:

— Նա շատ բարի մարդ է, — ասաց ինձ տիրացուն, — և ազգասեր: Գնա ճեմարանը վաղը մայիսի 10-ին, նա այնտեղ կլինի, աղիողորմ ձեռք խընդրի, — եւ կընդունի քեզ:

— Ինչպե՞ս թե աղիողորմ, — ասացի եւ, — միթե ճշմարիտ իմ գրությունս անսխալանքի է:

— Բան եմ ասում, — ասաց տիրացուն, կրկնելով միշտ, որ եւ քաղիողորմ ձեռք պիտի խնդրեմ:

Մյուս օրը ճիշտ տասը ժամին եւ ներկայացա ճեմարանի գահինձը, ուր գտա հինգ թե վեց, մեկը մյուսից կարճահասակ, վիսմուդիւրներ (պաշտոնազգեստ) հագած մարդիկ:

Նորանց մեջ երկու ամենակարճերը նստած էին միմյանց մոտ և խփույն նկատվում էր, որ մեկը նրանցից իշխողն էր, մյուսը նորա հրամանակատարը:

Զգացի իսկույն իմ երեխայական հոգովս, որ՝ մեկն ինքը Լազարեն է, մյուսը ճեմարանի տեսուչ էմինը:

Այս վերջինն իսկույն մոտեցավ ինձ, չեմ հիշում ինչ հարցրեց, միայն լավ միտս է, որ իմ ազգանունս լսելու պես, խոժոռ դեմք ստացավ և գառնալով մյուս կարն, իշխող մարդուն, որը հետաքրքրված մոտենում էր ինձ, բացակայեց:

— Տեղ չկա:

— Դու նորա եղբայրն եւ, — դարձյալ հարցրեց էմինը:

— Այո, — ասի եւ, — ի սեր ասածո... — և արասուեք վազեց աչքերիցս:

— Տեղ չկա, սիրելիս, տեղ չկա, — լճոտկան ձեռք հայտնեց ինձ էմինը և կրկին դառնալով Լազարեին, որը, կարծեմ, սկսել էր կարեկցել ինձ, շնելոյա, նելոյա (չի կարելի) բացակայելով դուրս գնաց Լազարեի հետ:

Նա հետեցի նորանց, խեղդվելով արտասուքից: Ձէի ուզում գուրս

դնալ ճեմարանից, կամենում էի մնալ աշխուղ, ուսում ստանալ, շատ բան սովորել, բայց մերժեցին:

9

Պետք էր դառնալ Թիֆլիս: Մասնեցի, զնեցի և սկսեցի որոնել միջոց, իմ բախտիցս, հենց այդ միջոցում, ժամանեց Մոսկվա իմ տեսչիս ավագ կարայրը:

Բախտախնդիր տերացու բարեկամս հաջորդելով ինձ այդ լուրը, շատ որոշ ձևով առաջարկեց այսուհետև հանգիստ Թոգնել իրեն և դիմել տեսչիս հարուստ կալվածատեր կարորը, որը պիտի հոգար իմ Թիֆլիս վերադառնալու մասին: Տիրացուն ավելացրեց, որ նա՝ Նիկողայոս Շանշյանը իջել է Կուզնեցկի մոտս անվանված փողոցի Hôtel de France շքեղ հյուրանոցում:

Առավոտը վաղ էր, ես, համարյա ամբողջ Մոսկվան պատելուց հետո, դատ հիշյալ փողոցը և հյուրանոցը:

Դատ ապագա բարերարիս համարը, մտտ և տեսա երկու միջանասակ, ղեղեցիկ կազմվածքով մարդիկ, որոնք, ինչպես երևում էր, նոր էին վերկացել անկողնից և տեղավորելով իրանց պայուսակներն, ուսում էին մեծ ախորժակով սեխ՝ աղ ու պղպեղ արած վրեն:

Առավոտան կանուխ՝ սեխ ուտել, այն էլ աղ ու պղպեղով... դա տարորինակ բան էր ինձ համար:

Բայց ինձ քնչ փույթ:

Ինձ հարկավոր էր դիմել Ն. Շանշյանի ոգնության, որին խկույն ճանաչեցի: Նա կանգնած էր դիմացս բանկոնով և սեխը ձեռքին. ես ճանաչեցի, որովհետև Պետերբուրգ ժամանելուս պատանել էի նորան ճանապարհին մեկ ինչ որ կայարանում: Նա ևս ճանաչեց ինձ:

— Ինչպե՞ս, դու դառնիր այդպես շուտով Պետերբուրգից, — հարցրեց Ն. Շանշյանը:

— Այո, պարոն, — պատասխանեցի ես:

— Եղբայրս չկարողացավ քեզ համար բան չի՛նել:

Մեկ քանի խոտորով բացատրեցի դիմիս եկածը:

— Ուրեմն դու կամենում ես Թիֆլիս՝ վերադառնալ:

— Ուրիշ ելք չէ մնում:

— Լավ, — ընդմիջեց բարի մարդը, — ես կկատարեմ: Վաղը դու դնա Իլլինկա փողոցում գտնված պ. Ս. Ա.^ժ խանութը, աշխուղ կատանա Թիֆլիս դառնալու պատվերը:

Մյուս առավոտը դիմեցի ինձ պատվիրած խանութը, որի գոտն մեջ խկ դատ անվրդով ձև ստած մեկ կարճահասակ մարդու:

Ինչպես երևում էր, նա այդ խանութի տերն էր: Ինձ տեսնելու պես նորա առաջին հարցն էր:

— Դո՞ւ ես Չմչկյանը:

Այդ մարդը շատ կարճահասակ էր, Նիհար, մուռլ, նման մեր Երազասկանառ անվանված խանութներում գտնվող այն տեսակ գործակատարներին, որ այդ հիսունական թվականներին, երթնեկելով Ռուսաստան — Նիժնի-Նովգորոդ, Մոսկվա և այդ տեղերը, զանազան տեսակ արձակություններ (հյուրանոցներ) ուսումնասիրելուց հետո միայն, յուրյանց կարծիքով, մեկ

լուսավորության ևն էին ըմբռնել, այն է՝ «չույկա» անվանված խաւարածե-
վերնազգեստ հագնելը:

— Այո՛, — պատասխանեցի, — ես Զմշկյանն եմ:

— Ինչո՞ւ ես գու. նեղություն պատճառում քեզ անծանոթ մարդ-
կոնց:

— Ես չվարեցի:

— Ինչպե՞ս — հարցրի:

— Ինչո՞ւ համար ես Մոսկվա եկել... Ուրիշներին ծանրություն պատ-
ճառելո՞ւ:

Թեև վերավորվեցի, բայց խոսք չգտա պատասխանելու և Ձեռքի
քարացած:

— Գնա՛, հեռացի՛ր այստեղից, վազը ես կհանձնեմ փողը մեկին, որ
քեզ հասցնե Նիժնա (Նիժնի-Նովգորոդ), իսկ այնտեղից Գնա ուր կուզես,
միայն այլևս չդառնաս Մոսկվա:

Ասով՝ Թողնելով ինձ, ինչպես ասի, չվարժունքի մեջ, դուրսը տրո-
տուա՛րի վերա կանգնած: Պարտը ներս մտավ յուր խանութը:

Փոքր ինչ արևանացած Ձեռնուցս հետո, վերջապես սթափվեցի և
դարձյալ անիծելով իմ Թիֆլիսից դուրս գալու օրը, հեռացա չույկակի՛ր
երեսասարգի խանութից:

10

Տիրացուի մոտ դառնալն ինձ անհնարին թվաց, որովհետև նա ինձ
արգեն ճանապարհ էր ևն, իսկ ուրիշ ոչ ոք մտերիմ մարդ չուներ Մոս-
կվայում:

Ո՛ւր գնամ, հարցնելով ինչս ինձ և մեքենայաբար քայլելով հասա
մեկ ինչ որ քարվանսարայի կամ կիսաօթիկի պես մեկ տան տոաջ, ուր
միշտ իջնում էին հայ վաճառականները և որը անվանում էին «Ալեքսան-
դրովսկոյե պողովորի»:

Բարձրացա սանդուղներով, մտա կորիդորը և հուսահատված ընկա
առաջին պատահած նստարանի վրա:

Գուցե մեկ ծանոթ մարդ կպատահի, — մտածեցի ես, — և բարի խոր-
հուրդ կտա ինձ:

Հանդեսս բացվեց մեկ դուռ, որտեղից դուրս եկավ Թիֆլիսի տեղա-
կան հաղուստով մեկ մարդ, որն ինձ տեսնելու պես կանգ առավ և հարց-
րեց իմ ով լինելս:

— Ես պատասխանեցի:

— Ա՛, դու տե՛ր Հարությունի որդի՞ն ես, — ասաց անծանոթը և ներս
հրավիրեց ինձ յուր սենյակը, որի մեջտեղը դրած էր մի մեծ սեղան և
նորա շուրջ երեք կին նստած, զրազված էին Թիֆլիսում և այրական հա-
ղուսաների կարով:

Իսկույն ինձ հասկանալի եղավ, որ այդ մարդը Թիֆլիսի դերձակնե-
րից մեկն է, որ եկել է Մոսկվա ինձ պես բախտ որոնելու:

Աս, մի քանի օր հյուրասիրելուց հետո, վերջապես, համաձայն Ծան-
շյանի կարգադրության, ճանապարհ զցեց ինձ մեկ ինչ որ Ծովով ազ-
գանուենով մարդու հետ Նիժնի-Նովգորոդ քաղաքի վաճառահանգեսը, որ-
տեղից ես պետք է ծնողացս ծանոթ մեկ որեւէ մարդու հետ դառնայի
հայրենիք:

Այստեղից սկսվում է իմ այլ տեսակի ողբասկանա:

Շուրիովը մեկ բարձր, Նիհար ու ծուռտիկ հայացքով մարդ էր: Նորա տարանտառ անվանված, կառքի մեջ Մոսկվայից իսկ տեղափոխվելուց չորս անձինք, թափված այդ տարանտառի մեջ՝ ինչպես իրարու կողքին դարձված ապրանք: Ծանաղարհորդում էինք անցողաբ, գիներ ու ցերեկ: Քանի կզանակը լսվ էր, մենք միմյանց չէինք անհանգստացնում, բայց երբ երբորդ գիները սկսեց անձրևել, այն մամանակ պետք եղավ ծածկել տարանտառի բաց կողմը և չորրորդ անձնափոքությունն այդ դեպքում անհանգստացնում էր մյուս երեքին:

Ծանաղարհակիցներս խորհուրդ կազմեցին և վճռեցին, որ ես, իբրև զեռանառ, կարող եմ առավել գիմացկուն լինել և վճռեցին նստեցնել ինձ դուրսը՝ կառապանի կողքին:

Այդպես էլ արին: Նստեցի դուրսը սաստիկ անձրևի տակ, ստանց որևիցե վերաբերի, կռպիտ կառապանի մոտ, որն ամեն մեկ ձեռքը շարձելու միջոցին անպատճառ մեկ բռնուցք էր հասցնում կողքին:

Ծանաղարհակիցներս սկսեցին ժրանալ տաք ծածկված տարանտառի մեջ:

Իմ քունս էլ սկսեց տանել: Շուրիովը, որը, ինչպես ասի, տերն էր մեր տարանտառի և մի տեսակ հրամանատար էր մեր ամենքիս վերա, նաև ինձ վերա, իբրև նորա հովանավորության հանձնված մեկ անդաշտպան էակի: Սկսեց վրդովվել և անհանգստանալ, արտահայտելով այդ յուր զգացմունքը այնպիսի մեծ քաղաքային հիշողներով, որ ես քիչ էր մնում թռչի գետին և մնայի միայնակ անապատի մեջ:

Բարբարոս մարդը նկատելով, որ ես սաստանվում եմ նստած տեղս և կարծելով, որ կարող եմ քուն մտնել և, հետևապես, անզգալի կերպով կարող եմ կառքից վեր բնկնել, սաստկացրեց յուր անվայել հիշողները և նաեկարծ հարձակվելով հետեիցս, սկսեց չվանով պինդ կապկպել ինձ նստարանիս շուրջի երկաթներին:

— Հոտենց այ, քու հերն... ամ... վուր վեր բնգնիս, խո կու սատկիս, իմում թե՛ ջուղար տամ քու ինձ պահ տվողին:

Եվ այդպես կապկապված, անքուն, թրջված վերջապես հասանք Նիժնի-Նովգորոդ, ուր մտնելուս միայն միջոցին ազատվեցա կապանքներիցս:

Այդ քաղաքը մուտք անելու օրիցս մինչև այնտեղից հեռանալս, այդ իմ ախուր անցյալս, ես լավ եմ համարում պարտակել սե ու մութ վարագույրներով, որովհետև հիշելն անգամ ինձ ցավ է պատճառում:

Ես, մանուկս, զգվեցի այդտեղ ինձ ամենամեղք շրջապատող հայ ծեր թե երիտասարդ վաճառական հայրենակիցներին...

Ոչ ոք չգտնելով այնտեղ, որի հետ կարողանայի դառնալ Թիֆլիս, վերադարձա դարձյալ Մոսկվա, որտեղից և վերջապես դառա հայրենիքս:

<ՔԻՅԼԻՍԻ ՀՈՂԱՉԱՓԱԿԱՆ ՌԵՍՈՐՏԱՐԱՆՈՒՄ>

1

Վերագործին առաջին օրը և իսկ թվաց, թե ևս երբեք Քիֆլիսից դուրս չեմ եկել և թե հետացել էի քաղաքից անդիտակցաբար, հրապուրված որեւէ բնկերակաւ զվարճմունքի ներքոս Ինձ Յնում էր հիմա, մոտ առան և հինգ տարեկան պատանուս, մտածել տղազայիս՝ մասին:

Մեն եզրայրս, հորս հետ խորհրդակցելուց հետո, հանձնեց ինձ կառավարութեան հիմնարկութեան ներքից մեկում մեկ աղետ շինողիկի, որի մոտ պետք է կոտորելագործվեի սուսերին գրակաւութեան մեջ:

Մեկ երկու շաբաթ այդանց թրե գալուց հետո, ևս վառվեցի սաստիկ սիրով զեպի գինձորակաւ ծառայութեանը և սկսեցի պատրաստվել յունկեր կուլման համար հարցաքննութեան առիտն:

Հանկարծ տեղեկացաւ, որ գինձորակաւ գիրք ունեցող հաղաչափակաւ փակ ուսումնարանում, ուր արդեն սովորում էր իմ կրտսեր եղբայրս, բացվելու է մեկ գիշերօթիկ աշակերտի տեղ: Այդ տեղը բռնելու ցանկացողներ երեսեան 26 հոգի, մեծ մասամբ աստիճանավորների և աշակերտների որդիք:

Պետք էր քննութեան տալ, ուրեմն պետք էր մրցել այդ 26 երեխանց զեմ, Բնութեանը նշանակված էր հոկտեմբերի սկզբին 1851 թ. «ГЛАВНЫЙ ИТАД» անվանված գինձորակաւ հիմնարկութեան մեջ:

Առաջնայան 9 մաժին արդեն հայրս և ևս ներկայացանք այդտեղ: Հայրս, տեսնելով այդ երեխաներին՝ չբնապատված յուրյանց աստիճանավորներով և թե վրաց աշակերտներով, հուսահատվեց և դառնալով ինձ՝ ասաց:

— Որդյակ, չեմ կարծում, թե դու կարողանաս մրցել գորանց զեմ:

— Ոչ, հայրիկ,—պատասխանեցի ևս, զգալով իմ մեջ մեկ տեսակ արիւթութեան, —մի՛ հուսահատվիր և ցանկացիր ինձ հաջողութեան:

Հայրս համբուրեց ինձ, որնեց և ներս տաքով դաշիճ, ուր արդեն հաճախված էին քննիչ սպաները և սպասում էին մեներալ Վոլֆի գալույտան, որի նախագահութեան ներքո և պիտի բացվեր քննութեան առիտը:

Երկար սպասելուց հետո վերջապես եկավ հիշյալ մեներալը, որը մեկ նիւտր, երեսը մաքուր անիլված գերմանացի էր:

Իսկույն ամբողջ դաշիճում սիրեց խորին լուսնային, այնպես որ ճանի ազդոցն անգամ լսելի կլիներ:

Սկսվեց քննութեանը: Ինձ տիրեց մի տեսակ վախկոտութեան, զգացի, որ գունաթափվում եմ:

Ամենից վերջը եկա՞մ իմ հերթս:

— Ձիմիշկյան (այդ բաղեում ես Ձմիշկյան էի), կանչեցին ինձ:

Ես թեև գունաթափ, բայց խրոխտ գուշուս գնացի:

Փեններալը փոքր ինչ զննելուց հետո ինձ, հարցրեց ժպտալով:

— Դու ունե՞ս եղբայր այդ ուսումնաբանում:

— Այո,— պատասխանեցի ես:

— Ինչպե՞ս է նորա ազգանունը:

— Ձիմիշկյան,— պատասխանեմ էր:

— Ո՛չ, նորա ազգանունը Ձիմիշկով է:

Փոքր ինչ շփարեցի, բայց իսկույն ըմբռնելով մեներալի սրախոսության առիթը, պատասխանեցի համարձակ:

— Այդպես է, ևերգ զերազանցություն, հայերեն Ձիմիշկյան է, իսկ ուսուցիչը Ձիմիշկով:

Նա առաջարկեց ինձ մի քանի հարց սրբազան պատմությունից:

Ես պատասխանեցի, թարգմանելով մաքուս հայերենից ուսուցիչին, և գուշուս եկա՞մ, որ իմ Գողթաթս և Մովսես մարգարեն Մացին առթարգմանելի և հետեապես քիչ ինչ հասկանալի քննիչ սպաների համար:

Փեններալը շատ բարձի մարդ էր, ուսումնական անձ: Նա ուղղեց իմ Գողթաթս և Մովսես անունները՝ նորանց Գոլիաթ և Մոյսես անվանելով:

Մեկ քանի հարցեր ուսաց քերականությունից և թվաբանությունից ևս առաջարկելուց և երկար կատակներ անելուց հետո, մեներալը վերկացավ, մոտեցավ ինձ, ևեռքը դրեց ուսիս և ժպտալով ասաց:

— Այս օրվանից դու Ձիմիշկով ես և այն էլ Ձիմիշկով երկրորդ:

— Ինչպե՞ս, Ձերդ զերազանցություն,— բողոքեցի,— ես իմ եղբորիցս տարի և կեսով մեծ եմ:

— Ի՞նչ անես, որ նա քեզանից առաջ՝ է Ձիմիշկով դառնի:

— Ուրեմն ես ընդունված եմ,— հարցրի զոգոցոջուն ձայնով:

— Կարծեմ: Գնա շնորհավորիր հորդ և ասա, որ վաղը տանե քեզ ուսումնաբան:

Ուրախության սահման չկար: Հորս արդեն շնորհավորել էին մի քանիսները մեներալի՝ ինձ հետ սրախոսություններ անելու մամանակ:

Նախասենյակ գուշուս գալուս պես հայրս գրկեց ինձ արտասովոր աչքերով:

Ահա թե ինչպես Ձմիշկյանից ես դառա Ձիմիշկով:

2

Այդ ուսումնաբանը, ուր ես մտա, անվանվում էր Մեմեմվայա զկուռա: Դա մի ուսումնաբան էր, որի նպատակն էր պատրաստել մասնագետ հոգաչափներ Գովկասի նահանգների թե տերունական, թե մասնավոր կալվածատերերի հոգերը մակարդակի (սյոմկա) առնելու և որոշելու համար ամեն մեկ կալվածի ճիշտ քանակությունն և սահմանները:

Դա մի փակ ուսումնաբան էր, որի միջի թե կարգը, թե աշակերտների միաձև հագուստը, թե ուսուցչական մասը բացառապես գինվորական էր և բաղկացած էր երեք դասաբաններից՝ տերունական միջնակարգ ուսումնաբանների համառոտ ծրագրով և չորս տարվա ուսումնական շրջանով:

Ուսումնարան մանկուս պես սկսեցի պատրաստվել երկրորդ դասարանի քննությունը տալու նպատակով, որպեսզի կրասեր եղբորս հետ, որն արդեն երկրորդ դասարանում էր, միանվագ շափարեինք մեր ուսումը և ոգնության հասնեինք մեր ծնողներին:

Ինչպես ասացի վերը, այդ ուսումնարանը փակ ուսումնարան էր, այսինքն՝ սանիկների ևլ ու մուտքը անդաման սահմանափակված ամբողջ տարվա ընթացքում, բացի երկու տոների, այն է՝ ծննդյան՝ 25 հեկտեմբերից մինչև 28-ը և զատիկ՝ կիրակիից մինչև շոբեքշարթի, ուրեմն ամբողջ տարվա մեջ մենք, սանիկներս, իրավունք ունեինք ընդամենը վեց օր բացակա լինելու ուսումնարանից:

Գարզ է, ուրեմն, որ ես իմ մեջ ունեցած հայ լեզվի փոքրիկ շահատրունով պիտի մոռացության տալի նորան, քանի որ մեր ուսումնարանում միայնակ դործածական լեզուն ուսուերենն էր:

Իմ սերը զեպի թատրոնական բեմը առաջին անգամ ծագեց այդ ուսումնարանում, որտեղ ուսաց ծննդյան օրերին աշակերտներս տալիս էինք երբեմն ընտանեկան ներկայացումներ:

Իմ առաջին զերյուստ էր, ինչպես լավ հիշում եմ, Եկոլի վարժապետ անվանված (Ֆրանսերենից թարգմանված) պիեսայում¹⁰ մեկ խուլ հոգարար-մուր զերը, որի մեջ ես մեծ հաջողություն ունեցաւ: Միևնույն զերը, շատ տարիներից հետո, նամնապես մեծ հաջողությամբ կատարեցի հայերեն, քաղաքային թատրոնում, հայոց բեմի իմ զեկավարությանս միջոցին:

Երկրորդ անգամ, միևնույն ուսումնարանի ամառանոցում գտնված մամանակ, ես կատարեցի մի վախկոտ զինվորականի զեր *Дедушка русскою флотом* անվանված մի պիեսայում, որի նյութը վերցրած էր ուստաեկական պատերազմի անցքից¹¹:

Ուսումնարանից դուրս գալու օրիցս, ես ստիպված էի թափառական կյանք վարել, գաշտեր և լեռներ մակարդակի տունել, ութ տարվա ընթացքում (1854—1862) պատեկով Կովկասի և Անդրկովկասի քաղաքների և գյուղերի մեծ մասը, հանգիպելով զանազան արկածների և հիվանդությունների, միշտ զգալով իմ երիտասարդական դործունեության աննպատակ էությունը:



<ՔԱՏՐՈՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՍ>

1

Ես փառահեղ շինոթիկ էի 1863 թվականին: Ունեի կուշիկներ և կրնկներն
կայցրած զնդզնդան մեխեր, կամ, ինչպես ասում են մեզանում, շոգորներ,
իսկ գլխարկիս ճակատին՝ կոկարգ. մեկ խոսքով՝ զնդիցիկ, արծվաքիթ, մեծ
հույսերով լի երիտասարդ էի և ունեի կապույտ գալթանով բոլորած գլուխ:
Կապույտ գալթանը իմ ուսումնականության նշանն էր: Ես կատարյալ
ուսումնական էի: Կարգում էի Բելիսկի և մեկ քանի ժամանակից հետո
անցա զնդի Բոքլը, որից իմացա, որ ես սասանիկ կոսմոպոլիտ պիտի լի-
նիմ և հենց այդ ժամանակներում գրա հասավ Լյուիսի ուսանական թարգ-
մանությունները, և ես սովորեցի, որ շինոթիկական փորումս շատ դժվա-
րություններ են պատրաստում իմ կերած հյութերի խոսնուրդները, որոն-
ցից դոյանում են մաղձ և արյուն: Մեկ խոսքով՝ սարսափելի ուսումնական
և գիտնական շինոթիկ էի:

Ես իմ ազնվական և գիտնական շինոթիկությունով մեկ օր, զրազված
Բելիսկիով, Բոքլով և Լյուիսով, ամենազատարկ զրգաններով անցնում
էի մեկ մեծ փողոցով, տեսա մեկ հայտարարություն՝ պինդ կպած պատին:
Մտեցա և կարդացի, հայտնի բան է, շատ դժվարություններ, Արշակ Բ.¹²,
գործող անձինք. Շահաթուլյան, Ամերիկյան, Մատինյան, Մուքի-
սյանը և այլն և այլն: Դալալ Ղազն¹³, որի տակ զարկալ կային Մատին-
յան, Մուքիսյան, Ամերիկյան, և այլն: Տոմսակները ծախվում են այսինչ
տեղ:

Իմ ուսումնականության և գիտնականության ստիպելին ինձ վաղ
տալ այնինչ տեղը և գանել այնինչ Արշակ Բ. և Դալալ Ղազն ներկայացման
տոմսակները:

Զարմանալի բան, զարմանալի բան, — ասում էի ես ինձ ու ինձ, վա-
ղելով զնդի այնինչ կողմը, — հայը հայերեն խոսի և այն էլ ինչ տեղ...
հրապարակական թատրոնում:

Մեկ նիհար մարդ՝ հանգարտ, անգրգով նստած էր այնինչ տեղի մեկ
սենյակում:

— Խնդրեմ մեկ տոմսակ, — ասացի ես ուսերեն:

— Տոմսակ չկա, — պատասխանեց ինձ նիհար մարդը, որի «Нета» ար-
տասանելու ժամանակ ես նկատեցի, որ նա նժանապես շատ անգրգով «Е»
տառի տեղ «Э»-ն է արտասանում:



Մտից տ' (նստած են) Գերհ Գուռյան, Արտաշես Մուրխոյան,
(կանգնած են) Գեղարզ Աղիբեկյան, Միհրգաս Ամբիկյան





Սփիւս Մելիք-Նազարյան

— Ինչպէս թե չկա,— բացականչեցի ես, զգալով, որ այդ պարոնն ինձ լաւ չի տեսում և նա չի նկատում ոչ իմ զնգզնգան մեխերս, ոչ իմ կապույտ դաթնաներս, ոչ իմ կոկորդոս:

— Ձկա, ասում եմ,— պտտասխանեց նա առաջիկ անգորգով:

Ես շրթիկ շրթիկացրի թուրս և շարունակեցի և բարկացած դուրս գնացի այնինչ անգից:

Ինչ անեմ, ասացի ես, և զխուժա ծագեց մի հիանալի միտք: Եկեր-թում թատրոն, կինդերեմ, որ ինձ համար մեկ աթոռ զնեն, որի համար ես կվճարեմ երկապատիկ գին: Մտածեցի, վճռեցի և դիմեցի յոթ ու կես ժամին Թիֆլիսի քաղաքային թատրոնը¹²:

Գնացի, մտա, տեսա տոմարիկը փակած և նախաժուռը լցված բազմութունով և տոմսավաճառներով: Հայ վաճառականների բազմասերձ գործակաւորները նորարույս հայկական թատրոնից մեծ նկառոււտ նախա-դուշակելով, գնել էին շատ տոմսակներ և թատրոնի նախաժուռում ծախում էին եռապատիկ գներով¹³, բայց ինձ ինչ փույթ, ես պիտի թատրոն տեսնեի, հայկական թատրոն: Վճռեցի բազմասերձ վախտոռներէից տոմսակ չառնել և մտա թատրոնի կորիզորը:

Նիւար երիտասարդը դարձյալ առաջս եկավ:

— Խնդրեմ, պարոն,— դարձյալ ես դիմեցի նրան, բայց այս անգամ շատ վրդովված:

— Այս բողբիս, պարոն, այս բողբիս,— ասաց նա թոթովելով և տվա՞մ ինձ մի տոմսակ:

Երջանիկ բողբ, անդառնալի, գեղեցիկ և տխուր հիշատակ...

Խնդրեմ ոչ ոք չկարծե, թե այս կետերը չտպւմ բառեր են: Դոքա տպւմ են իմ սրտումս, որոնք շարտահայտելու չափ ես ուժ չունեմ...

Ուսումնական կոսմոպոլիտա մտա հայկական թատրոն և զգացի, որ հայ եմ: Հայտնի բան է, ես նույն ժամին թեև շատ ամաչում էի իմ հայ լինելուցս, նամանավանդ որ դա իմ համազգայից ինտիտուտականների հա-մար եզրվելիք էր, բայց այն բողբին երջանիկ էի իմ ծագումովս:

Դաշլիճը լիքն էր. և լիքն էր հիանալի, գեղեցիկ, շքեղ, բթամիտ և զգայուն հասարակութունով: Օթյակներումը կային հիանալի սննդած օրիորդներ, ուսերեն լալ խոսողներ, անպայման գեղեցիկ, կրթված տի-կին Թափրի¹⁴ մոտ և այլ այսպիսի ուսումնարաններում: Բազկաթոռ-ներում կային հայ քննադատներ հիանալի ձեռնոցներով, սպիտակ շապիկ-ներով, կրթված զանազան բարձրաստիճան ուսումնարաններում: Աթոռնե-րում կային հասարակութ, հասարակոր, բարակափոր, խիտամազ, սերտամազ և այլ զանազան տեսակ վաճառականներ, չինովներէկներ և անհայտ գործու-նեության տեր մարդիկ¹⁵: Կային և խելոքներ, ինձ պես հիմարներ և ին-ձանից շատ գիտնականներ: Ես մտա, նկատեցի այդ բոլորը և նստեցի ինձ համար պատրաստած աթոռի վերս և կարգի բերելով իմ աննման, սպի-տակ, արծաթազարդ թրագոտիկս և իմ զանգակաձայն շարունակ, շատ բա-վական ինքս իմ էութունով, նայեցի շորս կողմս:

Մոռացա դարձյալ մեկ տեսակ անձնավորութիւններ, այն է՝ կիսանկ-րոպական հագուստով տիկիները — Սոնիշկաները, Լիզաները, Կեկեկները, Անիշկաները, Սուսաննա Իվանովնաները, Մարթա Իսակովնաները, Կատա-րինե Պավլովնաները և այլ այսպիսի քնքուշ հայ տիկիները:

Նա երջանիկ էի ամեն կողմից, և անհամբերությամբ սպասում էի վարագույրի բաց անելուն:

Ինձ հետ սպասում էր նորա բացվելուն և այդ բոլոր հասարակությունը:

Բացվեցավ վարագույրը: Լավեցավ խորական երգ՝ Մեծափառ արքա...:

Դուրս եկան մի քանի երիտասարդ, անկիրթ, անգիտլուժ, գետից-գետից, Ղազարից, Շամշադնից և այլ երկրներից հավաքված երիտասարդներ: Սքանչելի հասարակությունը, որի մեկ մասը հազիվ էր խոստովանում յուր հայ լինելը և դիտել յուր մայրենի լեզվին, ծափահարեց:

Թիկնաթոռները ծափահարեցին ծիծաղի համար. և որ աղացուցանեն, թե ծափահարում են ծիծաղի համար, նոքա հորանջիլով և խրխուլով բերավ, որովհետև կանգնելով՝ ետ էին նայում աթոռանիստ մարդկանց և վերնահարեց համարձակած ամբոխին, ցավելով նորանց ազեա հայասիրության վերա:

Աթոռները ծափահարեցին ծափահարելու համար, որովհետև ծափահարում էին թիկնաթոռները:

Վերնահարկում ծափահարում էր ամբոխը բեմի վրա հայ բարբառ լսելու համար:

Իսկ ոթյակներում ծափահարում էին բարիշնայաները և հաստափոր ու բարակափոր քաղաքացիների կանայք, բզնախառնելով հայ թաղերնական գաղափարը, ազաա բացականչելով՝ ֆե...

Դուրս եկավ Վահան Մոմիկոնյանը, հայրենիքի բարելավության համար մերձիման վիրավորված հայ նախարարը: Նա հչացի բերավ: Ամենքը շուտ եկան և ինձ նայեցին: Բայց որպեսզի չկարենն թե ես հիմար եմ, սկսեցի անկեղծորեն պարապել իմ թրագլուխով ու չղորներովս: Դուրս եկավ Դրաստամատ, որի վերա կիսսինք հետագա հիշողությանս մեջ:

Արքայից արքա Շապուհը, հորը, շքեղ Շապուհը (պ. Արտյան) բեմ գուրս եկավ, հաղթական պատերազմից հետո: Պարթևների դորձերը, զարգարված կարտոնների մեջ, անդադար թկեցցենաներ էին գոչումս թկեցցես գու Շապուհն հաղթական երգով նրանք ուղևորում էին արքային մինչև ավանայնան, այդ ինչպես վերև ստացի, Ղազարից, Շամշադնից և այլ կորած, մոռացված երկրներից եկած և տկուր, սոված, չքավորության մեջ ճնշված երիտասարդները, առանց որևիցե բարձր ուսումնականության գիտլում ունենալու գրգանում...

Մեծ ուշադրությամբ սկսեցի ուսումնասիրել այդ ինքնուրույն թատերնական գոյությունը բեմի վերա:

— Իսկ դու, քաջդ Դրաստամատ, — դարձավ արքան գետի հայ նախարարը, — պարզե պահանջիր ինձանից:

— Պարզե, թագավոր, — պատասխանեց նա, — ոչինչ պարզե չեմ ուզում:

Այս և սրա նման խոսքեր արտասանվեցին հրապարակական թատերոնի բեմի վերա ուժեղ շեշտահարողությամբ, հայերեն մաքուր արտասանությամբ:

— Ո՞վ է, մի, — հարցրի ես գետ ու գետ:

Այս հարցիս պատասխանն էր միայն ծափահարությունը և թկեցցենների ու բերավոնների զգրգունն գալիճում: Ծափահարում էին Դրաստամատին (Ամերիկյանին):

Կողքին նստածների մեկից ևս ուզեցի գիտակ և սկսեցի զննել Դրաս-
տամատին։ Նա միջնաստակ, փոքր ինչ ծաղկատար խոժոռ կերպարանքով և
կազաքալլ մի երիտասարդ էր։

Սա իմ չիճեֆիկուսի մասին բարձր կետից զգացի, որ երիտասարդի մեջ
կա բնական տաղանդ, որ կարող է զարգանալ հայկական թատրոնի բեմի
համար։

Վերջացավ առաջին գործողությունը։

Այսօրեցից երկրորդը, և այդ գործողության մեջ նմանապես առաջին
անգամ բեմ դուրս եկավ պ. Շահաթյանը, որ խաղում էր Արշակ Բ-ի
գերբ։ Ամենայն ուշադրությամբ ևս հետևում էի այդ երիտասարդի խաղին։
Բայց երբ ցնորված նա գետին փռվեցավ և մեռավ, ևս միայն ափսոսացի,
որ այդ երիտասարդը հափշտակվում է յուր խաղով ինքը և հափշտակում
ևս նորան ժողովրդի միջից շատերը՝ իրանց անտեղի ծափահարությամբ և
սրտազնեկությամբ ու սկեցցեցներով։

Բնական Արշակի մեռնելուց հետո ներկայացրին Դավալ Ղազն անու-
նով մեկ զավեշտի նման բան²⁵, հեղինակություն պ. Ն. Փուլինյանի։ Այդ
պիեսան առաջին փորձն էր տեղական լեզվով մեկ որևիցե կենդանի միտք
արտահայտել բեմական միջոցով։ Դժբախտաբար պիեսայի մեջ ոչինչ մեկ
որոշված միտք չկար, բայց կային տիպերի նման մեկ քանի բան։ Այդ
տիպերից մեկն էր մշեցի Կիզիկովը, մյուսը թիֆլիսցի դալալ Ղազոն։

Այդ գերբի խաղացողներից մեկը մի չնչին և աննպատակ դերից չի-
նեց կատարյալ բեմական դեր, ցույց տվավ այդ չնչին դերում խեղճ մշե-
ցի մշակին, այդ անհայտ, ողորմելի, միշտ աշխատող, միշտ պանդուխտ և
միշտ հոգով-սրտով կլած յուր հայրենիքին, յուր Մուշ երկրին, օրական
հացի համար թիֆլիսցու դալալի, մեկ տղետ և կոպիտ մարդու մոտ ծառայող
մշեցուն։ Բեմի վերա չնչին դերից տիպական անձնավորություն ներկա-
յացնողը հանգուցյալ Ստեփաննոս Մատինյանն էր։ Յժաման մեր մամլա-
քաթ՝—առում էր մշակ մշեցին, Դավալ Ղազոյի ծառան ու լաց էր լի-
նում, հիշելով յուր հայրենիքը, յուր շնորհ ու վերջ։ Նա դառն արտա-
սուք էր թափում ու տխուր, սրտաշարժ, աղիողորմ շյաման կիզկիզ՝ էր
երգում։ Մյուսը՝ պ. Սուքիասյանը՝ միևնույն դատարկ պիեսայում աշխա-
տեց և ցույց տվեց Դավալ Ղազոյին՝ կենդանի մեկ տիպ։ Միշտ բավական
իրանից, յուր կին Սինդուխտից (ա. Սոփյա Շահինյան)²⁶, միշտ աշխա-
տող, որ խաբե ուրիշներին և եզուտ քաղե նրանց միամտությունից, միշտ
վառնառու և միշտ տխմար. այդ դերը ևս ստեղծեց պ. Սուքիասյանը, որի
հետևանքը հայկական թատրոնից մեծ հարված տվեց մեր թատրոնական գա-
ղափարին։

Այսպես վերջացավ առաջին հայկական ներկայացումը Թիֆլիսի քաղա-
քային թատրոնի բեմի վերա։ Այդ ներկայացումից հետո ևս վեհեցի . . .
. Բնչ էք կարծում, Բնչ... Նվիրել ինձ թատրոնին, մեկ
կողմ թողնելով իմ փայլուն կոկորդոս ու զնգզնգան չպոքներս։

2

1863 թվականի²⁷ ջրօրհներին էր։ Երկինքը պարզ էր և կապույտ, օդը
աստիճան ցուրտ։ Վանքի եկեղեցու դամբիթը լիքն էր հայ հասարակությու-
նով, բաղկացած ամեն տեսակ մարդուց և կնոջից։

Ես և իմ ծառայակից բարեկամ պարոն Կ. Զ.²¹ մուշկերով և ձեռն-
բխ հագցրած նեղ լայնքա ձեռնոցներ, ահագին զինվորական փափախները
զլխներին, ներս մտանք դավթը՝ այդ խառն խառն հասարակության
ներդաշնակութունը լրացնելու համար:

Հանքի արևելյան պատի հովանավորության ներքո, զանազան խմ-
բերից մեկի միջում գտնվում էին երկու մարդ՝ մեկը սիվիլ, մյուսը իմ և
պ. Կ. Զ-ի նման կիսազինվորական հագուստով, որոնք շնայած բոլոր իրանց
պակասություններին, պետք է մտնեն մեր փոքրիկ կենդանի պատմու-
թյան մեջ, իբրև Քրիշխումս հայ լեզվի տարածման սկզբնապատճառներ:

Այդ մարդիկն էին Ինկվիզիցիայի աննշան թարգմանության տարա-
բախտ հեղինակը և Շուշանիկ ողբերգության գրվածքի հեղինակը՝ հան-
գուցյալ Հ. Կարինյանը և պ. Մ. Գառկանյանը:

Հափշտակված իմ մեջ զնոսած հարցովս-էլինել հայ գերաստան, ևս
մեկ տառնաձին ուրախություն զգացի, տեսնելով այդ գործիչներին՝ հանգու-
ցյալ Կարինյանին և պ. Գառկանյանին, իմ ուսուցիչներին՝ ներսխյան
ուսումնաբանում եղած ժամանակս:

Ես և իմ ընկեր Կ. Զ. մտնանք այդ խմբին: Բարեկցինք նորանց
և մասնք ընդհանուր խոսակցության մեջ: Խոսում էինք թատրոնի վերա-
մաս հայտնեցի իմ կարծիքս պ. Մ. Գառկանյանին, թե լավ կլիներ Քրիշխումս
ունենալ մեկ փոքրիկ կանոնավորված խումբ հայկական ներկայացուցիչ-
համար: Մ. Գառկանյանը հայտնեց, թե նա արդեն աշխատում է, բայց իզուր,
որովհետև հայ հասարակությունը չի համակրում:Ս Ես հայտնեցի կարծիքս իմ
տեսած ներկայացուցիչի՝ Սամվելի²² և Արշակ պիեսատերի մասին: Գ. Գառ-
կանյանը առաջացավ, Հեռո, շատ ուշ իմացա ևս այդ առաջանալու պատճա-
ռը, որ կպատմեմ յուր ժամանակ²³:

— Այդ խումբը, — պատասխանեց ինձ պ. Գառկանյանը, — երկար չի
տևիլ, որովհետև դա անկարգ է:

— Կկամենամք, — ասացի ևս, — մենք փորձենք մեկ ներկայացում:

Հանցավ երեք օր, ևս և իմ ընկեր Կ. Զ. հափշտակված ապագա գե-
րաստանական փառքի երևակայությունով, զիմեցինք զեպի հանգուցյալ
Հ. Կարինյանի տունը, որը գտնվում էր Խարփուխ անվանված թաղում: Մտանք
դաշլիքը, մեծ, ահագին, զարդարված դաշլիք, լի բազմությունով, մինչև քա-
ռառուն հոգի: Մեզ մոտեցավ տանուտերը և հայտնելով յուր շնորհա-
կալությունը, բացատրեց, որ քաղմությունը ապագա գերաստանական
խումբն է:

— Այո, այո, մատաղ, — շտապեց ավելացնելու պ. Մ. Գառկանյանը, —
մենք անպատճառ կանոնավոր խումբ պիտի կազմենք „В ПИКУ ИМ“²⁴ (Նը-
բանց հեղատակ):²⁵ Իսկույն կգա Ն. Միրիմանյանը. նա մեր կառավարիչը
պիտի լինի: Առայժմ խնդրեմ ծանոթ լինեք, — և ծանոթացրեց ինձ ուս-
տական թատրոնական գործին հմուտ պ. Շադինյանի հետ:

* Գ. Մ. Գառկանյանը, մինչև հայ թատրոնի քաղաքային թատրոն տեղափոխվելը,
շտրունակ թատրոնական ներկայացուցիչ է ավել նախ, ներսխյան հին ուսումնաբանի
զանիւնում և հետո Գ. Երեմյանյանի զարբառում, Մանք. ձեզ:

²² Այս խոսքերը վերաբերում էին սորանից առաջ գերաստանների և Կարինյանի ու
Գառկանյանի մեջ պատահած մեկ անցքի, որից հետո խումբը բաժանվել էր այդ պարոն-
ներից, Մանք. ձեզ:

— Սա և պ. Միրիմանյանը կկառավարեն մեր խումբը:

Նկատվեցին պ. Միրիմանյանը, վեպեցի մարտիկ Վարդան Վարդանյանը, որոնցին խաղալ պ. Մ. Պատկանյանի Նուշանիկ ողբերգությունը:

Դերերը բաժանեցին: Ինձ ընկավ Վարդանի դերը, Կ. Ջ.-ին, միայն չէ, մեկ ինչ որ Բագրատունու, թե ուրիշ գեր, իսկ կանանց դերերը տվին՝ Նուշանիկի դերը մեկ բաղանջան, բայց զեղեցկատես երիտասարդի և Դքստիկի՝ Վարդանի կնոջ դերը մեկ պարիկով երիտասարդի basso-profundo* ձայնով:

3

Ներկայացրեց Թիֆլիսի հանգուցյալ, փոքրիկ, բայց զեղեցիկ թատրոնի զանյիւնը²⁵. լիքը հասարակություն, հարյուրավոր բնակիչներ՝ ուղղած դեպի բեմը, լիքը քառասուն ազազա հայ դերասանական խմբով, քառասուն զինվորներով, որոնց գլխին էր պարոն Ա. Շ.,²⁶ որն անհետացավ հայ թատրոնական բեմից այդ ազազա քառասունյոց խմբի հետ միասին. երևակայեցեք այդ ամենը, ասում եմ, և պարիկավոր 25 տարեկան երիտասարդ պ. Մ.-ին, ինձ՝ զանազան ոսկեզօծ զոդնոցներում փաթաթված Վարդանիս և մեզանից 250 ո. թատրոնի վարձ ստացող իտալացի Տորիչելլոյին²⁷ քթի տակ մեզ վերա ծիծաղելիս, մեր կառավարիչ պ. Միրիմանյանին բեմի աջակողմի օթյակում նստած, և զուր կունենաք շատ թույլ պատվեր խայտառակ իրագործված Նուշանիկի ներկայացումի մասին²⁸. բայց թե ձեր զնաց այդ ներկայացման մուտքը, մինչև այսօր ինձ հայանի չէ:

4

Այս գլխում ես տնօրենացում եմ համարում բացատրել պ. Պատկանյանի ինձ ասած «В ПИКУ ИМ» խոսքերի նշանակությունը:

Պատկանյանը և հանգուցյալ Կարինյանը, սկսեցին Ներսիսյան զպրոցի աշակերտներից մեկ քանիսի հետ, ինչպես էին պղ. Ամերիկյան, Մուքիսյան, Մատինյան, ազազա երևելի տաղանդները, և Պերճ Պոռչյանի ձեռնադրով խմբով տալ մեկ-երկու թե երեք ներկայացումներ Ներսիսյան զպրոցի զանչիւնում²⁹: Հետո, կարծեմ, երբ մի քանի տարի անց Պատկանյանը կազմեց առանձին խումբ գրեթե անգլիայի աշակերտներից և ավելի մեկ քանի ներկայացումներ Շերմազանյանի զանչիւնում³⁰, այդ երկու ուժը՝ Պատկանյանը և Կարինյանը զարձալ միասնելով կամեցան տալ ներկայացումներ քաղաքային թատրոնի զանչիւնում: Այդ մասնակի Պերճը, Ամերիկյանը, Մուքիսյանը, Ռուսաստանից նոր եկած երիտասարդ Շահաթյանյանը և Մատինյանը բաժանվեցան նրանցից և տվին վերև հիշած Սամվել և Արշակ պիեսաների ներկայացումները: Այս բացատրությունից հետո պարզ բան է, որ մենք, այսինքն քառասուն անգամներից բաղկացած խումբը և ես դառանք դործիք երկպառակություն գեմ: Այն մասնակի ես չէի զգում այդ բանը, բայց լավ էի հասկանում, որ հարկավոր է ունենալ Թիֆլիսի մեջ կանոնավորված, փոքրիկ հայ դերասանական խումբ:

* Եւր (ցածր) բաս:

Շուշանիկի ներկայացումից հետո անցավ մեկ տարի Կարինյանը գրել էր Վարդան Մամիկոնյանն ողբերգությունը, կարծեմ, հինգ արարվածով։

Մենք հազարվեցանք դարձյալ Կարինյանի տանը։

Պիեսան կարդալուց հետո՝ նիստը, որ բաղկանում էր Միլիթանյանից, Պատկանյանից, Կարինյանից, քառասուն անգամից, ինձանից և Կ. Ջ-ից, համեմարարեց Շադինյանին և ինձ հարմարեցնել այդ պիեսան բեմական խաղարկության համար։ Երեք օրից հետո ես և Շադինյանը հինգ արարվածով Վարդան Մամիկոնյանը ներկայացրինք նիստին կրեք արարվածով։ Նիստը որոշեց տալ այդ ներկայացումը։

Գ Ա Յ Ի Ա Ն Ն

Երբեք հայ թատրոնական բեմը քեզ չպիտի մոռանա, ազնիվ երիտասարդ, մեծամորքող Գայիանե։ Դու, չքավորությանդ պատճառով ենթարկվելով անպիտան, շահասեր մարդկանց կրքերին, առանց իմանալու, թե ինչ ես անում, ստեղծեցիր բեմի համար տաղանդավոր գերասանուհի Գայիանեին, որը հայ հասարակության առաջ անցավ ցնորքի պես անիմաստ, բայց այդ հիշատակը անջնջելի Մնաց ինչպե՞ս հայոց բեմի համար, որը պարզեց քեզ, իբրև երախտագիտ մի մոր, տասնավոր հայ գերասանուհիք, որոնց մեջ պարծանքով կարող ես դու ցույց տալ Սաթևիկին, Քեթևան Արամյանին և նոցա հետագաներին, որոնք պիտի խոստովանվին, որ քո աշակերտուհիք են և պիտի պարտավոր Մնան քեզ միշտ, հիշելով քո հայ բեմին բնծայած գերասանուհու նշանակությունը։

Վարդան-ի մեջ անհրաժեշտ էր ունենալ երեք գերասանուհի, Սաթևիկի՝ Վասակի կնոջ գերի համար, Դստիկի՝ Վարդանի կնոջ գերի համար, և դարձյալ մեկ իշխանի կնոջ գերի համար։

Իսկ այդ միջոցին ամբողջ թիֆլիսում գտնվում էր միայն մեկ գերասանուհի, այսինքն մեկ անգամ բեմ դուրս եկած (Դավալ Աղոյի մեջ) ա. Շահինյանը, որ հայերեն կարդալ չիմանալով, սովորել էր յուր գերը ամուսնու բերանից անդիր անկողի։

Միևնույն ժամանակ Կարինյանի և Պատկանյանի դեմ երկպառակցված խումբը պատրաստում էր յուր համար գերասանուհի տաղանդավոր, երկվելի, բայց, ալմա՞, կարճ միջոցի համար, հազվագյուտ ա. Մելեք-Նազարյանին։ ԵՊեսեք է գերասանուհիք - վճռեց նիստը և երեք օրից հետո, չնորհիվ Հ. Կարինյանի, լեցվեցան նորա դանիկը վեց թե յոթ օրերգներ, պատրաստ իրանց գերասանության նվիրելու։

Ժ շարս դացա էին մեծամորքող օր. Գայիանեն, օր. Արամյանը և օր. Սոփիա, կարծեմ, Դավթյան ողջանունով։

Առաջին իսկ փորձում օր. Գայիանեն ցույց տվեց, որ նա հանճար է։ Հանդիսականները զմայլեցան, և նիստը վճռեց, որ նոր խումբը պիտի հրաշքներ գործե, յուր մեջ ունենալով այդպիսի չնորհալի գերասանուհի։

Մյուս կուսակցությունը, որին այսուհետև ես կանվանեմ պերճյան

* Ավագը սեղիվ մեկը ախ նեք ուզում սեղի, որ քիչ ժամանակ ծառայելուց հետո ա. Մելեք-Նազարյանը՝ պ. Գ. Իզմիրյանի հետ ամուսնանալուց հետո՝ բուրձովին թողեց հայկական բեմը, Սաթև. ևն։

կուսակցութիւն, որովհետեւ Պերճն էր նորանց պարագլուխը, շարունակում էր յուր գործունեութիւնը։ Նա պատրաստում էր Սաեղախտ պիւտան լճեցի անունով մեկ տաճկաստանցի պարոնի կառավարչությամբ։

< ՈՒԺԵՐԻ ՄԻԱՑՈՒՄ >

1

Չեմ հիշում, թե երբ և ինչ տեղ ծանոթացաւ Ամերիկյանի և Սուքիա-
այանի հետ, միայն լավ միտս է, որ մեկ երեկոս ես հրաժիրեցի այդ պա-
րոններին ինձ մօտ և կարգացի Շեքսպիրի Քիմոն Արեմացին իմ թարգ-
մանութիւնից մի քանի տեղ (պիտի խոստովանիմ, շատ աննշան թարգ-
մանութիւն էր)։

Այդ ընթերցանության ժամանակ ես նկատեցի, որ իմ թե կարգայու-
ւ և թե շեշտահարության ձևը (որովհետեւ ես աշխատում էի կարգաւ այնպես,
ինչպես երեսակայում էի, թե պիտի կարգամ թատրոնական բեմից) նրանց
շատ անծանոթ թվաց և անդամ ծիծաղ պատճառեց։ Կարգում էի շատ
հասարակ և բնական ձևով։

Իմ այդ կարգաւու ձևս թատրոնական արհեստին վերաբերող երկար
վիճարանության պատճառ դառաւ։

Նոքա համոզված էին, որ պիտի ընդունված երգոցողական կամ, ինչ-
պես տեսնում են մինչև այժմ, ողբերգական առողանութիւնով արտասանել
ամեն մեկ խոսք, որպես թե այդ ձևով տառափել կարելի է ուղղել հանդիսա-
կաններին վերա։

Ես սկսեցի հերքել այդ կարծիքը և օրինակ բերեցի զանազան թա-
րոնական բեմեր, որտեղից վաղուց արտաքսված է այդ հնացած մեթոդը,
որ միայն բթացնում է զերասանի ընդունակութիւնը, որովհետեւ զերա-
սանը սովորելով այդ ձևին, այնուհետեւ շինում է նորան յուր համար մեքե-
նայական արհեստ և չի մշակում յուր ընդունակութիւնը, երբեմն տաղանդն
անդամ։

Վերջապես, բացատրելով իրարու մեր մօքերը, մենք ձեռք-ձեռքի տը-
վինք և խոստացանք, որ շնայելով թե մենք պատկանում ենք հակառակ
կուսակցութիւնների, այսինքն ես՝ հակապերճական, իսկ նոքա՝ պերճական,
հայ թատրոնի բեմի համար միշտ կաշխատենք միասին։

Եկաւ գարունը, ես հողաշափության գործով գնացի զանազան գյուղեր։

Ամառով միջոցում, հայտնի բան է, դադարեց հայ թատրոնի գործու-
նեութիւնը։

Թիֆլիս վերադարձաւ աշնան սկզբներում և վճռեցի թողնել հո-
ղաշափական պաշտոնս և նվիրել ինձ հայ թատրոնական գործունեության։

Դարձայ Նավաքովեցանք Ամերիկյանը, ես և Սուքիայանը, և հիշելով
մեր միմյանց տված խոստմունքը, սկսեցինք գործել։

Գնացինք պ. Գ. Իզմիրյանի մօտ և հրաժիրեցինք նորան օգնել մեզ։
Այդ բանի համար նա շատ ուրախացաւ և հայտնեց յուր պատրաս-
տութիւնը, միայն այն պայմանով, որ երկու խմբից կազմվի մեկ
խումբ։²¹

Մեկ քանի օրից հետո Իզմիրյանը կանչեց մեզ, տասներկու նշանա-
վոր հայ մարդկերանց մեկ ցուցակ շինեց և հանձնարարեց մեզ՝ դիմել

ամեն մեկին նորանցից և ստորագրել տալ։ Այդ ցուցակի հետ կար և մեկ թուղթ, որի մեջ հայտնված էր՝ որ ստորագրող անձինք պետք է համաձայնին կազմել իրանցից հոգաբարձական ժողով, որը պիտի կառավարե հայ գերատեսնական խումբը Թիֆլիսում։

Ես և պ. Սուքիասյանը հանձն տանք ման ամել այդ թղթերը։ Օ՛րհրջանիկ անցած, միշտ հուշերով լի և անվրդով երիտասարդություն։ Երանի թե դու Մայրի անխախտ և չընկնելի հազար ու մեկ հորվածների տակ, խոստովանելով ներկա անգործությունդ և հիշելով լուսավոր անցյալդ։ Առանք այս թղթերը, գիմեցինք նախ և առաջ պ. Իզմիրյանի ազգականներից մեկին, հարուստ, չափ և իրան ծայրանկ ազգասեր համարող, այժմ հանդուցյալ Ն³²....

Սեպտեմբեր ամսին էր, ինչպես հիշում եմ, և շատ տաք կլանակ էր։ Մասնք աղադափի դռնից, սիրտս սկսեց քիչ բարախել, որովհետև դեռ վաղը չէի ձգել ինձանից պաշտոնական ունիֆորմս և չիտոթիկություն վերս ունեցած բարձր կարծիքը իմ մեջ փոքր ինչ շփոթվեցավ։

Ե՛րեւոյեմ,— գործեցավ իմ մեջ հարց,— ես, սքանչելի գուրերնակի սեկրետարս, պիտի ստորանամ, գիմելով մեկ սրերից անձանոթ հաստափոր վաճառականի, որին կարող է խորթ թվիլ իմ այցելությունս։ Բայց երիտասարդություն հատկանիշ խոհեմությունը հաղթեց իմ մեջ չինոթիկ չնչին հոնորը։

Բակը մտնելուն պես Սուքիասյանը կանգնեց և ասաջարկեց ինձ մտնել պ. հաստափորի մոտ միայնակ։

Անցա սան դափիթը, սկսեցի բարձրանալ սանդուղներից, տեսա մեկ երկայն, սաստիկ հաստ և կարճադուլն երեսով մարդ, փաթաթված արքեշուսի խալաթում, նստած փոքրիկ տախտանման բանի վերա։ Բակ նորա առաջ կանգնած էր մեկ գալուլ հրեա՝ կարճ հասակով և կարճ մորուքով։

Սանդուղի կեսը հասնելուն պես՝ Ն. նկատեց ինձ։ Ես կանգ առա և դուռն ավի, բայց նա չշարժեց տեղից։

Հաճաքեցի իմ բոլոր քաջությունս և հասա բախնի գուռը, որ կողպած էր այն կողմից։

Տեսա չին բաց անում, ես բախեցի։

— Ի՛նչ ես ուզում, մի ես,— հարցրեց ինձ չարացած մեկ ձայն։

— Խնդրեմ,— պատասխանեցի ես։ Ներքե մտիկ ավի դափիթը և տեսա, ինչպես փոքր բռնած ծիծաղում է այս անցքի վերա ծագրերես Սուքիասյանը։

Ե՛մարդիբ,— մտածեցի ես ինձ ուրնձ,— իսկ ես կհասնեմ իմ նպատակին։

Դուսն կեսը բացվեց և տեսա կանգնած առաջիս ալյանդակ տանալի բողբ, որ չարությունից համարյա փրփրում էր, և այնքան վրդովվել էր, որ չնկատեց, թե ինչպես նորա լայն խալաթի փեշերը բացվել էին և նա արժանացնում է ինձ յուր կեղտոտ շապիկի և վարտիկի զմայլուն տեսարանին։

— Ի՛նչ ես ուզում,— բռնաց վերստ պ. Խալաթը։

Փոխանակ պատասխանելու, մեկնեցի նորան ձեռիս թերթերը։

— Դուսն մե տատ, էս ի՛նչ է։

— Այդ ուղարկել է ձեզ մոտ Իզմիրյանը և խնդրում է, որ հանձն տանեք դուք թատրոնական...

— Տճ կորեք, գնացեք, ձեր թաարոնի ներս էլ։...— և շրջիկ, կողպեց զուար երեսիս վերս։

— ԱՄ ԴԱ...—ասացի ևս և քացի ավի գոանը, Ինչպէս, դու համար-
նակում ևս վերադարձի ինձ, չինոքիկ ժարգմա...

Սուքիասյանի ծիծաղը զավթում ուժեղացաւ. ևս զսպեցի ինձ և շատ
ծաղրայի և խալառակ ձևով իջա պարոնի սանդուղներէից։

Մտեցաւ Սուքիասյանին, նա թողեց ինձ և շարունակելով յուր քրքը-
սայի ծիծաղը, փախաւ ինձանից։

Սաստիկ վերադարձած, համարյա զողալով բարկությանից, եկա Իզ-
միրյանցի մօտ, որսեզ արդեն Սուքիասյանը ծիծաղից նկնկալով՝ պատ-
մում էր զխիս ևկած խալառակ անցքը։

Իսկ Իզմիրյանը փոխանակ ինձ հանգստացնելու, սկսեց ծիծաղել ինքն
ևս. Կատաղության սահմանն անցաւ։

— Ծիծաղեցեք, ծիծաղեցեք,— ասացի ևս,— բայց լավ իմացեք, որ
այդ խալառակությունը ձեզ է վերաբերում, որովհետեւ ևս ձեր առա-
քայալն էի։

Վերջապես ինձ հանգստացրին, և մյուս օրը զարձալ առի թեր-
թերը ձեռս և ընկա Սուքիասյանի նետ քուշա-քուշա։

2

Վերջապես կազմվեցաւ հոգաբարձությունը այս անձինքներից, այն է՝
պղ. Փրիգոնյանից, Իզմիրյանից, Սուեդուկյանից, հանդուցյալ Ա. Սվեչ-
նիկյանից, բժիշկ, նստո տաղանդավոր նկարիչ Մ. Տեր-Պրիգորյանից,
ն. Միրիմանյանից, Աղամջանյանից, Խորոյանից, Նազիրյանից, Շադի-
նյանից և դարձաւ երկու պարոնից, որոնց անունները ճոռացել եմ²³։

Բայց պետք է ասած, որ մինչև այդ հոգաբարձության կազմվելը պերճա-
կան խումբը, ինչպես ասացի վերևում, արդեն սկսել էր պատրաստել պ.
Մարկոս Աղաբեկյանի (երբեմն խժըպորի Եփունիկ հայոց աշխարհ-ի) վաթ-
շության ներքո Սամգուխ որբերգությունը²⁴, որի մեջ առաջին անգամ
պիտի բեմ զուրս դար տաղանդավոր՝ Կիկին Նվարդ Մելիք-Նազարյանը։

Այս տեսակ անձինքներից հոգաբարձություն կազմելով՝ ձեռք-ձեռք աված
մեր երեք գերասաններն միակ նպատակն էր միացնել երկու հակառակ
կուսակցությունները, որոնց մեջ պ. Իզմիրյանը մեկ կուսակցության, այս-
ինքն պերճական կուսակցության պարագլուխն էր, իսկ երկրորդին՝ պ. Ն.
Միրիմանյանն էր։ Առաջինը գերասանական ուժերն էին պ. Շահաթուրյանը,
Ամերիկյանը, Սուքիասյանը և Մատինյանը, իսկ երկրորդին՝ ևս էի և այն
ժամանակ նշանավոր թաարոնական նկարիչներ, բեմական արհեստի մեջ
փորձված պ. Միքայել Պատկանյանը, հանդուցյալ Հակոբ Կարինյանը և
նորանց զկիւմար, երբեմն քաղաքային առա-խալական թաարոնական կա-
ռավարիչ պ. Իվան Շադինյանը։

Կազմելով երկու կուսակցություններից մեկ հոգաբարձություն, պետք
էր նուսալ, որ ընդհանուր ազգային գործունեության մեջ կրճերը այլևս
անց չպետք է ունենային։ Բայց, որովհետեւ ամեն մեկը, յուր կրճոս զա-
գափարը առաջ տանելու համար, չնչին ետական կողմաթիւմամբ հալածում
էր մեկ ուրիշի, գործին հարկած ավին։

Այսպես, պարոն Իզմիրյանը, Պերճի ազգեցության տակ, աշխատում

էր պաշտպանել միշտ պերճական խմբի արտոնութիւնները, իսկ պզ. Մի-
րիմանյանը և Շաղինյանը, չ. Կարինյանի ազդեցութեան տակ, աշխատում
էին գործի զեկամարութիւնը իրանց ձեռքն առնել:

Վերջապես եղած հոգարարութեան առաջին նիստը, Հիշում եմ լավ,
ինչպէս ինձ, Ամերիկյանին, Մուքիասյանին և Կուսիկյանին հրազի-
րեցին Ազամջանյանի փառանկ, շատ զարդարված կարինեար և այնպէս
հազար ու մեկ խոստածներ արին ընդդէմ, որոնց թվում նաեւ ինձ,
որովհետեւ ես հայանեցի, որ թողնում եմ հազիւյան հոգաւորական պաշ-
տօնս և վճռել եմ պարապել միայն հայ թատրոնական բեմով:

Դորանից հետո հոգարարութիւնը նիստ ունեցավ, եթէ չեմ սխալ-
վում, պ. Իգմիրյանի տանը 1863 թ. հոկտեմբերի 5-ին և վճռեց Գրիգոր
Իգմիրյանին ճանաչել թատրոնի ընդհանուր կառավարիչ, որը պիտի ունե-
նար պաշտոնական հարաբերութիւն թէ դուրսը և թէ թատրոնում, իսկ
արհեստական ժառը հանձնեցին պզ. Տ. Գրիգորյանին, Մուկուկյանին,
Ազամջանյանին և Շաղինյանին, իսկ տնտեսական ժառը՝ պ. Ն. Միրիմա-
նյանին:

Եվ ահա ամփոփեմ միութեամբ առաջին ներկայացումը՝ Սանդուխտ ող-
բերգութիւնը, որի մեջ երկրորդ անգամ ես դուրս եկա բեմ Երվանդ անու-
նով սիրահարական դերի մեջ:

Օ՛, քաղցր հիշատակ, անդառնալի, ումեկ, երիտասարդական քաղցր
զգացմունքներ...

Մինչև ներկայացման օրը սիրտս ալեկոծվում, բարախում էր այնպէս,
ինչպէս պատահում է սիրահարներին, մինչև նոցա արժանի են լինում
տեսնել առաջին անգամ իրենց սիրտ առարկան:

Եկավ վերջապէս ներկայացման օրը. օրհնասրը անց ուվերայուրան,
բաղին վարդաւրդը, ևս դուրս եկա Զ-ի հետ, որ խաղում էր Շավարշի դերը:

Բեմ դուրս գալուս պէս աչքերս մթնեցան, սրտիս բարախումը ցատ-
կացավ այնպէս, որ կարծում էի, թե կփռվիմ բեմի վերա և չէի զգում ոչ
մեկը իմ արտասանած խոսքերիցս, մանավանդ որ մեծ ժառը համարյա չէի
հասկանում և անգիր էի արել մեքենայաբար:

Մինչև հիմա միտս են այն խոսքերը, որ Երվանդը ասում է, վերա-
դառնալով պատերազմից վերադարձած, և որի նշանակութիւնը իմացա
ներկայացումից շատ օրեր հետո, դիմելով մեր ունեթոյորին՝ Աղաբեկյանին:
Այդ բառերն էին՝ «ժողովրդանձ դաշտից փառաց արշուճոտ մրտենին ճա-
կատից»։ Իսկ ես արտասանում էի, կապելով այդ խոսքերը միմյանց հետե-
վից և չեղտելով անհարմար վանկերի վերա և դուրս էր գալիս տփարթա-
խան՝ «դաշտից — փառաց — արշուճոտ, մրտեն-ին ճակտիւս և այլն»:

Գրեմով Սանդուխտը Դալալ Ղաղղ վոգելիով և առաջին անգամ ստա-
ցա վարձ խաղիս համար 30 ու.:

Երկրորդ անգամ հոգաբարձութիւնը վճռեց տալ ժուտ անունով պիե-
սան, հեղինակութիւն Տեր-Գրիգորյանի, և Գրիգորով սարքը խեբ է, հեղի-
նակութիւն Մուկուկյանի, որոնք առաջին անգամ էինք խաղում: Նույնը
կրկնեցինք երկրորդ անգամ²⁶:

ՄԱՆ ԴԻՆՅԱՆ

Այս երկու պիեսաների կրկնութեան ժամանակ, գուցէ և քիչ առաջ, լավ
չեմ հիշում, եկավ Մոսկովայից պ. Մ. Մանգինյանը:

Լսած լինելով այդ պարտնի զերասանական ձերքի մասին, որ ցույց էր տված Լազարյան ճեմարանի աշակերտների ներկայացուցիչների մասնակցի, չգիտեմ մի մեղանից զորան հրազիրեց մեր կրկնություններին, որին միշտ ներկա էին գտնվում հեղինակները:

Մանգրեյանը հանձն առավ խաղալ Արուսթուն Ճարարտովի զերը և առաջին իսկ կրկնության մասնակցի այնպիսի մեկ նոր և ինքնուրույն խաղի մե ցույց տվեց, որ ամենքն զմայլվեցան և զրոշմեցին նորան աբախա անուսով:

Այդ որից սկսվեցավ իմ և Նուրա ծանոթությունը, որ վերջին մասնակցներում փոխվեցավ սերտ բարեկամության:

Նա սկսեց առավել լզրգել իմ մեջ սեր զեպի բեմական աբենսաը և միացավ մեզ հետ, այսինքն ինձ, Ամերիկյանի և Սուքրիայանի հետ, իբրև հայ թատրոնական բեմի մշտական զերասան, և այդ մասնակցից, կարծեմ, սկսեց թարգմանել Կրեշիմախու հաքսամիրը, որի մասին կիսսիմ ներքեր:

ՆՈՐԻՑ ԲԱԺԱԼՈՒՄ

1

Այդ երկրորդ և երրորդ²⁴ ներկայացուցիչները ևս գնացին հանդարտ և առանց խռովության թե հոգաբարձուների և թե զերասանների կողմից: Նկատելով չորրորդ ներկայացումը՝ Արտաշես և Սարենիկ՝ հեղինակություն Հեթմանի:

Սկսեցին բաժանել զերերը և կրքերն երեսն եկան:

Նա և Շահաթումյանը ընդունված էինք իբրև մեկ ամպլուայի զերասաններ: Եվ այնպես էր որոշված բերանացի պայմանով, թե երբ մեկ պինսալում Շահաթումյանը կատարեր առաջնակարգ զեր, այն պինսալում պետք չէր սալ ինձ երկրորդական զեր: Բայց ընդհանուր կառավարիչ Իզզ միրյանը և մեր սեմիյայր Ազարեկյանը որոշեցին առ Շահաթումյանին Արտաշեսի զերը, իսկ ինձ մեկ աննշան և չնչին երկրորդական զերերից մեկը:

Ես հրամարվեցաւ Բաղձրացավ սաստիկ ազմուկ²⁵:

Հոգաբարձությունը, նմանապես և զերասանները, բաժանվեցան երկու կուսակցության:

Հոգաբարձությունից պաշտպանում էին իմ իրավունքս միայն Շահինյանը և Միրիմանյանը, իսկ զերասաններից Ամերիկյանը և Սուքրիայանը, որոնք ներկա էին այդ վեճին:

Այս հանգամանքի հետ միացավ մեկ ուրիշ անսպասելի հանգամանք ևս, որ պատճառ եղավ շափառանկան երկպառակության հոգաբարձուների և զերասանների մեջ, և որի հետևանքն էր երկու կուսակցության ջոկ-ջոկ ներկայացուցիչներ առը և երկու թաարոնասերների առանձին խմբեր կազմելը:

Հոգաբարձությունը յուր նիստերից մեկի մեջ, առաջարկությամբ Գ. Իզմիրյանի, որտեղ էր բաժանել զերասանական խումբը զանազան կարգերի և վարձատրել ներկայացուցիչներից ստացած եկամուտից ամեն մեկին ըստ արժանավորության: Այդպես՝ զերասանուհիներին բաժանել էին երեք կարգի և առաջին կարգում գտանել էին միայն Նվարդ Մելիք-Նազարյանին, որ պիտի ստանար երկրորդ կարգի զերասանուհիներից 10 աուրլիով առա-

վել, իսկ Պայրաներն, որի քնդունակությունը և ազգանդը Վարդանի կրքովնութուններից հետո, արգեն հռչակված էր ամեն տեղ, հոգաբարձությունը պատել էր նրկորոյ կարգի գերաստուններին հետ, հոգաբարձությունից Միքիմանյանը և Շաղինյանը, իսկ գերաստաններից՝ Խո, Սուքիասյանը, Կուսիկյանը և Մանգինյանը բողոքեցինք այդ քանի դեմ:

Գ. Իզմիրյանը որոշեց հրաժիրել հոգաբարձական մեկ նիստ ևս, որին հոգաբարձուներից մասնակից էին ինչ հոգի միայն, հրաժիրեցին գերաստաններին, որ մենք հոգաբարձական վճար ներքո ստորագրելով՝ հայտնենք ամեն մեկս մեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

Հոգաբարձության այդ նիստը տեղի ունեցավ Պերեի հիմնած մասնավոր ուսումնարանում²⁷, որ գանձում էր Մոզու թաղում:

Բոլոր գերաստաններս և գերաստուններ համաձայնության եկանք մեր վերաբերմունքի շուրջը: Նիստը բացվելուց առաջ ևս հայտնեցի պ. Իզմիրյանին իմ ընկերներին կողման և արձիքս հոգաբարձական այդպիսի այլանդակ վճար մասին, ասելով՝ որ այն ժամանակ միայն կարող էին նոքա նախապատվել երկու հաղապար ուժ ունեցող գերաստուններից մեկին մյուսին, երբ նոքա վարձեն բոլոր խմբի անձինքները ամսական ոտքիկով: Իսկ երբոր ոչ մեկը մեզանից չի կարող համոզվել, որ Խ. Մելիք-Նազարյանի գերաստանական քնդունակությունը կարող է առավել բարձր լինել ք. Պայրանից, ուրեմն և ավելորդ է այդպիսի նշանավոր տարբերություն որոշել նոցա երկուսի մեջ, աչքի տակ ունենալով, որ թատրոնական ներկայացումներից ստացած գումարի կարգադրության իրավունք կվայելէ հանձնել գերաստանական խմբին և ոչ թե հոգաբարձուներին, որոնք միայն պիտի աշխատեն նյութական կողմից բարելավեցնելու հայ թատրոնի տղազան:

Ինձ և մյուս ընկերներին լսող չեղավ: Նիստը բացվեց, մեզ սկսեցին մեկ-մեկ ներս կանչել մյուս սենյակը:

Առաջինը մտա ևս, և պիտի խոստովանեի, որ մտա սաստիկ զազազած բարեկությունիցս:

— Գ. Ջեզկյան, — պարձով ինձ պ. Իզմիրյանը, — կարգացե՛ք հոգաբարձական օրագիրը և ստորագրեցե՛ք ձեր համաձայնությունը կամ անհամաձայնությունը:

— Ձեզ հայտնեցի, պարոն, — պատասխանեցի ևս, — որ հոգաբարձության արած վեճըրը գանու՛մ եմ անկանոն և կողմնադա՛ն, — ասացի և ստասիկ վրդովված ստորագրեցի համաձայն չեմ:

Այս տողերը գրելու ժամանակ, մտա ունենալով այդ օրվա կազմրված օրագիրը, հետաքրքրությունիցս նայեցի իմ ստորագրությանս և համոզվեցա, որ մարդու գրելու եղանակից կարելի է հասկանալ նրա հոգեկան գրությունը:

Համաձայն չեմ, Գ. Ջեզկյան: Այս մեկ քանի բառերը գրելու եղանակից երևում է, որ ևս սարսափելի հուզված գրության մեջ եմ եղել:

Ստորագրեցի և դուրս եկա, պինդ խփելով դուռը հետևիցս:

Ինձանից հետո մտավ Ս. Մանգինյանը, որ ստորագրեց համաբայ միևնույնը և շարունակվեց այդպես: Ի վերջո դուրս եկավ, որ համաձայնվել էին միայն երեք թե չորս անձինք, որոնք առանձին նշանակություն չունենին խմբի մեջ²⁸:



Գաբրիել Սահակյանի 1880-ական թվականներին





U=μ₀h_ν f_ν² 2d₁h_ν=5e 1000-ω₀=5 μ₀h_ν=5h_νh_νh_νh_νh_ν

Այս անցքից հետո թատրոնական միացած ուժերը բաժանվեցան երկուսի և վերջացավ հոգաբարձական գործունեություներ և նորա պաշտոնական օրացույցայինները:

Գրիգոր Իզմիրյանը դառավ պարագլուխ մեկ ուժի, որոնց մեջ էին ա. Մելիք-Նազարյան, Շահխաթունյան և հազվագյուտ տաղանդ, հանգուցյալ Ս. Մատինյանը, իսկ մյուս ուժը, որը կազմվեց ինձանից, Ամերիկյանից, Սուքիասյանից և հուշարար Ս. Կարինյանից, ժամանակ. Ն. Միրիմանյանի հովանավորության տակ, հիմնելով միևնույն ժամանակ անկախ և միասին ընկերություն:

Մենք զենեցինք տալ առաջին անգամ Վարդան Մամիկոնյան³⁹, որ ինչպես տասցի վերե, աղքեն պատրաստ էր համարյա: Երեցինք հայտարարություններ, եկավ ներկայացման դիմերը: Անսպասելի ֆուրոր: Օրիորդ Գալիանեն գերազանցեց իրեն, և մեռա սաստիկ էֆեկտով, ժողովուրդը ապշեց, զմայլվեց և ևս արժանացաւ Ն. Միրիմանյանի համարույթին:

Պետք է խոստովանվել, որ սաստիկ ուսուցիչներ էին Վարդանի գերը:

Այդ հերոսի նկարագրությունը փոքր ի շատե իմանալով երեխայության հասակումս, պիսասլուծում նորա շնչին ձևով նկարագրված բնավորություն արտահայտությունները ևս երևակայեցի մշակել բեմի համար իմ հասկացողության համեմատ: Հափշտակված թատրոնական արհեստով և երևակայելով, որ պիտի երևելի գերասան գառնամ, ամբողջ օրեր սկսեցի պարապել Վարդանի գերով:

Կարգացած էի, թե ինքնուրույն միտք ծագեց իմ մեջ, լավ չեմ հիշում, միայն սկսեցի պարապել այդ գերի մշակելուն հետևյալ ձևով:

Մենք, աշակերտ ևս, ձնողացա հետ, Մուսի էինք այն ժամանակ պ. Մ. Ղորգանովի տանը⁴⁰, Մուխրանսկի անվանված փողոցում:

Ունեինք մեկ դահլիճանման սենյակ, որի մեջ կար հին, պատմական, բազմակամրե մեծ հայելի և նորա գիմաց զբաժ մեկ անագին դիման, լուսին գուլուսին (երրորդ գործողության Վարդանի առաջին մենախոսությունը) սկսելով մյուս սենյակներից, ևս մանուկ էի այդ դահլիճանման սենյակը և փակելով նորա միայնակ դուռը դեպի նախասենյակը, շարունակում էի այդ մենախոսությունը հայելու առաջ: Սկսում էի առաջին գործողությունից, նկատելով հայելու մեջ ամեն մեկ շարժվածքս, մշակում էի այդ կերպով գերս և շատ անգամ Մուսի էի բազմական իմ գերասանական հանճարովս:

Գնաց, հափշտակվեց այդ երջանիկ երիտասարդական հիշատակը, ամփոփվելով ժամանակի խիստ հոսանքների ալիքների մեջ...

3

Պերճական խմբի աված ներկայացումներից մեկն էր և Արուսյակ անունով ողբերգությունը,⁴¹ որ գրել էր պ. Ա. Երիցյանը ա. Արուսյակի խաղը Պուշում տեսնելուց հետո, և այդ պատճառով էլ պիսաս նվիրված էր գերասանուհի Արուսյակին: Հեղինակը Նյու Յըրկից գերցրել էր Բագրատունյաց անկման ժամանակներից, ներկայացնելով անցքը կռույթ ձևով, Հեթում անունով իշխանի ընտանեկան շրջանում:

Ես նպատակ չունիմ այս պիեսայի մասին ընդարձակորեն խոսել, միայն ուզում եմ պատմել մեկ քանի փոքրիկ իրողութիւններ, որ պատահեցան այդ պիեսայի ներկայացման ժամանակ, որից ընթերցողն ինքը կարող է դադափար կազմել նորա արժանագորութիւնն մասին:

Պերճական խմբի ակտիւներն էր, ինչպես ասացինք զերեւ, պ. Ազարեկյանը: Խմբին հոգի տվողը ա. Ս. Մելիք-Նազարյանն էր, որը խաղում էր հերոսուհի Արուսյակի դերը:

Կրկնութիւնների ժամանակ զերասանուհին նկատում է, որ վերջին գործողութիւնն մեջ բոլոր գործող անձինք լմեռնում են և միայն ինքն է մնում բեմի վերա:

— Իսկ ես թիչ անեմ, իմ գրութիւնս շատ ծագրալի է,— ասում է զերասանուհին ակտիւյոր պ. Ազարեկյանին,— ամենքը մեռնում են և ես մնում եմ սատած:

Առաջին անգամ պ. Ազարեկյանը ականջ չի դնում այդ նկատողութիւնը, գծաբանաւոր մեկ որոշ պատասխան տալ, բայց երբ ա. Մելիք-Նազարյանը քանիցս կրկնում է յուր հարցը, հուսահատված ակտիւյորը վերջապէս բացականչում է.

— Ամեն, կտեսնես, որ ամենքը մեռան, դուն ալ բնիկը ու մեռիր:

Այդպէս էլ արավ զերասանուհին գործողութիւն վերջում. Երբ բոլոր գործող անձինք սպանված փոփեցան նորա շուրջը, նա էլ մեկ մեղգեղանման երգ ասաց և ինքն էլ փոփեցավ գիւղների կույտվածքի վերա և մեռավ ասանց որեւիցէ պատճառի, որից սաստիկ ծիծաղ բարձրացավ հանդիսականների մեջ: Վարագույրը ընկնելուց հետո, սկսեցին դուրս կանչել հեղինակին, ինչպէս ընդունված էր, բայց երբ երկար ծագաճարութիւնից և զանազան հեղնակաւն բացականչութիւններից հետո հեղինակը չերեցավ, կատակով լուր տարածվեցավ զահիճութեամբ, թե նա տեսնելով, որ յուր պիեսայի բոլոր գործող անձինքը մեռնում են, ինքն ես համակրելով նոցա ողբերգական վիճակին և հիփանդ լինելով այդ ժամանակ, մեռել է տանը պիեսայի իսկ վերջանալու ժամանակ:

Թաւառին նախամուտքերում, տեղ-տեղ կազմված խմբերում, որոնցից մեկի մեջ կանգնած էր պարոն Ե.....⁴³, լսվում էին հազար ու մեկ սուր խոսքեր և կատակներ ներկայացման մասին. Այդ խմբի առաջից անցավ շատապով շ. Կարինյանը, որին սաստիկ չէր սիրում հիշյալ պարոնը:

— Վարժապետ, վարժապետ,— կանչեց Ե.... Կարինյանի հետեից,— էդ մար ես փախչում, զերասանները քեզ են պոռում, որ տաննն բեմ և քեզ էլ մյուսների հետ ապանեն:

Մեկ խոսքով ոչ մեկ ներկայացում այդքան սրախոսութիւնաց աւիթ չէր տվել, ինչքան արժանահիշատակ Արուսյակ ողբերգութիւնը:

«ՆՈՐ ԳՈՐԾԻ ՍԿԻԶՐԸ»

1

Պ. Միրիմոնյանը թեև սկզբում շատ փոք ծախսեց հայ թատրոնական բեմի համար, որինակ՝ կազմեց բեմական շորեր և մինչև անգամ գրամական միջոցով օգնում էր թե՛ զերասաններին և թե՛ զերասանուհիներին, և զերասանուհիներից երեքին՝ օր. Գալիանին, Արամյանին և Դով-

թյանն համարյա երկու տարի շարունակ ոտելի էր տալիս, այսուամենայնիվ, հանկարծ թողնելով յուր հովանավորութունը, բարձի-թողի արավ մեր փոքրիկ խումբը: Բայց ես և ընկերներս՝ չնուսահառաջացանք:

Մենք զճեղքինք շարունակել մեր գործը անհախա մահնդից և այդ օրից ես հանձն առա շարունակել մեր սկսած գործը և ընկա դես ու գեն, արհա-համարհելով ամեն պատահած արգելք:

Պետք էր նախ և առաջ մեկ կանոնավոր խումբ կազմել:

Պերճը և Շախաթունյանը հեռացել էին Թիֆլիսից⁴³, աշնպես որ պիզմիրյանը չուներ միջոց շարունակելու յուր գործունեությունը⁴⁴, Հրավիրեցի ցրված խմբի անդամներին Պերճի ուսումնասրանք, Հավաքվեցան մոտ քսան թե քսանհինգ հոգի, որոնցից ամեն մեկը իրան երևելի և հազվագյուտ գերասան էր համարում: Նշանակած ժամանակին եկա և ես: Մեր ընկերությունը որոշել էր հետանալ փառած, անիմաստ և անհասկանալի ողբերգական պիեսներից և կազմել եվրոպական հասկացողության և ճաշակի համեմատ նոր սեպերատուար: Այդ ժամանակ հայ բեմը (բացի Տեր-Գրիգորյանի ժլատ, Փուգինյանի Դալալ Ղազո, Սունգուկյանի Գիշիրավան սարքը խոր և պիեսաներից) ոչ տեղական և ոչ թարգմանական պիեսաներ բեմ գուրս չէր հանել: Ես սաստիկ ուրախացա, երբ լսեցի, որ պ. Ա. Բաբանյանը թարգմանել է Սեր և Ուխապաշարմուք անունով կոմեդիան: Թեև առաջուց ծանոթ էի այդ երիտասարդի հետ, բայց նորա նոր թարգմանություն պատճառով մենք շատ մոտեցանք և կազմվեցավ մեր մեջ անկեղծ ընկերական հարաբերություն: Ծջմարիտ է, այդ պիեսան լեզվի կողմից ուներ յուր մեջ պակասություններ, բայց և աշնպես դա պատճառ եղավ նոր աշխարհարար լեզվով բեմ հանելու եվրոպական թարգմանություններ, մի բան, որ մինչև Սեր և Ուխապաշարմուք-ի ներկայացնելը, չատերը, հայերի մեջ ընդունված գիտնականներն անգամ, անհնարին էին համարում:

Ես մտա գահլիճ այդ պիեսան կռանս տակ:

— Պարոններ,— սկսեցի ես,— հոգաբարձություն չկա այլևս, մենք բաժանված էինք մինչև հիմա առանձին խմբերի և վստայելով միմյանց, վստ էինք տալիս և հայ թատրոնական գործի ապագային: Կկամենամք միանալ մեզ հետ և միասին տալ ներկայացումներ:

— Բայց մեզ մի կվարձատրեն մեր աշխատանքի համար,— հարցրին շատերը նորանցից:

— Նույն իսկ գործը,— պատասխանեցի ես և առաջարկեցի՝ բոլոր մեր միացած խումբը բաժանել երեք աստիճանի, ըստ արժանավորության և աշխատանքի բաշխել նոցա մեջ ներկայացումներից մեացած օգուտը:

Իմ առաջարկությունս ընդունվեցավ և ես հասա իմ նպատակին⁴⁵, նախ հավաքեցի ցրված ուժերը և այդ ուժերից ընտրեցի հարկավորներն ու ճշմարիտ օգտավետները, իսկ մեացած անընդունակները համոզվելով, որ ո՛չ իրանք կարող են օգուտ տալ թատրոնին և ո՛չ թատրոնը կարող է ապահովացնել իրանց վիճակը, ցրվեցան դես ու գեն՝ ուրիշ գործ փնտրելու:

2

Այսպես կազմվեցավ Թիֆլիսում այն կանոնավորված խումբը, որ թեև երբեմն կերպարանափոխվում է և կորցնում յուր ամենաընտիր և գործնա-

նյա, հայ թատրոնական գաղափարը հասկացող տաղանդներին շատերին, բայց այսուամենայնիվ նա միշտ Ֆուսէ է իբրև բեմական ուսումնաբան, որի մեջ ինքնուրույն կրթվում են հայ բեմի համար դերասաններ, որոնք և շարունակում են այդ սկզբնական խմբի գործունեությունը և ուղղությունը:

3

Ֆուսէրը կազմեցինք հետևյալ անձինքներս. ես իբրև ռեժիսոր,* և միևնույն ժամանակ Jeune premier-ի** իբրև դրամատիկական հերոսների գերեզ կատարող, Ամերիկյանը, Մանդինյանը իբրև առաջնակարգ sérieux*** կոմիկական գերեր կատարողներ, Սուքիասյանը իբրև ծագածու կամ կատակական կոմիկ գեր կատարող, Կուսիկյանը, Քուվմաս Զարգեղյանը (այժմ մեռած), Մատինյանը (շատ կարճ միջոցով) և ուրիշ երկրորդական դերասաններ, որոնց ես հիմա չեմ հիշում: Կանանց գերերի համար կային տ. Ս. Մելիք-Նազարյանը, օր. օր. Գոյիանե, Ս. Դավթյան****, Սաթենիկ (առաջ Տեր-Արքաճամյան) և Բ. Արամյան:

Դարունքն էր, գաղտնի հետ, որ մենք սկսեցինք պատրաստել Սեք և Ֆախապաշարմունք-ը: Գլխավոր կնոջ՝ Լելիի գերը, որ պիտի կատարեր օր. Գոյիանեն և որ, ինչպես տեսնում էին, գյուղ էր գնացել*****, ավինք տ. Մեչիք-Նազարյանին, Պենելոպեի գերը ավինք օր. Տեր-Արքաճամյանին (հետո Սաթենիկ), այլ մարդկանց գերերից՝ Սյուլիվանի գերը վերցրի ես, լուրջ Դեստինգի գերը Ամերիկյանը, Ֆրեդերիկի գերը Կուսիկյանը:

Քիստան պատրաստեցինք. Ֆուսէ էր վերցնել ներկայացման թույլտվությունը քաղաքային մեծ թատրոնում խաղալու համար, որի կառավարին էր իշխան Յազոն Քուսմանյանը:

Ես թեև ծանոթ չէի այդ ժամանակ այդ պարտնի հետ և թույլտվություն ներկայացման համար միշտ վերցնում էր պ. Միրիմանյանը, բայց վճռեցի առանց որևէ միջնորդի գիմել-ուղղակի նորան և վերցնել թույլտվություն:

Նախ և առաջ տեղեկացա ուրիշներին, թե որ ժամին է այդ պարտնը ընդունում գործի համար այցելողներին և մեկ առավոտ ութ և կես ժամին գնացի իշխանի տունը, որ գանձում էր Սուլուկում:

Զանգը քաշելիս, հայտնեցի ծառային իմ ազգանունն և իսկույն ինձ ներս հրավիրեցին կարիներ, որտեղ գտա իշխանին և իշխանուհուն: Նոքա երկուսն էլ ինձ շատ քաղցր ընդունեցին և ես ստացա թույլտվություն ներկայացման համար, չեմ հիշում որ օրերի համար, հարյուրական ուրբի վարձով:

Ուրախ-ուրախ դարձա ընկերներիս մոտ, որոնք անհամբերությամբ սպասում էին ինձ մեկ փոքրիկ կաֆեում:

* Այդ օրից Ֆուսէ ինձ հաղորդեց այդ պատմության անհամարժեք յուր բոլոր բեմական պատմություններով: Մանքա. հեղինակի:

** (Փր.) Վեսալին սիրահարին գեր կատարող դրամատիկ դերասան:

*** Լուրջ, խուսում:

**** Այդ օրից զբաղվում էր Վեսալի Վառլանի և անհայտ, Մանքա. հեղինակի:

***** Ինչպես հետո տեղեկացանք, նա այդ ժամանակ Քիֆիսուս էր և չէր գիտեր Քիֆիսուս գիմազիոսի շորերով: Երգչուհի Նազարը չէր գնում առավոտ ժամանակ շոր փոխել և փոցներով անցնել կրկնությունների գալու համար, Մանքա. հեղինակի:

Իսկույն ապագրեցինք աֆիշաները և տոմսակները (առաջին անգամ
Ֆարժեմ ամբողջ աֆիշան գուրս եկավ միայն հայերեն պարունակությամբ)
և մեկ քանի օրից հետո ավելինք ներկայացուցին բազմաթիվ հասարակու-
թյան առաջնք:

«Բռնավորներին» ու «կեցեցեներին» վերջ չկար:

Այդ պիեսայում առաջին անգամ Ամերիկյանը ցույց ավելի յուր կոմի-
կական հանճարը լորդ Գեստինգի դերում:

Մյուս օրը մենք բաժանեցինք մեր մեջ բավականին նշանավոր դու-
մար և համոզվեցանք ամենքս, որ առանց հոգաբարձության խառնվելու,
մենք ինքներս առավել վստահ և հաստատ կարող ենք առաջ առնել թա-
րոնական գործը:

<ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ>

Մեր և եախապաշարմուքից հետո մոզա ընկան թարգմանական պիեսա-
ներ, որոնցից նշանավորներն էին Ով որ քու բարը չէ, ճորա հիդ մի
ձգվե՞լ, որը թարգմանել էր ուսուցիչից պ. Տեր-Աղեքսանդրյանը, Թուզը
խաղաղագողի կյանքը և Եկոյի վարժապետ⁴³ (պ. Մ. Պատկանյանի թարգմանու-
թյունները) և Կրեչիմսկու հարսանիքը⁴⁴ (թարգմանություն պ. Մ. Մանդի-
նյանի) պիեսաները: Ներկայացրինք այդ միջոցին Ով որ քու բարը չէ, եա-
րա հիդ մի ձգվե՞լ ամբողջապես մեկ անգամ և մեկ կտոր՝ երկրորդ ան-
գամ: Եկոյի վարժապետը մեաց հաջիտյան հայ թատրոնի ուղեւորուարում:
Կրեչիմսկու հարսանիքը խաղացինք, կարծեմ, երկու անգամ:

Ես կխոսիմ Եկոյի վարժապետի և Կրեչիմսկու հարսանիքի մասին,
որովհետև այդ երկու պիեսաների ներկայացումից հետո մեր ընկերական
խումբը արգեն հայտնվեցավ իբրև կանոնավորված խումբ, որ տեղյակ է
թատրոնական գործին և որ այդպիսի մեկ փոքրիկ խումբ կարող է իրա-
դործել հայ թատրոնի գոյությունը Թիֆլիսում:

Այդ երկու պիեսաների մեջ ինչքան որ դերասանական ամբողջությունը
(անսամբլը) կատարյալ էր, այնքան ևս երկու դերասաններ դերազանցեցին
յուրյանց հանճարավոր խաղով դերերի ընտվորությունների կատարելու:

Այդպես՝ Ամերիկյանը ստեղծեց Եկոյի վարժապետից կատարյալ հայ
փաշախայակիրը ուսուցչի դեր: Մանդինյանը միենույն պիեսայում
բխմաժա աշակերտի դերում ընձ գուրս գալուն պես այնպիսի մեկ դրզոց
և ծիծաղ բարձրացրեց հանդիսականների մեջ, որ մեկ քանի բողբ շարու-
հակ նուշարարը թողեց յուր նուշարարությունը, իսկ դերասանները իրանց
դերերը: Նա ուներ հագին, ինչպես լավ հիշում եմ, կարճ սպիտակ շերտե-
կա, բրյուկ, գլխին սպիտակ մորթուց զգակ, ուսին շալակած ուներ մեկ քա-
նի մեծ և ծանր զրքեր, ձեռին քանոն և թղթից շինած ճանճի որոգայթ,
ինչպես և թղթից շինած թրխկանոց, որոնք յուրյան համար առանձին
պատրաստած աթոռի վերա նստելուն պես՝ նա գործ դրեց մեծ հմու-
թյամբ: Նախ թրխկացրեց և հետո սկսեց այնքան մեծ ուշադրությամբ
ճանճ ըռնել, որ թվում էր, թե գորա ուսուցիչարան քնալու միայն նը-
պատակն էր ճանճ ըռնել: Ժողովրդի ծիծաղին վերջ չկար:

Բայց պետք է տեսնել այդ պարունին Կրեչիմսկու հարսանիքը պիեսայի
մեջ, Ռասպլյունի դերում: Շատերը հանդիսականներից, նաև նոքա, որոնք

տեսել էին այդ գերեզմանում առաջ երևելի գերաստն Մազովսկուն, Թիֆլիսում ապրող ուսանողից շատերը անգամ, խոստովանում էին, որ Մանգրիյանը անմահն Ռասպլյունն է:

Ես այստեղ հարկաժող եմ համարում փոքր ինչ մանրամասն խոսել այդ պիեսայի ներկայացման առիթով, որը ընթերցողին հասկանալի լինի՝ թե ինչ գովաբանություններով և ինչ գերասանական ուժերով մենք մեռն էինք միում այդպիսի հաստատուն և ծանր պիեսաներին և ինչ տանջանք էինք կրում (նաև սեփաշորի պաշտոնակատար) մինչև հնասակացներնք երկրորդական անձնավորություններից բնավորությունը գեր կատարող գերասաններին:

Նրբ Մանգրիյանը վերջացրեց յուր թարգմանությունը (նա գրած էր Թիֆլիսի բարձրագույն), գործնալ Գայիանեն չկար Թիֆլիսում: Մ. Մելիք-Նազարյանը և որ. Տեր-Արքայան (Մաթենիկ) այդ ժամանակ Պերսի ազգացության տակն էին, որը հեռ էր գործել Թիֆլիս և անհնարին էր նոցա համոզել, որ մասնակցեն մեր խաղերին:

Մնում էին միայն գերասանուհիք որ. օր. Արամյանն ու Դավթյանը: Օր. Արամյանին վեպերնք տալ Ավգուստա հասակավոր կնոջ գերը, իսկ Լիդիայի՝ առաջին անձնավորության գերը մենք ստիպված էինք տալ որ. Դավթյանին, որին, թողնենք որ բուրժուական անձանք էր թե ուսական և թե եզրուղական կյանքին, անգամ Լիդիա անունը խորթ էր թվում:

Կրեյինսկու գերը ես էի պատրաստում: Մեկ տեսարանում հարկավոր էր, որ Լիդիան (օր. Դավթյանը) խոստովաներ Կրեյինսկուն, թե սիրում է նորան:

Ամեն մեկ կրեյնության ժամանակ, երբ օրիորդը ծածմեկով և քաշքշեկով խեղճ Լիդիայի գերը հասցնում էր այն տեղին, որ պիտի արտասաներ սիրելի բառը, նա հանկարծ ծածկում էր երեսը և լուռ: Ամբողջ ամիս մենք պատրաստում էինք և հազիվ թե ներկայացման իսկ օրը կարողացանք համոզել գերասանուհուն, որ նա արտասաներ այդ բառը:

Դառնա՛նք գեպի ներկայացումը և Մանգրիյանի խաղը:

Թատրոնի գանլիճը լիքն էր խառն հասարակությունով, թիկնաթոռների կարգը համարյա ամբողջապես բռնած ունեին փոխարքայի աղյուսանները, որոնք մի քանի օրից հետո պիտի այդ պիեսայի բնագիծը ներկայացնեին փոխարքայի պալատում: Խաղն սկսվեցավ. առաջին գործողությունը գնաց փոքր ինչ դանդաղ, որովհետև ինքը՝ գործողությունը շատ երկար է և չունի հետաքրքրության արժանի կոմիզմ:

Սկսվեցավ երկրորդ գործողությունը և Մանգրիյանի արախստական խաղը զմայլեցրեց ամենքին: Այդ գործողության մեջ կա մի տեսարան, որտեղ Կրեյինսկուն անշուշտ փող է հարկավոր և նա ուղարկում է Ռասպլյունին, որ նա ելուտից գրավ գնի, փող ճարի: Քիչ ժամանակից հետո խեղճ Ռասպլյունը, այդ հանձնարվածը շտապաբար Կրեյինսկու գործիքը, վերադառնում է դատարկամեռն և կանգնում է դռան մեջտեղը, վախենալով, որ հայանե Կրեյինսկուն յուր անհաջողությունը:

Ես վերջացրել էի իմ մենախոսությունս, պիտի դառնայի գեպի միջի դուռը, որտեղից պիտի մտներ Ռասպլյունը, հազիվ թե վերջացրի վերջին խոսքս, հանդիսականների մեջ բարձրացավ սաստիկ ծիծաղ և քառավոր գիտակներ ուզվեցան գեպի բնձը:

Ես սկզբում չվարեցա, բայց իսկույն հասկացա բանի էությունը և

գարձա զեպի թաարոնի խորքը, նենց որ նայեցի դասն մեջ մեխված Մանգինյանին, որի երեսի վերա նկարված էր անվերջ ախմաբություն և սաստիկ վախ, և որը չչկնձած պարապում էր թնկից գործած յուր ձեռնոցներով, ձեռնազը խեղդեց ինձ. սկսեցի ծածել և սաստիկ կծել իմ շրթունքներս, որով և կարողացա պահել ինձ:

— Հը,— ասում է Կրեյնիսկին:

Ռասայյունը այլևս չի կարողանում պահել իրան և մեկ շատ հիմար ձեռով բացականչում է:

— Գ...ր...ր...ամ, գրավ են ուզում, Միխայիլ Վասիլի:

Եթեազը սաստկացավ ուժեղ ծափահարության հետ խառն:

ԳԱՏԻԱՆԵՆ ՏՂԱ Է

Գայիանեի կատարած գերերը հեռայաններն էին. Մաթենիկ՝ Վարդան Մամիկոնյանի մեջ, Լելի՝ Սեր և Յախապաշարմունքի մեջ, Կաստ՝ Եկոյի վարձապետի մեջ և Գունյա՝ Ով որ քու բարը չէ կոմեդիայում, որի մեջ և իմացվեցավ նրա ազա լինելը:

Երեք ամբողջ տարի նա միշտ գալիս էր կրկնություններին¹⁰, առաջ Կարինյանի տուն և հետո ինձ մոտ, միշտ հաղնված շատ համեստությամբ, և ոչ ոք մեկանից երբեք չէր կարող կասկածել, թե այդ կնոջ հագուստի մեջ սեղմված կրիստալներու աղջիկը մեկ չքավոր երիտասարդ է, որ ապրում է երկու այրի կանանց մոտ և նրանց խորհրդատվությամբ է մտել թաարոնի խումբը, փող վաստակելու նպատակով միայն¹¹:

Շատերն ասում էին, թե Հ. Կարինյանը գիտեր և ամենայն զգուշությամբ պահում էր այդ գաղտնիքը, չնայելով, որ Գայիանեն երբեմն ամբողջ օրերով, անգամ գիշերներով, մնում էր նորա ընտանիքի մեջ, բայց ևս զարնյալ կարծում եմ, որ նենց ինքը՝ հանդուցյալ Կարինյանը ևս խաբված էր:

Թե նա իրան ինչքան խորամանկությամբ և խելոքությամբ էր ազդիկ ձևացնում, բավական է հիշել հեռայալ չնչին անցքը:

Մեկ անգամ, ձմեռվա սաստիկ ցեխ ժամանակներին, նա եկավ ինձ մոտ երեկոյան կրկնության. Պետք է ասել, որ նա ապրում էր Խորփուխի թաղում, իսկ ևս Վանքի թաղում, այսինքն մոտ վերստ ու կես հեռավորությամբ: Երբ նա հասեց, ևս նկատեցի, որ նորա կոշիկները մաշված են և շուռի կրկնակոշիկներ: Առաջարկեցի՝ մյուս օրը երթալ այսինչ խանութը և վերցնել այնտեղից թե կոշիկներ և թե կրկնակոշիկներ: Մյուս երեկո, կրկնությանից առաջ, երբ մենք նստած էինք կոյր սեղանի շուրջը և զրազված էինք խոսակցություններով, ևս հարցրի, թե արդյոք լավ կոշիկներ եմ առել: Նա հանկարծ օրիորդական ամոթխածությամբ պտտասխանեց ինձ:

— Ուժ առածն է, որ լավը չլինի:

Շատ ժամանակից հետո, երբ մենք ծանոթ էինք արդեն նորա հետ, իբրև ուսանող երիտասարդի հետ, ևս միշտ հիշեցնում էի նորան այդ խորամանկությամբ ասած խոսքերը և մենք երկուսով ժիծալում էինք:

Վարդան Մամիկոնյանի երկրորդ ներկայացումից հետո սկսեցին խոսել թե Գայիանեն ազա է, և մենք թեև լսել էինք այդ խոսակցությունը, բայց այնքան հավատ չէինք ընծայում:

Վերջապես Ով որ քու բարը չէ պիտան խաղալու գիշերը, կարծես, պարտն Սուքիասյանը ինձ հայտնեց, որ մենք սաստիկ խաղձած ենք և որ մեր այդ հուշակալոր Գալիանեն մեկ ուսումնարանի երկրորդ դասարանի աշակերտ է և որ նորա ազգն է և համոզվելու համար մենք կարող ենք այցելել նորա դասատուն:

Այդ բանը սաստիկ շփոթեց ինձ, նախ նորա համար, որ մենք խաղձած լինելով՝ խաբոււմ ենք և հասարակությանը, աղային աղջիկ ներկայացնելով, և երկրորդ, զիտավորը, մեր խուճըր և առաստաղի նորածին հայ Թատրոնի բեմը պետք է կորցնէր այդպիսի ընդունակ ղերասանուհուն:

Պագի մյուս օրը ես և ու. Սուքիասյանը գնացինք ուսումնարան, Եւ չէի կամենում հաժաաւ իմ սեփական տեսողությանս, բայց զերջը ցավոք սրտի համոզվեցա, որ Գալիանեն աղա է և, ինչպես ասում էին ուսուցիչները, շատ բարոյական և աշխատասեր աշակերտ է:

Ընկերներին ևնա խորհուրդ տեսնելուց ևնա՝ վնեցի նամակ ուղարկել Միդա-ի խմբագրին, որով և հայտնեցի հայ հասարակությանը այդ հաղ-վադյուտ իրողությունը:

<ՆԱՍՈՒՆԱՃՅԱՆՆԵՐ>

1

Օրիորդ Գալիանեն իբրև մեկ ցնորք անհետացավ այնուհետև հայ Թատրոնական բեմից, մեր ուժը քնեւ այդ կորուստով փոքր ինչ ընկավ, բայց հայ Թատրոնի գոյությունը դարձավ անհրաժեշտ կարիք Թիֆլիսի մեջ:

Այդ ժամանակից սկսած մինչև Փասուլյաճյանների գալը Պոլսից շատ բան, գուցե և շատ հետաքրքիր անցքեր ես չեմ հիշում, ուրեմն և կշարունակեմ նորանց Թիֆլիս գալու օրից:

Մեծ պասի օրերն էր, ինչպես լավ հիշում եմ, առավոտյան տանից դուրս եկած ժամանակս պատահեց ինձ իմ ծանոթներիցս մեկը և հայտնեց, քն Պոլսից ղերասանուհի և ղերասաններ են եկել, որոնք իջել են Եկովկաս՝ անվանված հյուրանոցում³³:

Շատ ուրախացա այդ լուրը լսելով:

Իսկույն գտա ընկերներին՝ Սուքիասյանին, Ամերիկյանին և Մանգի-Նյանին և չորսով գնացինք այցելելու նորեկ ղերասաններին:

Գնացինք հյուրանոցը, որ գտնվում էր (և կա մինչև այժմ) այրված Թատրոնի դիմացը: Հարցրինք նորանց իշած սենյակի համարը, ճոտեցանք դռանը, բախեցինք դուռը, դուրս եկավ մեկ նիւար, բարակ, միջահասակ երիտասարդ:

Մենք հարցրինք Պոլսից եկած ղերասաններին:

— Հրամեցեք, հրամեցեք, — ասաց նիւար պարոնը և մենք մտանք սենյակը:

Առաջին և իսկ ապավորությունը, պիտի խոստովանեմ, շատ ծանր թվաց ինձ: Սենյակի մեջ, բացի մեզ ընդունող նիւար երիտասարդից կային մեկ շատ նիւար, սև աչք-ուռնով, սև, խիտ, խոռնափնթոր եղած մազերով աղջիկ և մեկ հասակավոր և երկայն սպիտակախառն մորուքով մեկ ուրիշ մարդ, ծալադատիկ նստած սենյակի մեկ անկյունում հատակի վրա: Սենյակում Թաղավորում էր սաստիկ անկարգություն:

Մեզ ընդունող պարոնը, որ ինքը պ. Ֆասուլյանին էր, իսկույն մոտեցավ սեղանին, ծոցից մեկ կտոր թուղթ հանեց և սկսեց կարդալ այնպես, ինչպես գինձորական կազարմաներում ֆելզֆերերները կարդում են գինձորների քննույց առաջ, որ իմանան թե բոլորը ներկա են, թե ոչ:

— Չմշկյան,— կարգաց նա: Ես գլուխ տվի:

— Ամերիկյան, Սուգրիսյան, Մանդինյան,— շարունակեց ինքնակոչ ֆելզֆերերը, և ամեն մեկ ազգանունը արտասանելուց հետո, նա քննում էր ամեն մեկին, ինչպես քննում են հյուրանոցներում կապեմաժոր կերակուրները: Վերջապես պարոնը հրավիրեց մեզ նստել և սկսվեցավ խոսակցությունը:

— Սա իմ կինս է,— ասաց նա,— սա է պարոն Գ...ը²²,

— Ես, ողորմելի թափառականս,— սկսեց վարդապետական ոճով հատակի վերա ծալապատիկ նստած պարոնը,— վերջապես հասա իմ նպատակին և վերադարձա իմ հայրենիքս:

— Պարոնը,— կտրեց Ֆասուլյանը նորա խոսքը,— երևիլի գրող է:

— Այնպիսի հիանալի բաներ կգրե կոր,— ընդմիջեց տիկին Ֆասուլյանը:

Բայց, մտածում էի ես այդ ժամանակ, նայելով Գ...ին, որի ազոտո մորուքի մեջ ես հազար ու մեկ բաներ էի երևակայում, և ասում եմ, դիցուք թե դա հանճարավոր գրող է, բայց ինչ՞նչ է ծալապատիկ փռվել հատակի վերա և թե՛ նշանակութուն ունի դա գերասանության գործի համար: Չնայելով որ հետո մենք մոտիկ ծանոթացանք այդ պարոնի հետ, այնուամենայնիվ նորա էությունը և հարաբերությունը Ֆասուլյանյանների հետ՝ ինձ համար հանելուկ մնաց մինչև այսօր:

Ֆասուլյանյանների Թիֆլիս գալու նպատակն իմանալուց հետո (նոքա մտադիր էին մեկ քանի ներկայացումն տալ), մենք առաջարկեցինք մեր պատրաստությունը օգնել նորանց, և բերանացի պայման կապեցինք ընկերությունը տալ գարունը միջոցին երեք ներկայացում, որոնց եկամուտը պիտի երեք հազարսուր բաժին անելինք այնպես, որ երեք ներկայացման մուտքի երրորդ մասը պիտի պատկաներ Ֆասուլյանյաններին իսկ երկու-երրորդ մասը ընկերության:

Որոշեցինք տալ առաջին անգամ, եթե չեմ սխալվում, Թուրք խաղացողի կյանքը²³,

Այդ պիեսան մենք մեկ տարի առաջ կրկնել էինք Գայիանների հետ, բայց չհաջողվեցավ ներկայացնել զանազան արգելափակ զառաճառներով: Պետք է ասել, որ այդ պիեսան թարգմանել էր պ. Մ. Պատկանյանը սեփական ինձ համար և ես պիտի խաղայի ժողովի գերը:

Երբ սկսեցինք որոշել գերերը, մենք առաջարկեցինք պարոն Ֆասուլյանյանին վերցնել սիրահարի գերը, բայց նա հանձն չառավ և պահանջեց տալ նորան ժողովի գերը, իսկ ինձ առաջարկեց վերցնել Վալենտինի գերը:

— Այդ գերը շատ հարմար կլինի ձեզ համար,— դա հակառակորդի գեր է, ասաց նա:

Ես չվիճեցի, իսկ ընկերներս սկսեցին համոզել նորան, որ առաջին անգամի համար այդպիսի ծանր գեր չվերցնի, նամանավանդ, որ այդ գերը արդեն ես պատրաստած ունեմ: Բայց երբ նկատեցինք, որ Ֆասուլյան-

հայանը վերազորում է, մենք այլևս չվիճեցինք և սկսեցինք կրկնությունները:

Սա և ինչ հետ ամենքը հետաքրքրությամբ սղառում էինք առաջին կրկնության, որ տեսնենք Ֆասուլյաճյանի խաղի եղանակը կամ մեթոդը, բայց դուրս եկավ, որ սառտիկ փռած և հին չկոչայի աշակերտ է եղել, նա ամեն մեկ խոսքը արտասանում էր մի առանձին շնչառությամբ և խոսում էր երգելով, իսկ երբ հասնում էր էֆեկտի տեղին, հանկարծ այնպես էր զոռում և իսկույն կտրում խոսքը, որ մենք չէինք կարողանում լսել առանց ձիծաղի:

Փորձեցի մեկ կրկնության ժամանակ նկատել այ. Ֆասուլյաճյանին, որ այդ երգեցողական խաղի ձևը վաղուց արգեն աքսորված է ամեն մեկ օրինավոր թատրոնից և խորհուրդ տվի, որ նա թողնե այդ ձևը:

— Ինչպես,— պատասխանեց նա,— ես տեսած եմ երևելի գերասաններ և ես կրնամ պարծանքով քսել, որ էքսյանին հետևողն եմ:

Մենք շատ անգամ լսել էինք էքսյանի երևելի խաղի մասին, բայց երբ այ. Ֆասուլյաճյանը խոստովանեց յուր նորա նման լինելը, էշմարիան ասեմ, այնուհետև ես փոխեցի իմ բարձր համոզմունքս զեղի էքսյանի հուշկավոր խաղը:

Ինչևիցե, կայացավ առաջին ներկայացումն և շոքա հետ սկսվեցան սաստիկ խնարիչաներ: Նույնիսկ սկզբում, երբ տղվեցան առմաստները և նա, թևն զրեց յուր կնիքը ամեն մեկ առմաստի վերա, բայց հաշվի որը սկսեց կատկածել, չնայելով, որ բոլոր առմաստները կարգադրությունը յուր ձևերին էր, ինքն էր հանձնել առմաստադհին և նորանից հաշիվ ստացել:

Հետո, կարծեմ, խաղացինք Մուկրեցիա Բորչիա⁵⁵ մեկ գործողություն և չգիտեմ թե ուրիշ ինչ, միայն, կարծեմ առաջին անգամ խաղացինք Երկուսս էլ քաղցած ենք, երկուսս էլ փող չունենք, որի մասին այ. Ֆասուլյաճյանը հայտնեց աֆիշայի մեջ, թե յուր շարագորությունն է⁵⁶. Ինքը խաղաց քաղցածները մեկ զերը, իսկ մյուսը՝ այ. Մանգրիշյանը:

Այստեղ ես հիշում եմ, որ երբ Ֆասուլյաճյանը բեմ պիտի դուրս գար, ես նկատեցի, որ նորա հագուստի ձևը (նա կարծում էր, թե շատ էֆեկտով է) սաստիկ անվայելուշ է, և խորհուրդ տվի ուղղել, բայց նա չլսեց ինձ և բեմ գնաց՝ հարմարեցնելով յուր հագուստին և այնպիսի մեկ նմանապես անվայելուշ և կոռուսկան խաղ, որ ես ամաչեցի, թողի կուլիսները և գնացի վերև շոք հագնելու սենյակը:

Հետո այդ պիեսան իմ և ուրիշների գրչի սակ խամբելոնի պես գունափոխվելով՝ մնաց մշտապես մեր օժպերատուարում, չնայելով որ ոչինչ իմաստ և կրթողական նշանակութուն չունի յուր մեջ:

Այդ ներկայացումից հետո, համեմատ մեր բերանացի կապած պայմանին, տվինք մեկ ներկայացում ևս Ամերիկյանի անունով: Հարկավոր էր նոր խաղ, և այդ իսկ ժամանակը այ. Պալասանյանը թարգմանել էր երեք գործողություն Վիկտոր Հյուգոյի Էռնանիից, գարձայ սեփական ինձ համար, որի մեջ ես պիտի խաղայի Էռնանիի զերը, իսկ Դոնա-Սոյի՝ Էռնանիի սիրուհու զերը պիտի խաղար, համաձայն մեր պայմանի, տ. Պալասան Ֆասուլյաճյանը, իսկ իրան՝ Քոզմաս Ֆասուլյաճյանին խնդրեցինք վերջենի Դոն-Դոմեցի կամ, ինչպես օպերայում ասված է, կոմս Միլվայի զերը⁵⁷:

Գ. Ֆասուլյաճյանը հրամարվեցավ այդ զերից, ասելով, որ նա կկա-

մենաբ չմասնակցել այդ խաղում։ Զխաղալու իսկական պատճառը, ինչպես հետո իմացա, այն էր, որ կամենում էր եղել վերցնել Էռնանդի գերբը։ Քեկ այդ հանգամանքում ես ես համաձայնվեցի հրամարվել Էռնանդի գերբից։ Բայց պ. Պալասաթյանը և ընկերներս կամեցան, որ ես խաղամ Էռնանդին, և հաղթիմապ համոզել էին պ. Պալասաթյանին հրամարվել յուր անտեղի պահանջողութունից, իսկ նա հրամարվեց բոլորովին մասնակցելու։ Ներկայացման Բիշ էր Մուս, որ կնոջն ես արգելեի խաղալ։

Մենք Մառցինք աստեղ Դոն-Դոմեցի։ Սա առաջարկեցի պ. Մանգրինյանին հանձն առնել այդ գերբը, շնայելով, որ բոլորովին նորան հարմար գեր չէր։ Սկզբում նա ամենախրափացի պատճառով փոքր ինչ տատանվում էր, որովհետև ժողովուրդը սովորել էր տեսնել նորան միշտ կոմիկական գերբում, այնինչ այդ գերբը ամենասաստիկ գրամատիկական գեր էր։ Բայց վերջի վերջո համաձայնեցավ, մեկ քանի օրվա մեջ պատրաստեցինք և տվինք Ներկայացումը։ Նրբեք ես չեմ մոռանա այն տեղը, որտեղ առաջին անգամ պիեսայի մեջ պիտի դուրս գար պ. Մանգրինյանը։

Սա բեմի վերա էի այդ մամանակ և երբ մտնեցավ Մանգրինյանի մանկու մամանակը, սիրտս սկսեց սաստիկ բարախել, որովհետև, մոռանցի ես, Ռասպյունի գերբը կատարելուց հետո հասարակութունը կկարծե թե այստեղ ես պ. Մանգրինյանը պիտի կոմիկ գեր կատարե և մանկուս պես, եթե նա մեկ որևիցե անզգույշ շարժվածք անե, կսկսեն ծիծաղել, կառաջին ամբողջ առաջին գործողության սաստիկ գրամատիկական տեսարանները, որոնք հետևում են Դոն-Դոմեցի դուրս գալուց հետո։ Մեկ էլ որ նորա բեմ մտնելուց առաջ, պ. Ամերիկյանը Կարլոս V գերում, փոխանակ սարսափ տարածելու հանդիսականների վերա, սաստիկ ծիծաղ պատճառեց, և քանի ուղում էր զուգել հանդիսականների ծիծաղը գրամատիկական շարժվածքներով, այնքան առավել սաստիկանում էր ծիծաղը։

Միտս է՝ թե ինչպես այդ բոլորին ես հաղորդեցի բեմի վերա իմ վախս Արամյանին, որ խաղում էր ազախնու գերբը։ Սպասում էի սաստիկ ֆրասկոյի։

Հանկարծ դռները բացվեցան և մտավ ծեր և խիստ, մինչև արյունարբություն գոռոզ և հպարտ Դոն-Դոմեցը, այդ Կարլոսի և եզվիանների անխիղճ գործիքը։ Մեկ վայրկյանում տրեք գահլիճի մեջ սաստիկ լուռություն և ամենքն սկսեցին լսել՝ պ. Մանգրինյանին մեծ ուշադրությամբ։

— Անպատմություն իմ սեփական՝ ասես մեջ, — ասարկանչեց չարությունից զոգալով Դոն-Դոմեցը, և հանելով մանյակը ձեռք գետին, որ ընկնելով հուշարարի փոսը, կարող էր ծիծաղ պատճառել, բայց ունեցավ հակառակ ազդեցություն։

Եվեր առեք, ստանկոխ արեք իմ պատվանշանս, այդ, այդ է Մուս միայն անել Դոն-Դոմեցին՝ — ասաց նա և նորա ամեն մեկ արտասանած բառից թույն և արյուն էր թափվում։

Մեկ խոսքով պ. Մանգրինյանը գերազանցեց յուրյան այդ գերում։ Սով ամբողջ Ներկայացումը հաջողակ զնաց, բացի պ. Ամերիկյանի գերից, որի կատարելը ավելի զգվարացնում էին անգործ և երկայն մենախոսությունները, նամանավանդ երբորդ թե չորրորդ գործողության մեջ Կարլոս IV-ի գերեզմանի առաջ։

Այդ Ներկայացման գիշերն էր, կարծեմ, որ պ. Ամերիկյանի մեկ եր-

կար մենախոսութեան ժամանակ շատ ծագարայի տնցք պատահեց թիկնաթոռներում:

Առաջին կարգերից մեկում նստած էր մեկ հարուստ և քեֆ սիրող մարդ, որ յուր կյանքում գուցե առաջին անգամն էր մտել թատրոն: Ամերիկյանի մենախոսութեան եղանակը այդ պարտնի վերա, որի անունն էր Կակարո, այնպիսի նշանավոր ազգեցութիւն էր ունեցել, որ նա աշխարհ խփել և երևի Մորֆերի գիրկն էր ընկել²⁵ ։ Վերևից՝ զայլերից, հանկարծ չար երիտասարդներից մեկը ձայն ափնց — Կակարո:

Կակարոն զարթնեց, վերև նայեց և դարձյալ ընկալ Մորֆերի գիրկը: Եկակարոն դարձյալ կրկնեցին բարձրից: Կակարոն դարձյալ վերև նայեց և դարձյալ քնեց:

— Կակարո, Կակարո, — սկսեցին շատ ձայներ: Այդ ժամանակ ալ. Ամերիկյանը, տեսնելով, որ խանդարում են յուր մենախոսութիւնը վերջացնել, առանց այլեւայլութեան դարձաւ գնալի քնատեր պարտնը:

— Տո, Կակարո, չիս իմանում, քեզ ին կանչում, դուս գնա էլի, վա: Ստատիկ ծիծաղ բարձրացաւ դաշիճի մեջ և այն օրից ես էլ չտեսա Կակարոյին թատրոնում:

2

Էռնսթից հետո մենք, կարծեմ, տվինք Կոյրի զավակ²⁶ անկապ ու անկանոն դրաման, որը Ֆասուլյանյանների բերած ակադեմիականից էր, և չնայելով նորա ստատիկ պակասութիւններին, ժողովուրդը այնպես սիրեց այդ պիեսան, որ հետո, երբ միշտ կրկնում էինք այդ խաղը, համարյա սոսմանակ չէր մնում կասսայում:

Այսպիսի ես ալ. Ֆասուլյանյանը գործ դրեց յուր խաղալի վարձուներ:

Կոյրի զավակի մեջ ինչ համար գեր չկար, որովհետեւ իմ գերը վերցրեց նա ինքը, իսկ ուրիշ երկրորդական գերերում ես անհարմար գտա իմ բեմ դուրս գալս, բայց սաղիւմած էի դուրս գալ Ֆալերնո անվանված այնպիսի մեկ գերի մեջ, որ քանիցս ուսումնասիրել եմ, որ մեկ որևիցե բնավորութեան զաղափար կազմեմ գլխիս մեջ այդ գերից և չեմ կարողացել հասնել նպատակիս, որովհետեւ ոչինչ բնավորութիւն չկա նորա մեջ, նա մեկ անհասկանալի անձնավորութիւն էր, հեղինակին հարկաւոր է կղել մեկ մարդասպան և նա վերցրել է մեկ անձնավորութիւն, կնքել է նորան Ֆալերնո անունով և դուրս է բերել այդ պարտնին առանց որևիցե պատճառի մարդիկ պատնելու և երկխոսներ հափշտակելու համար: Երբ մեկ քանի անգամ հայտնեցի իմ կարծիքս, որ այդ գերում դուրս գալով՝ ես ստորացնում եմ իմ գերասանական արժանապատիւթիւնս, ալ. Ֆասուլյանյանը հեղձորեն ծպտաւով ինչ բացատրում էր, որ ես հակառակորդի գերի նշանակութիւնը չեմ հասկանում, իսկ նորա կինը, ուրիշների առաջ ծագրելով հայտնում էր, որ ես չնայելով իմ բազմութիւնս, բեմորութիւնս լիամենում եմ միշտ ջահելների գեր խաղալ, իսկ նորա զեղեցկատես ամուսնուն տալ երկրորդական գերեր:

Այդպես այդ ամառը մինչև հունիսի վերջերը, կարծեմ, մենք տվինք մոտ տասն-ստուերկու ներկայացումներ և զաղաւրցինք:

Մինչև Ֆասուլյանյանների գալը ես այնքան չէի հաւածվել ինտրիգաներից, ինչքան դրանց գալուց հետո, այնպես որ սկսեցի բաւորո-

վին ղզվել Թիֆլիսի թատրոնական գործունեությանից և կամենում էի
փոքր ինչ ճանապարհորդություն անել Հայաստանի կողմերը և հետո գնալ
Պոլիս։

Առ հազարդեցի իմ այդ միտքը ոչ. ոչ. Ամերիկյանին և Մանգինյանին...
նոքա կամեցան միանալ ինձ հետ և միասին գնալ արտասահման (երիտա-
սարգական քաղցր ցնորք)։ Երկուր մամանակ ևս չէի համաձայնվում ընկե-
րությամբ ճանապարհորդելու, նաև սաստիկ հակառակ էի ոչ. Մանգինյանի
Թիֆլիսից հեռանալուն, որովհետև վախենում էի, որ այդ ճանապարհոր-
դության մեջ կարող է մեզ պատահել զանազան գիպվածներ, որոնց գուցե
նա չի տանի, բայց վերջապես միացանք և ճանապարհ ընկանք գեպի-
Շուշի—Ղարաբաղ, որտեղից պիտի գնայինք Երևան, այնտեղից Ալեքսան-
դրոպոլ և հետո Կարսով ու Արզրումով Պոլիս։

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

1865 թվականի հունիս ամսի վերջին օրերին մենք դադարեցրինք թատրոնական ներկայացումները:

Հափշտակված իմ երիտասարդական հույսերով, սկսեցի տեսնել իմ պատրաստությունները և ամենաշնչին դաժարով (կարծեմ ունենի հիսուն ուսրիս չափ փող) մտադիր էի սկսել ճանապարհորդությունս:

Մենք հավաքեցինք մեր առձեռն գումարը, մտա հարյուր ուսրի, և հանձնեցինք մեր ընկեր Մանդինյանին իրեն զանձապահի, Մասս բարով առաջինք մեր բարեկամներին, զարգացանք, նստեցինք ծալապատիկ ֆուր-գոնի մեջ և ընկանք ճանապարհ: Փուրգոնը մեզ պիտի տաներ Գանձակով Շուշի, այնինչ մենք ուղևորվում էինք Պոլիս:

Այդ փոքր ինչ անհասկանալի է ընթերցողի համար, որովհետև Թիֆլիսից փոխանակ հյուսիս զնալու, մենք ուղևորվեցինք զեպի հարավ, բայց մեզ համար այդ բանը վճռված խնդիր էր:

Մենք երեք ընկերներս երեք զանազան համոզմունքի տեր մարդիկ էինք: Մանդինյանը և ես տողորված այդ ժամանակվա ուսուցիչ գրականության ուղղությունով՝ պատկանում էինք՝ նա՝ Մանդինյանը ռեալական (գործնական) ուղղության, իսկ ես իդեալական (գաղափարական): Ամերիկյանը նիսիլիստ էր:

Փուրգոնը նստելուց առաջ, մենք հավաքվեցինք մեր սովորական կաֆետումը, թանձր սև սուրճի մեջ եփեցինք այդ երեք իրարու հակառակ գործնա-գաղափարա-նիսիլիստական համոզմունքները և վճռեցինք, որ Պոլիս զնալու համար մեզ հարկավոր է նախ զնալ Գանձակով Շուշի, այնտեղից Ալեքսանդրոպոլ, իսկ հետո միայն Պոլիս:

Ամռան զեղեցիկ առավոտ էր: Արևելյան կողմը կարմրագույն նոսր ամպերի պակից սկսել էր շողշողալ արեգակի ճառագայթներից, երբ մենք դուրս եկանք Մոզանլու անվանված գյուղի դաշտը, որի երկայն ու լայն տարածությունը ծածկված էր գուլնզգույն ծաղիկներիով և կանաչ խոտով: Մեր չորս կողմը թափավորում էր լուսթյուն, որ ընդգիծում էին միայն զանազան անսակ թռչունների ճվճոցը և մեր սայլերի գոգոցը:

Մանդինյանը և ես իջել էինք սայլից և ոտով հետևում էինք նորան մի քառորդ վերստ հեռավորությամբ: Բուրբ սայլերի թիֆ ութ էր, որոնք հետևում էին բազականին հետո միմյանցից:

Մենք զբաղված էինք մեր ապագայի գուշակությամբ և չէինք նշմարել, որ Մասցել էինք հետո մեր սայլերից: Հանկարծ նկատեցինք հեծվից մեկ ձիավոր, որ յուր ձին ուղիղ զեպի մեզ էր քշում. այդ դատարկ և լուռ

գաղաւտւմ զաւտարորինակ երևույթ էր: Զին սաստիկ նիհար և երկար կենցաղն էր, որի ոսկորները կարելի էր համարել, նորա վերա նստած մարդը հագին ուներ կտավի կարճ պիջակ ու վարտիկ, զլիսն ուներ մեկ հին ֆրանսիական գինձորականի զլխարկ: յուր առաջը ասիական թաժքի վերա կախ էին տված երկու մեծ ասորեանակներ, մեջքին կապած ուներ մեծ գաշույն, պարանոժ զցած երկու եղեգնանի հրացան և կողքին դարձյալ ասորեանակ: Հանկարծ այդ կովկասյան Դոն-Քիշոտը յուր մտահանառոժ⁴⁰ կարեց մեր ճանապարհը, սկսեց ինչ որ գուրս առաւ: Նա մտքը գրել էր ասորեանակի վերա և չէր թողնում, որ մենք առաջ գնանք: Իսկ սայլը հեռանում էր: Մենք սկսեցինք ձայն առլ Ամերիկյանին, որ կանգնեցնի սայլը: Այդ ժամանակ անծանոթ Դոն-Քիշոտը թեև թողեց մեզ առաջ գնալու, բայց ինքը միշտ հետևում էր մեզ:

Վերջապես հասանք սայլին, որից գուրս եկա՞վ Ամերիկյանը յուր գասարկ հրացանը ձեռքին:

—Ո՞վ եք գուր, Բնչ եք կամենում,—հարցրեցի ես դարձյալ պարոն Դոն-Քիշոտին:

Այս ժամանակ ես միայն նկատեցի, որ նա հարբած է: Ասաց, որ մտաւկա զյուզում, ուր մենք պիտի անցնեինք, նա կորցրել է յուր քոսիկը և խնդրեց, որ մենք աշխատենք դանել այդ քոսիկը և հասցնենք նորան Թիֆլիս:

<ԳԱՆՁԱԿՈՒՄ>

Վերջապես մենք մոտեցանք Դանձակ քաղաքին: Ընկերներս առաջին անգամ էին Դանձակը տեսնում, իսկ ես չորրորդ անգամն էի մուտք գործում այդ քաղաքը, ուր, իմ պաշտոնի մեջ եղած ժամանակը, շատ ձախորդութիւններ էի պատահել:

Ուրիշ անգամները մտնում էի այդ քաղաքը իբրև չինոֆիլ և ինչ համար քաղաքի լա՛վ թե վատ կողմը ոչինչ նշանակութիւն չուներ, և այդ պատճառով էլ մտնում և հեռանում էի անվրդով: Այժմ ուրիշ կերպ էի մտածում և ինչ համար հետաքրքիր էր զննել այդտեղի կյանքը... Մտնելուս պես ես միայն մի բան նկատեցի—այն է՝ մտեւութիւն բուրբի շուրջը, ստրկութեան մեջ խեղդոված ժողովուրդ և նորա վերա տիրապետող բնգերի հալածող և մաշող ուժը:

Անա ինչպիսի՞ ծանր ապավորութիւններից ճնշված՝ Մանգինյանը և ես մեկ քարվանսարայում իջնելուց հետո գնացինք շրջելու քաղաքը:

Մի նեղ փողոց անցնելու ժամանակ, մեր գիծացից դալիս էր մեկ գեռաւսու հայ երիտասարդ գիթնաղբոնական զլխարկով, որ հանկարծ կանգնեց ու քաղցր մանկական ժպիտով ողջունելով՝ մոտեցա՛վ մեզ:

— Պարոն Զմշկյան, —ասաց նա,—բարի եք եկել:

Ես փոքր ինչ զարմացա, որովհետև չէի ճանաչում գորան, բայց սեղմեցի նորա ձեռքը: Մեկ քանի վայրկյան մենք կանգնեցինք միմյանց դեմ և երիտասարդը միշտ ժպտում էր:

— Ներեցեք,—ասացի ես,—բայց ես չեմ ճանաչում ձեզ, կամ գուցե լա՛վ չեմ հիշում, թե որտեղ ենք պատահել...

— Ոչինչ, ներեցեք, ես էլ ձեզ չեմ ճանաչում—միևնույն երիտասարդական քաղցր ժպիտը շրթունքին պատասխանեց անծանոթ երիտասարդը:

Մանգինյանը սկսեց քաջալույս յուր սովորական ծիծաղով, ես ես թեև չփոքովեցի, բայց իսկույն դիմի ընկա:

— Երևի դուք թիֆլիսում ինձ բեմի վերա եք տեսել,—հարցրի ես: — Այո, դուք Վարդան Մամիկոնյանն եք:

Ես գզացի իմ կոմիկական գրությունը, և վերջ ապա համար խնդրեցի երիտասարդին, որ շնորհ բերե մեզ մոտ և վերանորոգե յուր ծանոթությունը:

Կես ժամ քաղաքի մեջ պտտելուց հետո, մենք վերադարձանք առև և տեսանք մեր փոքրիկ սենյակի պատուհանի վերա դրած երկու մեծ անփուրնների մեջ թափ ու կեռաս, որ, ինչպես հայանվեցա՞մ, բերել էր մեր անծանոթ-ծանոթ երիտասարդ բարեկամը: Այդ երիտասարդը՝ և դանձակեցի աստիճանավոր պ. Ներսիսյանը, որի հետ մենք ծանոթացել էինք թիֆլիսում, այցելեցին մեզ, անկեղծ համակրություն ցույց տալով մեր գործին:

Հագիվ թե սկսեցինք տեղավորվել սենյակում, հանկարծ մտավ մեզ մոտ մեկը և շատ անվրդով հայանեց:

— Պալուխդերիալ³⁰ ունե՞ք:

Սկզբում ոչ մեկը մեզանից չհասկացավ այդ հարցի նշանակությունը, բայց նորա մեկ քանի խոսքերից հետո մենք համոզվեցանք, որ այդ պատվելին մեզ կոլորացի վաճառականներ համարելով, կարծում է, որ մենք ռուսներով գրպաններս լցրած, կելլ ենք առևտուր անելու:

Պետք է ասած, որ մեր հոգեկան գրությունը շատ վատ էր այդ բույնին, որովհետև մենք նախ շատ հոգնած էինք, երկրորդ զգում էինք, որ մեր գրամական միջոցները հետզհետե հատնում են, այնպես որ հագիվ թե կարող ենք Եուշի հասնել և բնական է, որ, նորա հարցը մեզ ծագրություն երևաց:

Վեր թռչելով տեղիցս հայանեցի նորան, որ մենք ռուս չուենք և նա սխալվում է, որ կարծում է, թե մենք հարուստ վաճառականներ ենք:

Դարձյալ լավ նայեց մեր սենյակի չորս անկյունը և, երևի, համոզվելով, որ ռուս ես անգամ չկա մեր մեջ, վերջապես դուրս գնաց. Ընկերներս ծիծաղում էին:

Երկու թե երեք օր Դանձակ Մալուց հետո մենք ճանապարհ ընկանք դեպի Եուշի մեծ աճ ու դողով, որովհետև լուր տարածվեցավ, թե քանի օր է արդեն ավազակների մեկ մեծ խումբ շրջում է այդ ճանապարհի վերա, կոտնադործություններ է անում, ճանապարհորդներին կոլորացում, ճանապարհը շատ ախուր տպավորություն ունեցավ մեզ վերա: Մինչև վերջին կայարանը երկիճը ամայի է, կյանքը, կարծես, փախել է ավազակների հարձակումներից, անպիտան կաշառակերների հալածանքներից, հարուստների հարստահարություններից:

Ահա ինչ ախուր տպավորությունով վերջապես հասանք Եուշի գալի ստորոտիքը, ուր մեր սայլապանները զննել էին գիշերը մնալ, որ տառվոր

³⁰ Այդ երիտասարդը հետագայում մեր թատրոնական խմբի նշանավոր երկրորդական դեր կատարողներից էր. նա Պեպլի մեջ առաջին անգամ Գափուլու դեր կատարեց, այժմ շինաֆիկ պ. Մելիք-Աղամյանն էր, Մաճար, Անգ:

³¹ Պալուխդերիալ, ցարական Ռուսաստանի ռուս գրամ, սկզբում 3 ա., ապա 7 ա. 30 կոպ. արժեքով:

բարձրացնեն մեզ ձրաներով և ջորիներով, ինչպես ասում էին նաքա, Ղա-
յան-չհարը (բերդ-քաղաքը):

<Շ Ո Ւ Շ Ի>

Շուշին շատ բարձր գիբք և ախլիսի ճանապարհ ունի, որ սալով
բարձրանալը շատ գովարտութիւններ է ներկայացնում և համարյա թե
անկարելի է ինչպես երևում է այդ ճանապարհը ախլիսի մեկ բարերարա-
նեմենների գործ է, որի նպատակը եղի է ոչ թե ճանապարհը շինել այն-
պես, ինչպես արհեստը պահանջում է, այլ ինչպես պահանջել է նորա ու-
սումնական տգիտութիւնը և գրպանը հարստացնելու ցանկութիւնը:

Մեր քարավանը սկսեց բարձրանալ ձիաներով ու ջորիներով: Մենք
երեք նիւար Ռոսինանանների վերա բազմած՝ ընթանում էինք առաջ, իսկ և
իսկ Դոն-Քիշոտի նման, երևակայելով, որ Շուշի մտնելու պես պիտի մեծ-
մեծ հաղթութիւններ տաննէ: Մեզ հետևում էին մեկ քանի տեղացի-
ներ՝ ջորինների վերա նստած և գորտնով լրացնում էին ամեն մեկին հա-
մար Սանչո-Պանսայի պակասութիւնը⁵¹, Դոցա և մեր մեջ՝ ինչպես երկու
զորարամիւսների մեջ, տեղ էր բռնում մեր քարավանը, այսինք մեր դեկո-
րացիաները, պաշարեղէնը և շորերը: Եթե նկարչի ձրք ունենայի, կնկարի
այդ տեսարանը, որ կարողանայի հիմա ներկայացնել ընթերցողներին այն
պատկերը, որ մինչև մեր հյուրանոցում իջնելը նյութ գարձա՞վ հազար ու
մեկ հարցմունքների ու տարակուսանքների մեզ պատահողների կողմից:

Երևակայեցեք երեք եզրուպական հագուստով ձիավոր, նորանց հետևից
ջորինների վերա քաշ գցած երկայն փայտեր (դեկորացիաների փայտերը),
նիզակներ, խուրջիւններից երեղո՞ւ փայլուն թղթերից շինած սաղափարո-
ւեր, հետո՞ մեր Սանչո-Պանսաներին այդ ծուռ ու սուռ ճանապարհի վերա,
և դուք կունենաք մի շատ թույլ պատկերն այն տեսարանի, որ մենք կազ-
մում էինք մեր ընթացքովը Շուշի բարձրանալու ժամանակ:

Պատահողը կանգնում էր ու այդ տեսարանը հետաքրքրութեամբ զն-
նելուց հետո թու՞մ էր տարակուսանքի մեջ, թե թի՞նք երևույթ է տեսնում,
և երկար ժամանակ ապշած նայում էր մեր հետևից: Մտա մեկ վերստ բարձ-
րանալուց հետո այդ հետաքրքրվողների թիվը շատացա՞վ և նոքա սկսեցին
հարցնել իրարու մեկ ծայրից մինչև մյուս ծայրը «մ... չի՞նչ մարդիկ են,
մե, չի՞նչ եմ դիտում: Ապտասխանում է մեզանից մտալի գտնվող ապուշ
կարվածը մեկ վերստ հետավորութեամբ հարցնող ապշածին:

— Քյանդորրազներ կլինեն, չվանների վերա պարողներ:

— Ձե հա, ջամբազներ են:

Կեղծած քյանդորրազ և ջամբազ որնչալ անուններով վերջապես հա-
սանք ամենարարձր կեաք, այսինքն մտանք Շուշի քաղաքի դռները:

Մենք կարծում էինք, որ քաղաքը մտնելուն պես կազատվեինք
մեզ անտեղի շնորհած քյանդորրազ և ջամբազ տիպոսներից, բայց իզուր:

— Հմվեն հա,—սկսեցին հարց ու փորձ անել շուշեցիք: Քյանդորրազ-
ներ են, չի՞նչ են, չի՞նչ՞մ գիտում... Եվ ներս մտանք մենք Շուշվա փողոց-
ները, կրելով մեր ճակատների վերա էկվիլիբրիստական վսեմ արվեստի
նշանաբանը:

Անվրդով նստած մեր Ռոսինանանների վերա, մենք հարց ու փորձ անելով,
թե որտեղ կա հյուրանոց, շարունակում էինք մեր քյանդորրազական ճանա-

պարհորդութիւնը Շուշում փողոցներով. Վերջապես ժառանգանք մեկ քարա-
շէն շինութիւն, որ մեզ ժառանգույց արին թե՛ հյուրանոց է, Մենք կանգ
առինք այդ շինութիւն առաջ մեր բոլոր Գոն-Քիշդատեան պարագաներով
և առանց այլևայլութիւն ժառանգ մեր ձիաներով, ջորիներով և Սանչո-Պան-
սոներով այդ երեսկայան հյուրանոցի գավթը:

— Զմբ եք գնում, հոր,— ճշաց վերեւից մեկ ձայն, որի վերա մենք ոչինչ
ուշագրութիւն չգործէինք, սկսելով անգաժորել մեր՝ ունեցած-չունեցածը:
Եղ չՔնչ եք անում,— իջնելով վերահարկի աստիճաններից, նախա-
սեղ մեկ մեկ պարտն, որ, ինչպէս նեոս տեղեկացանք, հյուրանոցի կառու-
վարիչ-ծառան էր.— ԶՔնչ եք ուզում, հնժ եք:

— Ինչպէս թե ինչ ենք ուզում. սա հյուրանոց չէ:

Հյուրանոց բառը չհասկացած պարտնը, տարակուսեց փոքր ինչ:

— Հյուրանոց է, թե ոչ,— կրկնեցի ես:

— Էս կուր ա,— պատասխանեց զգուշութամբ ինզճ մարդը, փոքր
ինչ մեղմացնելով ձայնը, որ հյուրանոց բառը կրկնելու ժամանակ, ինչ-
պես երևում է ըմբռնեց հյուր բառի նշանակութիւնը և ժողացած այնու-
հետև մեր քյանդորազական նշանակութիւնը, որովհետև մենք օտարական-
ներ էինք և ուրեմն հյուր էինք նորա համար:

Մենք ստիպված հյուրընկալին թողեցինք յուր ժառանգներէ մեզ և
բարձրացանք վերև:

Գեղեցիկ տան լայն և երկայն պատշգամբի վերա պատանեց մեզ մի
ուրիշ հայ ծառա. նա ես լսել էր, որ քյանդորազներ ենք և կիսարարկա-
ցած ու կիսաաղջած նայում էր մեր վերա:

— Նոժերներ կ'ան,— հարցրեցի ես:

— Ի՞նչ նոժեր:

— Նոժեր, սենյակ:

Չհասկացած, զուրիշ շարժեց ինչ հետացած մեղանից. Այդ ժամանակ
մենք զգացինք, որ սխալվել ենք և որ մեր իշած տեղը հյուրանոց չէ, այլ
մեկ ուրիշ բան է. Ի՞նչ կարող էինք անել և ձեռ գնայինք, մեճը գիմերինք
անծանոթ քաղաքի մեջ:

Ներքևի հյուրընկալ ծառան վերջապես վերև եկած և երևում էր երե-
սից, որ փոքր ինչ փարատել էր յուր տարակուսանքը մեր քյանդորազու-
թիւն ժառանգ:

— Ախր էս գոտարնցա չէ (հյուրանոց) այ ապա,— գիմեց նա ինձ:

— Ուրեմն Քնչ է:

— Կուր ա՛ ճե մատաղ եմ:

— Օթախներ կ'ան:

— Կա:

— Մենք կարճք ենք անգաժորվել:

— Խոզերինը (տանուտները) ըստեղ չէ:

— Ո՞վ է այդ խոզերինը:

— Արտեմ կազրիք:

— Գնա առա խոզերինիդ, որ մենք խնդրում ենք մեզ մեկ կամ երկու
սենյակ-օթախ տալ:

Զնեց այդ ժամանակ, երբ մենք վճռում էինք հյուրընկալ ծառայի հեռ
ւերնել թե չլինելը, հանկարծ գիմացի մեկ նորաշէն տան պատշգամբից մեկ
մարդ խալաթը հագին և երկար չիբուխը մեռին բացականչեց:

— Յա, էդ հիմի են (ով են):

Հյուրընկալ ծառան շուգեց պատասխանել, իսկ մյուս ծառան, որին պատանեցինք պատշգամբում և որ զետեւ չէր որոշել մեր ինչ լինելը, դուրս գալով պատշգամբ, անվրդով պատասխանեց:

— Ջամբազներ են, ազա:

Ասաց ու անհետացավ:

Խայաթով և չիրութով մարդը փոքր ինչ կասկածեց, որովհետեւ, ինչպես կարծում եմ, հագուստների մեկից ու մեր շարժվածքներից նկատեց, որ Ջամբազներից փոքր ինչ առավել նշանակություն ունեցող մարդիկ պետք է լինին, և այդ պատճառով միևնույն բարձր ձայնով կրկնեց յուր հարցը, այս անգամ դառնալով հյուրընկալ ծառային: Այդ ժամանակ մենք արդեն մտել էինք տուն ու զննում էինք սենյակները: Հյուրընկալ ծառան օգուտ քաղելով այդ հանգամանքից վճռեց պատասխանել խայաթով պարոնին:

— Ձե ազա, Ջամբազներ չեն, պիտիա ուր կոմեդիաներ ըլին:

— Բաներս վատ է գնում,—նկատեցի ես ընկերներին,—մեզ ժողովուրդը ֆոկլորականների կամ ցիրկի մարդկանց տեղ է ընդունում:

Այդ բոլորին տուն մտավ հյուրընկալ ծառան և հայտնեց, որ խոզերնը պատշգամբումն է: Մենք դուրս եկանք և տեսանք մեկ պատկառելի կերպարանքով հասակն առած մարդ տեղական հագուստով:

— Ի՞նչ եք կամենում, պարոններ,—ասաց նա մեզ:

— Երևակայեցեք, պարոն,—ընդամիջեցի ես նորան ասաքացած,—մեր ծառաները մեզ տեղ չեն ուզում առ ձեր հյուրանոցում և համարյա թե մեր իրեզնները փողոց էին ածում:

Բարի մարդը ժպտաց:

— Միթե կարելի է այդ, ասացեք խնդրեմ,—շարունակեցի ես միևնույն եղանակով,—չէ՞ որ մենք հայ երիտասարդներ ենք, եկել ենք հայաբնակ քաղաք և ունենք որեիցե ազգային գործի համար օգտավետ նպատակ: Ինչե՞ Արտեմ Լազրիչս (տանտիրոջ անունը, որին, ինչպես հետո նկատեցիք, բոլորեքյան Լազար էին անվանում) առաջ ծիծաղեց մի տեսակ բարի ծիծաղով և փոքր ինչ մտածելուց հետո պատասխանեց:

— Ներեցեք, պարոններ, ես շատ ուրախ եմ, որ դուք ուղղակի ինձ մոտ եք իջել, դուք իմ հյուրերս եք, ես սովոր եմ հյուրընկալության: Մեկ ամիս առաջ նմանապես մեկ քանի ուրիշ տիրացու հյուրեր կային ինձ մոտ, թեև փոքր ինչ անշնորհակալ գտնվեցան, բայց ոչինչ: Միով բանիվ ես շատ ուրախ եմ: Ե՛յ Հակոբ,—գիմեց Արտեմ Լազրիչը հյուրընկալ ծառային: Ի՞մ «թախը թամբդի վարժապետների համա, շեյները (իրեզնները) տեղավորի: Բզարած կլեն ճանապարհից, թող քիչ թեք ընկնեն:

Մինչև բարի Արտեմ Լազրիչը այս կարգադրություններն անում էր, մենք չվարած նայում էինք միմյանց և ուզում էինք գտնել իրարու կերպարանքի կամ հագուստի մեկ մեկ տիրացուի կամ վարժապետի նմանություն:

Մեր չվարժապետը նկատեց Արտեմ Լազրիչը և իսկույն ծիծաղելով դարձյալ մոտեցավ:

— Ներեցեք, մեզ մասաղ եմ, հարցնելը ամոթ չըլի, կարելի է բաշխեք ինձ մեր անունները:

Մենք մանրամասն պատասխանեցինք:

Արտեմ Լազրիչը բռնորոգին փոխվեցա՛մ, թե մինչև այդ ժամանակ նա մեզ ընդունում էր իբրև հասարակ հայ երիտասարդների և իբրև բարի հյուրընկալ մարդ կամենում էր մեզ պատվել, հիմա նա կամեցա՛մ պարծենալ յուր հյուրընկալութանով: Սկսեց բարկանալ ծառաների վերա, որ մեզ զատ են ընդունել, բարկացա՛մ ստասիկ, և ոչինչ չպատասխանեց խալաթով մարդուն, որ Լազրից ուզում էր սուսյոյ իմանալ, մենք ջամբազներ ենք, աղյոք, թե կոմեդիաներ. մեկ խոսքով իմ բարի, հազվադեպ տանտերը, հյուրընկալութան սովոր, նահապետական կյանքին տեղյակ, միշտ խառակ և խաբերայություն կամ երկերեսաբանություն չհասկացող, հշմարտասիրության բարեկամ Արտեմ Լազրիչս զայրացա՛մ: Զայրացա՛մ և գիմեց մեզ արգարացնելով յուր ծառաների վարմունքը:

— Դիտե՛ք պո՛ղ. էս հիմարները չեն իմացել, որ գուցե՝ սթախներ ևք ուղում... էնա տսել են կոմեդիաներ են, տեսնես թնչ միլլեթի մարդիկ են, որ գոստինիցի տեղ մեզ մոտ են եկել:

Փարազկեց մեր կասկածը:

— Ուրեմն ձեր տունը...

— Կլուք ա յանի (այսինքն կլուք է):

— Ինչպե՛ս:

— Էս քրե՛ն և՛ մալի, տղերքը գալիս են, քեֆ են տնում, թուղթ են խաղում, տան քրե՛ն ու ծախսը գուրս է գալիս:

Ահա մեր Լազրը, մեր առաջին ծանոթը Շուշիյա քաղաքում:

<Ն Ե Ր Կ Ա Յ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր>

Արտեմ Լազրիչը տվեց մեզ մեկ բաժականին մեծ սենյակ պառչկամբի վերա: Տեղավորվելուց և հանգստանալուց հետո մենք մտածեցինք, որ սույն աղաններին վճարելուց հետո մեզ ոչինչ փող չէ մնում:

Ինչ անենք, հարցրեցինք երեք ընկերներս միմյանց և սկսեցինք միմյանց գտնազան առաջարկություններ անել: Մեր ամեն մեկին առաջարկված նախազները երկար ու բարակ քննելուց և զննելուց հետո, վճռեցինք ընդունել հետևյալը:

Է՛մրովհետև Մանդինյանը ուսանողության ժամանակվա ընկեր էր Տեր-Հակոբյանի, որ նշանակություն ունի շուշեցոց մեջ իբրև հայ մանուկների գաստիարակիչ, ուրեմն՝ պետք է Մանդինյանը այցելել Տեր-Հակոբյանին և փոխ առնել նորանից ինչքան հարկավոր է փող և խնդրել թատրոնի տեղ, որ մենք կարողանանք տալ մեկ քանի ներկայացումներ, որից կծածկենք ծախսը և կիրադորենք մեր շքանդրբազակա՜ն նշանակությունը: Եթե կմտ միջոց, փոխանակ Պոլիս ուղևորվելու, կգտնենք ուրիշ հայաբնակ քաղաքներ մեր թատրոնական գործի նպատակը առաջ տանելու համար: Իսկ եթե կուենանք համակրություն և փող, կերթանք Պոլիս:

Վճռեցինք, կնքեցինք մեր գաղափարը և Մանդինյանը այցելության ցնաց երեմեի ուսանող ընկեր Տեր-Հակոբյանին: Եթե Մանդինյանին չհաջողվեր նորա զեկսպանությունը, այսինքն, եթե նա չկարողանար փող և բութոյական օգնություն ձեռք բերել Տեր-Հակոբյանից, այն ժամանակ վճռված էր, որ ես պետք է գիմեի մինևույն նպատակով իմ ուսանողական ժամանակի ուս ընկեր Վ. Լ... կուն, որ գանձում էր այդ միջոցին Շուշի գաղապական հողաշափի պաշտոնով և որ ուրեմն կարող էր նպաստել մեզ թե

փողով և թէ յուր պաշտոնական հարաբերություններով դեպի քաղաքային վարչության նշանավոր անձինքները:

Չանցկացած մեկ ժամ, Մանգրինյանը վերադարձավ ու ազագակեց զըն-ներքի:

— Է՞րբիկա՞:

Ուրեմն փող կար:

— Իսկ տեղը, — հարցրեցինք մենք:

— Տեղը աղի մազազինն է:

— Ի՞նչ աղի մազազին:

— Ծաշից հետո կգա Տեր-Հակոբյանը և մենք միասին կերթանք տեսնելու մեր ապագա թատրոնի թէ չենք և թէ դիրքը:

Ծաշը կերանք Լազարի առաստաղեն և համեղ խոհանոցի պատրաստությունից, խմեցինք տեղական մեկ շիշ կորմիր, քաղցրահամ գինի և գնացինք Տեր-Հակոբյանի հետ լավ գիտելու մեր ապագա գործունեության ապագրեզը:

Տարավ մեզ Տեր-Հակոբյանը հետո՝ քաղաքից դուրս, անցկացանք մեկ քանի ծառերի միջով, որ, ինչպես հաղորդեց մեզ մեր նոր բարեկամը, Եսուշի քաղաքի ճեմելիքն էր, և կանգնեցինք մեկ անազին քարաշեն շինու-թյան առաջ:

— Ահա մեր թատրոնը, — բացականչեց Տեր-Հակոբյանը:

Մասնք ներս և թնշ տեսանք, չորս պատ, մեջը անթիվ փայտյա սյու-ներ, մի քանի տեղ բաժանված տախտակյա պատերով, առանց հասակի և առանց առաստաղի:

— Այստեղ թնշ կարելի է անել մեր գրաժական միջոցներով, — հար-ցրեցի ես:

— Ի՞նչպես թե ինչ, — ընդմիջեց Մանգրինյանը: Մենք կշինենք այստեղ ամենաշքեղ փոքրիկ բեմ և կստեղծենք ամենամեծ գանչիճ հանդիսական-ներին համար:

Չննեցինք, մտածեցինք և վճռեցինք, որ, չնայելով զանազան անհար-մարություններին, մենք կարող ենք իրագործել այդ ավերակ շինության առաստաղի տակ մեր հայ թատրոնական գաղափորը:

Տուն գառնալու պես մենք բաժանեցինք մեր աշխատանքը հետևյալ ձևով: Մանգրինյանը պետք է հոգար թատրոնի շինության մասին, Ամե-րիկյանը պիտի պատրաստեր մեր որոշած սեպերատուարին հարմար շորեր, սաղափարտներ և նիզակներ, իհարկե, թղթից, իսկ ես պիտի հոգայի ուս-սական վարչությունից մեր ներկայացումների համար իրավունք ստանալու հարցի մասին և պատրաստեի դերեր այն պատանիներից, որոնց ծնողներին բարի՜ Տեր-Հակոբյանը կկարողանա համոզել՝ համակրել մեր ազգասիրական նպատակին:

Սկսվեց գործը:

Ահա մենք Ղարաբաղում գտանք համակրություն, միայն համակրու-թյուն, չնայելով, որ այդ համակրության սկզբունքների մեջ կար երկպա-սակություն: Կային երկու կուսակցություններ՝ շանշիական և սորգասական⁵³. շանշիականներին անվանում էին պրոտեստանտ, սորգասականներին՝ յուր-յանց օգուտը հասկացող մարդիկ: Մեկին պատկանում էր հայ պատանե-

⁵³ (Հուն.) քոթա (այս բացահանությունը վերադրվում է Արքիմեդեսին):

կուսքան ուժը, մյուսին՝ մարդկության հարուստ դասը՝ փաստաներ և շահասիրական նպատակին հետևող մարդիկ:

Մենք գտանք համակրություն պատանեկության կողմից, Մեզ բովական էր այդ պատանիների համակրությունը. սկսեցինք գործը:

Մանգիլյանը ճարեց մեկ հյուան և սկսեց նորա հետ իմաստասիրել ճարտարապետական արհեստի գիտությունը: Փամբախապետ նոքա նեղ ընկած ժամանակ իրարու չէին կարողանում հասկանալ: Մանգիլյանը, որինակ, ասում էր, բուստա, այս փայտը այսպես գիրք իսկ ուստան հասկանում էր, թե այն փայտը, որ Մանգիլյանի ճարտարապետական նախագծով հարկավոր էր, որ փոքր ինչ մյուս փայտերից ցածր լինի, պետք է բարձրացնի: Մանգիլյանը հուսահատվում էր ճարտարապետ ուստի անհասկացողությունից:

—Ասում ես բցբցու, ես էլ բցբցնում եմ,— արգարացնում էր յուրյան բուստա գուրգյարը:

Մանգիլյանը շփոթվում էր, նեղանում էր և ինքն էր շատ անպատիքագործում յուրյանից ստեղծած՝ զուրգյարի՝ արհեստին վերաբերող նախագիծը:

Ամերիկյանը նմանապես գործում էր արագությամբ. նա հավաքել էր յուր չորս կողմը մեր պատանի աշխատակիցներին և մեկ-երկու օրվա մեջ ստեղծեց մոտ հիսուն թղթյա սաղավարաններ, փայտից շինած նիզակներ, որոնց ծայրերը ոսկեջրած կամ արծաթաջրած թղթերով էին զարդարած, հասա թղթերից գրահներ, փայտյա սրեր, և այլն:

Ես էլ իմ գերս էի կատարում, ներկայացման իրավունքն իմ ուսուցնկեր Լ... կի միջոցով ստանալուց հետո, սկսեցի պատրաստել դերերը: Կարձեմ Սրապիոն Հեքիմյանի հեղինակություն Սամվել էր առաջին ներկայացուցի, որ ավինք:

Սամել. դա ինձ համար, իբրև հայ դերասանի համար, թացել է անձուստալի հիշատակ:

Սամելը շրջել է յուր ժամանակվա բոլոր լուսավորված օտարերկրները, ասելով է, զգացել և դարձել է յուր խոռվություններից և մութ խորդախություններից ալեկոծված հայրենիքը. նա չի կորցրել օտարության մեջ յուր հայրենիքի սերը, չի դարձել մեր ժամանակակից անգույն երիտասարդության մեկ մասի նման գաղափարներից զուրկ կոսմոպոլիտ:

Ահա այդ Սամելն է, որ համարյա միշտ Ռուսաստանի հայերի թաղընական բեմի սկզբնական գոյությունն է եղել, չնայելով ողբերգության սաստիկ աններելի բեմական պակասություններին:

* Ուրեմն սկսեցինք պատրաստել Սամելը առաջին իսկ ներկայացման համար:

Միևնույն ժամանակ սկսեցինք պատրաստել և Վարդան Մամիկոնյանն ողբերգությունը, որի համար դարձյալ իմ ուսուցնկերով միջնորդությամբ հրավիրեցինք մոտակա զինվորական բանակի՝ Թան-քենդի գյուղի զինվորական երաժշտական խումբը և նորա հետ մեր ընկալարանում երգերի կրկնությունը արեցինք: Երաժշտության ձայնը տարածվեց ամբողջ քաղաքում, Հարյուրավոր այր մարդ և երեխա սկսեցին բարձրանալ մեր բնա-

պարանը և տառնց ալլեալի մտնում էին այն սենյակը, ուր մենք կրկնում էինք մեր երգերը:

Երբ որ տեսա այցելուների թիվը շատանում է, դադարեցրի երաժշտությունը և խնդրեցի այցելուներին, որ հեռանան և թողնեն շարունակելու մեր գործը: Առավել համեստները ընդունեցին առաջարկությունս և հեռացան, իսկ շատերը Մաացին դահլիճում տնվորով, այնպես որ մենք ստիպված էինք համարյա ձրի ներկայացում տալ այդ պարոնների համար: Ինչևիցե հասավ ներկայացման օրը:

Դահլիճի մեջ չկայացաւ դատարկ տեղ: Եուզեցոց համար դա բոլորովին նոր բան էր: Նոքա, որոնք չէին այցելել Թիֆլիս, և Եուզմա մեջ առաջին տնդալիս էին տեսնում թատրոնական բեմ, հասկանալի է, որ շատ հավանեցին: Միայն զուրկ Մաաց այդ հանդեսի տեսությունից կանանց սեռը, որ չէր կարող ներկա գտնվել այն հանդեսում, ուր հավաքված էր այդ մարդկանց հասարակությունը:

Բեմից ամեն մեկ եկեցցե Վարդանն ասելու ժամանակ, որ ճշում էին մոտ քսան երեսակայած հայ զինվորներ, բազկացած մինչև 18 տարեկան դեռահաս երիտասարդներից, որոնց ես անվանում էի շիմ քաջ զինվորներ, հանդիսականները համարյա կրկնում էին շիմ քաջ զինվորներ—ի հետ միասին եկեցցե Վարդանն: Այնքան հաճելի եղավ այդ ներկայացումը հանդիսականների համար, որ նորա վերջանալուց հետո նոքա եկեցցե Վարդանն ազազակելով անշարժ նստած էին յուրյանց տեղերում ու սպասում էին... որ շարունակվի ներկայացումը: Մենք հանեցինք մեր հագուստները և պատրաստվում էինք զնալ, իսկ նոքա դեռ սպասում էին. վերջապես Ամերիկյանը ստիպվեցավ դուրս գալ վարագույրի հետևից և հայտնել, որ ներկայացումը վերջացավ:

— Ափսոս, փսսոս,— տրանջացին բարի շուշեցիք և հեռացան դահլիճից միշտ եկեցցե Վարդանն կանչելով:

Բեմից դուրս գալու պես շրջապատեցին մեզ բազմաթիվ հանդիսականներ և ճանապարհ ձգեցին մինչև մեր բնակարանը, ուր մեր բարի կազարը պատրաստել էր ահադին հացկերույթի սեղան. նա մեզ հրավիրեց ընթրիքի մեր խմբովն ու մեզ ճանապարհ ձգող հանդիսականներով:

Ընթրիքի ժամանակ սկսվեցան զանազան կենացներ. սեղանի շուրջ նստած էին մեր գործին անկեղծ համակրող հայեր և մինչև տնդամ մի քանի ալլազգիներ:

Այդ երեկոն մեկ տոն էր մեզ համար, և այդ սիրալիբ քաղաքում այդպիսի երեկոներ կրկնվում էին մեր ամեն մեկ ներկայացումը տալուց հետո:

* * *

Այդ առաջին ներկայացման մյուս օրը այցելեցին մեզ շատ երիտասարդներ ու պատվավոր քաղաքացիք: Տեր-Հակոբյանը սկսել էր արգեն դրդել շատ ընտանիքների, որ նոքա մաքառեն հին սովորությունս և նախապաշարմունքի դեմ և այցելեն մեր ներկայացմանը: Սկսեցինք խորհել և որոշեցինք այնպես, որ դահլիճը բաժանվի երկու մասի և տոմսակները բաժանենք ընտանիքների մեջ միայն: Աջակողմյան դասի նստարանները վճռված էր առաջարկել կանանց, իսկ ձախակողմյանը՝ այդ մարդկանց: Գիտի կրկնեինք Վարդան Մամիկոնյանը և նրա հետ, կարծեմ, Շկոլի վարձապետ վոդեվիլից մի քանի տեսարաններ:

Մանգոյինյանը հափշտակված այն մաքրից, որ մեզ վիճակված է վերջապես քանդել հայ մարդու և կնոջ մեջ դրած հարեմական պատը և Շուշվա հայ կանանց ծանոթացնել առաջին անգամ լուսավոր հասարակական կյանքի հետ, հրապուրվեց և կամեցավ տանել այդ հաղթութիւնը, ապւով այդ երկկոյան ներկայացմանն առավել շքեղ տեսք, որից, նորա կարծիքով, պիտի զմայլերին փափկասուն տիկնայք և օրիորդները, քԱյդ հրաշալի բան կլինի՝—տանց նա և զնաց շատադով զեղատուն: Շուտով վերագործավ և հոգնած վերածնեց մեր առաջ մեկ քանի թղթյա փոքրիկ պարկեր:

— Այդ թնշ է:—հարցրեցի ես:

— Դա Վարդանի բուլան է:

— Ի՞նչպես թե Վարդանի բուլան:

— Որք դու կմեռնիս բեմի վրա, քո զլիւիդ բուլան վայր կգաս:

— Փորակնք, մեկ տեսնենք ինչ բան է, երեի բնագայան կրճիկ է:

— Sulfa silitrice.*—ասաց նա, ճաշեց շատադով մեկ հետ և զնաց կարգադրելու յուր քրքրցու: մեքենայագետ հյուանի հետ Վարդանի զլիւիս բուլան իջեցնելու միջոցները:

Երկկոյան Յ ժամին զինվորական երաժշտութիւնը սկսեց աղի մաղազինի կամ մեր շնչակական թատրոնի: առաջ դանված ճեմելիքի վերազըտնողներին զվարճացնել: Բոլոր տոմասները համարյա ցրված էին, միայն վերջին կարգերում մնացել էր մեկ քանի տեղ: ներկայացումը սկսվեցավ: Ինչ փառահեղ տեսարան էր բեմից:

Մեզանից ձախ կողմը նստած էին կանայք յուրբանց նահապետական գույնզգույն հագուստներով, զլիւաշորերը կապուկուկ արած, ճակատները, կուրծքերը և ձեռները զարդարված ոսկիներով: աջ կողմը բռնել էին այրմարդիկ, նմանապես ըստ մեծի մասին տեղական հագուստներով: բացառութիւն էին կազմում մեկ քանի սերասուկներ, որոնց թիվը կարող էր ավելի լինել, որովհետեւ այդ ժամանակ Շուշում գտնվում էին իրանց բովականաշափ լուսավորված համարող հայ երիտասարդներ, բայց նոքա չէին բարեհաճել այցելելու մեր «армянские спектакли», որ նորանց կարծիքով խիստ ստոր էր իրանց բարձր հասկացողութեան համար:

Մեկ խոսքով մեր ներկայացումը սկսվեցավ:

Հասանք երրորդ գործողութիւն:

Մանգոյինյանը յուր լուսափայլ երեսով, զո՛ր իրանից, յուր մեքենայագետ քրքրցու: հյուանից, զեղատան զեղերից, վստահ յուր նորադուռ էֆեկտի կարգադրութիւնից, նստած էր յուր հուշարարական փոքրիկ խցում: ևս փոված էի ամենապսեմորեն, վիրավորված մերձ ի մահ, փայտից շինած և ներկած երևակայական ապառափի վերս:

Շուշինը: գուրս էր եկել աշակղզման կուլիսներում, ամփոփված բուրանկան թղթի մեջ, և հնարագետ Մանգոյինյանի ու նորա միտքը իրադրածող հյուանի շնորհքով կամաց-կամաց բարձրանում էր զեպի մեր թատրոնի առաստաղը:

— Բռնվո, բռնվո,—լսվեց համակրութեան մրմունջ հանդիսականների մեջ:

* (Հատ.) Մաքուր ծծումք:

Սա բարձրացաւ կամայ-կամայ իմ մահնակալի վերաւ և սկսեցի իմ՝

Հեւտին դու լուսին, էբ աշդդն տխուր:

Այլան դույն ունիս, և այլն:

Սո՛վ հազիվ մեկ-երկու տուն կարգացի, երբ հանկարծ հուշարարը լսեց և դիմեց դեպի բնմի խորքը, փսփսալով յուր տեղից բզուրա, գուրա, դեռ ժամանակ չէ:

Սա կտարաւորելով, կրտսեռ մեծանալով, շուտ եկաւ դեպի այն կողմը և տեսաւ մեր պատգելի ընկեր Ամերիկյանին, իմ հաժախարիմ քարտուղար Եղիշէն, փոքրիկ լապտերը մեռած, դուրս է եկել խորքից և սկսել է յուր հրապուրիչ մենախոսութիւնը՝

«Վարդան, դու Վարդան,

իմ աւեր պատգանդն:

Մանգինյանը վախենում էր, որ այդ անտեղի դուրս գալուց կորչի յուր լույս թաղնելու տղաւորութիւնը, իսկ ևս սկսեցի շփարփել, բայց շուտով զսպեցի ինձ և գտնաւորով դեպի լուսինը շարունակեցի.

«Ո՛վ դու Եղիշէ, չէ ժամ դուրս գալու,

ժամ է դուրս գնալու և հետո ներս գալու:

Սո՛վ թուլացած ընկաւ նստարանիս վերաւ:

Եղիշէն հասկացավ բանի զորութիւնը և դառնալով դեպի մեր Մառուիքը, Վարդանի հաժախարիմ ծառան, բացականչեց.

«Ո՛չ դու իմ Մառուի,

Այտեղ չէ Վարդան, գնանք, և այլն:

Հանդիսականներն այդ մեր շարադրած ոճերը ընդունեցին խեղճ Հակոբ Կարինյանի ներդնակութիւն և սկսեցին առավել մեծ ուշադրութեամբ լսել, թե ինչ պիտի դուրս գա տակից, իսկ Մանգինյանը թողեց յուր հուշարարութիւնը և սկսեց նեկեկալ ծիծաղից. Բախտավորապէս ևս անդիւրարած ունեի դերս, և շարունակեցի առանց հուշարարի. Վերջապէս հասանք այն տեսարանին, որտեղ Վարդանը տալիս է յուր վերջին շունչը և նորա վերաւ լույս է իջնում. Սա, հայտնի բան է, աշխատեցի շատ էֆեկտով մեռնել և հազիվ վերջացրի մենախոսութեան վերջին խոսքերը.

«Քեզանից առած արշունն Հայաստան,

Քեզի հետ կուտամ, կաց դու հաճիլայն

Հայ...աստ...ան... Հայ...աստ...ան:

Հանկարծ բնմը լուսավորվեց դեղնագուշն կրակի բոցով, որ սկսեց հետզհետե փոխել յուր գուշնը դեպի կանաչ, կարմիր և այլն:

Վարապետին ընկավ, հանդիսականները Թաղին աղջած և փոքր լուսութիւնից հետո սկսեցին սաստիկ ծափահարել:

Մանգինյանը ուրախութիւնից աստղի պէս փայլում էր:

Սա շատ եւ՛ր խաղացել Վարդանի դերը և գուշն այս տողերը գրելուց հետո դարձաւ վիճակոված պիտի լինի ինձ խաղալու այդ հերոս, վեհանձն, միեւնոյն ժամանակ կրոնամոլ Մամիկոնյանի դերը, ազավազոված, ազճատոված հանգուցյալ Հակոբ Կարինյանի կողմից, բայց պիտի խոստովանիմ, որ շնայելով շատ անհաջող հանգամանքներին՝ բնմի փոքրութեան,

գերասանական միութեան (անսամբլի) շքաժողովութանը,—ես այդ երեկոյան խաղովս առաջել շատ զոհ Մաացի, քան թե Թիֆլիսի մեծ թատրոնում խաղացած ժամանակներս:

Հազիվ մենք հանեցինք շորերը, ներս մտավ Տեր-Հակոբյանը և հայտնեց, թե կանանց խումբը Մուսմ է դուրսը և սպասում է մեր դուրս գալուն, որ հայտնե յուր շնորհակալութիւնը մեր ներկայացումից չափազանց բաժականութիւն ստանալու համար:

Արդարեւ, դուրս գալու պես մեզ չըջապատեցին կանայք և յուրյանց մերձագոր ազգական մարդկանց բերանով հայտնեցին յուրյանց շնորհակալութիւնը և խնդրեցին թույլ տալ մեզ հանապաղէք ևզել մեր կացարանը գինձորական խմբի երաժշտութիւնով:

Երբեք կյանքումս չեմ մոռանալ այդ Ֆրաշայի երեկոն՝ իսկական լուսինը նոր դուրս էր եկել մտալլ ամպերի տակից և սփռելով բոլորի շուրջ յուր արծաթափայլ շառավիղները, մի տեսակ կենդանութիւն ու առանձին ուրախութիւն էր զգալ տալիս: Մենք՝ գերասաններս՝ հանգերէ մեր քաջ գինձորներով, չըջապատված մեր բարեկամներով, կանանց խմբով, գնում էինք առաջ և մեզ հետեւում էր երաժշտական խումբը, կրկնելով մեր հայերէն երգած պատերազմական երգերը Վարդանից: Երեխաները, որոնք ներկա էին գտնվել այդ գիշերովս ներկայացման և հետեւում էին մեզ, անզաղար դռնում էին՝ կեցցե Վարդան, կեցցե Զմէկյան, կեցցե Ամերիկյան, կեցցե Մանգրեյան...

Այդպէս հասանք մեր բնակարանը, շնորհակալութիւն արինք փափկասուն տիկիններին նոցա մեզ ցույց տված պատվի համար և մտանք մեր տուն:

Դանիելում գտանք առաջին գիշերովս հասարակութիւնը և ուրիշ նոր մարդիկ: Անպիսի սեղանը դրած էր դանիելի մեջ, ծանրացած զանազան ուսուիքներով և խմբիչներով:

Նստեցինք սեղանը ամենքս միասնական ոգեւորված: Այդ հասարակութեան մեջ կար մեկ կրթված թուրք,* որի անունը, ինչպէս հիշում եմ, Համիդ էր: Նա շատ սիրուն սուսերեն էր խոսում, և լավ հասկանում էր հայերեն, թեև չէր խոսում այդ լեզվով:

Սկսվեց հաջկերույթը զանազան արախոսութիւններով համեմդած: Իմ քաջ գինձորները՝ կազմեցին առանձին խումբ և սկսեցին երգել Վարդանից և ուրիշ նոր ազգային երգեր՝ Շուշի հասած ուրիշ տեղերից:

Սկսեցին զանազան ճառախոսութիւններ, որոնցից Մաաց հիշողութեանս մեջ Համիդի ազգու խոսքերի նշանակութիւնը:

«Պարոններ,—ասաց նա,—շնորհակալութիւն անենք մեր՝ Թիֆլիսից նորեկ երիտասարդ գերասաններին, որ նոքա այսքան բաժականութիւն պատճառեցին մեր մոռացած խեղճ Շուշի հասարակութեանը: Ես թեև հայ չեմ, բայց պարծենում եմ, որ գտնվում եմ այս բոլորի հայ հասարակութեան մեջ իմ մեկ քանի միազավան համազգայնիցներին հետ: Ես կցանկանայի,—շարունակեց Համիդը,—որ մեր հյուր երիտասարդ բարեկամները վերադառնալով Շուշուց՝ տանեին յուրյանց հետ այն զվարթ կարծիքը, որ Շուշի հայերն ու թուրքերը եզրայրներ են, որ նոքա վաղուց մոռացել են յուրյանց մեջ ունեցած պատմութիւնից Մաացած ախուր անհա-

* Խոսքը ողբերկանքներէ մասին է:

ժամայնությունները, Կեցցեն, պարոններ, հայերը, կեցցեն և մեր Շուշի քաղաքի տարաբախտաբար զեռ թերի լուսավորված հասարակությունը:

Գորան պատասխանեց պ. Տեր-Հակոբյանը և պնդելով Համիդի հայտնած կարծիքը հայերի և թուրքերի վերաբերությամբ, հայանեց շնորհակալություն նորա հայտնած լուսավոր կարծիքի համար:

Հապրս, իմ խեղճ, բարի կազրը էլ չկար ուրախությունից. նա բոլոր ժամանակ ոտքի վերա էր և հյուրասիրում էր այցելուներին: Այս ճառախոսություններից, մեր մանուկ ընկերակիցների երգեցողություններից այնքան հաճախակից, որ հրամայեց խելոյն, չեմ հիշում քանի շիշ, պորտֆելյո բաց անել, որի ամեն մի շիշը այնտեղ արժեր այն ժամանակ 2 ո. 50 կոպ.:

Այդ ներկայացման մյուս օրը, ինչ փոփոցով որ մենք անցնում էինք, երեխաները կուռերներից մեզ ընդունում էին՝ «Կեցցեններով», առանց ալլեալի. հիշելով մեր երեքի ամեն մեկի ազգանունը բարձր ձայնով ի լսողություն բոլոր Շուշիա հայ բնակիչների:

Եկեցին Ձմշկյան, ճշում էր մեկ կտուրից մեկ երեխա, մյուս կտուրից բղավում էր մեկ ուրիշը՝ «Կեցցեն Ամերիկյան», երրորդից՝ «Կեցցեն Մանգոնյան», և ալլե:

Այդ օրը մենք ստացանք մեր պատվավոր ծանոթներից մեկից, պ. Կարապետ Ղուլյանից, հրավերք ընթերցու՜նորա հետ:

Թեև այդ ընթերցող չուներ առանձին նշանակություն, որովհետև հրավիրված չէին մեզ համակրող երիտասարդներից շատերը, այնուամենայնիվ տանուտները պատվեց մեզ յուր անկեղծ հյուրընկալությունով և գորանով դարձյալ մեկ ապացույց ևս ավելացավ մեզ համար, որ մոզովուրդը գիտե հարգել և պատվել այն անձանց, որոնց մեջ նկատում է ձգտում դեպի առաջագիտությունը:

Սորանով, հայտնի բան է, ևս չեմ ուզում պարծենալ մեր գործունեությամբ, այլ միայն ուզում եմ ցույց տալ, որ չնայելով այդ մեր ջնշին, կարճատև գործունեությանը, մեզ զնահատեցին տառվել, քան արժանի էինք, զղացին զնահատելու պարտավորությունը:

Կանանց համար ներկայացումը տալուց հետո, մենք, կարծեմ, դարձյալ տվինք մեկ թև երկու ներկայացում և հեռացանք Շուշիից, ուղղվելով դեպի Գանձակ, որտեղից պիտի գնայինք Ալեքսանդրապոլ:

Շուշիա թե աշխարհագրական գրությունը, թե մոզովդդի մեզ ցույց տված վարձուքը թողեց մեր մեջ ամենաջաղդը հիշատակ, այնպես որ հետո, երբ Ալեքսանդրապոլում և Երևանում մենք ոմանց կողմից ենթարկվեցանք զանազան խռովությունների, ու հազար ու մեկ խաբախությունների, շատ ափսոսում էինք, որ Շուշուց ուղիղ չվերագարձանք Թիֆլիս:

Շուշուց դուրս գալու ժամանակ մեզ ճանապարհ ձգեցին մեր պատանի ընկերները և հասցրին մինչև լեռան ստորոտիքը, զեղեցիկ երգերով. Հրաժարական առնելու ժամանակ մենք արտասվեցինք և ևս նկատեցի նմանապես արտասուք, ինչպես լավ հիշում եմ, Ա. Բահադուրյանի որդու՝ 14 կամ 15 տարեկան պատանու աչքերում:

Մեկ անգամ ևս սեղմեցինք իրարու ձեռքերը, Թափվեցինք երկայն ու լայն ֆուրգոնում և ճանապարհ ընկանք դեպի Գանձակ:

Սալլը նստելուց առաջ՝ մենք երկար ու բարակ խորհրդակցելուց հետո, թե Ալեքսանդրոպոլից⁵³ Երևան գնալու երկու մոտակա ճանապարհներից, մեր ավելի ապահով կլինի մեզ համար, մեր ալեքսանդրոպոլցի հայ սայլապանը համոզեց մեզ, որ Բողազ-քյասան անվանված ճանապարհով առավել լավ է, քան թե մյուսով:

Վհուկեյինք գնալ այդ ճանապարհով, թեև ճշմարիտն ասեմ, այդ Բողազ-քյասան (կոկորդ կորելու ճանապարհ) անունը սարսափ զցեց ինձ վերա:

Սալլի մեջ մեր ընկերությունը, բացի մեզ՝ երեք ընկերներիցս և սալլապանից, նաև բազկանում էր երկու ալեքսանդրոպոլցի արհեստավոր երիտասարդներից, սրտեք ուղեկից էին մեզ մինչև Երևան: Մրանցից մեկը ճանապարհորդում էր մեզ հետ լող ճանապարհորդելու համար, իսկ մյուսը... Երկուսն էլ ժամադրվածներ էին, մեկը հմուտ, փորձված, կեղտից զուրս եկած և նորա մեջ խրված՝ զոփոզ, գլխոզ անձնավորություններից մեկն էր, որի համար նշմարտուրյուն ասած բառի նշանակությունը պարունակվում էր միայն նորա մեջ, որ նա հայ երիտասարդ ձևանալով՝ շատ զոփեր, շատ կոզոպտեր ամեն մեկ յուր ձեռքն ընկած զոհի, հայ թե՛ սուս, վրացի թե՛ հրեա լինեին այդ զոհերը, նորա համար ողջ մեկ էր, մյուսը, այդ մյուսը... Ծ, նա զո՛հ եղավ, այդ զեռահաս, քնքուշ, զեղեցկատես աղնիվ երեխան, նա հափշտակվեց երիտասարդության բարձր գաղափարով, նա թողեց յուր զեռահաս ամուսինը, յուր հարուստ ընտանիքը և հետևեց մեզ: Նորա վերա մեծ ազդավորություն ունեցավ մեր երեք երիտասարդների ձգտումը գնալի վե՛ր գաղափարը, նա մեզ նուստավորիչներ էր կարծում, նա չէր ուզում բաժանվել մեզանից և մեռավ Երևանի մեջ՝ հանկարծ, անակնկալ մահով, քուրբուսյով: Խեղճ երիտասարդ...

Մոռացա ասել, որ մեզ հետ էր և սուսաց բմբաձիդ զնդի կապիտան, հանգուցյալ Ալեքսանդր Հայկազունին, որն առաջնորդում էր և հովանավորում մեզ և որը նախատեսելով, թե մենք սահմանից զուրս (որից և սկսվում էր այդ ժամանակ թյուրքական սահմանը) կարող էինք որևիցե արկածի պատահել ավազակային հրոսակների կողմից, վերցրել էր յուր հետ երկու դրագունի զինավորներ:

Մենք ընկանք ճանապարհ: Երբ դիշերը վրա հասավ, մենք իջանք Անիի հին ավերակների մոտ գտնված բազմամարդ մեկ հայ գյուղ, որի անունը տարաբանաբար այժմ չեմ հիշում: Գյուղը, երևում էր, հարուստ գյուղ էր, որտեղ մանկու պես մեզ դիմավորեց սանուսները և առաջնորդեց յուր ընտելաբանը: Դա մեկ ընդարձակ սրահ էր, կառուցած հաստ փայտյա սյուների վերա և բաժանվում էր երկու մասի, որի մեկ մասում ձմեռ ժամանակ տեղավորվում էին ընտանի անասունները, իսկ մյուսը, ավելի փոքր, բայց մաքուր մասը, ներկայացնում էր հյուրընկալության սենյակ՝ փոքրիկ բուխարով: Ներս մանկուն պես մեզ բազմեցրին վազորոք զցած կարպետների և զանազան բարձերի վերա և իսկույն վառեցին օջախը և պարառատեցին մեզ համար թեյին վերաբերող պարագաները:

* Հիշատակարանիս այս համաժամի սկիզբը, որ վերաբերում է Ալեքսանդրոպոլին, հարած է:

Մենք կազմեցինք փոքր շրջան և սկսեցինք զբաղվել թեյի պատրաստութունով:

Ես նկատեցի այդ ժամանակ սրահի մյուս բաժնում մեկ արևարդ մազերով ձերուհու, մոտ յոթամասուն տարեկան հասակով, որն անընդհատ նայում էր մեր կողմը և ժամանակ առ ժամանակ խորը հոգոց էր քաշում: Դա շատ շարժեց իմ հետաքրքրութիւնս և ես անպատճառ կամեցաւ իմանալ այդ ձերուհու ով լինելը:

Երբ թեյը վերջացրինք և մեզ համար պատրաստեցին ընթրիք, հյուրասեր տանուտերը հրավիրեց մեզ սեղանի նստել և վայելել նորա սոխ ու հացը, տեղ բռնելով իմ կողքիս:

— Ի՞նչու այն ձերուհուն չեք հրավիրում,— հարցրի ես տանուտերին:

Նա նայեց այն կողմը և պատասխանեց:

— Նա չի ընդունիլ մեր հրավերը:

— Պատճառը,— հարցրի ես նորից:

— Նա փախում է ամեն տեսակ ընկերութիւնից:

— Զարմանալու բան է,— ասացի ես:

— Այո, Ե, դա խզնալու մեկ մարդ է:

— Ո՞վ է, Բնչ մարդ է:

— Մէտ կողմերից է: Մի ժամանակ դա շատ հարուստ և ունեւոր գյուղացի էր, եզ, ասվար, ոչխարի, ձիերի այուրուհեր ունեւոր, լավ տուն-տեղ, չիմա ամեն բանից զրկված, թափառում է գյուղից գյուղ, տնից տուն և ահա մեկ ամբողջ ամիս է, որ ինձ մոտ է բնակվում... Դուք չե՞ք լսել խենթ Մկոյի քրոջ պատմութիւնը:

— Ի՞նչ խենթ Մկո, — հարցրի ես:

— Այն, որի քույրը երկու տարի սորանից տոաջ սպանել է մեկ շեյխի:

— Ձեռ լսել, — հետաքրքրվեցի ես:

Մեր հյուրասեր տանուտերը պատմեց ինձ մի տնցք, թե ինչպես այդ ձերուհու գեաահաս աղջկան, խենթ Մկոյի քրոջը, մեկ վաշխառու հայի կազմած որոգայթների պատճառով, տանում են վաճառող ձեր շեյխի օրան, որտեղ շեյխը ուզում է նորան բռնաբարել, իսկ աղջիկը յուր հազուստի մեջ պահած փոքրիկ դաշույնով սպանում է վաճառող ձերուհուն և ինքը, մայրը, եղբայրը մեռնում են շեյխի շրջապատի մարդկանց դաշույնների հարվածների տակ և ամբողջ ընտանիքից, ինչ որ հրաշքով, ազատվում է միայն ձեր հայրը:

Այդ եղեռնադրութիւնի անցքի ուսմեղ տպավորութիւնն տակ անցկացրի գիշերը:

Շատ տարիներ հետո, այդ և յսածս ուրիշ այդ տեսակ եղեռնական անցքերը նկատի ունենալով, վճռեցի իմ մեջ գրել ընթական մեկ բան՝ շեյխի Մկոն անունով:

Մյուս օրը, առաժոյտան, բաժանվելով Հայկազունուց և գինձորներից, մենք շարժվեցինք մեր իջևանած գյուղից և սկսեցինք մոտենալ մեկ լեռան, որի արևելյան ստորոտով պիտի շարունակեինք մեր ճանապարհը գիպի Ապարան անվանված գաղաղը:

— Մենք մոտենում ենք Բաղազ-քյասամիին,— ասաց մեր արեւմտահայր պուրի սալապանը և զգուշացրեց, որ պատրաստ լինենք:

— Ինչպե՞ս,—հարցրի ես... և իսկույն իմ երևակայությանս սկսեց ստեղծել հազար ու մեկ տրագիկական անցքեր: Փանթ ճանապարհորդներ դուցե—երևակայեցի ես—անցնելիս են եղել միևնույն ճանապարհով, հանդիստ, ապահով և հանկարծ անսպասելի մեռավ ավազակները հարձակվել են նորանց վերա և մորթել են նորանց ոչխարների նման: Գուցե նոքա կհարձակվին և մեզ վերա, կպահանջեն մեզանից փող, իսկ մենք փող չունենք: Նոքա նայելով մեր եվրոպական հագուստին չեն հավատա և...

Հանկարծ նկատում եմ լեռան դադաթից վազում են ներքև մեկ քանի հովիթներ երկար չոճաթիկները մեռներին՝ լճ-լճ-լճ անելով:

Ահա սրանք են Բողազ-քյասանի ավազակները, սրանք են այն կոկորդկարոզները, որոնց պատճառով այս ճանապարհը կրում է Բողազ-քյասան անառափելի անունը,—մտածեցի ես, և իսկույն Վիլեցի սալլապանից նորս հրացանը և ուղղեցի դեպի վազողները...

Ամերիկյանը բռնեց աջ մեռքս...

Անցանք Բողազ-քյասանի Ուղուցը...

— Գրեմնք Բողազ-քյասանը,—հարցրի ես մեր սալլապանին:

Նա ծիծաղեց և պատասխանեց.

— Նոր ենք մտնում Բողազ-քյասանի ճանապարհը:

Ես նայեցի ընկերներին. բոլորը սփռչնած էին, բացի Ամերիկյանից: Վերջուպես անցանք այդ հեռային Բողազ-քյասանի սկիզբը և սկսեցինք իջնել մեկ նեղ, անպիտան, քարքարոտ ճանապարհով դեպի Ապարան:

— Այ, այնտեղ,—նկատեց այդ միջոցին մեր սալլապանը, ցույց տալով ճանապարհից հեռու մեկ դժբեթանման շենքի վերա, որ դանդում էր լեռան լանջին—ահա այդտեղ լճերթեցին և կախեցին մեկ իգիթ երիտասարդի:

— Ինչպե՞ս,—ընդամիջեցի ես:

— Նոքա երկու եղբայր էին, երկուսը ևս հզոր, քաջ երիտասարդներ էին: Մի օր իրանց մեկ լավ ծանոթ աղայի հետ Երևանից դալիս, խեղճ երիտասարդ եղբայրները հայտնում են, որ նորանք իրանց դառը քրտինքով արդեն վաստակել են այնքան, որ կամենում են բոլ անել (պսակել) իրանց քրոջը: Գազան, անազունաց աղան,—չեչտեց սալլապանը,—այստեղ սպանել տվեց մեկ եղբորը, իսկ մյուսին տաքավ կախ տվեց այն դժբեթի գլխին:

Ուրեմն սա է այն անիծված Բողազ-քյասանը,—մտածեցի ես նայելով այն փոսերին ու ձորերին, որի միջով գնում էր մեր ճանապարհը, որտեղ առանց այլևայլության ոչխարների պես մորթոտում են մարդկանց:

— Եվ դուք շատ խոհեմությամբ կանեք,—շարունակեց սալլապանը, և թե իջնեք խայտեղ ֆուրգոնից և զգուշությամբ անցնեք այս ծուռ ու մուռ ճանապարհները մինչև Ապարանի գլուխը:

Մենք ամենքս իջանք սալլից: Ամերիկյանը տառվ յուր երկփող հրացանը և բռնեց սալլի ընթացքի ձախ դիրքը, ևս վերցրի սալլապանի հրացանը և գնալով սալլի աջ կողմը՝ սկսեցի որոնել ամեն մեկ ապստամբի տակ պահված ավազակին:

Մեր մյուս ընկերները հետևում էին մեզ՝ նմանապես պաշտպանողական դիրքով, ո՛րը մեծ և ո՛րը պստիկ քար տաած մեռքին:

Չնայելով մեր բոլոր այդ հերոսական նախապատրաստություններին,

ոչ մեկ ավագանի, մինչև իսկ ոչ մեկ նապաստակ չհանդգնեց հրապարակ դուրս գալ մեզ պես բռաջ հերոսներին գեմ:

Մենք անցանք բոլոր այդ կասկածալից ծուռ ու մուռ ճանապարհները և մեռւմ էր իջնել մեկ այլանդակ նեղուց-գարիվիւր, որի ստորոտից պիտի երևար մեզ՝ Ապարան անվանված ամբողջ նահանգի գիրքը:

Մոտենալով Ապարանին, մոռացանք և բոլոր մեր տատանյալ գրութունը:

Մենք մտանք մեր սայլը և բռնելով ամեն մեկս մեր առաջվա գրութունը, կարծես չէինք, որ հանգստացանք բոլորովին ամեն տեսակ բռնադժբայասանակահաճ վտանգներից, այնինչ հանկարծ եւ նկատեցի ներքևից, մեր ճանապարհի ստորոտից մեկ ձիավոր, որ յուր փոքրիկ, թռչկուն ձին ուղիղ քշում էր գետի մեզ:

Մասաիկ մատախուղ էր և արեւը մոտենում էր մայր մտնելուն:

Սա չվախեցաւ, որովհետեւ մոտեցողը մեկ մարդ էր, իսկ մենք շատ էինք. ես ուներ նիզակ, մենք ունեինք երկու հրացան:

Այնուամենայնիվ ես զգուշացրի ընկերներին:

— Տեսնում եք,—հարցրի ես:

Սայլապանը, որը գուցե ինձանից առաջ նկատել էր ձիավորին, փոքր ինչ շփոթվեց:

— Ով որ է, շատ զաւուսն է երևում,—նկատեց ես,—լավ կլինի որ զգուշ լինենք:

Զգուշացանք: Սա առաւ սայլապանի մեկփողյան հրացանը, Ամերիկյանը յուր երկփողյան հրացանը, էկսպոստատոր ժամազորքը պինդ բռնեց երկու ձեռքով յուր կուրծքի վերա զանված ձախ գրպանը: Մանգինյանը և երկրորդ ժամազորքի՝ ըստ երիտասարդական սովորության՝ սփրդնեցին... իսկ անդգործ նիզակավոր ձիավորը մոտենում էր մեզ:

Սոսկալի բռնեց մոտեցաւ: Երևակայեցեք, ձորակ, թուխ ու մառախուղ, երեկոյան ժամանակ և տեսնում ենք, թե ինչպես հանդգնաբար արագ-արագ մոտենում է մեզ ձիավորը: Սա պարաասում եմ իմ հրացանս, Ամերիկյանը յուրը, ամենքս անհամբերությամբ սպասում ենք վերջին սարսափելի բռնելին. ես արդեն պարաստ եմ արձակելու հրացանս. ձիավորը մոտեցել է մեզ քառասուն քայլ տարածությամբ և հանկարծ... տեսնում ենք փռալուստ սև միտուք... հայացքով երիտասարդ մեկ հայ քահանա, փառաջի ծայրերը ետեւ կապած, ձեռները վեր քաշած, ձիու աջ ու ձախ կողմերը կախ տված ատրճառակներ, կողքից կապած երկար կնո սուր և մեջքից խանչար:

Հրացանը ձեռքիցս ընկնում է: Երիտասարդ քահանան արդեն մոտեցավ մեր ֆուրգոնին և կիսաձայն զուխը խոնարհելով՝ ողջունեց մեզ և շարունակեց յուր ճանապարհը՝ արագ քշելով յուր ոսկեզույն նմուշը:

Այդ անցքը այնպիսի մեկ տարօրինակ բան էր, այնպիսի մեկ նորութուն մեզ համար, որ քահանայի հետանալուց հետո երկար ժամանակ մենք հազիվ կարողացանք բացատրել մեզ այդ երևույթը:

Մեր տարակուսանքը փարատեց սայլապանը:

— Այս կողմերը այդպիսի քահանաներ կան,—պարզեց ես.—Պատահում է, որ երկու-երեք գյուղ հովիւմ է մեկ քահանա. հարկավոր է նորան մեկ գյուղից մյուս գյուղը գնալ, ճանապարհները լիքն են ավագանիներով,

և ահա այդպիսիները այդ տեսակ նախապատրաստութիւններով պաշտպան-
վում են բարբարոս ավազակների հանդուգն հարձակումներէր, նորան ես
յով եմ ճանաչում, դա մտաւկա գլուղների գործակալ քահանան է:

Վերջապես մենք իջանք մեկ գլուղ, որտեղ մեր սայլապանը կամեցաւ
մնալ գիշերը, մասնավորապէս որ, ժինչն բոլորովին մութ ընկնելը, մնում էր
մեկ ժամ և հեռովից էլ երևում էր մի ուրիշ գլուղ:

— Այստեղ չի կարելի մնալ, շատ խեղճ ժողովուրդ են, ոչինչ չենք
գտնի, իսկ այնտեղ,— մատնացույց արաւ սայլապանը,— մենք կգտնենք
ամեն բան:

Գնացինք այնտեղ և թնշ գտանք: Բնութիւնը զեղեցիկ էր, մարդիկ
առողջ, պարթևահասակ, տները մեծ մասամբ քարաշէն, տխրեա սր առա-
ջին տապալորութիւն տակ մենք կարծեցինք, որ տեղական բնակիչները
ունեւոր ժողովուրդ պիտի լինեն: Դժբախտաբար երկար չմնացինք այդ
ուրախ տապալորութիւն տակ:

Գլուղը մտնելու ժամանակ, մենք իջանք սայլից, Հայտնի բան է՝
Ամերիկյանը անբաժան էր յուր հրացանից...

Ճանապարհին մեր հրացանակիր ընկերը նկատեց մեկ ծառի վերա
ճնշողիկներ, արձակեց հրացանից և սպանեց մի քանիսը:

Սիւ երբ նա մոտեցաւ հաճաքելու յուր քաջութիւնն պատուները, գլու-
ղից շատերը հաճաքվեցին Ամերիկյանի գլխին և սկսեցին փառաբանել
նորան:

Նայելով այդ զոգնատ հայանող հսկայատես տարբի վերա, որոնց
առաջ մենք ինքներս ճնշողիկների էինք նմանում, զարմացաւ և հարցրի
թե՛ միթէ նորանք հրացան չեն արձակում:

— Զարեհե՛ք... չէ՛. թվանք... չէ, չունենք:

Բանից դուրս եկաւ, որ այդ պարթևների ամբողջ գլուղի մեջ մեկ
հրացան չի գտնվի, և այդ պատճառով, շնայելով հոգի առատութիւնը,
նորանք ամենաշքաւոր գլուղի մեջ էին գտնվում, որովհետեւ ավազակ-
ները՝ ոգուտ քաղելով այդ հանգամանքից՝ անդադար կոտորում են նո-
րանց սպառ, համարձակ և անպատիժ:

Մենք մտանք ցույց տված հարսանք հարուստ գլուղացիներէր
մեկի սունը, ուր պիտի անցկացնէինք այդ գիշերը գրաստների հետ միա-
սին՝ մեկ փոքրիկ, կեղտոտ մութ անկյուն— զոնապատում (հարստուն),
և որտեղ մեր սովը հանգստացնելու համար չկարողացանք անգամ
փոքր ինչ ծածուկ գտնել: Ես զարմացաւ այդ տեսակ չքավորութիւն վերա:

Սիւ, կարծես, առավել հաստատ համոզելու համար ինչ այդ կարծիքի
մեջ, մտաւ մեզ մոտ տանտիկներ, մեկ բարձրահասակ, միջին տարիքի
կին և տեղեկանալուց հետո, թե մենք թնշ մարդիկ ենք և թրակցիկ ենք
գալիս՝ սկսեց խնդրել անգանից, որ մենք մեկ-մեկ գրոշ պարգևենք նորան,
որ նա կարողանա այդ գումարով ընծա առնի և տանի յուր անդրանիկ
Գրիգոր սղալի հարսնացուի մոտակա գլուղը, որովհետեւ մի քանի օրից
սկսեց է հարսանիք անեն:

Եթե հարուստ գլուղացու ընտանիքը այդ գլուղի մեջ էր գտնվում,
ուրեմե թնշ գլուղի մեջ պիտի լինեն գլուղի չքավորները— մտածեցի
ևս— և մոռանալով իմ սովածութիւնս, իսկույն հետացաւ մեկ անկյուն և
ընկա Մորֆիի գիւղը՝ մտաբերելով պատմագրի սուգը:

Աստվոտը շատ վաղ դուրս գնացինք գյուղից: Եվ երբ արևի ճառագայթները, թափանցելով թանձր ամպերի միջից, տվին մեր ճանապարհի շրջակայքին մեկ առանձին կյանք, մեզ՝ երկու օրվա մոտախուզից թմրած ճանապարհորդներին՝ զվարթութուն պատեց: Արդեն բավական հեռացել էինք մեր իջևանած գյուղից, երբ հանկարծ մեր առաջ բացվեց մեկ հրաշալի տեսարան:

Այդ աշխարհի տեսարան էր, որի համար տարիներով ճանապարհորդութուններ են անում երևելի տաղանդավոր նկարիչներ, որ, ընտելյան ալգայիս սրանչելիքից զմայելուց հետո, կարողանան նկարել ընտելյան զեղեցկութունը, և անշուշտ կտափի վերա զեռեղելով իրանց զգացած տալիսութունները՝ տարածեն ընտելյան վսեմութունը:

Մեր առաջ բացվեց Արարատյան դաշտը յուր աննման զեղեցկութունով:

Կանթուժ, պաշտոնական ճանապարհորդության մաժանակ, պատահել էի երկու տեսարանների, որոնց զեղեցկության վերա հիացել էի մինչև այն աստիճան, որ կարծում էի, թե տեսնում եմ մեկ դուրսական տարածութուն, աշխարհի մեկ աշխարհ, որտեղ չկա մարդկության համար տառապանք: Որտեղ հրաշալի ընտելությունը նմանում է այն բիրյակիան գրախտին, ուր ամեն ինչ կատարելագործված է, զեղեցիկ, և որտեղ թագավորում է անսահման երջանկություն:

Այդպիսի տալիսութուն առաջին անգամ ունեցավ ինձ վերա Կասպից ձովի տեսարանը, և երկրորդ՝ Կախեթինը:

Երկու անգամ էլ ես հիանում էի իբրև լոկ մարդ, միայն այս անգամ ես հիացա ու պարծեցա ինքս ինձ՝ իբրև այդ երկրի զավակ:

Երևակայեցեք, լայն, երկար դաշտ, որոնց կենտրոնում՝ հեռվից զբաղված է էջմիածնի վանքերի զուլաները՝ հանդերձ Վաղարշապատի պողաբեր ալգիներով, իսկ հորիզոնում, արևելյան կողմում, արևի ճառագայթների տակ պսպրում են Մասիսյան զույգ լեռները, իրանց մշտական ձյունապսակ դադաթներով և նորանց ստորոտում գուք նկատում եք կապույտ, օձաձև սողող Արաքսը, այդ գարավոր համբ վկան հայ մոզովրդի պատմության, նորա անվերջ տարաբախտությունների: C'est un morceau du ciel qui est tombé sur la terre,⁶² մտածեցի ես, այս Արարատյան դաշտը անշուշտ թերկնքի մեկ մասն է, որը ընկել է երկրի վերա, որպեսզի հիացնե հոգեղեն արարածին յուր վսեմ զեղեցկութունով:

Մենք սկսեցինք իջնել այդ դաշտը մեկ նեղ ճանապարհով: Մեր ձախ կողմում շուտ շուտ պատահում էին զանազան պատմական վանքեր, որոնք հիշեցնել էին տալիս Հայաստանի այն նշանավոր դարը, երբ այդ վանքերից ամեն մեկում մեր օրբազան քերթող Մեսրոպները, Յորենացիները աշխատում էին հայ երկրաստորդներին կրթել...

⁶¹ (Ձր.) Իտալացի հռչակավոր բանաստեղծ Գանթիի այս արտահայտությունը Ձմիկյանը թարգմանաբար ավել է հաջորդ տողում, որը մենք ստել ենք շահերանքի մեջ:

Իսկ հիմա այդ վանքերի մեջ թաղամորում է միայն մեռելութունն և զանազան կղերական ինտրիգաներ:

Խեղճ, խեղճ իմ հայրենիք,—մտածեցի ես և հուսահատ ընկա փութադռնի խորքը:

Վերջապես մենք սկսեցինք մտնելու Էջմիածնին: Անցանք մեկ գյուղի միջով, որի ամուռը չեմ հիշում, իսկ որը հիշեցրեց ինձ Վենետիկի նկարագրութունը:

Այդ գյուղի համարյա բոլոր տները շրջապատված էին ջրերով, այնպես որ ես կարծեցի, թե տանից դուրս եկողը պիտի կամ լող առնով անցնի փողոցը, կամ անպատճառ փողոցիկ նավակով ճանապարհորդի, թեպետև ոչ մեկ տեղ ես չտեսա նավակ և ոչ լող ափով: Գյուղի իսկ միջով անցնում է մեկ գետ, որ բաժանվելով զանազան ճյուղերի, պատում է ամբողջ գյուղի մեջ:

Անցնելով գյուղից, մտանք մեկ լայն շուտի նման ճանապարհ, երկու կողմը տեղած ծառերով. այդ ճանապարհը նման էր երկար ստվերախիտ ճեմիկների՝ ինչպես չիշում են մենք քաղաքներում:

Հասանք Էջմիածին: Արևը սկսել էր մայր մանել: Հարցրինք հյուրանոց. մեզ ծաղրեցին և անգամ հյուրանոց բառը չհասկացան և վանքի մոտ ցույց տվին ավերակներ, որոնց կենցեցին Քաղաքամասաբայն անունով:

—Միայն,—զգուշացրին մեզ,—արթուն, կացեք, եթե ոչ կկողոպտեն մեզ: Բարեբախտաբար այդ ժամանակ ես նկատեցի վանքի դռան առաջ երկու արեղաններ, որոնցից մեկը դուրս եկավ, որ իմ ներսիսյան ուսումնարանի դասընկերներիցս մեկն է:

Մենք ուրախացանք միմյանց տեսնելով, և այդ գիշեր հյուրընկալվեցանք արեղա ընկերոջս խուցում:

Պեսք է խոստովանեմ, որ մյուս օրը առավոտյան, երբ դուրս եկա Էջմիածնի գավթիժը և կամենում էի գտնել նորա մեջ երեխայութունիցս սնուցած տղամորթութուններս՝ պատմական անցքերի հետքերը, լուսավորչական կրոնի հիշատակները՝ ոչինչ, ոչինչ ես չգտացի, բացի մեկ տեսակ հուսահատութունից և ատելութունից՝ զեպի մեր ներկա հոգևորականութունը:

« Ե Ր Ե Վ Ա Ն Ո Ւ Մ »

Հասանք Երևան: Սաստիկ տոթ ու չող էր: Քաղաքը մտնելուց առաջ մեր էկապոսատուր ժամագործը առաջարկեց կանդ տոնել մեր սալապանին արևի անտանելի այրող ճառագայթների տակ, իսկ ինքը գնաց լճազաք մեզ համար տուն որոնելու:

Արևը մայր մտնելու ժամանակ դարձավ նա և տարավ մեզ իջեցրեց երկու քառակուսի սաժենի տարածությամբ մեկ կեղտոտ խանութում և առաջարկեց, որ մենք հինգ հոգով էշեն ու բռն չոզե հատակի վերա տեղավորվենք նահապետական ձևով:

Մենք ստիպված էինք համաձայնվել մեր բարերարն ժամագործի հետ, ուրեմն և պիտի քնեինք անպատճառ հողե հատակի վերա, որովհետև մենք մեզ (երեք ընկերներս) հանձնել էինք նորա հովանավորությանը և նախախնամությանը, և այդ բարեգործությանն համար առաջին իսկ ներկայացումից նա պիտի ստանար մեզ համար արած ծախսերը:

Բարեբախտաբար մյուս օրը հենց որ քնից ելանք, մեզ այցելեցին տեղական նշանավոր երիտասարդներից մեկ քանիսը, որոնք խնկուշն գտան մեզ համար մեկ մեծ տուն՝ բազկացած հինգ թե վեց սենյակներից և խնկուշն տեղավորեցին մեզ այնտեղ։

Այդ երիտասարդներից նշանավորներն էին եղբարք Զալալյանց, Փիլիպպոսյանց և Աթանասյանց։

Հազիվ թե փոքր ինչ հանգստացանք, սկսեցինք մենք Թատրոնատեղ որոնել։ Մերք օր մենք համարյա թե տակնուվրա արինք Մրեանը, բայց ոչ մի տեղ չկարողացանք մեր նպատակի համար հարմար տեղ գտնել։ Վերջապես մեր նոր բարեկամներից մեկը, եթե՛ չեմ սխալվում Ռուբեն Զալալյանը, մեզ խորհուրդ տվեց դիմել սրբազան առաջնորդ Ստեփաննոս եպիսկոպոսի խորհրդին և օգնության։

— Դուք, — ավելացրեց մեր խորհրդատուն, — եպիսկոպոսը կհամաձայնի մեկ քանի ներկայացումների համար տեղ տալ ծխական ուսումնարանի դահլիճում, ս. Մարգրիտ եկեղեցիո գավթում։

Վճեցինք, որ ես պիտի ներկայանայի սրբազանին, և իմ ազգականներիցս մեկը, որը այդ ժամանակ նշանավոր, բայց աննախանձելի պաշտոն ուներ Մրեանում, և որի հարաբերությունները լավ էին սրբազանի հետ՝ հանձն առավ ինձ նորան ներկայացնել։

Երեկոյան, թեյի ժամանակ, ես և իմ եղբարժիք վարատնիկը (օձիք) ազգականս զնացինք նորին սրբազանության տեսության։

Մտեցանք առաջնորդի բնակարանին։ Այնինչ ես սպասում էի զանազան արգելքների պատահել սրբազանի տեսության համար, ըստ Թիֆլիսի առաջնորդների սովորության, որոնք անսակնկալ հյուրի համար կամ ասանը չենձ կամ եղևիներն է ցավում՝ կամ շշուտ զրադված ենձ, — մենք պատշգամբ մտանք համարձակ Այնինչ ես սպասում էի, որ նախ և առաջ ընդունելի մեզ որևիցե երկարավիզ, մատաղակեր, յուզալի զեմքով մեկ ծառա, նախ իմանալու թե՛ մենք թնչ մարդիկ ենք արդյոք, և ինչի՞ համար ենք ուղուժ նեղություն տալ սրբազանին՝ հանկարծ պատշգամբի անկյունից մեկ մեղմ և զրավիչ ձայն հրավիրեց մեզ։

— Համեցեք, համեցեք...

Պատշգամբի անկյունում, փոքրիկ սեղանի մոտ նստած էր պատկառելի զեմքով, միջնաստակ, քառակուսի սև միջուքով, զվարթերես, խելացի աչքերով մեկ հոգևորական՝ որ էր ինքը սրբազան Ստեփաննոս առաջնորդը։

— Ես արդեն լսել եմ ձեր մասին, — ասաց սրբազանը մեզ երկուսիս նստելու հրավիրելով։ Դուք, եթե չեմ սխալվում, պետք է պ. Զմէկյանը լինեք։

Ես նստելուց առաջ մտեցա և ուղում էի համբուրել սրբազանի աջը, բայց նա թույլ չտվեց և նստեցրեց յուր մոտ։

— Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ, որդիս, ձեր այցելությունը, և եթե կարողանամ օգտավետ գտնվել ձեզ պես ազգասեր հայ երիտասարդների նպատակներին, պատրաստ եմ օգնելու։

Իմ ազգական եղբարժիք վարատնիկը՝ կամեցավ բացատրել մեր բարի, վաճճ և չդիտեմ էլ ինչ երևելի, քիչ էր մնում ասի՝ համալսարանյիմ նպատակները։

Սրբազանը կարճ կարեց։

— Համեցե՛ք, գնացե՛ք տեսե՛ք դահլիճը և եթէ հարմար կգտնե՛ք ձեր ներկայացուցիչներին համար, ծառայեցրե՛ք ձեզ, ինչքան ժամանակ որ համե-
նաք: Տեսնելուց հետո, համեցե՛ք, մեկ-մեկ բաժակ թեյ ըմպենք և ժառանգ
ուրիշ հանգամանքների մասին:

Ջանեցինք դահլիճը և նորա կից գասարանները: Ես դառ, որ դահլիճը
շատ փոքր է և եթէ կարողանայինք միացնել նորան կից սենյակներից
մեկին, այդպիսով՝ ոչնչով չէինք խանդարի ուսումնարանի գասաւփության,
ժինեւոյն ժամանակ կուենայինք բաժականին հարմար մեծ դահլիճ այցե-
լուներին համար և փոքրիկ, բայց հարմար բեմ՝ մեր ներկայացուցիչներին համար:

Դառնալով սրբազանին, ևս հազորդեցի նորան իմ կարծիքը: Ինչպե՛ս
երևում էր, նա չէր սպասում մեր կողմից այդպիսի մեկ պահանջ և փոքր
ինչ շփոթվեց:

Ես նկատեցի այդ բանը և խելոյն ավելացրի:

— Իսկ եթէ ձերոյ սրբազնությունը մեր խնդիրը անտեղի է համա-
րում, խնդրեմ, շնորհանաք: Մենք կհարմարեցնենք մեր ներկայացուցիչը
և քննարկեմք դահլիճի համեմատ:

— Ո՛չ, ա՛յ,— ընդմիջեց սրբազանը— ընդհակառակը, ևս կամենում եմ,
որ դուք կարողանաք ազատ լինել ձեր գործունեության մեջ... Վաղը դուք
ինձանից կստանաք զճառական պատասխան:

Վերջը իմացանք, որ բարեխիղճ առաջնորդը, ուսումնարանի հոգա-
բարձության կարծիքը չիմացած, դժվարանում էր զճառական պատասխան
տալ մեզ:

Մեր բախտից, այդ ժամանակվան հոգաբարձու անձինք սրբազան նա-
խագահի նման հասկացող և բարեմիտ մարդիկ էին: Մյուս օրը դահլիճը
յուր կից մեկ սենյակով մեր ներկայացուցիչներին հարմարեցնելու թույլ-
տալություն ստացանք:

Իսկոյն սկսեցինք գործել, Երկու սրվա մեջ անհայացած դահլիճը
կից սենյակից բաժանող պատը: Մանգինյանը սկսեց կառուցանել բեմը:
Ամերիկյանը սկսեց կրկնությունները, ևս գնացի էջմիածին տպել տալու
աֆիշաները և տվինք առաջին ներկայացումը:

Տվինք, եթէ չեմ սխալվում, առաջին անգամ Վարդան Մամիկոնյանը⁴⁴:
Սրբազանը կամեցավ ներկա գտնվել ներկայացմանը մեկ քանի հոգե-
վորականներով: Մենք նորա համար կույիսներում բազկաթոռ պատրաստե-
ցինք և «թոռներ» հոգևորականների համար:

Դահլիճը լցվեց խուռն բազմությունով, խառն մարդկանցից և կա-
նանցից:

Ներկայացման վերջը, ինչպե՛ս և պատանեց Շուշիում, հասարակու-
թյունը, վարագույրը իջնելուց հետո, չէր շարժվում տեղից և սպասում էր,
որ մենք շարունակենք: Վերջապե՛ս, երբ իմացան, թե ներկայացումը ար-
դեն վերջացել է, սկսեցին անվերջ կեցցեներով զրդացնել դահլիճը և պա-
ղամալորներ ուղարկեցին, որ շուշացենք կրկնելու մեր ներկայացուցիչը:

Սրբազանը ևս գոհ չմաց, օրհնեց մեզ և հեռացավ՝ խրախուսելով, որ
շարունակենք մեր գործը:

Չնայելով այդ տեսակ հաջող ներկայացմանը, որին ներկա էին մոտ
300 հանդիսականներ, մեր պատվելի ժամագործ և ծախսարար ընկերը մյուս

որը հայտնեց մեզ, որ մեր ծախսերը չէ ծածկված և թե հարկավոր է մեկ ներկայացում ևս տալ, որ մենք ազատվենք պարտքերից:

Գաղափարովեցինք երկրորդ ներկայացման, բայց հանկարծ լուր տա-
լածվեց, որ քաղաքի մեջ սկսել է շուերայի: Նշաններ երևալ: Մենք շտա-
պեցինք և ավինք երկրորդ ներկայացումը, որի նեախանքը միայն բովո-
ղանայրից յուր օգուտները չմոռացող մեր ժամագործ ընկերոջը:

3

Հայտարարեցինք երրորդ ներկայացումը, որով և ուշում էինք վեր-
ջացնել մեր ներկայացումները Երևանում և հետ դառնալ դարձյալ Թիֆլիս,
որտեղ պիտի սպասեինք ավելի հաջողակ գործի, որով պիտի հնար ունե-
նայինք Պոլիս գնալու...

Տոմսակները սկսեցինք ցրել և հույս ունեինք մեծ մուտք ունենալ:
Ներկայացումից երկու օր առաջ հոգևոր կոնսիստորիայի քարտուղար
երևանցի՝ Ստամբուլցյանը⁶⁵ հանկարծ ուղարկում է մեզ հայտնելու, որ Տնո-
ւրին սրբազնությունը, ի նկատի ունենալով Երևանում շուերայի տարած-
վելը, չէ կամենում թույլ տալ մեր ներկայացումը:

Տոմսակները, ինչպես ասացի, արդեն ցրել էինք և ներկայացումը մեզ
համար մահու և կյանքի խնդիր էր: Ես սաստիկ ջգոթվեցի:

— Ի՞նչ անենք,— մտածեցինք մենք և վճռեցինք մարդ ուղարկել սրբա-
զանի մոտ՝ համոզելու նորան, որ նա չարգելե մեր վերջին ներկայացումը:
Բայց իզուր անցավ մեր խնդիրը, որովհետեւ, ինչպես հետո տեղեկացանք,
քարտուղար Ստամբուլցյանը հավատացրել էր եպիսկոպոսին, որ ժողովուրդը
սաստիկ տրտնջում է նորա վարժունքից, որ նա այդպիսի սոսկալի ժա-
մանակ, շուերայի ժամանակ, փոխանակ եկեղեցիներում հսկումն անելու,
թույլ է տալի մայր եկեղեցու գավթում զանազան կոմեդիարարություններ
անելու, որով և սաստիկացնում է աստծու պատիժը:

Այն օրը, որ պետք է տայինք մեր ներկայացումը, նշանավոր եկեղե-
ցական տոն էր: Ես գնացի առաջնորդարան, որպեսզի ինքս անձամբ ներ-
կայանամ սրբազանին և խնդրեմ նորանից, որ չարգելե մեր ներկայա-
ցումը: Տարաբախտաբար ես ուշացել էի և եպիսկոպոսը արդեն գնացել էր
մամ. նա այդ օրը պատարագիչ էր: Առաջնորդարանից դուրս գալիս, այդ
իմ սաստիկ վրդովված դրության ժամանակ, պատահեց ինձ Ստամբուլցյանը:

— Գարոն,— գիմեցի ես նորան,— գիտե՞ք թե դուք ինչ եք անում.
դուք մեզ մորթում եք: Այս վերջին ներկայացումը անշուշտ հարկավոր է
մեզ տալ, և թե ոչ՝ մենք կխրվենք ծանր պարտքերի մեջ:

Նա ինձ ստունությամբ պատասխանեց, որ այդ նորա գործը չէ:

Սաստիկ վիրավորված մտա եկեղեցու գավթը, ուր իմ ծանոթնե-
րիցս շատերը ինձ շրջապատեցին:

Ես մոռացա սրբազանի ինձ վերա թողած լավ ազավորությունը և
սկսեցի սաստիկ պախարակել նորա վարժունքը:

Այնուամենայնիվ մեր ներկայացումը հետանգվեց և մեզ վերա պարտք
ևսայ մոտ 150 ու:

Մեր այդ անհաջողության պատճառը եղավ Ստամբուլցյանը, ինչպես
հետո խոստովանել էր Ստեփաննոս եպիսկոպոսը:

Ձմեռը հասա՛մ: Մենք Պապին էինք աշխատող առանց պարտաճանաչի: Ամերիկյանը գտա՛մ հնարք թիֆլիս գնալու: Մանգրիյանը և ևս Պապինք Երևանում՝ մեր հաշիվներն ուղղելու: Բայց Քնչպես պիտի ուղղեինք⁵⁷,

Ես հետագիր ստացա, որ հայրս սաստիկ հիվանդ է և կամենում է ինչ աեսնել: Մանգրիյանը մեծահոգությամբ օգնեց ինձ՝ չտապել թիֆլիս, իսկ ինքը...

Հասա թիֆլիս և գտա հորս վերջին ջնջին: Այնուամենայնիվ նա գնա չէր կորցրել ուշքը և զգվեց ինձ:

Գ. Սուևգուկյանը, որ միշտ հետու էր պահում իրան մեղանից, սկսեց մոտենալ մեզ և կարճ միջոցում իմ և Նորա մեջ կայացավ մտերի ծանոթություն, անգամ բարեկամական հարաբերություն:

Մեկ առաժնու, չգիտեմ ինչ բանի առիթով, ես մտա Նորա մոտ. նա ինձ ցույց տվավ մեկ պատկեր, որ կախված էր Նորա գրասեղանի գիմաց: Պատկերը ներկայացնում էր տան ֆասադ, որի պատուհանից երևում էր փոքր, սիրուն աղջկա զուխ՝ ժպտը չբռնեցին: Այդ պատուհանի տակ նկարած էր տակառ, որի վերա կանգնած էր մեկ երիտասարդ և առաջարկում էր սիրուն աղջկան ընդունել յուր ձեռքի վարդափունջը: Գ. Սուևգուկյանցն ինձ հայտնեց այդ ժամանակ, թե այդ պատկերը Նորան միտք է տվել մեկ օրինավոր և ամբողջ պիեսա գրելու⁶⁵. Սվ նա սկսեց բացատրել պիեսայի նյութը:

Սա այդ խոսակցության ժամանակ նկատեցի, որ էջմարիտ, Նորա զլխի մեջ եփվում է մեկ հարուստ նյութ, բայց չի վստահանում իրագործել յուր միտքը:

— Դուք ազնու եք այսօր, — հարցրի ես Նորան. նա ինձ պատասխանեց, որ կարող է այդ օրը գուրս չգնայ տանից:

— Ուրեմն, — ասացի ես, — պարտպեցեք այսօր ինձ հետ և տեսնե՞ք ինչ գուրս կգա:

Նա փոքր ինչ տատանվելուց հետո համաձայնեցավ: Մենք մտանք, ինչպես լավ հիշում եմ, առաժնայան ինը ժամին Նորա գահլիճը, փակեցինք դռները, կարգադրեցինք, որ մեզ ոչ ոք չանհանգստացնե և սկսեցինք գործը:

Առա Բուզըն ու գրիչը, նստեցի սեղանի մոտ և պ. Սուևգուկյանը սկսեց անց ու դարձ անելով Թելագրիլ ինձ:

Երկու թե երեք օրվա մեջ, լավ եմ հիշում, պ. Սուևգուկյանի նյութն իրագործվեցավ և մենք ստացանք մեկ հատ տետրակ երկու գործողությունով և չորս պատկերով, որին վերջը կնքեցինք Խաթաբալա անունով:

Միևնույն ժամանակ Մ. Տեր-Գրիգորյանը զրել էր էս ևլ թի մացիլ-լուքիմ անունով կատակ՝ մեկ արարվածով, և ապրիլի 7-ին 1886 թ. կայացավ այդ երկու պիեսաների⁶⁶ առաջին ներկայացումը: Մեկ շաբաթ առաջ ամբողջ Թիֆլիսում այդ ներկայացումը դառել էր խոսակցության նյութ, ամեն կողմից, ծանոթ թե անծանոթ ընտանիքներից, ստանում էի նամակներ, ո՛րը օթյակ էր խնդրում, ո՛րը Թիկնաթու: մեկ խոսքով ներկա-

յացման որը էլ ոչ մեկ սթյակի տաժակ չկար կառայում և մեր տաժաղակը Պարսկական շատ ափսոսում էր: որ շարժարարինք տեղերի գնորդ:

Այս անգամ մեկ թուրքական ուրիշ տեսակ հասարակություն կար թա-
րանում: Այդ հասարակությունից շատ շատերը այցելում էին աղերս և
միշտ զգվանքով էին արտասանում հայ թաղերի անունը:

Պարս է խոստովանել: որ պ. Սուլեյմանյանը մեծ խնդ ու ախա-
տանք կրեց այդ ներկայացման ժամանակ: Ամբողջ ժամերով, երբեմն նաե-
ւաժողի որը, նա պարտաւում էր գերատեսնների հետ, որ լավ հասկացնե հո-
ցա գերերի բնավորությունը: ժամավանգ Ամերիկյանի հետ, որին համարյա
անգիր անել ավելի Գարսոսի մակուլիի գերն այնպես, ինչպես ինքն էր
ուզում, այսինքն որոշ առաջանությունով և պատշաճ շնորհակալությունով:

Գիտալում ամենանշանակալի գերը, որի համար գրգռե էին համարյա
մյուս գերերը, Գարսոսի մակուլիի գերն էր և հետո Բալայ գերը, որ ան-
համանի կերպով կատարում էր պ. Սուլեյմանյանը, իսկ ևս երկատարող:
Մասիսյանցի գերն էի կատարում: Այդ գերը այնչափ աննշան էր, որ այդ
ներկայացումից հետո հեղինակի համար դարձավ քար գայթակղություն:
Թեև նա փոփոխեց վերջերում ինչո՞ւ Մասիսյանցին, այսուամենայնիվ, հա-
կառակ հեղինակի ցանկությունը, նա Պարս միշտ անորոշ և աննշան ինչ,
Թեպետ Սուլեյմանյանը կամենում էր նորան հսկա Գարսոսի մակուլիի
հետ միասին մեկ լուծ քաշել տալ:

Սո միշտ հակառակ էի այդ ժառերն և միշտ պնդում էի, թե այն շը-
ջանում, որտեղ չար Գարսոսի մակուլիի ինչ ուզում՝ անում է, միայն
Մասիսյանցի պես աննշան և թույլ բնավորության տեր երկատարողները
կարող են շըջել:

Ինչիցից, ետքաբալայի ներկայացումն այնպիսի հաջողություն ունեցավ,
որ ոչ մեկ պիտե, թե՛ դարանից առաջ, թե՛ դարանից հետո երբեք չի ունեցել:
ներկայացումից հետո պ. Սուլեյմանյանը ամբողջ խմբին հրավիրեց
յուր մոտ ընթերցել:

Այդ ընթերցելն, ինչպես հիմա լավ հիշում եմ, ներկա էին հանգու-
ցյալ Տեր-Գրիգորյանը, բժիշկ . . . * և ուրիշ մի քանի անձինք, որոնք
պ. Սուլեյմանյանի և մեկ հետ մասիկ հարաբերություն ունեին:

Ընթերցող հիանալի էր և գիտին ամենալավը: Սկսեցինք կենացներ,
հասեր, երգեր: Այդ գերերից կենցեցինք պ. Ամերիկյանին Գարսոսի
մակուլիի անունով:

Ի վերջո, եթե չեմ սխալվում, նորան շնորհեցա գոչելով սկսեցին մեռնե-
րի վերա վեր ու վեր թոցնել:

Այդպես ուրախ անցավ այդ ներկայացման գիշերը և մենք վնասներ
կրկնել ետքաբալան:

Մյուս օրը թույլատրություն ստանալուց հետո, կարգադրեցինք նո-
րից ապել աֆիշաներ և տարածել, ինչպես և նշանակեցինք կրկնություն-
թաղանթում: Երկու օրից հետո աֆիշաները դուրս եկան, առժամկեցիկ հա-
մարյա դարձյալ առաջիկա անգամի նման ծախված էին: Սո մաս շնորհ-
պատ անվանված սրահառանք, որ մեկ բաժակ սուրճ խմելուց հետո գնա՞մ
կրկնություն: Հանկարծ մոտավ Ամերիկյանը և սովորականից դուրս շատ

* Եկա՞մ ունի բժիշկ Մասիսյանին, որի ազգանունը անգիր իմացությունը
չուեցից անել է համանաբար ցնդուբան նկատառումով:

սաւոր վարժեցեալ ինչ հետ: Աս սկսեցի կատակներ անել, կարծելով, որ զուցե նա նեղացած է որեւէ պատճառով, բայց նա սաստիկ սառնությամբ հայտնեց ինչ, որ չի կարող մասնակցել այս անգամ Խարաբալայի մեջ:

— ԻՆչպէս, — հարցրի ես, տկանջներին չհամարալով: — Չէ՛ որ մենք միասին զենեցինք Խարաբալայի կրկնել:

— Ղենեցինք, բայց ես չեմ կարող խաղալ:

— Պատճառը, — հարցրի ես:

— Պատճառը, որ չեմ կարող, իմ հանգամանքները ինչ չեն ներում:

Մնացի սառած և շվարեցաւ բոլորովին, յիմանալով թե ինչ անեմ: Նորից հայտարարութիւններ տալ ներկայացումն հետաձգելու համար, դա շատ անգիշելու էր և մեծ Փասս կարելի էր տալ գործին: Թեև իմ ամենամեծ պակասութիւնը ամբողջ իմ կյանքի մեջ եղել է առջ քնափութութիւնս, որի պատճառով միշտ տեղիք եմ տվել իմ թշնամիներին, ամենահամարիս հանգամանքում անգամ, մեղադրել ինչ, բայց այս անգամ, կարող եմ համարձակ խոստովանել, շատ անգիշող մնացի: Գ. Ամերիկյանը թողեց ինչ և հեռացավ: Իսկույն գոտ պզ. Սուքիասյանին, Մժրատ Կարինյանին և հայանեցի այդ անցքը: Մենք զենեցինք, որ անհնարին է հետաձգել Խարաբալայի ներկայացումն և երեքով դիմեցինք Սուղոուկյանի միջնորդութեանը:

Մյուս օրը, ներկայացումից մեկ օր առաջ, հաժաճեցանք պ. Սուղոուկյանի մոտ և բանը պարզվեցավ:

Ընկերութիւնը պայման կապեց միմյանց հետ, որով որոշվեցավ այդ ներկայացումից հետո, որից ստացած եզուտը պիտի բաժանվի ամբողջ ընկերութեան մեջ, տալ մի-մի ներկայացում հզուտ պ. Ամերիկյանի, ա. Ս. Մելիք-Նազարյանի և մեկ ներկայացում հզուտ իմ և պ. Սուքիասյանի: Այդպես տվեցինք, ինչքան հիշում եմ, Խարաբալայի երկրորդ ներկայացումը: Նորանից հետո պ. Ամերիկյանը ընտրեց ծառ անուշով պիեսան, ինք. Տեր-Փրկոյրյանի, և չեմ հիշում ուրիշ ինչ ժողելի, և այդ ներկայացումն տվեց նորան, կարծեմ, 800 սուրբի, և առաջին անգամ նա հասարակութեանից ստացավ մեկ արծաթյա պնակով զանազան արծաթյա իրեղեններ՝ մոտ չորս հարյուր սուրբու արծաղությամբ:

ԴՈՆ ՍԵՋԱՐ ԴԸ ԲԱՋԱՆ

2

Գ. Բարսեղյանը, խրախուսված Սեր և Յախապաշարմունքի հաջողութիւնով, թարգմանեց Քրանսերենից Աղքատացած ազնվական կամ Դոն Սեգար դը Բազան անունով կոմիզիան¹⁰: Այդ պիեսան բոլորովին անսպասելի նորութիւն էր մեր նորածին բեմի համար: Որովհետև թարգմանութիւնը պատրաստ էր մեծ պատից առաջ, մենք սկսեցինք գործ կըրկնութիւնը մեծ պատվա միջոցին և կրկնում էինք համարյա ամեն օր: Դերերը բաժանելու ժամանակ ես շատ դժգոհանում էի Լազարիոյի՝ մանկավարժի զերի մասին, որի համար անպատճառ արեկաճոր էր փորձված զերասանուհի, իսկ փորձված զերասանուհիք միայն երկու հոգի կային՝ մեր խմբի մեջ, այն է՝ ա. Ս. Մելիք-Նազարյանը և ա. Ք. Արամյանը: Օր. Տեր-Քրահամյանը (հետո Սաթենիկ) համարվում էր շատ անփորձ, այնպես որ

մեր ընկերներից շատերը խորհուրդ էին առնում ինչ հանձնել այդ գերը որևիցե փոքր ի շատե զարգացած փոքրիկ տղայի Քայց ես, համարյա հասկանալի իմ կարծիքիս, այդ գերը տվի որ. Տեր-Արքանամյանին և սկսեցի կրկնությունից գուրս պարագել գորս նեա առանձին: Մեկ ժամի կրկնություններից նեա թե ես և թե պ. Ա. Բարսեղյանը շատ բովական Մաքսիմ Երիսդի խաղովը:

Մինչև Դոմ Սեզարի ներկայացումը, ոչ մեկ պիտեայո՞վ մենք այնքան չէինք պարագել, ինչքան գորսնով: Թե՛ Բարսեղյանը, թե՛ ես և թե՛ բոլոր ընկերներս աշխատում էինք, որ այդ պիտեան լավ պատրաստված գուրս բերենք, որովհետեւ այդպիսի թարգմանական պիտեաներ խաղալով, մենք կամենում էինք աքսորել քեզից անխմատ և զժգարամարս աղջային ոգիներգությունները, որոնցից հասարակությունը բացի չավանդ և նշ բացականչություններից, ուրիշ ոչինչ տպավորություն չէր յառնում հայ թատրոնից:

Իշխան Թումանյանի արտասանման գնալուց նեա, ես, կարելի է ասել, զարմա թաարոնի լիակատար տեր, կապալառուի նման մեկ բան, այնպես որ իրավունք ունի գործ գնել իմ ներկայացումներիս համար ամբողջ թատրոնի մեջ ունեցած թե իրեղենները և թե միջոցները:

Կային այդ ժամանակ Թիֆլիսում Մաքսիմ Երիսդի խաղալի խմբից մարդ ու կին Բալզինները¹⁾ և մեկ ժամի ուրիշ պար կեղծ ուսու և խաղացի Երիսդիները:

Դոմ Սեզարի ներկայացման համար հրավիրեցի Բալզինին և Նորս կնոջը, որ Նոքա պար դան երրորդ գործողության մեջ, ինչպես պատվիրած է պիտեայում, և վարձ խոստացա երկուսին 30 ոսլրի: Թաարոնի հանգերմատնից հանել տվի ամենագեղեցիկ հագուստ՝ պատշաճ այդ պիտեային, որի համար, հայանի բան է, պիտի գարձայ վճարել առանձին գումար: Դեկորացիաները որոնցի մամհագեղեցիկները՝ հարմար գործողությանց գիրքերին: Աղբիւ ամսին կայացավ Դոմ Սեզար Դե Բազանի առաջին ներկայացումը:

Մինչև ներկայացման օրվա ճաշի ժամը կասսու՞մը հազիվ թե կար 100 ոսլրի, այնպես որ հուշյան երեկոյան վերս էր: Կարծում էի, որ ոչ մի տոմսակ չէր Մեա առանց ծախվելու: Մինչ ներկայացումն արդեն 200 ո. ծախս էր արված և Մեում էր գարձայ 30 ոսլրի Բալզինների վարձը և 35 ոսլրի ուրիշ ծախսեր վճարելու:

Մինչ ճաշ եղանակը գեղեցիկ էր, այնպես որ հուսայի էր, որ երեկոն ես լավ կլինեի: Բայց գծրախոտապես ժամի հինգից երեկոյան երկինքը թըխպեց և սկսեց փոքր առ փոքր անձրևել: Վեց ժամին հովաքվեցանք թատրոն հագնվելու: Հոգնած ամբողջ օրվա աշխատանքից, գերասանների և թաարոնական անձինքների նեա հազար ու մեկ անբավականություններ ունենալուց, ես մտա թաարոնի հանգերմատունը և սկսեցի հագնվել: Այդ ժամանակ մտնեցավ ինձ թաարոնի գեկորացիաները կարգադրող իմ ծանոթ հրեա Դավիթը և հարցրեց ինձ

— Ի՞նչքան կլինի այս երեկոյան մուտքը պ. Չմշկյան:

— Չգիտեմ, — ասացի ես:

— Գկամենա՞ք, որ ես գնամ և իմանամ կասսու՞մը:

— Խնդրեմ,—ասացի ես նորան:

Մեկ քանի բողոքեց հետո վերագործավ Դավիթը և գլուխը քաշ գցած
հայտնեց, որ ես այդ երեկո կփութամ սաստիկ, եթե ներկայացուեմ չհե-
տաձգեմ:

— Երբեք,—ասացի ես. թող փութան, չեմ հետաձգի:

Մեկ քանի բողոքեց, Դավիթը դարձյալ եկավ կաստայի գրությունն
իմանալուց հետո, և սկսեց ազաչել, որ հետաձգեմ, քանի որ թատրոնը չի
լուսավորված: Ես չհամաձայնեցա:

Այդ առաջին գիշերվան էր, որ թատրոնի եկամուտը չպիտի ծածկեր
ծախսը: Թեև այդ ժամանակ ես ունեի առաջին տված ներկայացումից մոտ
70 ուռլլի տնտեսություն և հուսով էի, որ նորանով կծածկեմ ծախսը, բայց
կարծում եմ, որ եթե այդ հուլան էլ չլիներ, ես էլի չէի հետաձգիլ այդ
ներկայացումը, ինչպիսին և պատահել է շատ անգամ իմ հետագան տված
ներկայացումների ժամանակ: Ես պարտական էի ընկերությունից դուրս
վճարել ամեն մեկ դերասանի պայման արած վարձը. և. Ս. Մելիք-Նազար-
յանին միայն պիտի վճարեի 30 ուռլլի, օր. Տեր-Աբրահամյանին, կարծեմ,
10 ուռլլի, ամենքին մոտավորապես 70 ուռլլի:

Դավիթը չհանգստացավ իմ բացատրությունով. նա գնաց դերասանու-
հիների մոտ և կամենում էր միջնորդել նորանց, որ նոքա համոզեն ինձ՝
չմտնել նաստիկ ծախսի տակ: Բարի հրեա, ազնիվ մարդ, ես քեզ շատ բար-
ձր եմ գտնում իմ համազգացից կողմից լուսավորվածներից, որոնց հա-
մար խղճով բառն անգամ տնհասկանալի է: Տ. Ս. Մելիք-Նազարյանը, որի
վարձատրությունը ամենքից շատ էր դժվարացնում ինձ և որի նախա-
տիքից ես առավել ես էի քաշվում, քան թե իմ շուրջն եղած խորիզա-
ներից, հանկարծ մարդ ուղարկեց և հրավիրեց ինձ յուր մոտ:

— Դե՛րդ,—ասաց նա ինձ,—ես հասկանում եմ քո գրությունը: Դու
խոհեմություն կանես, եթե հետաձգես ներկայացումը, բայց ես խնդրում
եմ չհետաձգես, և թող մենք պատմվելով պատմենք հայ հասարակությունը,
որ չի համակրում մեզ: Ես հրաժարվում եմ իմ վարձից:

Հազիվ նա վերջացրեց յուր խոսքերը, ինձ շրջապատեցին մյուս ըն-
կերներս և ժամանակավոր մասնակցողները և սկսեցին խրախուսել և միջ-
թարել ինձ:

Աչքերս լցվեցան արտասուքով և սաստիկ ձայնով ճչացի:

— ЗАЖИГАТЬ ЛАМПЫ (վառեցե՛ք լապտերները):

Խեղճ Դավիթս թեև հայերեն ոչինչ չէր հասկանում, բայց զգաց, որ
ուրիշներն ես մտնում եմ իմ գրության մեջ. նա սկսեց զոռով կրկնել
իմ տված հրամանը և ըստ թատրոնական սե՛ր՝ Դոմ Սեզար ներկայացուե՛մ
գնաց հիանալի ձևով:

Ես մոռացա հիշել և այն, որ բեմ գնալուս պես պ. Ա. Բաբանյանը
կուլիսներում համարյա միշտ անբաժան ինձ հետ էր, և խրախուսելով թե
ինձ և թե բոլոր ընկերներին, մեկ առանձին ուժ տվեց ներկայացման ըն-
թացքին:

Մյուս օրը գնացի հաշիվ տեսնելու մեր տոմսապան Պետրովսկու
հետ, որից տեղեկացա, որ բացի իմ 70 ուռլլուց, ես դարձյալ պիտի վճա-
րեմ 35 ուռլլի թատրոնական զինուորների վարձը և 30 ուռլլի պ. և տ. Բալ-
դիններին: Պարտավորություն եմ համարում հիշել այստեղ, որ պ. Բա-

բանյանը, բացի յուր բարոյական կարեկցությունից, օգնեց ինձ, հակառակ իմ կամքիս, նաև նշույթական միջոցով այդ պարտքերը վճարելու համար։

Ինձ և ընկերներին համար միայն վարձատրություն մնաց այդ ներկայացման մասին Մեղու շարաթաթերթի մեջ գրված մի քաջայերոզ հոդված, որտեղ ցածրակցելով մեր կրած ֆառսին և զորա պատճառը համարելով այդ ներկայացման երեկոյան արհաւիրքը, հոգովածի հեղինակը առաջարկել էր կրկնել միևնույն պիեսան⁷³։

Նվ հշմարիտ, երկրորդ ներկայացմանը թատրոնի դահլիճը համարյա լցվեցաւ. այնպես որ ես, բացի գերասաններին վարձատրելուց, կարողացաւ վճարել և առաջին ներկայացումից կրած ուրիշ ֆառսներս։

3

Դոն Սեգարից հետո մենք պիտի տալինք Վեմետիկի վաճառական իմ թարգմանությունս։

Այդ տարի Ռուսաստանից եկել էին երկու երիտասարդներ, որոնք առաջարկեցին ինձ և ընկերներին տալ մեկ ներկայացում հօգուտ Պետերբուրգի չքավոր ուսանողների։ Մենք, հայանի բան է, ուրախությամբ հանձն առանք և առաջին իսկ անգամին ավինք Վեմետիկի վաճառականից, կարծեմ, երկու գործողություն, և եթե չեմ սխալվում, առաջին անգամ նմանապես Ոսկան Պետրովիչը երազում վոդեյիլը մեկ արարվածով, հեղ. պ. Սուեդուկյանի⁷⁴։

Այդ ներկայացումը արգյունքի կողմանե շատ հաջող գնաց, բայց դարձյալ առանց դիպվածի չանցաւ։

Վեմետիկի վաճառականի երրորդ գործողության մեջ, այն հետաքրքիր տեղը, որտեղ Շելլոդը (ես) տաքացած սրում է յուր դանակը, որ վաճառական Անտոնիոյի մարմնից կտրե մեկ գրվածքա միս, հանկարծ առատիկ ազմուկ բարձրացաւ բեմի վերա, այնպես որ թե հանդիսականները և թե դերասանները շփոթվեցան, չիմանալով նորա պատճառը։ Բայց հետո հայտնվեց, որ այդ ժամանակ բեմի առաստաղը չոգի պատճառով բարձրացել էր և սաստիկ անձրև էր գալիս դուրսը, որից և ազմուկ էր առաջացել բեմի վերա։

Ես ես շփոթվեցաւ և այնպես արագությամբ սկսեցի սրել փայտյա դանակս, որ նա միջից կես եղաւ և ես հագիւ կարողացաւ մեկ քանի ավելացրած խոտքերով պահել տալ ժողովրդի ծիծաղը։ Այդ ներկայացումն ավեց, ինչքան հիշում եմ, 400 ասուրի զուտ դրամ։

Նկալ իմ և Սուքիասյանի բենեֆիտի ներքը։ Մենք առաջուց շինեցինք հայ թատրոնի այցելուների ցուցակ և վճեցինք Սուքիասյանի հետ միասին կառքով այցելել ամենքին։ Ես առաջ թեև չէի համաձայնվում այդ տեսակ միջոցով այցելուներ հավաքել թատրոն, բայց ի վերջո համոզվեցաւ։

Մյուս օրը Սուքիասյանը, որ առհասարակ սիրում էր իրան ցույց տալ, վարձել մեկ հիանալի կառք և մենք բազմեցինք նորա մեջ ու գնացինք այցելության։

Առաջին և իսկ այցելութուններից հարուստ երիտասարդներից մեկին, որի մասին չէինք կասկածում, որ չի ընդունիլ մեզ, մեկ երկայնավիղ ծանա գուրս եկաւ մեր գանգ տալուց հետո և շատ սառնասրտությամբ ու

առանց աշխատութեան հայտնեց մեզ, որ նորա բարինը (պարոնը) չի կարող ընդունել մեզ, բայց ընդունեց մեզանից աֆիշան։

Առաջին հարվածը թեև գիտով իմ ինքնասիրութեանս, բայց ես չհուսահատվեցաւ։ Այդտեղից գնացինք պ. Ս. Ն. Տեր-Մկրտչյանի մոտ¹⁴, որի քաղաքավարի ընդունելութունից ես դարձայ քաջալերվեցի, բայց երբ դուրս գալու ժամանակ առաջարկեց մեզ փող, դարձայ սաստիկ վրդովվեցաւ եւ, կտրուեալ եմ, սաստիկ կարմրեցաւ։

Դորանից դուրս գալու պես՝ մասնք մեկ շատ հարուստ ընտանիք, որի մեջ միայն հինգ երիտասարդ հայ եղբայրք կային եւ որոնք ոչ մեկ քաղաքայից հետ չէին բնկնում, եւ որոնցից մեկը ահագին փողեր էր ծախում այդ ժամանակվա մեկ խալապի գերաստուհու վերա։

Հանգը քաշեցինք, դուրս եկա՞մ մեկ լազլադանման ծառա։

— Տանն են պարոնները, — հարցրեցինք մենք։

— Տանն են, — պատասխանեց նա մեզ։

Մենք տուն ուղարկեցինք աֆիշան եւ ինքներս սպասում էինք պաշտքավարու պատասխանին։

Մեկ քանի րոպեից դուրս եկա՞մ ծառան եւ առանց խոսք ասելու հետովեց աֆիշան։ Այդտեղ արդեն համբերութիւնս արագվեց, եւ խեցի ծառայի ձեռքից աֆիշան, կտր-կտոր արի եւ խփեցի պատուհանին, մեկ լա՞մ կուշտ հայտնեց ուղղելով դեպի եղբայրքը։

— Ձէ, բա՞վական է, — ասացի եւ Սուքիասյանին, երբ դուրս եկանք այդ տանից, — այցելի՛ր մենակ ու՞մ կամենաս, միայն ինձ ազատի։

— Աճոթ է, արբ, — սկսեց համոզել ինձ պ. Սուքիասյանը, ծիծաղից հեղեկալով եւ հրելով ինձ կառքի մեջ։ Քանի նա ծիծաղում էր, այնքան եւս կատաղում էի, բայց վերջապէս չկարողացաւ ընդգրծանալ, դարձայ նստեցի եւ շարունակեցինք մեր ճանապարհորդութիւնը։

Հանկոթ կանգնեցանք մեկ շքեղ տան առաջ։ Սուքիասյանը զանգը քաշեց, դուրս եկա՞մ ծառան եւ շատ անվրդով հայտնեց, որ տանը չեն։

Սո ներքե թոս կառքից եւ փախաւ Գ. Սուքիասյանը շատ բզովեց հետեիցս, շարունակելով յուր քոքոսալի ծիծաղը, բայց ես անհետացա, անի՛նելով թաւարոնն էլ, բնեֆիսն էլ։ Գ. Սուքիասյանը շարունակեց ինքն այցելել մի քանի տեղ, բայց վերջը նա եւ զզվեցա՞մ, եւ այդ առաջին եւ վերջին տո՞մսակ մոնածնէս էր իմ բնեֆիսին։

Այդ ներկայացումից հետո սկսեցին շոգերը եւ մենք ցրվեցանք զանազան կողմեր. պ. Ամերիկյանը զնաց, կարծեմ, Բորժոմ թե Ախալցխա, պ. Սուքիասյանը, չեմ հիշում, ուր, իսկ եւ խեղդված էի պարտքերու՞մ։ Որտեղից կարող էի վճարել։

4

Ամառը մոտենում էր, իսկ եւ Սեւ լիճն ուրեքեց պարագմունքի, ամբողջ մի ընտանիք՝ մայր, քույր եւ այլն գլխիս փաթաթած։

Հասարակութեան դեպի ինձ ցույց տված սառնասրտութիւնը ինձ ցցեցին սաստիկ մտաւանջութեան մեջ։

Քունը կորա՞մ աչքերիցս, ախորժակս փակվեց բոլորովին. եւ սաստիկ հուզված, ջղերս լարված, սկսեցի այս եւ այն կողմն ընկնել մի որևիցէ պարագմունք գտնելու, եւ չէի նկատում իմ տարօրինակ վարմունքս, որ թվի՛ր էր լինում ուրիշներին։

Օրինակ, մեկ օր, բարձրաստիճան չինոսներիկ ծանոթներինց մեկը ինձ հրավիրել է յուր մոտ՝ առաջարկելու խմբի մի անընդունակ անձի համար քննեֆիս տալ։ Այդ հրավերի պատճառն ինձ անհայտ լինելով և միեւնոյն ժամանակ հարցելով այդ պարտին, երեկոյան թեյի ժամանակ նորան ներկայացաւ։ Ծեղկ դահլիճում գտա ժողոված նորա ամբողջ ընտանիքը և մեկ քանի ինձ անծանոթ մարդիկ։

Մեկ քանի խոսք արտասանելուց հետո, նկատեցի, որ բոլորը սկըսել են ինձ դիտել հետաքրքրությամբ։ Ես չգիտեմ, թե ինչ տարրինակ բան կար իմ շարժածքիս մեջ, միայն երբ լսեցի պարտնի առաջարկությունը, սաստիկ հոգոց քաշեցի և հայտնեցի իմ պարժանքս, որ պարտնը, թատրոնական մյուս շահերը զանց առնելով, բարեբարություն է ուզում անել խմբի ամենաանընդունակ անդամներինց մեկին, երբ թատրոնը պարտքի մեջ խեղդվում է։

Բարձրաստիճան չինոսները վրդովվեց, իսկ ես մեկ սաստիկ ցավ զգացի սրտիս մեջ, մտածելով, որ այդ մարդիկ, որոնք իրանց գրգանից բարեբարություն անելու միջոց ունին, չհասկանալով իմ ճարահատայալ դրությունը, փոխանակ հանուն դործի ինձ ձեռք մեկնելու, պահանջում են ինձանից, նորանց յետաթրը չկտրելու համար, նոր պարտքերի տակ ընկնել։ Ինչ անցավ հետո, չգիտեմ, բայց երբ ես ուզեցի նետանալ, պարտնը դառնով դեպի ինձ յուր ցավակցությունը հայտնելով, որ ես այդպիսի բանվայելչ գրության մեջ վստահացա ներկայանալ նորին գերազանցության։

Այդ ժամանակ չհասկացա, թե նա ինչ էր ուզում ակնարկել բանվայելչ գրության մեջ գտնելով ինձ, բայց հետո իմացա, որ նա ինձ հարթած է կարծել։ Այնինչ ես համարյա մեկ ամբողջ շաբաթ, զուրկ ախորժակից, մի բաժակ գինի կամ ուրիշ խմիչքեղեն բերանս առած չէի։

Հարուստը հիվանդ ազգատիս հարբածի տեղ էր ընդունել։

Ծորտերին ազատություն տալուց հետո, հոգային կալվածքները չափելու համար այդ տարի հողաչափների մեծ պահանջ կար։

Ես դիմեցի մեկ քանի ինձ ծանոթ վրաց իշխանների, որոնք և հաջողեցին ինձ Սոնախու նահանգի մեկ հաշտարար միջնորդի (мировой посредник) մոտ սեղարկել հողաչափի պաշտոնով⁷⁵։

Սոնախում պարապ Մնացած միջոցիս ձեռնամուխ եղա Վիկտոր Հյուգոյի Անշլո գրամայի թարգմանության, որը և վերջացրած բերի աշունքը Թիֆլիս, մեծ ուրախություն պատճառելով թէ ընտանիքիս և թէ իմ ընկերներս⁷⁶։

Կարծես ինքը բնությունը, կամ ժամանակի պահանջը, գուրս հանեց խորին քնի մեջ ընկզմված հասարակությունից այս դրամատիկական տաղանդներին, որ դժբա ցույց տան աշխարհին, թե ինչքան ուզում է մեազգություն թուլացած, ուժից ընկած լինի, երբ նորա մեջ եղել է պատկմական կյանք, կարող է երբեմն արթնանալ և գործել արագությամբ, վերանորոգելով քնի մեջ աներևույթացած կենսական ուժը:

Մինչև դոցա երևալը, ոչ ոք չէր կարող կարծել, թե այդ քնած և ճոսացված հասարակության մեջ կա շունչ և կյանք, կան ինքնուրույն, զեռնեռ չմխած մարդկության տիպեր, թե այդ հայ հասարակությունը կազմում է մեկ ամբողջ մարմին, որ ունի յուր գլուխը, մեմները, ստները, յուր պակասությունները և յուր առաջինությունները:

Երբ Թիֆլիսի հայ հասարակությունը տեսավ ետրարալայի մեջ խաբերա, հսկա Գարասիմ Յակուլիչին և Մախլասի մեջ¹¹, շմի վուխա կար, գլխումըս բամփելով՝ Սաքո էին կանչում, իծում գառա Սարգիս, իծում ազա Սարգիս, հիմի Սերգեյ Տարասիչ Բուլղաշոգով... երբ տեսավ, ասում եմ, հասարակությունը այս Գարասիմ Յակուլիչներին և Սերգեյ Տարասիչներին, նա աղչեցավ, առաջ ծիծաղեց նոցա երևույթական կոմիզմի վերա: Բայց երբ աղանդավոր հեղինակի անդամահատական գանակի տակից հեռզնեռն սկսեց երևալ կոմիզմի տակ պահված՝ փռած, բայց կենդանի և չորս կողմը սարսափ տարածող ուժը, զարհուրեցավ, սթափվեցավ և տեսավ, որ շատ ուշ է արթնացել. փռած ուժը արդեն թաղել է, և զեռես գուցե շատ տարիներ պիտի թաղե յուր ալլանդակ լեշի տակ հազարավոր զեռահառ ուժեր:

9. Սունդուկյանը կատարյալ ուսումնական արվեստագետ էր, երբ սկսում էր զննել յուր Գարասիմ Յակուլիչներին, Սաքոներին և tutti quanti՝ նա գիտեր, որ երակից որ երակն է հասում արյունը, որտեղ է այդ մարմնի սիրտը և կամաց-կամաց, առանց շտապելու, ողնորված այդ նպատակով, նա կտրում էր մեկ մկանը մյուսի հետևից, ցույց տալով հասարակությանը այդ մարմնի ամբողջության զգվելի և դարչելի մասերը:

Երբ պ. Սունդուկյանը, պարապած յուր զեղարվեստական զննողությամբ, երբեմն լաց էր լինում, երբեմն անողորմաբար հարվածում և մշտբակում էր կեղտի մեջ խեղդված որոշ շրջանի հայ քաղաքացիներին, հանգու-

¹¹ (Իս.) Բուլդըն, որքան որ կան, և բուլդ մյուսները, և այլն:

այսլ Տեր-Գրիգորյանը միեւնույն ժամանակ ծիծաղում էր յուր փրփրալի ծիծաղով ասպարեզ հանած այդ Գարաթիմ Յակուլիչներէ շքաշաւ մայմունս, 60 տարեկան հասակում շինասիրտուտի մեջ կըթփած օրիորդի հետ զսակ-ված Կարապետի վերա (էս էլ քի մոցիքլուսիքն)։ Գ. Սունդուկյանի Գարա-թիմ Յակուլիչը, Սաքուն, և այլն, հանգիստեղանի առաջ ներկայանում էին հասարակութեան զանրեման։ Գ. Տեր-Գրիգորյանի Կարապետները (էս էլ քի մոցիքլուսիքնում և ետադրմակիմ-խտադրմակում, և այլն) ձեռնում էին խեղ-կատակ, ծեր, փառած մաքով և մարմնով հիմարներ։ Մեկ խոսքով առաջինը զննում էր, երկրորդը ծագրում, մեկը զարնուրում էր այդ փառած ուժի ազդեցութեանից, մյուսը ծիծաղելով զոցա վերա, նորանց հանդես էր բերում կենսական ամենածագրալի հանգամանքների մեջ։ Սունդուկյանը սարսափում էր հայ բուրժուաշի սերնդից և հալածում էր նորան, իսկ մյուսը ծագրելով այդ սերնդին, ոչինչ բանի տեղ չէր զննւմ նորան։ Սունդուկյանը ամիսներով և տարիներով երբեմն պարապում էր յուր ամեն մեկ բեմական աշխատութեան վերա, իսկ Տեր-Գրիգորյանը մեկ կամ երկու գիշերով միշտ գրում էր մեկ թեթեւ վոգելի, կոմեդիա կամ դրա-մա։ Սունդուկյանից, նորա ըստ եզրուպական ճաշակի կըթփած անձնավո-րութեաններից կաթում էին մաղձ ու աբշուս, իսկ Տեր-Գրիգորյանի նա-հապեառական կյանքի կոշտ Կարապետներից, Բաշլիներից և Կեկեկներից յսփում էին ծիծաղ և շինծու լաց։ Մեկը ասում էր մարդկութեան փառած ուժը և ձգտում էր զեպի նորութեան, պահպանելով և հնութեան առաքի-նութեանը, մյուսը թեթեւ աչքով էր նայում լավին ու վատին, ծիծաղում էր այդ մարդկութեան հրեշներէ վերա յուր սովորական ծիծաղով։ Սուն-դուկյանը, իբրեւ տաղանդ, միշտ մշակում էր յուր տաղանդը՝ մտածելով և զննելով պատճառները և հետեանքը, Տեր-Գրիգորյանը, թեւ նմանապես տաղանդ էր և մտածում էր, բայց չէր զննում։ Առաջինը խիստ զեղար-վեստական կետից էր նայում բեմական արհեստի վերա, մյուսը՝ երգում էր վրաց երեսիլի բանաստեղծ Ճավճավաձեի հետ նորա զեղեցիկ երգը ։

Ձեռն ինչ գուցե ցուրտ լիւի. հարիւր լաւի.
Թե ազամբը ստալի լիւի, Թարիւր լաւի.
Մեղի ցուրտ չի վախեցնի, հարիւր լաւի,
Թե զլինեցա տաք կուլի, Թարիւր լաւի.
Հարուստ թեմը վուշինչ է, հարիւր լաւի,
Կինքը սակով, երծաթով չէ, Թարիւր լաւի.
Հարուստ տեսած, ինքը տարեկուս, հարիւր լաւի,
Ան ու վախը միջ համա չէ, Թարիւր լաւի.
Երբ զուրա սիրուն գարունը, հարիւր լաւի,
Կյանք առ միջ զեփուսքիս, Թարիւր լաւի.
Մեկը լավ կարծիք զինի հանձնը, հարիւր լաւի.
Թողնեք վաճառքը զլուրի սուրը, Թարիւր լաւի.

Երգում էր, հաճատում էր և երբեք չէր զննում։

ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ ՆՆ ՄՐԱՂՂՂՂ

3

Որովհետեւ ինձ վերակցած էր տեղական պիեսանների մեջ խաղալ jeune premier գերերը, միշտ ևս անբաժանական էի մնում այդ աննշան և թույլ անձնավորութեանների գերերը կատարելուց, ինչպիսին էին Տեր-Գրիգո-



Միգրի Տեղ-Պրիգորյան





Գեղորդ Միքայել

բյանի ժլատի չգիտեմ մեկ ինչ իմաստակ երիտասարդի և ետքաբալայի մեջ Մասիսյանցի գերերը: Եվ միշտ համարյա խնդրում էի թե՞ պ. Սու-
զուկյանին և թե հանգուցյալ Տեր-Գրիգորյանին, որ մեկ ուժեղ և նշանա-
վոր գեր գրեւ ինձ համար: Մախաւս-ի ներկայացումից հետո հանկարծ
Տեր-Գրիգորյանը հրաժիրեց մեզ բոլորիս յուրյան մոտ և կարգաց յուր
նոր գրած Նիմոյի Ողնվիլը անունով գրածան, երեք գործողությամբ:

—Հիմա էլ դու իրավունք չունիս ինձ վերա դանդաղելու,—ասաց
հանգուցյալը յուր սովորական ծիծաղով, պիեսան կարգաւուց հետո:

Եվ հշտարիտ որ՝ այդ պիեսայի մեջ նա աշխատել էր ինչքան կարելի
է գրամատիկական բնավորություն տալ երիտասարդ Միքայելի գերին,
որ ևս պիտի կատարել:

Թեև պիեսան գրելու ժամանակ, ինչպես երևում էր, հեղինակը բոլոր
էիզը թափել էր երիտասարդ աղի և աղջկա բնավորությունները ամենքից
չառ ուժեղացնելու վերա, մեկ խոտքով ամբողջ գրամայի անցքը և կապը
գեանդել էր այդ երկու բնավորությանց շուրջը, այնուամենայնիվ այդ
պիեսայից ստեղծվեցան երկու այնպիսի նշանավոր գերեր, որոնք յուրյանց
բնականությամբ ծածկեցին ֆաւստ և առաջնակարգ գերերը: Այդ գերերն
էին՝ հարուստ վաճառական Անտոնի գերը, որ անմահելի կերպով կատա-
րեց պ. Ս. Մանգինյանը, Անտոնի ծառայի՝ Գրիգորի գերը, որ կատարեց
մեծ հմտությամբ Միրազյանը:

4

Մեկ օր, երբ ճարահատյալ խնդրում, աղաչում էի ծառաների գեր
կատարող մեկ պարոն գերասանի ընդունել Նիմոյի Ողնվիլու մեջ ծառա
Գրիգորի գերը, այդ ժամանակ կրկնության դաշխեում ներկա էին (կար-
ձեմ տ. Ս. Միլիթ-Նազարյանի տանը) մեկ քանի երիտասարդ գիմնադիսու-
ներ, որոնց հաշվում էր և հանգուցյալ Միրազյանը, որը գիմնադիսոնի չոր-
րորդ թե հինգերորդ դասարանի աշակերտ էր:

—Խնդրեմ,—ասաց նա,—թույլ տաք ինձ կատարելու այդ գերը:

Հանգուցյալ հեղինակը, որ ներկա էր այդ երեկոյան, երբ որ տեսավ,
թե իրան հանճար կարծող գերասանը առանց որոշյալ պայմանագրության
չի կամենում ժաւնակեցել ներկայացման, առաջարկեց ինձ Գրիգորի գերը
տալ կատարելու Միրազյանին:

Երբեք ևս չեմ մոռանալ իմ տաղանդավոր ընկերոջ Միրազյանի խա-
ղը Նիմոյի Ողնվիլու մեջ⁷⁸:

Հանդիսականները, որոնք գլխավորապես զբաղված էին պզ. Ման-
գինյանի, Սուքիասյանի և ուրիշ իրանց ծանոթ գերասանների խաղով և
երբեք չէին երեսակայիլ, թե մեկ որեիցե նոր անուն Վառուճի (Միրա-
զյանի թատրոնական անունը) իբրեւ նոր գերյուտանա, կարող է գրավել
նորանց ուշադրությունը, հանկարծ, երբ այդ պիեսայի երկրորդ գործողու-
թյան վերջը, հանգուցյալ ընկերա, ներկայացնելով հայ ծառայի գերը, վեր-
ջացրեց յուր կենդանի և զգայուն շարժվածքներով և միմիկայով երգը՝

Հոռոմիմիս ապ ունենամ,
Մե լաթավուր բոպ ունենամ,
Մե լուծ եզն էլ չապ ունենամ,
Բեք է ու քեք է:

Այն տեսարանից հետո, երբ Թիֆլիսի հարուստ քաղաքացու մեկին, Գրիգորի պարոնին, յուր շքեղ զարդարված՝ աչքու մեջ թքում են նորա երեսին, իսկ նա շատ սառը ձևով սրբում է երեսի թուփը և յուր վերա-
վորոգին պատասխանում է, չթքելը վուչինչ բան է, սրբեցիր, կու անցկե-
նա, համա սրվեն, էտ ուրիշ բան է, մատներու արդը էրեում է՝ և այլն,
երբ, տեսւմ եմ, այդ տեսարանից հետո, շարունակելով երգել յուր հոռոմ-
սիմեականը, Միլոպոլսոցը վեր-վեր թռչելով, գդվելով ու փայփայելով յուր
հաստ ու պինդ Թիֆլիսցու ազգային, յուր նման բնական Հոռոմսիմին
(որ. Արամյան)՝ շարունակեց.

Դուն էլ թունե ողաւ, Հոռոմսիմ,
նփե ու եփե...

Երկար ժամանակ հանդիսականները Ձայցին ապշած։ Վարագույրը ընկավ,
Հանունին զարթեցրեց հայ թատրոնական հասարակության հիշողության
մեջ հանգուցյալ Մատինյանի ապստեղագոր խաղի հիշատակը։

ԿԱՏԵՐԻՆ ԶՈՎԱՐԴ

5

Այստեղ իմ հիշողությունս ապստամբում է իմ դեմ ժամանակագրա-
կան կողմից, որովհետեւ ես ճշտությամբ չեմ հիշում այդ սարսափելի դրա-
մայի ներկայացման ժամանակը։

Բայց, կարծեմ, որ Կատերին Զովարդը Նիկոյի եղմվիւոց առաջ ներ-
կայացրինք⁷⁹, Թեև այդ պիեսայի մասին գուցե և ավելորդ էր խոսիլ, բայց
ևս ստիպված եմ մեկ քանի խոսք ասել, որ ցույց տամ, թե մեր դերասան-
ներից շատերը, նոցա հաշվում պ. և տ. Ֆասուլյանները, ինչ կետից
էին նայում հայ թատրոնական ներկայացումների վերա։

Հոկտեմբեր ամսի սկզբներում ես Թիֆլիս վերադարձա, չեմ հիշում
որտեղից⁸⁰, և հայտնի բան է, առաջին գործս էր տեսնվիլ ընկերներին հետ։

Գ. և տ. Ֆասուլյանները, որոնք այդ ժամանակ, իբրեւ խանութի
մասնատերեր, տեղավորված էին արդեն մեր ընկեր դերասան Ս. Ա. Մ.⁸¹
խանութում, ցույց տվին, որ շատ ուրախ էին վերադառնալուս և առա-
ջարկեցին ինձ աշխատել մեկ քանի ներկայացումների թույլատվություն
վերցնել ձեռագա միջոցին։

Ես սկսեցի գործը, և երբ արդեն ստացա թույլատվություն և մեծ
շարժարանքներով դուրս բերի Կատերին Զովարդ (Դյուժա-հոր հեղինա-
կություն) դրամայի ներկայացման իրավունքը, հանկարծ երկրորդ կրկնու-
թյունից հետո Ֆասուլյանները, որոնք կատարում էին ամենանշանա-
վոր դերերը, պայծառ առաջարկեցին, որ ես, մուտք լինի թե չլինի, վճա-
րեմ ներկայացումից 160 ռուբլի։ Ես սարսափեցա այդպիսի առաջարկու-
թյունից, բայց այլևս ժամանակ չկար ներկայացումից հրաժարվելու։

Այդ լսելով և մյուս դերասանները սկսեցին իրանց առաջարկություն-
ները, որը պահանջեց 20 ռուբլի, որը 15, որը 30, և այլն։

Հաշվեցի, որ ծախսը ծածկելու համար պիտի 500 ռուբլի մուտք լինի,
Երկար տատանվելուց հետո, վճեցի այդ անգամ ես սխալ անել։

Ներկայացումը ավինք, և բավական հաջող զնաց, բայց հետևանքն
այն եղավ, որ մյուս օրը 160 ռ. հանձնեցի Ֆասուլյաններին, դերա-

սաններին տվի՝ որին 30 ոտքի, որին 20, որին 15, որին 10, և այլն, ինչ պակասեց դարձյալ վճարելու մեկ քանի ոտքի, Ես փող չունեի և ստիպված եղա փոխ առնել եղբորիցս ու վճարել։

Այդ տեսակ ստանալու թույլն և անգթութունը զեպի ինչ, իբրև աճենադիտավոր աշխատակից ընկերոջը, սաստիկ վիրավորեց ինչ, և ես առժամանակ թողի դարձյալ թափառական գործունեությունը, բայց երկար չտևեց։

Դարձյալ հաճաքեցանք, դարձյալ սկսեցի զես ու զեն ընկնիլ և տվինք մեկ քանի ներկայացումներ։

Հիշում եմ, ինչպես մեկ ներկայացումից հետո, որին չէր մասնակցում պ. Ֆասուլյանը, այլ խաղում էր նորա կինը, երբ մյուս օրը մեր ընկերակցն պայմանի համեմատ պիտի տ. Պաշտառ Ֆասուլյանը ստանար 20 ա. և ես փող բաժանելու ժամանակ հանձնեցի այդ գումարը պ. Ֆասուլյանին, որ ներկա էր հաշվառեսությունը յուր կնոջ փոխանակ, նա սաստիկ վրդովված հետ տվեց ինչ փողերը, ասելով.

— Այսքան փոքր գումարի համար չարժեք խաղալ, թող ձեզ մոտ մնա, ես չեմ վերցնիլ։

— Պարոն,—պատասխանեցի ես,—գուց տեսնում եք, որ պայմանի գորություն համեմատ գորանից տվելի չի կարելի տալ ձեր կնոջը։

— Զի կարելի, չեմ էլ ուզիլ,—ասաց նա դարձյալ սաստիկ վրդովված։ Ես հետ վերցրի փողը և դառնալով ընկերներին՝ ասացի.

— Պ. Ֆասուլյանը յուր կնոջ մասը պարզեում է ընկերության, ընդունենք, ուրեմն, և բաժանենք մեր մեջ։

— Ո՛չ, հշ,—բացականչեց այդ ժամանակ պ. Ֆասուլյանը,—ես այդ չէի ուզում ստիլ։

Այդպես, այդ ամուսինները, որոնց համար Թիֆլիսի նորարույս թատրոնական ուժը, անգամ, կարող եմ ասել, ամբողջ հայ հասարակությունը, ոչինչ միջոց չէր խնայում պահպանելու նորանց օտար վիճակի մեջ, այդ մարդիկ, կարծելով, որ ամեն մի հանգամանքից պետք է օգուտ քաղել, այնպես սկսեցին հարստահարել Թիֆլիսի հայ հասարակության կարծիքը, որ վերջապես, երբ նոքա հետացան Թիֆլիսից, մեկ հիշողություն միայն թողին Թիֆլիսեցոց մեջ, թե նոքա այցելել էին մեր քաղաքը փող վաստակելու համար, ինչ միջոցով կուզե լինել, և Ռուսաստանի բոլոր հայաբնակ քաղաքները այցելելուց հետո վերադարձան Պոլիս, ոտի տակ առնելով գեղարվեստի պահանջները, մեկ քանի կոպեկ տվել վաստակելու համար միայն⁵³։

SACRAMENTO, ԻՄ ԺԱՔՈՆՆԵՐՍ ԵՎ ԱՂՎՈՐ ԽՈՐՈՋԸ

6

Վերջացնում եմ Ֆասուլյանների մասին⁵⁴ խոսելս, հիշելով միայն խաղերի ժամանակ նոցա հետ պատահած երկու-երեք կոմիկական անցք։

Առաջին թե երկրորդ անգամ, լավ չեմ հիշում, խաղում էինք Թուրք խաղացողի կյամբը։ Վերջին գործողության մեջ, երբ Ժորժը դուրս է վազում խրճիթից, որտեղ Վարենը ուզում է սպանել Ժորժի որդուն, Ալբերտին, Ֆասուլյանը ղեկիսորին հրամայած էր վառադուլը թողնել միայն այն ժամանակ, երբ ինքը (Ժորժը) գուրս կգա խրճիթից և նորա հետեից

Արեւելոյ, որ սպանում է Վարդերին (ինձ)։ Այդ ժամանակվա սեփաւորը, կարծեմ պ. Շերմազանյանը, նիսաւիւն էր և վարագույրը թողել էր մինչև Ֆասուլյանյանի բեմ գուրս գալը։

Ես գուրս եկա կուխները և տեսա, որ սաստիկ ազմուշ է բարձրացել Ֆասուլյանյանի և Շերմազանյանի մեջ, իսկ տղերքը կիսովն են նորանց գլխին։ Ֆասուլյանյանը կանգնած էր մեջտեղը, ձեռին բռնած կարճիկը գուլիւնի ներկած կապիւնը և հայհոյելով Շերմազանյանին, գոռում էր։

— Մտերմանա՛տ, գուրս ինտրիգներ կընէք այստեղ։

Ես բոլորովին չհասկացա այդ խոսքերի նշանակութիւնը և բարձրացա վերեւ։

Զգեստատանը ես գտա պ. Սուքիասյանին, որ ծիծաղից խեղդվելով ինձ պատմեց, թե պ. Ֆասուլյանյանի արտասանած «ստերմանա՛տ»^{*} գուրս ինտրիգներ կընէք նշանակում են, որ ես իբրեւ թե նախանձելով նորա բեմ գուրս գալու վերջին շքեղ տեսարանին, տաշտուց պատվիրել էի պ. Շերմազանյանին փոքր ինչ վաղ թողնել վարագույրը, որպէսզի պ. Ֆասուլյանյանի հաշիւի տոնված արձակուրդ կացնազն տեսարանն անշքանաւ։

— Տես, թե ինչ աստիճանի ինտրիգան ես եղել գուրս, — կարտփակեց պ. Սուքիասյանը։

Մեկ ուրիշ անգամ խաղում էինք Կուլլիին զավակը։ Տիկինը խաղում էր խելագարված Ֆաւերնոյի սիրունու գերը։ Ֆաւերնոն (ես) պիտի ունենար ձեռին փայլուն մատանի։ Խելագարը նկատելով այն, պիտի պահանջեր նորանից մատանին։

Այդ բանից ոգուտ է քաղում Ֆաւերնոն։ Խոստանալով նորան տալ այդ մատանին, նա կամենում է գուրս քաշել խելագարից մեկ ինչ որ սարսափելի գաղտնիք, որ հիմա միտս չէ։

Բեմի վերա ես նկատեցի, որ մատանին մոտացել եմ։

— Տիկին, — ասացի ցածր, — մատանին մոտացել եմ, պահանջեցե՞ք մի ուրիշ բան. և հուշս ունեի, որ նա հագուստիս կոճ բեմի զարդարանքին հարմար մեկ բան կպահանջեւ։

Երբ հասանք այդ անիծյալ մատանու տեսարանին, որի պահանջից կտրված էր նկատեալ դրամատիկական տեսարանի էֆեկտը, որին անհամբերութեամբ սպասում էին էֆեկտասեր հանդիսականները — հանկարծ, իմ վերա գտնված զննքերը և շատ ուրիշ փայլուն իրեղենները երկար զննելուց հետո, տիկինը աղաղակեց։

— Այդ ինչ սիրուն ծարուներ^ա ունիս, աուր ինձ։

Սարսափելի հուշոց բարձրացավ հանդիսականների մեջ, ես շվարեցա, տեսա, որ դրաման փոխվեցավ գեպի կատակը, ինքս էլ պահպանեցի այդ ակցանակը։

— Լավ ծարուներ են, — ասացի ես, — բայց քեզ չեմ տալ։

Ծիծաղը սաստկացավ, և վա՛յ այն վերջացնելուն, որ մենք վերջացրինք այդ գործողութիւնը։

Մեկ նշանավոր բան ես անցկացավ պ. Ֆասուլյանյանի հետ տա. Արամյանի և Սաթենիկի բենեֆիտին։

^{*} (Ժաւ.) Լավատի ու երգման մասին հայհոյանք է, շեփոտիչ երգումն է, կամ շեփոտիչ ու երգումը անիծման։

^ա Կրճիկ, Կրճիկապ։

9. Փասուլյաճյանը խոստացել էր վերահիշյալ տիկիներին երգել աճա-
րակառւած մեկ ինչ-որ տաղվոր խորոզիչ երգ:

— Այդ թնչ երգ է, պարոն,—հարցրի ես:

— Կտեսնե՞ք,—պատասխանեց նա ինձ կարճ:

— Բայց պետք է պատրաստել, կրկնութիւնը աճել:

— Ոչինչ պատրաստութիւն և կրկնութիւն հարկավոր չէ:

— Երաժշտութիւն պետք է լինի թե ոչ:

— Ոչ:

Վերջապես ներկայացման նախընթաց փը սկսեցին տարածել աճե-
տուն ստանալովորներով զրգած մեկ բրոշյուր, որ սկսվում էր, կարծեմ,
այսպէս. ԵՐՆԱԺԻ ԿՐԱՆՆ ԿԱՐՈՆ ՊՈԳՈՒՅ:

Ներկայացման գիշերը, հանդիսականների հավաքվելուց առաջ այդ
տաղվոր խորոզիչ բրոշյուրը, որի նշանակութիւնը, էշմարիտ ասեմ, ես ինքս
չէի հասկանում, ցրվեց դանիշի բազկաթոռներում և օթյակներում:

Առաջին թե ներկրոր արարվածից հետո, սկսեցին թեմը պատրաստել
այդ տերեւիչ երգի համար. կախ տվին Սեիլիայի սափրիչի օպերայից Սեվի-
լիա քաղաքի տեսարանը. աջակողմյան կուլիսում ցից արին Ռոզինայի
փոքրիկ պատշգամբը, որի վերա բարձրացած տիկին Արամյանը:

9. Փասուլյաճյանը, ահագին թղթի մազազիններ շինած, մեկ աճառ-
նի լայն և երկար հին ֆրակ հագած, քիթը հաստացրած ու կարմրացրած,
հոնքերի և աչքերի վերա կպցրած կանաչ ու կարմիր ներկեր, թեմ զնաց,
առնելով հետը մեկ քանի՝ նմանապես աճառնի հագնված՝ գերաւսաններ:

Ես զարհուրեցա, նախադուշակելով սաստիկ սկսեցալ:

— Գարոն Փասուլյաճյան,—գիմեցի ես նորան, հագնվի ծիծաղս պահե-
լով,—թողք ձեր տաղվոր խորոզը և հայտնեցեք, որ այդ երգը չի երգ-
վի այս երեկո: Բայց մեծը կասես:

Վարագույրը բացելու առաջին զանգը տվին, ես փախա վերե զգես-
տատունը: Եվ երբ երգի առաջին բառերը հասան սկանչիս ճիւղ ազվոր է,
թնչ ազվորս ես աճառից սկանչներս փակեցի:

Հետո շնամբերեցի և դուրս եկա կուլիսների պատշգամբը: Լսում եմ
սաստիկ հնգնական ծիծաղ և շվոց հանդիսականների մեջ, ազա ծիծաղե-
լով, իրարու ծաղրելով, սկսեցին բարձրանալ թեմից տաղվոր խորոզը կա-
տարողները: Եկավ և պ. Փասուլյաճյանը, որին այդ բոլորին իմ երեսկա-
յութիւնըս նմանեցրեց բանտից փախած մեկ հանցավորի, որ չի իմանում
որ ծակը մտնի, որ ոչ ոք չտեսնի իրան:

Ես հետաքրքրվեցա թեմին վերա պատահած անցքով և խնդրեցի դե-
րասաններից մեկին, ինչպես լավ հիշում եմ, պ. Բարիսուդարյանին, որ
պատմի ինձ բանի էութիւնը, և նա, որ պ. Սուքիասյանի նման ծաղրա-
սերներից մեկն էր, պատմեց ինձ հետեւյալը:

Երբ վարագույրը բարձրանում է, հանդիսականներին, ինչպես ասացի
վերե, ներկայացվում է Սեիլիայի սափրիչ օպերայի առաջին գործողու-
թյան դիրքը՝ Ռոզինայի պատշգամբով. պատշգամբի գիմաց կանգնած է
լինում գերասանների խումբը, կուլիսներից դուրս է գալիս պ. Փասուլյա-
ճյանը. առաջ է գալիս նախաբեմի վերա և սկսում է:

շինէի կըսեն պարոն Գալստի,
 Օրթագեղէի ազգոր խորոզ,
 Ինչի համար բարբ աղէիկներ
 Կընեն անուշիկ աշքեր.
 Ո՞վ չի գարնովիք իմ հասակիս,
 Գուշտուկի պէս քաղցր ձայնիս,
 Ի՞նչ ազգոր է, ի՞նչ ազգոր,
 Բայը-բող փռազգոր...»

և այլ ստեղծանք աշխտեցակ և անհամ, ֆրանսերենից թարգմանված (ինչպէս հայտնած էր աֆիշայում) ստանալովոր.

Հանդիսակառնները լսում են սաստիկ սառնասրտությամբ, կարծելով, թե հետեից բան կա. Ամեն մեկ կուպլետից հետո գերասանները կրկնում են խմբով շինչ ազգոր է, ի՞նչ ազգոր, և այլն.

Երեսկայեցեք այդ ժամանակվա Թիֆլիսի հայ հասարակության խորթությունը զեղալ պոստիցի հայերի լեզվի գարնավածքները, Թիֆլիսեցու ականջին դիպչող տարրինակ հնչյունները՝ շաղկապ խորոզ և այլ բաների նշանակութայունը, և կհասկանաք այդ երեսիկի շաղկապ խորոզից առաջ եկած ֆրանսիսն.

Երգի երկրորդ տունից հետո գերասանների խումբը սկսում է մեկ-մեկ փախչել բեմից, թողնելով խեղճ Ֆասուլյանյանին մենակ.

Է Լ Ի Մ Ե Կ Զ Ո Ը

7

Մախլաս ներկայացումից հետո պ. Սունդուկյանը փոփոխելով այդ պիեսայի մեջ թե անձնավորությունների բեմական դիրքը և թե ղլխավորական նոցա բնավորությունները, վերջապես մեկ տարուց հետո, կարծեմ⁸³, վերանորոգեց նորան և բոլորովին դուրս եկավ էլի մեկ զոն կոմիկիան, սկզբում հինգ արարվածով. իմ կարծիքով այդ պիեսան, չնայելով հարաբարալայի հաջողությանը, նորանից շատ բարձր է մտքերի բազմակողմանի հարստություններով, անձնավորությունների կատարելագործությունով և, որ ղլխավորն է, բեմական արհեստի կանոնների պահպանողության կողմանի.

Եթե առաջին անգամ այդ պիեսան չուներցավ այն հաջողությունը, որ սպասում էինք մենք ամենքս, այդ իմ կարծիքով, նորանից էր, որ պ. Սունդուկյանը, ամեն յուր այդպիսի մեկ նշանավոր գրվածքում, աշխատում էր միշտ վերջացնել պիեսան ազգու և, լավ է սսել՝ շփեղափայլ էֆեկտով: Այն ինչ այդ էֆեկտը բեմի վրա իրագործելու համար նախ և առաջ հարկավոր էր ունենալ սեփական թատրոն, կանոնավորված, պայմանով կապված խումբ, ըստ եվրոպական հասկացողության գրականական անկողմնապահ և ճիշտ քննություն, որին իմ ամբողջ թատրոնական գործունեությանս միջոցին երբեք ևս չեմ պատահել մեր տեղական հայ մասուկի մեջ. Այն ժամանակվա, այժմ կերպարանափոխված Մեղուն, մեր լեզվի ինքնակամ ունեթորմատոր Հայկական աշխարհը և, հետո, մեկ գաղափարից մյուս գաղափարը թույլ Մշակը թատրոնական ներկայացումների մասին միշտ այսպիսի քննություններ են տվել թայս ինչ ներկայացումը անցկացալ լավ, այնինչ ներկայացումն վատ: Երբեմն պատահել են և քննության նման բաներ, բայց այդ տեսակ քննությունները զեղալ անձնակառությունները միշտ շագարկված են եղել մազմոզ և լեզբով: Օրինակ՝

Մշակ խմբագրության թատրոնական քննությունները, որ միշտ մեկի-մեկից մյուսին է անցնել, լի են եղել կամ զգուշ զգոված շոգոքորթություններով կամ զզվելի հայտնաբերով։ Շատ անգամ այն աստիճանի վերափոխել են անձնավորութուններին, որոնցից ես, կարող եմ համարձակ խոստովանել, երբեմն հասել եմ նայրանեղ հուսահատության։ Բայց միշտ զզվելով հրեից, Մշակի արբանյակների՝ երբեմն նորա՝ խմբագրի տաղանդավոր գրչովը խմբագրած՝ արձագանքները տարել եմ համբերությամբ։ Ուրեմն, ինչպես ասացի, մենք չունենինք ոչ սեփական թատրոն, ոչ պայմանով կապված խումբ, ոչ գրամական միջոց և, գլխավորը՝ մամուլի քննություն, որը պիտի արտահայտեր փոքր ի շատե արդեն կանոնավորած հայ թատրոնի պահանջը, պիտի աշխատեր մշակելու այդ լուսավորության անհրաժեշտ հարցերից մեկը և իրագործեր նորա զազափառը, որի ազգայն ապա միջոցին արդեն բավականին պարզվել էր և արդեն ստացել էր քաղաքացիություն և դատել Թիֆլիսի հայերի համար վնասված հարց։

Երբեմն-երբեմն, նշմարիտ է, Մեղում խոսում էր այդ հարցի մասին, բայց հայ լեզվի ինքնակոչ սեփորմատոր Ստեփանեն²⁴, որ միայն վրձնում էր և անագին քանակությամբ մելան վատնում թե ն տառի տեղ պետք է և գործածել, խմբագրի տեղ խմբագրող, և այլն, ոչ մի խոսք չէր արտահայտում հայ թատրոնի իրագործվելու մասին յուր՝ կազմածքով մազված՝ Հայկական աշխարհի մեջ, բացի մեկ քանի նիհար և յուր լրագրի պես մազված նախադասութուններից։

Ան ապագիսի հանգամանքներում, ասում եմ, էլի մեկ զանի պես նշանավոր պիեան, որի նշանությամբ իրագործվիլը բնեմ վերա պահանջում էր կանոնավորված խումբ, սեփական թատրոնի միջոցներ, չէին կարող հաջողվիլ նեղիմասկի զբվածքին և նորա իմաստին համեմատ։ Պ. Սունդուկյանը ներկայացման ժամանակ առաջին անհաջողությանը պատահելուն պես ընկնում էր մատառնություն մեջ, և իբրև բարեխիղճ նեղիմասկ, սորա-նորա մատնավոր կարծիքներին նեղեցիկով՝ նորից վերցնում էր գրիչ և յուր զբվածքը նորից փոփոխում հարյուր և մեկ տեսակ, մինչև որ յուր տաղանդի քնազդումը այդ փոփոխությունների մեջ կանգնեցնում էր նորան։ Գուցե ի վերջո, ինչպես պատահեցավ այդ էլի մեկ զանի երկրորդ թե երրորդ ներկայացման, որ ավինք երեք գործողությամբ, պիեսան յուր համառոտությամբ, տեսարանների արագընթացությամբ բավականացրեց հանդիսականներին, բայց ես համոզված եմ, մինչև այսօր նեղիմասկը չի փառասել յուր կասկածը, որովհետև գրականությունը չի քննել և չի պարզել պ. Սունդուկյանի՝ թատրոնական աշխատությանց մեջ բարձրացրած հարցերը, էլի մեկ զանի մեջ զարթեցրած գլխավոր հարցն է՝ չին սերնդի հարստահարող ճնշումը նոր սերնդի վերա²⁵։ Թեև միևնույն հարցը բարձրացրել էր և հանդուցյալ Տեր-Գրիգորյանը յուր Նիկոյի երկ-միլիոն մեջ, և երկուսն էլ բարձրացրել էին միևնույն կարգով, այսինքն՝ սիրահարության միջոցով, բայց ոչ մեկը և ոչ մյուսը, իմ կարծիքով,

²⁴ Էլի մեկ զանի մասին, պ. Ամերիկյանի խաղի առթիվ, նշմարիտ է, կար մեկ հոգի (ինչ, Բեհրությանի) Մշակին մեջ. եղել են աստատրակ պ. Սունդուկյանի պիեսաներին (ներառելով քննություններ և Մեղուան), բայց այդ քննությունները զբված են ըստ մեծի մասին միայն զրկելու համար, որոնց մեջ հազիվ թե կարող էր նեղիմասկ շարունակ նշմարության պահանջը, Մանգ. Ան։

չնստան յուրյանց նպատակին, բացի հարստահարողների ունեցնելը և զոհերի թուլութունը և անհարութունը մեզ ցույց տալուց: Պատեառը, դարձյալ կրկնում եմ, այն է, որ մեր գրականութունը մինչև այսօր անտարբեր է եղել զեղի անկողնապահ քննութունը: Տեսնելով Տեր-Գրիգորյանի Նիկոյին, (Նիմոյի եղբորը) և պ. Սուսուկյանի Միքայելին (էլի մեկ զոհ), մեկին ի դեպ ի դատ և զանգաղ, մյուսին կրակոտ և զործնական, մեր գրականութունը չի բողբոջել: Չի բողբոջել ի լսողութուն տիեզերքին, որ Թեֆլիսի հայ երիտասարդութունը կարիք ունի անձնանկեր և զազափարտաներ ինտելիգենցիայի:

Ինչ կասեն, թե Մշակը բողբոջել է: Ո՛չ, նա բողբոջել է յուր սեփական հայացքի կետից, նա բողբոջել է Հայդելբերգի չորս պատի մեջ փակված գերմանական համալսարանի շրջանից²⁵, չնանայելով, չուսումնասիրելով մեր տեղական, փաստ երիտասարդութունը, որը հեռզենտե շատանում և տարածում է յուր հյուսիսը ամեն տեղ, ամեն շրջանում: Այդ տեղական երիտասարդներն են բանկերում, խանութներում, զանազան գիվանդաներում նստած միշտները և կոյսները:

ՏԵՐ-ԱՍՍՏՈՒՐՅԱՆ

8

Դարձյալ պիտի գտնում մեր խմբի հազվագյուտ երիտասարդ անդամներից մեկին, էլի մեկ զոհի յուր առաջնակարգ զերերի համար ունենեք զերասաններ, թույլ էր մեկ զեր, որ թիև երկրորդական, բայց շատ նշանավոր էր պիեսայի մեջ, այն է՝ հարուստ Բրիլիանտովի որդու, թեթև-վամբա, շրջնովի Վանոյի գերը: Այդ ժամանակ մեր խմբի մեջ զեղեցկասեռ, խոհեմ շարժվածքով, բարձրահնչյուն, գրավիչ փոքրիկ տեղորի ձայնով, յուր հարուստ և բռնաբարո հոր վարժուհի պատեառով բարոյական ճանապարհից փոքր ինչ թեթև չեղված, բայց ընկերության հարաբերությանց մեջ միշտ ազնիվ, 17-ի 18 տարեկան հասակով մեկ երիտասարդ կար, որի ազգանունն էր Տեր-Ասատուրյան: Այդ երիտասարդի հետ ծանոթանալուց և նորա փափուկ ընտելորութունը ճանաչելուց հետո, մենք իրարու համարում էինք օերո բարեկամներ: Մեկ անգամ նա ինչ հայտնեց յուր ցանկութունը ժառանկեցել մեր ներկայացուցիչներին: Սկզբում նա կամեցավ բեմ գուրս դալ և փորձել յուր փոքրիկ ձայնը մի որևիցե ուսմանի մեջ, ընթե չեմ սխալվում, այդ փորձն արավ Վիժնեմակի եղբորով և մեծ հաժախութուն դասով: Հետո փոքր առ փոքր գուրս եկավ զանազան պիեսաների երկրորդական զերերում:

Նոր էլի մեկ զոհը արդեն պատրաստ էր և հեղինակը տարակուսել էր, թե ում էր տա Վանոյի գերը, կարծեմ ես առաջարկեցի փորձել կրկնությաններում Տեր-Ասատուրյանին: Առաջին և խիկ կրկնության ժամանակ հանգուցյալ ընկերս արժանացավ հեղինակի ծափահարությանը:

Դերերը բաժանված էին այսպես. Ստեփան Դանիլիչ Բրիլիանտովի գերը կատարում էր պ. Սուքիասյանը, նորա որդուն՝ Տեր-Ասատուրյանը, աչքիանը՝ ա. Ս. Միլիք-Նազարյանը, Սերգեյ Տարասիչի գերը՝ պարոն Ամերիկյանը, նորա որդուն՝ ես, կնոջը՝ ա. Արամյանը, Յազով Սիմոնիչի գերը՝ հանգուցյալ Միրազյանը, նորա կնոջը՝ ա. Ս. Միլիք-Նազարյանը:

աղջկանը՝ ա. Սաթևիկը և Բրիլիանտովի ծառայի գերը՝ գարձալ հանգուցյալ Միրազյանը:

Այսպիսի շքեղ միությունով (անսամբլով) շատ քիչ է պատահել մեզ հետագա ժամանակներում ներկայացում տալ:

Առաջին գործողությունը շատ հաջող անցավ, բայց փոքր ինչ ծանր ապավորություն ունեցավ:

Բացվեցավ երկրորդ գործողության տեսարանը: Շքեղ սենյակ, հագար ու մեկ շնչին, բայց գեղեցիկ բաներով զարդարված:

Մեծ հայելու առաջ կանգնած է շնչական Վանո Բրիլիանտովը և յուր առաջնորդի մտնրամասնություններով է պարապած: Հագնված է մաքուր, գեղեցիկ, Խորամանկ ծառան (Միրազյանը) բոլորովին ամփոփված յուր մեջ, սաստիկ ուշադրությամբ սրբում է յուր պարոնի ֆրակը: Ինչ զգրդոց, ինչ ծիծաղ բարձրացավ հանդիսականների մեջ, երբ նոքա տեղեկացան այդ երկու տիպերից՝ աղայի և ծառայի մտերմական խոսակցություններից, թե ինչով են պարապած նորանք:

— Աստ մոտիտ, — ասում է պարոնը:

— Մոտիտ, — ասում է ծառան:

— Մոտիտ, հիմա:

— Մոտիտ, հիմա:

— Հիմաբը դու ես, — պատասխանում է պարոնը, և այն:

Ափսոս որ տեղը չէ այստեղ այդ գեղեցիկ տեսարանը ամբողջական հաղորդելու ընթերցողին:

Առաջին կարգերում նստած հայ ջննալմենները սկսեցին իբարտնայել և քթի տակ ծիծաղել, ամեն մեկը մտաբերելով՝ հարյուր անգամ յուր և յուր ծառայի հետ պատահած նման տեսարանը:

Հանգուցյալ Տեր-Ասատուրյանի մահից հետո էլի մեկ զոհի այդ գերը շատերն են խաղացել, բայց ոչ մեկը երբեք այդպիսի կատարելագործություններ չի կենդանացրել հեղինակի գրվածքը բեմի վերա, ինչպես Տեր-Ասատուրյանը:

ԽՈՏՈՐՆԱԿԻՆ-ԽՈՏՈՐՆԱԿ

9

Ինչպես վերևում հիշեցի, հանգուցյալ Տեր-Փրիգորյանը երբեք երկար ու բարակ չէր մտածում պիեսա գրելու համար: Բավական է, որ նա ըմբռներ մեկ օրերից պազափար, մեկ իմաստ և խկույն կտոներ գրելը և երկու կամ երեք գիշերվա մեջ կգրեր ամբողջ մեկ պիեսա և կգրեր այնպես, որ ոչ ոք մեղանից չէր իմանալ երբեք, թե նա նոր բան է պատրաստում բեմի համար: Կպտասներ այնպես, որ կգար կրկնություն և թեի տակից կհաներ մեկ հոստ տետրակ, գրած յուր ձեռքով, գեղեցիկ, մաքուր ձեռքով և շատ սառը ձևով կառաջարկեր մեզ խաղալ նորա նոր գրվածքը: Կամ պատահելով ինչ կամ ընկերներից մեկին, կխնդրեր հավաքվել նորա մոտ, սովորաբար երեկոյան թիյի ժամանակ, և կկարդար յուր նոր գրվածքը, որ երբեք սովորություն հուներ շատ ուղղելու, նաև արտադրելու: Ինչպես կվերջացներ պիեսան, այնպես էլ կհանձներ խկույն ներկայացնելու:

Մեկ օր, եթե չեմ սխալվում, Մախաւի ներկայացումից հետո, հանդուցալը պատահեց ինձ ճանապարհին և հանգնեցնելով յուր հառաք խնդրեց, որ ես և ընկերներս գնանք երկոյան վեց ժամին նորա մօտ, մեկ նոր գրված պիեսս լսելու համար:

Պիեսսան կարգալուց հետո խելույն սկսեցինք կրկնութունները և մեկ շաբաթվա միջոցում տվինք նոր պիեսայի ներկայացումն: Պիեսայի անունն էր եռտորմակիմ-խտորմակ¹⁰:

Մանրամասն խոսիլ այդ ներկայացման մասին, ես հարկավոր չեմ համարում, միայն ցույց տալու համար, թե ներկանքը յուր գրվածքի համար ինչ քուէջ ու պուճախի մեջ էր նյութ փնտրում, ես այստեղ կարճապէս կպատմեմ եռտորմակիմ-խտորմակի գլխավոր ըզմանդակութունը:

Հանգուցյալը որոնել էր և գտել մեկ ձեր մարդ, մլառ, որդեսեր, բայց միևնույն ժամանակ վաճառող ձերուներ: Այդ ձերուներն ունի մեկ հասակ առած՝ մօտ երեսուն տարեկան տղա և մեկ կարողութուն:

Թիֆլիսի մոցիքուների (հարսնախոսների) գլուխակն ինտրիգաների ազդեցությամբ, փոխանակ ամուսնացնելու յուր հասակ առած որդուն, ձերուներն ինքն է ամուսնանում մեկ երիտասարդ և գեղեցիկ օրիորդի հետ: Օրիորդը ունի սաստիկ խարդախ և խորամանկ մայր, որ այն նպատակով է յուր 16 թե 18 տարեկան կեկելին տալիս շքոփակ և քովթառ կարապետին, որ նա շուտով կմեռնի և յուր ունեցած-չունեցած հարստությունը կհաստատե Կնոջ վերա, չնայելով, որ տանը հասակ առած ժառանգ կու տիրիլ տու գլուխոգ, վուրթիչ խրատում է խորամանկ մայրը յուր ազնկան, ետ կու տեսնիս, թե դիփ քիչ վրա կու հաստատեն: Միևնույն ժամանակ, թե ինքը և թե ազնկիւր գիշեր և ցերեկ աշխատում են հաճախեցնել կասկածոտ ձերուներն, որ նորա որդի Օսեփը շտալլ է, պ ա մ ա ռ ն ի է (շրջմուխ), թե նա ցանկանում է յուր հոր մահը, որ շուտով մեռք բերե նորա կարողությունը:

Վերջապես բանը հասնում է զանազան փառուների: Կասկածներից տանջված ձերուներն չի գիմանում և մեռնում է, փառաւելով յուր կասկածները գեղի իրան սիրող որդին, անիծելով յուր բռն կնոջը:

Անս ինչպիսի նյութեր էր գտնում հանգուցյալ ներկանքը յուր պիեսաների համար, և ինչպիսի, չնչին ըստ երևույթին, նյութից նա շինում էր դրամա կամ կոմեդիա մեկ քանի գործողություններով:

Նյութը գտնելուն պես, նա այլևս չէր աշխատում մշակել, կապել տեսարանը տեսարանի հետ գեղարվեստական պահանջի կամ բեմական արհեստի համեմատ: Նորա համար բավական էր, որ ցույց տար հանդիսականներին ծաղրալի ձերուներն պատկզմած 18 տարեկան խորամանկ օրիորդի հետ, թե ինչպես խորամանկ կինը թեթևացնում է յուր շքոյալ, քոփակ, քովթառ կարապետին, թե ինչպես ձերուներն շրջապատող թե ազգականները, թե բարեկամները կամ ծանոթները հիմարացնում են նորան, և այլն:

Ես հաճախացած եմ, որ, եթե հանգուցյալ Տեր-Գրիգորյանը, որի մեջ կար հարուստ բանաստեղծական հանճար, և, ըստ յուր ընդության, գլխից մինչև ոտք պոետ էր միշտ, ամեն լավ թե վատ դրության մեջ հասկանում էր, գիտեր մարդ լինելու արժանավորությունը, այդ բառի վրեժ նշանակությունը, շտապել յուր թատրոնական գրվածքներում հանդիսանալ իբրև գեղարվեստական պայամները շղատպանող լոկ նկարիչ միայն, այլ աշ-

խառնել յուր ամեն մեկ նկատած առարկայի վերա առավել երկար և առավել խանր մտածել, նորա զգովածները չէին ունենալ յուր նմանը և նորա սղարապետները և բխտայիները կենային հավիտյան մեր ազգասիրի թե գրականության և թե բնմի համար որպես անմահ տարայուցիներ:

Խոտորմակիմ-խոտորմակի, լավ չեմ հիշում, առաջին քե երկրորդ
Ներկայացումից հետո, հանկարծ „Кавказ“ լրագրի մեջ (այդ ժամանակ
խմբագրում էր հանգուցյալ Շվարցը)⁸⁷ գուրա եկավ մեկ ֆելիետոնական
նոցդամ։ Ինքնակոչ ֆելիետոնիստի մեկը (որը, ինչպես հետո իմացա, ահ-
գական գիմնապրոնի ուսուցիչներին էր) Նկարագրելով բարեկենդանի (մեր
Ներկայացումը բարեկենդանին էր) զվարճութունները, ի շարս զանազան
սկանդալական անցքերի և ցրկի Ներկայացումների, հիշել էր ամենաբըշ-
վառորեն և մեր Ներկայացումներից մեկը, այն է Խոտորմակիմ-խոտորմակ
Ներկայացումն։ Յնիկետոնիստը պիեսան անվանել էր տրագեդիա Ծ քե
Ծ տարավամով, որի մեջ Ներսը թախ, զմեռա անելով՝ փոփում է գետնի
վերս և մեռնում։

Այս հոգովածը կարգապահուն պետ, ես իսկույն հասկացա, որ հեղինակը ոչ միայն ներկա չի եղել յուր նկարագրած ներկայացմանը, այլ և ոչ մեկը նորանից այդ տարգմա միջոցում չի տեսել, չնայելով, որ այդ տարգմա թե տեղական և թե ներգրավան ոնպիբատուարից ներկայացուցներ ուրիշ տարբերիցի ավելի էինք ավելի:

Ես գիրավորվեցա նախ և առաջ հեղինակի այդ տեսակ հեղինորեն հայացքից զեպի մեր ժողովրդի լուսավորության սկզբունքներից մեկը, ինչպիսին է Թատրոնական ներկայացումը, նաև զգվեցա հեղինակի անխղճությունից, որ չտեսած բանը տուն էր յուր գրչի տակ և ծածուկ էր աշխատեալ, ինչպե՛ս կամեցել էր, միայն թե զգաւեացնէր հայկական ներկայացումներին չտեղյակ յուր ընթերցողներին։ Նա՛մանավա՛ռ՝ գիրավորեց ինձ մեր վերո-թիշյալ ներկայացմանը այդ հոգվածու՛մ մեկ տեսակ ֆիսկալական* մեկնու-թյուն տալով։

Պետք է իմանալ, որ այդ ժամանակները մենք իրավունք չէինք ստացած ներկայացնելու մեր անպերտուարի պատմական արագեղիքներին ոչ մեկը, ինչպիսին էին Արշակ Բ., Վարդան Մամիկոնյան, և այլն, որոնք թեև պատժ ներկայացրել էինք, բայց Ռուսաստանի ամբողջ թաղերներին վերաբերյալ ըստ նոր ցեղնգութական կարգադրության, մենք պատմական կյանքին ռուս ոչ մեկ անգամայն պիտեա իրավունք չունեինք ներկայացնելու, մինչև որ յատանայինք առանձին թուրքագությունն զորս համար

Վերադարձված ստատիկ բուրբ այս հիշյալ հանգամանքներից, ես գրեցի փոքրիկ նամակ «Кавказ» լրագրի խմբագրին, որի հետ բազմական ծանոթ էի, ինքս էլ տարա, որ հանձնեմ: Երբ մտա խմբագրատան դահլիճը, հանդուցյալ Եվաբջը, որ այդ ժամանակ զբաղված էր նորեկ ուսուսաց դերասաններին և զերասանուհիներին հետ խոսակցությունով, ինձ տեսնելու պես մոռեցավ ժպտալով և զամազան կոմպլիմենտներով Բայց երբ նկատեց իր գոյությունը և երեսիս փախած գույնը, նա Թագ ստատա:

* (Համբն.) Հրաեւ, ճամնիկ, գրպարաւդ.

- Դուք կարդացել եք և՛ մեր կիրակիական ֆելիետոնը:
- Բայց միթե վերադարձել են և՛ ձեր այդ հոգիական:
- Դուք առավել լավ պիտի իմանաք ինձանից:

Ինձ երկար ու բարակ հասկացնելուց հետո, թե նորա աշխատակից ֆելիետոնիստը ոչինչ չար նպատակ չի ունեցել հայերեն ներկայացումների վերաբերյալ, նա շտպեց իմ հոգիան, բայց առաջիկա համարում, թերթի իսկ սկզբում հայանեց, որ եռտարեակիմ-խոտորեակ պիեսան գրածա է տեղական կյանքից և ոչ աբսուրդիս:

11

Այդ ներկայացումից հետո վերջացավ, կարելի է ասել, սկզբնական հայ թատրոնի դարը: Թիֆլիսի ամբողջ հասարակությունը, սովորել էր նայել մեր ազգություն փոքրիկ բեմի քաղաքացիական գոյություն վերա, իբրև իրազեկության, և անգամ «KASKAZ»-ը սկսեց երբեմն-երբեմն փոքրիկ քննություններ նվիրել մեր ներկայացումներին:

Իսկ խումբը սկսեց հեռանալ նվազել: Ամբողջ գլխավոր գործողները (ինչպես Ա. Սուքիասյանը և Մ. Մանգրեյանը) հեռացան Թիֆլիսից: Մնացինք Ամերիկյանը և ես:

Մեր տարաբախտությունից փոխվեցավ այդ ժամանակներում և թատրոնի վարչությունը: Իշխան Քուսմանյանը հեռացավ թատրոնի վերաանշալության պաշտոնից և նորա տեղը բռնեցին երեք բարձրաստիճան անձինք, որոնց հետ մենք այլևս չէինք կարող այնպես համարձակ հարաբերություններ ունենալ, ինչպես իշխան Քուսմանյանի հետ²⁰:

Այդ եռապետական վարչության ժամանակ առաջին իսկ ավան ներկայացումից հետո մենք զգացինք, թե ինչ ծանր է եղել գործ ունենալ անձանոթ մարդկանց հետ, որոնք նայում էին մեր գործին շահասիրական կետից և աշխատում էին օգուտ քաղել քաղաքային թատրոնի սնանկացած կուսան հարստացնելու համար:

Այդպես օրինակ՝ իշխան Քուսմանյանի վարչության ժամանակ մենք վճարում էինք մեր ներկայացումների համար 100-ից 150 ուրլի վարձ, և երբեմն պատճառան զգեստ հագնելու համար 15-ից մինչև 20 ուրլի: և երբեք վճարած չէինք 170 ուրլուց ավելի: Բայց Քուսմանյանի վարչությունը փոխվելուց հետո, մենք սկսեցինք վճարել ամեն մեկ ներկայացումի համար, բացի սովորական 150 ուրլուց, 50 ուրլի հաղուստի ծախք: Այդ բաժանան չէր, մեկ քանի ժամանակից հետո թատրոնի միայն գիշերական վարձը հասավ 200 և 250 ուրլու, որի պատճառը ես կրացատրեմ յուր տեղը:

Այդ պահանջադրությունը սկսվեցավ և տեղե այնքան ժամանակ, մինչև որ հայ թատրոնը վայր ընկավ, չնայելով իմ հաճախ բողոքներին և հայ հասարակությանն ուղղած իմ հաշվեհաշվության: Մշակ շարաթաթերթի միջոցով²¹ պարզ ապացուցանում էի, թե այդպիսի ահագին գումարներ վճարելով հայ թատրոնի բեմը այսօր թե վաղը պիտի ընկնի: Մինչդեռ Թիֆլիսի պես հարուստ, հայաբնակ քաղաքի մեջ կարելի է ունենալ փոքրիկ թատրոն հայերեն ներկայացումների համար, որ կարող է օգուտ վաստակել թե հայ և թե ուրիշ ազգությունների ներկայացումներից: Խոստովին լսող չեզափ: Այժմ այս տողերը գրելու ժամանակ²², թույլ է:

որ մեկը մղանա կիսամեկ հաշվական թատրոնին, և եւթ մեկնե նորան և ազատե մահից։

Բայց պետք է խոստովանիլ, որ ոչ մեկը Քիշինի թատրոնի վարչությաննեից աշխես տմարդի, անազնիվ, անխղճմտաբար շի վարվել մեր նորածին բեմի հետ, ինչպես ներկա թատրոնի անարեւարեն յորական վարչությանը, բաղկացած երկու երեւելի, յուրյանց հաշիվը և սգուտը միայն ճանաչող անձնավորությաննեից, իտալացի պզ. Տարուայից և Նապոլեոն Սինեից²²։

Այս պարոնները, կարելի է համարձակ ասել, վերջին սարսափելի հարձածը տվին խեղճ հայ թատրոնական բեմին, որից նա շատ տարիներեց հետո գուցե թե կարողանա բժշկվել։

ԿԱՐԴԻՆԱԼ ՌԵՇԵԼԻՆ

12.

Իշխան Քուսանյանի վերջին տարվա վարչության միջոցին մեկ որ պատահամար գնացի թատրոն, որտեղ այդ ժամանակ տալիս էին սուսաց և իտալացոց խառն ներկայացումներ²³ և տեսա Ռիշելիե պիեսայի սուսերեն թարգմանությանը²⁴։

Դիլավոր գերը խաղում էր Պետերբուրգից եկած մեկ Ագրամով ազգանունով արախտ։ Նա կատարում էր Ռիշելիեի գերը, այդ երեւելի քաղաքական ֆրանսիացու գերը, պարթե, միևնույն ժամանակ թույլ կազմվածքով, բայց հզով հզոր և խորամանկ կարգինալի գերը։

Թատրոնի դահլիճում շատ քիչ ժողովուրդ կար։ Աս նստեցի իմ բարեկամներիցս մեկի կողքին, ինչպես լավ հիշում եմ պ. Ս. Ա...ի մոտ²⁵։ Նա հարցրեց ինձ, թե արդյոք հավանձում եմ ես այդ խաղը, նաև Ռիշելիեի գեր կատարողին։

— Եստ լավ պիեսա է,—պատասխանեցի ես,—բայց կատարումը թույլ է, Բարեկամս ծիծաղեց։

— Ուրեմն թարգմանիր և ներկայացրու այդ պիեսան ստավել լավ կատարելագործված։

— Մի որոշ ժամանակից հետո,—պատասխանեցի ես բարեկամիս հեղնական նկատմունքին,—դու կտեսնես հայերեն լեզվով Ռիշելիեն միևնույն այս բեմի վերա։

Մյուս օրը դատ պիեսան, հավաքեցի ընկերներիս և խնդրեցի պ. Ս. Կարենյանին, որ թարգմանի։

Երեք թե չորս օրում թարգմանությանը պատրաստ էր, մենք սկսեցինք կրկնությանները։

Բաժանեցինք գերերը այսպես. Ռիշելիեի գերը վերցրի ես, նորա հոգեորդի Յուլիայի գերը՝ տ. Սաթնիկը, Ռիշելիեի թշնամու Բաբազտի գերը՝ Ամերիկյանը, Լյուդովիկոս XIII-ի գերը՝ մեկ նոր գերասան Կարապետյան, այժմ սուսաց գերասան ԴԱՎԻԴՈՎ, Յուլիայի ֆեսայացու գր Մոպրայինը՝ հանդուցյալ Տեր-Ասատուրյանը, Ռիշելիեի պաժի գերը՝ ազա ԵՊայանեն²⁶, որ այդ ժամանակ դարձյալ սկսեց երթնել մասնակցել մեր ներկայացումներին, իբրև արդեն գիմնագիտնի երիտասարդ ուսանող, և Ժոզեֆի, այդ խորամանկ եզուխա արեղայի գերը՝ պ. Ղուկասյանը։

²² Մերեմի օր. Գալանեն, Մանք. ձեղ։

Իսկույն եւ վերջրի ներկայացման թույլատուութիւն, կարել տփի Ռի-
չէլիեի համար կարծիք գրադեղամից* կարգինաւական հագուստ եւ հրա-
տարակցինք ափիւաները:

Պետերբուրգից եկած գերաստանների համար այդ հայտարարութիւնը
շատ հանգուզն թփեցաւ, եւ ներկայացման գիշերը թատրոնում կույիս
չկար, որի մեջ նորանցից խցկված շիշներն երկու-երեք հոգի:

Վերջին կրկնութեան ժամանակ ներկա էր պ. Ագրամովը, Ռիչէլիեի
գերակատարը:

Սա գիշերի նորան իբրեւ փորձված արտիստի եւ խնդրեցի շինայել մեզ
յուր օգնութիւնը:

Ծշմարիտ, ներկայացման գիշերը այդ պարոնը եկաւ:

Ռիչէլիեին անսպասելի կերպով լավ գնաց:

Հանգուցյալ Տեր-Ասատուրյանը, հագնված շքեղ եւ գեղեցիկ, գերազան-
ցեց յուրյան, այնպես որ ես ինքս զմայլվում էի նորա խաղով: Երբորդ
գործողութեան ինն հետ ունեցած առաջին տեսարանում, ուր նա մտնում
է սպանելու ծերունի Ռիչէլիեին, երբ կատաղութիւնից գրգռված հանում է
սուրը եւ մեկնելով գեղի Ռիչէլիեին, բացականշում է. «Մեռի՛ր եւ ոչ ոքից
օգնութիւն մի սպասիր», եւ հետո, երբ Ռիչէլիեին, իմանալով նորա օվ-
նիքը, պատասխանում է նորա սպանախիճին «Ձեռքի՛ր եւ ներողութիւն
խնդրիր», եւ այդ ժամանակ կարգացի հանգուցյալ Տեր-Ասատուրյանի երե-
սին սաստիկ շփարժունք, աճոթ եւ խզճի տանջանք: Նա արտիստ էր:

13

Սա հասա իմ հիշողութեանս ամենագովար եւ ամենադառն մտաբերու-
թեան: Այդ մտաբերութիւնը ինն տանջիլ է, տանջում է եւ պիտի տանջե-
լուցե հաճիտյան, որովհետեւ ես կարող էի նորա առաջն առնել, բայց չա-
ռա եւ այդ իմ թույլ վարժունքովս ֆրասեցի ընդհանրական գործին, մեկ
կողմը թողնելով իմ ստացած անձնական վերաժորանքները:

Քաղաքային թատրոնի վարչութիւնը, իշխան Թումանյանի թողնե-
լուց հետո, անցաւ, ինչպես վերեւ հիշեցի, նորընտիւր եռապետական գի-
րեկադրների ձեռքը:

Ինն համար այդ փոփոխութիւնը թեւ զգալի էր, բայց այնուամե-
նայնիվ հուշս ունեի շարունակել մեր ներկայացումները միեւնոյն պայ-
մաններով, ինչպես իշխան Թումանյանի ժամանակ էր:

Մեծ պատի առաջին շաբաթն էր: Սա եւ ընկերներս արդեն սկսել էինք
պատրաստել պ. Մուսիլովսկայանի նոր գրվածքը՝ Պեպոն³²:

Ներկայացաւ նոր գիրեկադրներից մեկին եւ համարյա արդեն վեր-
ջացրի մեր պայմանները, այսինքն՝ պիտի վճարեի ամեն մեկ ներկայաց-
ման համար 150 ռ. եւ պատահած ժամանակ պատմական հագուստ ստա-
նալու համար երկու ռուբլի վարձ ամեն մեկ հագուստին: Այդ պայմանը
վերջնականաց հետո, հանկարծ լսում եմ, որ կազմվել է մեկ ուրիշ խումբ,
մեկ երիտասարդ պ. Վ. Մամիկոնյանի վարչութեամբ, որ նմանապես
պատրաստութիւն է տեսնում քաղաքային թատրոնում շարունակ ներկա-
յացումներ տալու:

* (Ծրանս.) Նուրբ մահուգի մի առանձին տեսակը:

Առաջ չհաժտացիր այդ լուրերին, բայց երբ որ ամեն կողմից սկսեցի լսել միևնույնը, դիմեցի ուղղակի պ. Վ. Մամիկոնյանին, որի հետ ծանոթ էի նորա երախայության հասակից, պանսիոնում գտնված ժամանակը, և որին համարում էի իմ բարեկամներիցս մեկը:

Մենք պատի երկուշաբթին էր, ինչպես լավ հիշում եմ, պատանեցի այդ պարոնին ռոմբոպառ կաֆետուն մանելու ժամանակ:

Մենք մասնք կաֆետուն միասին. նա ունեք յուր հետ մեկ քանի յուր նման պատանի ընկերներ:

Հարցրի նորան, թե արդո՞ւք ճշմարիտ են իմ լսած լուրերս, և եթե ոչ. Մամիկոնյանըք կամենում է մասնակցել հայ թատրոնական խաղարկությանը, մեր ընկերությունը ուրախ կլինի և պատիվ կհամարի հաշվել նորան, իբրև հայ թատրոնի համար օգտավետ ընձական անձնավորություն յուր խմբի մեջ. բայց, նկատեցի ևս միևնույն ժամանակ, որ նա գուցե պիտի շարունակե յուր ուսումը, որովհետև կրելով հայ դերասանի անունը, որը ոչ մեկ միջոցով չի կարող ապահովացնել նորա ապագան, մեծ փաստեր կարող է պատճառել իրան և նա հետո կափսոսա յուր ընտրած ճանապարհի համար, և այլն: Մեկ խոսքով ևս բացատրեցի նորան ըստդ այն պարհուրելի հեռեանքները, որոնք այդպիսի դեռահաս հասակում ընտրած անորոշ և խախուռ գործունեությունից կարող են առաջ գալ:

Նա ինձ պատասխանեց, որ իմ լսած լուրերս սուտ են, որ ինքը ճշարտով անգամ չի անցկացրել դերասան լինել, միայն թե Պետերբուրգից իրեն գրել են, որ աշխատե աշխտեղի չքավոր ուսանողների համար մեր խմբի օգնությունը մեկ հայերեն ներկայացում տալ:

Ես հայտնեցի իմ համաձայնությունս և պատրաստությունը մեր ընկերության կողմից օգտավետ գտնվելու այդ վսեմ բարեգործական նպատակին և խոստացա երկրորդ ներկայացում, զատկից հետո, տալ հոգևոր Պետերբուրգի չքավոր ուսանողների:

Այս խոսակցությունից հետո նա հայտնեց յուր ցավակցությունը մեր բեմի անորոշ գոյության մասին և հիանալով իմ համբերությանս վերա, որ այդպես հաստատ կամքով շարունակում եմ թատրոնական գործը, սկսեց հարց ու վորձ անել, թե թե՛ն ականակ եմ ևս դիմում սորան-նորան, թե՛ն ճանապարհով ստանում իրավունք ներկայացման համար, և այլն:

Հափշտակվեցա երիտասարդ պարոնի գեպի մեր նորածին գործը ցույց տված համակրությունից և սկսեցի պատմել նորան մի առ մի, թե ինչպես առաջ դիմում եմ գրաքննության վարչության, ինչ արգելքներ են պատահում այնտեղ, հետո ինչ ննարքներով դիմում եմ թատրոնի վարչության, ոստիկանության, և այլն:

Մյանից հետո մենք բաժանվեցանք միմյանցից, սեղմելով իրարու ձեռք: Ես համոզվեցա ըստորոգին, որ իմ լսած լուրերս սուտ են եղել և անգամ հանդիմանեցի ընկերներիցս մեկ քանիսին, որ նոքա հաժտառ էին ընծայել այդ լուրերին, չիմանալով երիտասարդ Վ. Մամիկոնյանի ազնիվ զգացմունքը և սիրտը:

Այդ մեր խոսակցությունից երեք օր հետո դիմեցի թատրոնի անտեսական կառավարիչ գիրեկտորին, որ գրական ձևով վերջացնեմ իմ բերանացի առաջարկած պայմաններս:

Նախասենյակում մոտեցավ ինձ այդ պարոնի տանու զլխավոր ծա-

նան և հայանեց, որ ևս իզուր եմ նեղութուն տալիս նորին գերազանցությանը, որովհետեւ զատկից հետո արդեն թաղարոնական բեմը հայերեն ներկայադուհեքի համար արժան է պ. Մամիկոնյանին, որը կանխիկ վճարած է 400 ուսւրլի երկու ներկայացման համար՝ 200-ական ուսւրլու հաշվով. Չհաժաւացի լսածիս և կամեցաւ անպատճառ տեսնել ճնորին գերազանցությանը:

— Նորին գերազանցությունը մամանակ չունի ձեզ ընդունելու, իսկ եթե իմ առածիս չեք հաժաւում, կարող եք գիմել թատրոնի խալաղան խմբի ուժիւսը պ. Գորբաթնուն, որ կհաստատե իմ խոսքերիս ճշմարտությունը:

Դուրս եկա աշդտեղից սաստիկ վերազորոված. Նախ ինձ վրդովեցրեց ծառայի հանդուգն վարմիլը (թեւեւ աշդ տեսակ վարմունքների ևս շատ էի պատահել իմ թատրոնական գործունեությանս մամանակ), հետո ինձ վերաւ սարսափելի տպազորություն ունեցաւ երիտասարդ Մամիկոնյանի խարերաւ վարմունքը և այն մտածմունքը, թե արդո՞ք Բնշ միջոցներից պիտի ծածկեմ այն ծախտերը, որոնք արդեն սկսել էի ներկայացման պատրաստությունները տեսնելու համար:

Անարգիւծ և վրդովոված աշդ անցքից, ևս դատ ընկերներս և Գնացիներ մեր ընկեր գերասանուհի տ. Արամյանի մոտ, ուր հրավիրեցիքնք տ. Սաթենիկին և ևս զլիսիս եկածը պատմելուց հետո՝ պահանջեցի նորանցից, որ եթե Մամիկոնյանը գիմե նորանց, մեր մեջ կապած մասնավոր պայմանագրության համեմատ չհամաձայնեին մասնակցիլ նորա ներկայացուհեքին:

Բայց... վերջացում եմ աշդ զլուխը կետերով, որովհետեւ շատ ծանր է ինձ համար ներկայումս աշդ գառն հիշողությունը:

Յ Ա Ո Ւ Ս Տ

14

Խեղճութունը, ինքնասիրությունը և գուցե իմ կոշտ վարմունքը հաղթեցին բարոյականությանը և մեր զլիսավոր ուժը, տ. Սաթենիկը, ապստամբեցաւ մեր դեմ:

Շատ հնարքներ, շատ միջոցներ գործ գրինք թե ևս և թե ընկերներս, գիմեցինք անգամ իշխան Թումանյանին, որ վերացնե՞ք աշդ երկպառակությունը, բայց իզուր:

1871 թ. ապրիլի սկզբում, Թիֆլիսի հայ հասարակությունը պատերից կպցրած աֆիշաներից իմացաւ, որ ռուսներէ խումբը հոգուտ Պետերբուրգի չքավոր ուսանողների, պիտի ներկայացնեն Ֆաուստ օպերետական, չեմ հիշում քանի գործողությունով և քանի պատկերներով²⁵, Ֆաուստի դերը պիտի կատարեր Կարապետյանը, Վալենտինի դերը՝ ինքը երիտասարդ Մամիկոնյանը, Մեֆիստոֆելի դերը՝ պ. Գրիգորյանը (այժմ Գրիգորով) և Զիրիլի դերը մեկ հարուստ ընտանիքի ընդունակ երիտասարդ, որի խաղը ինձ հիացրեց և որի բեմական կեղծ անունը ևս չեմ հիշում: Թատրոնի գահի՞քը լիքն էր: Ամենքը անհամբերությամբ սպասում էին, որ տեսնեն աշդ հուշակավոր Ֆաուստի ինչ լինելը:

Վերջապեւ վարագույրը բարձրացաւ: Բեմի վերա խալաղացի տեսորի



Գեղորդ Ջոշկանը Պեղսի գերում





Գեղարդ Զմայանը Ռէշեիէի գերում

նստաբանի տեղը, միևնույն տեղերի գիրքով, բազմած էր հայացրած Զառուսը (Կարապետյան)։ Փոքր ժամանակից հետո նա վերկացավ տեղից, մոտենցավ նախարանին, փնթինթաց մեկ քանի խոսքեր, հետո կարծեմ ուզում էր թուևովորվել, բայց տարաբախտաբար դուրս եկավ այդ ժամանակ հատակի տակից հայացրած Մեֆիստոֆելը¹⁰⁹ (Գրիգորյան) միևնույն կրակներով, ինչպես խալալացոց Զառուսումն է դուրս գալիս։ Հետո այդ երկու պարսկները պատմեցին իրարու Զառուս օպերայի բովանդակության խոսքերը և հանկարծ բացվեցավ հետևի վարագույրը և երևաց դարձյալ հայացրած, բայց խալալացոց նման շարժվող Մարգարիտան (ա. Սաթևինի), նրանց քաների տակ։ Գուլիսներից լսվեցավ խալալական խմբի երգը։ Մեկ խոսքով հայերեն Զառուսը դուրս եկավ միևնույն խալալացոց Զառուսի նման, այն զանազանությամբ միայն, որ առաջնակարգ գեղերի կատարողները խոսում էին իրարու հետ հայերեն¹¹⁰։

Միտոզների ներկայացումն այդ երեկո մոտ 800 հուլի տվավ։ Հետո ավին կարծեմ դարձյալ երկու ներկայացում, որոնցից ըստ երևույթին չքափոր ուսանողներին պիտի Մար ծանրակշիռ գումար, բայց, ինչպես երևաց Մեղու լրագրի մեջ պ. Մամիկոնյանի տված հաշվից, ներկայացումները չէին ծածկել ծախսը և Պատվել էին մեկ քանի ուսուցիչ, որ իմ կարծիքով, ինչպես այդ ժամանակ ես հայտնեցի միևնույն լրագրի միջոցով¹¹¹, պիտի վճարեին Պետերբուրգի չքափոր ուսանողները։ Բայց նոքա շարին այդ և այդ պարտքը Մաց վճարելու սիրողների խմբին։

Այդ ներկայացումների տված Պատր նայ թատրոնական գազափարներին մինչև այսօր Մաց նախատինք հիշյալ սիրողների խղճի համար, որովհետև նոքա վճարելով 200 հուլի տվեց մեկ ներկայացումի համար, միջոց ավին թատրոնի վարչության այդ օրից պահանջել մեզանից միշտ այնքան գումար հայերեն ներկայացումների համար, որքան վճարել էին սիրողները։ Մինչդեռ 150 հուլի վճարելով՝ շատ անգամ չէինք կարողանում ծածկել մեր ծախսը։

Գ Ե Գ Ո

15

Էլի մեկ զոհ պիեսան բեմ հանելուց հետո, նորան մի քանի անգամ հաջողությամբ կրկնելուց, շատ անգամ Մուևգուկյանի հետ¹⁰⁰, կովելուց, խոսվելուց և հաջովելուց հետո, մի գեղեցիկ երեկո, երբ ճաշից հետո մենք շատ ուրախ արամադրված գնացինք զրոսենու Մուդուկի զատիվայրը և այնտեղից դարձանք նորա տանը թեյ խմելու, մեր խոսակցության նյութ հղավ Եկինտոներին, ըստ անցյալի՝ Եղամարինեբուհ¹⁰¹ էությունը, նրանց բնավորության մեջ գտնված ներքոնության արատհայտման ցանկությունը։

Այդ ժամանակ խոսք բացվեց հանգուցյալ Փուլինյանի Վուր արաբվիս, պիտի պսակվիս (Մուլիսի Բոնի ամուսնուրյան փոխադրությունը) պիեսայի մասին, որի մեջ իմ մի շնչին գերակատարությունն առանձին տպավորություն էր գործել Մուևգուկյանի վերա։

Հանգուցյալ Փուլինյանը անմահ Մուլիսի Լեկաստին վերափոխել էր մեր պսակարինների տիպերից մեկին և անվանել էր նորան Շամիր, որը

Հեկատոսի սպարապետները* փոխարեն, հայացրած յոթանասուևամյա Ազատ-
րեղիէն առաջարկում է յուր ծանրակշիւ բառուցքները:

Անա ինչ հանգամանքի տարթով վճռվեց գրել Պեպոն¹⁰², Գիշիրվան
սարքը խնդր է. ետարաբալա և էլի մեկ զոնի հեղինակը ձգտում էր առաջ
դնալ յուր հեղինակութեան առաջարկում, իսկ ես ձգտում էի դուրս կորզել,
նորա հեղինակութեան այդ ձգտումներից նոր դերերի ստեղծագործութիւն
մեր կենսական կյանքից:

16

1870-ի սկզբունքն էր: Բնարանը երկար ու բարակ քննելուց հետո
ու. Սունդուկյանը սկսեց իր սովորական թելադրութիւնը:

Այնուհետեւ ամեն որ ես գնում էի Սունդուկյանի մոտ, առնում էի
գրիչը ձեռքս և նստում էի սեղանի մոտ: Այդ տեսակ իմ վարմունքը քա-
ջախերում էր նորան և նա սկսում էր ոգեւորվել: Պիեսայի առաջին գործո-
ղութիւնը համարյա վերջացրել էինք, երբ փետրվարին նորա երեխայի
մահը ստիպեց մեզ դադարեցնել մեր աշխատանքը:

Հունիսի սկզբում Սունդուկյանը սեղագոյնից հրժանիս անվանված
այդեստանը և ահա այդտեղ շարունակվեց Պեպոնի գրութիւնը:

Այգու մեջ կար երկնաբկանի քաբաշին տուն մեղոնինով, որի փոք-
րիկ պատշգամբից և պատուհաններից բացվում էր տեսարան գեպի կանա-
չապարզ լեռը և նորա ստորոտում ձորի մեջ փռված այգիները:

Առաջտուները կանուխ, ժամի յոթին, մենք բարձրանում էինք այդ
մեղոնինը. այնտեղ ես նստում էի սեղանի մոտ, բաց դռան և պատուհան-
ների առաջ և, գրիչը ձեռքս առնելով, սպասում էի թելադրութեան: Սուն-
դուկյանը ճիմելով թելադրում էր, ես գրում էի: Պատահում էր, որ երբեմն
ամբողջ ժամերով Սունդուկյանը կանգ էր առնում և երբ նշուքը արգեն
մշակված էր համարում՝ մենք պարապում էինք մինչև ժամի երկուսը կամ
երեքը, և հաշիւուց հետո դարձաւ բարձրանում էինք և պարապում մինչև
գիշերվա ժամի 10—11-ը:

Այդ ժամանակամիջոցը թողել է իմ մեջ մի գեղեցիկ քաղցր հիշատակ,
չնայելով, որ երբեմն շատ դժվար էր լինում ինձ համար անաանելի չոգ
որերին ուղծով բարձրանալ այդ ամառանոցը, որը շատ բարձր գիրք ուներ:

Կիրակի օրերը կատարյալ տոնախմբութիւն էր Սունդուկյանի մոտ,
որովհետեւ այդ օրերը հաճաքում էին նորա մոտ զանազան հյուրեր և
ժամի երկուսից սկսվում էր խնջույքը և շարունակվում երբեմն մինչև
մթնանալը:

Վերջապէս հուլիս ամսվա սկզբում Պեպոն պատրաստվեցավ և այնու-
հետեւ ամառանոցից իջնելուն պէս սկսեցինք նորա փորձերը, սկզբում Սո-
փիա Մելիք-Նազարյանի բնակարանում, հետո իրան՝ Սունդուկյանի տանը:

Որովհետեւ Պեպոնի խաղի ժամանակ Սաթենիկը ժամանակավորապէս
հեռացած էր մեր խմբից, ուստի մենք ստիպված եղանք այդ պիեսայի
կանաչ գերերի համար որոնել երկու ուրիշ դերասանուհիներ: Շուշանի
(Պեպոնի մոր) դերը Քեթեան Արամյանին հանձնելուց հետո, Կեկելի դերը,
որը զբղած էր Սաթենիկի համար, տվինք Սոփիա Մելիք-Նազարյանի

* Մարտապետներ:

կրտսեր քրոջը՝ Նատալիային¹⁰² իսկ Արուսիկին կոչել՝ Էփեմիայի գերը — Ամերիկյանի քույր՝ Անայիսին¹⁰³։

Համարյա երկու ամիս փորձերը տեսցին։ Վերջապես զատկից հետո մենք քաղաքային թատրոնում ներկայացում տալու իրավունք ստացանք և ավելիք Պեպոմի։

Աֆրիյան գուրս գալուս պես ժողովուրդը հարձակվեց թատրոնի կասայի վերա։ Միևնույն օրը բոլոր տոմսակները ծախվեցին։

Խաբարալայից հետո վաղուց էր ևս այդպիսի բազմատեսակ հասարակության չէի տեսել հայերեն ներկայացումների ժամանակ։ Դերասաններս բոլորս էլ տոսանձին ողորդություն էինք զգում։

Բեմ գուրս գալուս պես դաշիճում բարձրացավ մի ազմկալից ծափահարություն, այնպես որ երկար ժամանակ չկարողացա սկսել իմ գերտկատարությունս։ Իսկ երբ առաջին արարվածի վառագույրը իջավ, դաշիճը դգրգաց հափշտակված բացականչություններով, սաստիկ ծափահարություններով։ Սուսդուկյանը վազեց բեմ և, չնայելով մեր լարված հարաբերություններին, ընկավ վզովս և, արտասուքը աչքերին, զգվեց, համբուրեց, հակառակ, գուրս քաշեց բեմ՝ միասին շնորհակալություն հայտնելու հասարակությանը։

Երկրորդ արարվածը միևնույն անսպասելի հաջողությունն ունեցավ, և Ամերիկյանը, որը խաղում էր Ջիմզիմովի գերը, գերազանցեց Գարասիմ Յակուլիչ Ջամբախովին։

Երրորդ արարվածի վերջը կես ժամ համարյա ժողովուրդը մնաց դաշիճի մեջ, միշտ բեմ գուրս կանչելով հեղինակին, որը առաջ գլուխ էր տալիս յուր օթյակին, բայց հետո եկավ բեմ և խմբով չբնականաբան՝ մի քանի անգամ բեմից հայտնեց յուր շնորհակալությունը։

Շատ անգամ էի ևս տեսել Սուսդուկյանին հուզված, բայց այդ գիշեր նա հուզմունքից ամբողջ մարմնով գոգում էր։

Այսպիսով՝ առաջին ներկայացմանը մասնակցում էին՝ Ջիմզիմովի գերում Ամերիկյանը, Դիքոյի գերում՝ Դևորգ Միրազյանը, Կակուլու գերում՝ Մելիք-Աղամյանը։

Հետևյալ ներկայացման ժամանակ այս անսամբում փոխվեցան կանացի գերակատարները։ Տ. Անայիսին փոխարինեց ա. Սոփիա Մելիք-Նազարյանը, Նատալիա Մելիք-Նազարյանին (բեմական կեղծ անունը Քաղուհի)՝ ա. Սաթենիկը։

Այդ երկու կանացի գերերի փոփոխությունը այնպիսի մի նոր կյանք տվեց պիեսային, որ մնացինք ապշած։ Երբեք չեմ մոռանալ, երբ երրորդ արարվածի սկզբում Սաթենիկը կիսաձայն, մեղմ, ազիտորմ, պկսեց երգել թե՛մ սրտին ազ ևս արել։ Ազարա Աղամի երգը։ Թատրոնի դաշիճը ամբողջապես լարված գրության մեջ գերասանուհուն լսում էր հետաքրքրությամբ։ Հասարակությունը նորա մոնոլոգի վերջը մնաց մի քանի ժամանակ անշարժ, հետո հանկարծ սթափվեց և սկսեց սաստիկ ծափահարել։

Այսպիսի անսպասելի հաջողությամբ վերջացավ Պեպոյի ներկայացումը, որով և հանձնվեցավ այդ պիեսան հայոց թատրոնի անպերտուարին ընդմիջում¹⁰⁵։

Յառուստ օպերետիայի նոր թատրոնական ուժ կազմող անձնավորու-
թյունները՝ Վահան Մամիկոնյան և ընկերություն, հետաքննող աշխատանքի
թուղթով հարգանքներով, թողնելով այն տխուր հետևանքը,
որի մասին ես տեսցի:

Եվ ահա մենք, գերասաններս, ուրիշ ոչ մի տեղում չգտնելով այն
բեմական հարձառությունները, որոնք համաձայն մեր սեպերատուարի կազ-
մակերպության, կային քաղաքային թատրոնում, ստիպվեցանք շարունա-
կել մեր ներկայացումները այնտեղ, շատ զգալի գումար վճարելով ամեն
մի ներկայացման համար:

Այս խմբի գլխավոր ուժերն էին՝ Սաթենիկը, Քեթևան Արամյանը,
իսկ երկրորդական դերերի համար ունեինք ծագումով հրեա երկու քույր՝
Ճոն Յրենի օպերետում¹⁰⁶, որոնք մի քանի տարի միայն մեր խաղերին
մասնակցելուց հետո հետաքննող ընտրություն Դերասանների ուժերն էին՝
Ամերիկյան, Միրազյան, և և ուրիշները, որոնցից Ավայանը երկրոր-
դական դերերի մեջ բեմ նոր դուրս գալով՝ ապագայում, Միրազյանի և
Ամերիկյանի մահից հետո, քանից հաջողություններ նորանց տեղը:

Չնայելով խմբի այդ տեսակ կազմակերպությանը, ես առաջարկեցի
ընկերներիս բազմապիսի գերակատարների թիվը նոր, թարմ ուժերով և
հրաժիրի մեկ ղեկավարելու այնպիսի մի անձնավորություն, որ վայելիս
լինեի այն ժամանակվա համալսարանական երիտասարդների համակրու-
թյունը:

Ամերիկյանը սկզբում չէր համաձայնում, որ խմբի ղեկավարությունը
ևս ուրիշի ձեռքն հանձնելի, թեև իմ ղեկավարությանս օգնությամբ և ապ-
րդիան հետ, պիտի խոստովանեմ, շատ անգամ այնպիսի քայլերի էր գի-
շում, որ ես խիստ հուսահատությունիցս չէի խմանում ինչ անել: Բայց
նա ի վերջո համաձայնվեց և մենք երկուսով, խմբի համաձայնությամբ,
գլխավորեցինք Ռուբեն Ջալալյանին, որ ազնիվ և վառ հոգով հայ համալսարա-
նական երիտասարդ էր և իմ վաղեմի բարեկամս: Նա այդ ժամանակ գտնե-
վում էր Թիֆլիսում և պարապում էր փաստաբանությունով:

Ջալալյանը ընդունեց մեր առաջարկությունը, պայմանաբանելով, որ
ևս աշակցեմ նորան, և մինչև անգամ հայտնեց յուր պատրաստությունը
հարկավոր եղած ժամանակ գերակատարություն հանձն առնելու:

Կազմեցինք սեպերատուար հետևյալ պիեսներից. Արշակ Բ., Գոհ Սեզար
դը Բազալ, Ռիչելին, Պեպո և էլի մեկ զոհ, Գալիլեի դատաստանը¹⁰⁷ իմ
թարգմ. և ուրիշ խաղեր, որոնք հիմա չեմ հիշում:

Սկսեցինք փորձերը Ռուբեն Ջալալյանի եղբոր՝ Արշակի տնօրինու-
թյան տակ եղած Վարդիչ Նյուրանցում:

Սկզբում ամեն բան կարգին էր գնում, բայց հանկարծ մի երեկո, երբ
ևս փորձին ներկա չէի, չգիտեմ ի՞նչ պատճառով, Ռուբեն Ջալալյանի և
Ամերիկյանի մեջ մի ստատիկ անբավականություն է պատահում, որից
հետո Ջալալյանը վճռապես հրաժարվեց մեր խմբի գործունեությունը մաս-
նակցելուց:

Հիմա ես չեմ հիշում այդ անբավականության պատճառը, միայն

առաջանը լավ միտա է, որ մյուս օրը, երբ եկա խնդրելու Ռուբենից, որ նա ետ առնի յուր վեճոքը, նա ինձ պատասխանեց.

— Դեհորդ, իզուր մի խնդրիր, իմ գործս չէ... Շարունակիր, ինչպես տալիս ես գործը մինչև այսօր, և ես կողմակի պատրաստ եմ ամեն կերպով աջակցելու քեզ:

Եվ հշմարիտ, հետագայում Ռուբեն Զաւայանը, համակրելով իմ ձեռնարկներին, մասնակցեց, անգամ խաղալով մեր խմբի մեջ մեկ քանի պիեսաներում, որի մասին կիսուսեմ հետո: Իսկ առայժմ, առաջ, քան թե շարունակեմ մեր խմբի գործունեությունը, պարտք եմ համարում հիշել, թե ինչպես գրվեցավ Սունդուկյանի Փանդած օջախ պիեսան, և թե ինչու նա այն ժամանակ չմտավ մեր ակադեմիայի մեջ:

ՔԱՆԴԱՍ ՕՋԱԽ

18

Պետքն մեկ քանի անգամ ներկայացնելուց հետո, թեև մեր հարաբերությունները դարձյալ լարվեցին Սունդուկյանի հետ, բայց որովհետեւ ինձ արգելեւ հայտնի էր հեղինակի գիտավորությունը՝ գրել Փանդած օջախ անունով մի նոր պիեսա, որի նյութն արգեն մշակված էր և նախագիծը որոշված, և լավ իմանալով, որ նա՝ հեղինակը միայն թելադրությամբ կարող էր թղթի անցկացնել մշակված նյութը, և ուղարկեցի նորա մոտ Կրծաձիւ, իմ ազգական Հովհաննէս Տեր-Գրիգորյանին, որը այդ ժամանակ նոր էր սկսել կրել Մշակ լրագրի աշխատակցի անունը, պատվիրելով, որ նա հայտնի Սունդուկյանին, թե պատրաստ է գրել հեղինակի թելադրությամբ, և որ ինձանից է տեղեկացել այդ տեսակ պարագմունքի եղանակի մասին¹⁰⁸:

Այդ ամառվա ժամանակամիջոցում պատրաստվեց Փանդած օջախը, որը և ներկայացվեցավ առաջին անգամ 1873 ապրիլի 19-ին Թիֆլիսի քաղաքային թատրոնում, թատերասերների խմբով, հագուստ չգիտեմ ինչ բարեգործական նպատակի:

Թեև ներկայացումը շնորհիվ կանացի գերակատարների բազմության և մի քանիսի գերերի ոգին ըմբռնելուց շատ հաջող անցավ, բայց չգտաւ մարդիկ խաղի մեջ այն կոկիկությունը, անսամբլի միությունը, որը ես հասկանում էի: Ինքը՝ Սունդուկյանը շատ գոհ էր:

Այդ պիեսայի գլխավոր հերոսի գերը գրված էր ինձ համար և ես կարծում էի, որ առաջին ներկայացման համար հեղինակը չի համաձայնի առանց իմ մասնակցության տալ այդ խաղը: Բայց իրողությունը կատարվեց և ինձ հաջողվեց միայն երկու տարուց հետո խաղալ այդ պիեսան մեր խմբի ուսերով¹⁰⁹:

ՄԻՔԱՅՆԷԼ ԲԵՀՐՈՒԹՅԱՆ

19

Այդ միջոցին Արշակ Զաւայանի հյուրանոցը դառել էր մի տեսակ մոդովարան, ուր հավաքվում էինք թե մենք, գերասաններս և թե նորեկ ուսումնավարտ համալսարանական երիտասարդությունը: Իսկ ինձ համար այդ հյուրանոցը փոխարինում էր իմ քնակարանիս, որովհետեւ միշտ զբաղված լինելով թե թատրոնի և թե քաղաքային հոգաշափի պաշտոնով,

որի ծառայութան տեղը կից էր այդ հյուրանոցին, ինձ շատ սակավ էր պատահում դառնալ կուկիա անվանված թաղը՝ իմ բնակարանս։ Ես մի տեսակ մշտնջենական հյուր էի գարձել այդ հյուրանոցում։

Մի անգամ, երբ Ամերիկյանն ու ես պատրաստվում էինք ճաշելու այդպեղ, ներս մտավ մի երիտասարդ, փայլուն հագուստով, կարճահասակ, ակնոցակիր ինժեներ, որը մոտեցավ մեզ և առաջարկելով յուր ծանոթութունը, խնդրեց առանձնանալ մի ուրիշ սենյակ և ճաշել միասին։

Այդ տեսակ տարօրինակ ծանոթությունը թեև փոքր ինչ խորթ թվեցավ, այնուամենայնիվ մենք ընդունեցինք նորա առաջարկությունը և մասնաճիւղ մի առանձին սենյակ, ուր մտնելուն պես երիտասարդ պարոնը առանց մի խոսք տալու հանեց յուր պաշտոնագրեւորը և դիմեց մեզ.

— Իմ ազգանունս է Բեհրության։

Մենք առինք մերը.

— Ես ևնզ ճանաչում եմ,—ընդհատեց իշխանը։—Эй, человек!—բաց նա.

Մտավ ծառան, որին հրամայեց խնդել սեղան բանալ և պատվիրեց օդի, մի քանի շիշ գինի և կերակուր բերել։

Նստեցինք և սկսեցինք ճաշել. Բեհրությանն աջալիսի մի տխրածկով էր ուտում ու խմում, որ կարելի էր կարծել, թե մի քանի օր բերունը ոչինչ չէր գրած.

— Ես պիտի ասեմ ևնզ,—բացվեց մեր իշխանը, շարունակելով ուտել և լցնել մեր բաժակները գինով,—որ սաստիկ թատրոնամուլ եմ և շատ եմ համակրում ևնզ գործունեությունը,—և խնդում դառնալով ինձ, շարունակեց.

— Ձեզ, պարոն Չմկյան, շատ անվայել է մորուք կրելը։

Ես այդ ժամանակ մորուք էի կրում, և գերասանությունս առաջին օրից միշտ մորուքով էի բեմ գուրս եկել։

— Ճշմարիտ է, բայց...

— Ի՞նչ բայց,—կարեց խոսքս իշխանը,—գերասանը մորուքով դա աններելի հանցանք է։ Եվ միջին կարելի է, օրինակ՝ Ռիշելիեն ներկայացնել մորուքով։

Մենք փորձում էինք այդ ժամանակ Ռիշելիեն նորից ներկայացնելու համար։

— Ճշմարիտ է,—վստահացա ես արդարանալ,—բայց ես մորուքիս համեմատ և գրիմ եմ շինում, աշխատելով միևնույն ժամանակ ճիշտ լինել ներկայացման անձնավորության տիպոսին։

— Глупости,—առաջացավ իշխանս և խնդալիցով իմ կենացս, պահանջեց անիլել մորուքս և աշուղես ներկայացնել Ռիշելիեն։

Ենթարկվեցի և այդ օրից ընդմիշտ թողի մորուք կրելու սովորությունս.

Ահա ինչպիսի սկզբեց մեր ծանոթությունը Կովկասի ճանապարհների հաղորդակցության ինժեներ, կայսառ Բեհրությանի հետ, որն այնուհետև դառավ մեր և հայ թատրոնի ամենամտերիմ բարեկամներից մեկը և որը միշտ համարյա ներկա էր դանդում մեր փորձերին և երբեմն շատ խելացի և օգտակար խորհուրդներ էր տալիս մեզ։ Նա հայերեն չգիտեր, բայց ճիշդ էր թափում սովորել և, գանգվելով ամեն օր մեզ հետ, գարձել էր մեր խմբի անհրաժեշտ անդամ։ Նա սիրում էր և հաճախում բեմը և, իբրև

հրդայալ թատերասեր, աշակցում էր մեր թատրոնական գործունեությանը, նա գրեց մի քանի հոգեմաներ այն ժամանակվա հայ թատրոնի մասին, որոնց մեջ խրախուսում էր գերասաններին չնուսահալուցից և առաջ տանել գործն արիությանը:

Իր քանի անգամ նա ժամանակեց մեր ներկայացուցիչներին յուր շնորհայի գերակատարությունով, արհամարհելով յուր դաստիարակի մարդկանց նախադաշարմունքը զեպի բնական արհեստը¹¹⁰,

Որոշ ժամանակից հետո իշխան Բենրուքյանը այնպիսի մի ծառայություն մատուցեց հայ թատրոնական բեմին մի շարք պիեսների հրատարակությամբ, որ հաժիտնական հիշատակ թողեց հայ թատրոնի պատմության էջերի մեջ¹¹¹:

Եթե Բենրուքյանն ընդմիջում ևնային Թիֆլիսում, նա շատ կնպաստեր թատրոնական գործին: Բայց, ավելի, նա սթիպենդի էր հետանալ Ռուսիայի խորքը:

20

Ամերիկյանի և Ռուսոնի Զալայանի հետ անբաժանականություն ունենալուց հետո, մենք տեղափոխեցինք մեր փորձերը գերասաններից մեկի՝ Մահակ Ադիրեգ-Մելիքջանի բնակարանը, որ գտնվում էր քաղաքային թատրոնի մոտ:

Մոռացա հիշել այստեղ մի անձնավորություն, որ շատ օգտավոր անգամ դարձավ մեր խորին: Դա էր Նիկողայոս Ամիրազյան¹¹² ազգանունով մի շնորհալի ազնիվ երիտասարդ, որը շատ անգամ վառատակնական գործով այցելել էր արտասահմանի զանազան մեծ քաղաքներ, առավել ևս Փարիզ, և որտեղ այցելելով թատրոնական ներկայացուցիչները՝ ըմբռնել էր բնական զանազան կարգադրությունների եղանակը: Ահա այդ երիտասարդին հրավիրեցի հանձն առնել սցենարիոստի-բեմական կարգապահի պաշտոնը: Այնուհետև նախ իմ լուծա փոքր ինչ թեթևացավ և հետո, նորա հոսանքուն գործունեության շնորհիվ, մեր ներկայացուցիչները շատ կանոնավոր և մեծ հաջողությամբ էին պատկերառում բեմի վերա:

Մահակի տանը առաջին փորձը սկսեցինք Գալֆայանի Արշակ Բ. ողբերգությունից, որի մեջ առաջին անգամ մտցրի կանացի անձնավորություն, այն է՝ բանտապետի որդու դերը՝ տալով Մաթենիկին¹¹³, իսկ մյուս գերերից՝ օրինակ, պարսից խոտասիրտ զորապետ Ալանոզանի դերը հանձնելով Ավայայանին, որի ամպլուան միշտ համարվում էր կոմիկի ամպլուա: Մտցնելով խաղի մեջ հայ երիտասարդներից և խալական օպերայից Մառյան խորիտներից՝ կազմված երգեցիկ խումբ, այդ ողբերգությունը, որն առաջ միշտ չոր ու ցամաք բան էր դուրս գալիս, կատարյալ ֆուրոր արավ, նամանավանդ Մաթենիկի և Ավայանի գերերը:

Այս վերջինի գերակատարությունն այնքան բնական, խիստ և տանելի դուրս եկավ, որ զալներեց հաճախ բարձրաձայն հիշողներ էին ուղղելով Ավայանի հասցեին նորա համար, որ նա այնքան անգթությամբ է վարվում հայոց արքա Արշակի հետ:

Այսպես հաջողությամբ սկսելով 1873—74 թվականների սեզոնը, մենք հրկու չորսթիվ մեկ անգամ ավելի մի շարք փոռավոր ներկայացուցիչներ, որը տեղի մինչև Վարդանաց պատերազմի հիշատակի օրը, բարեկենդանի

հինգշաբթին, որի առաջնաը և մենք հիմք դրինք՝ հետագայում այդ քրք-
միշտ տոնել հայերեն ներկայացուցումով:

Ա Վ Ա Ջ Ա Կ Ն Ե Ր

21

Քաարոնական գործունեության մեջ, ուսաց երեւի կրթական Բե-
լինսկու՝ քառասնական թվականների հայտնի գերասան Մաշալովի խաղի քըն-
նագատության ազդեցության տակ, որի (Մաշալովի) Կարլ Մոորի խաղը Ավա-
զակների մեջ Բելինսկին յուրյան սեփական բանաստեղծական հափշտակու-
թյունով է նկարագրում¹¹⁴, եւ համեմատ էի իմ ուսմ փորձել այդ պիե-
սայի հերոսների Ֆրանցի կամ Կարլոսի գերի մեջ, Այդ նպատակով դեռ
վաթասնական թվականներին, չեմ հիշում որ տարին, եւ խնդրեցի մեր
այն ժամանակվա հայ Քաարոնի գործունեության վետերան-նկրինսկի և
Քարլ խաղացողի կյանք պիեսայի Քարգամանիշ Միքայել Պատկանյանին՝
Քարգամանել ինձ համար այդ պիեսայի այն տեսաբանը, որտեղ Ֆրանց
Մոորը, խզհի տանջանքի ազդեցության տակ, խնդում է իրան:

Ինչ-ինչ պատճառներով չհաջողվեց ներկայացնել այդ կտորը, մինչև
որ Ավազակներն ամբողջությամբ Քարգամանեց, զարձալ իմ խնդրանք,
իմ երիտասարդ բարեկամներիցս մեկը, Ն. Լալայանը, և որի մեջ եւ հե-
տո վեր առա Կարլոս Մոորի գերը, հանձնելով Ֆրանցինը Ամերիկյանին:

Մեծ պատիւ վերցրի Լալայանից նորա Քարգամանությանը և կրճա-
տելով պիեսան համաձայն մեր խմբի ուժին, հրավիրեցի ընկերներին ինձ
ձոտ, բացառութեցի պիեսայի ամեն մեկ անձնավորության նշանակությունը
և բաժանեցինք գերերն այսպես:

Մերունի Մոորինը ավինք Ջարթեղյանին, Ամալիայինը, Կարլոսի
նշանածինը՝ Սաթնիկին, Ֆրանցինը՝ Ամերիկյանին, Կարլոսինը՝ ինձ,
Շվեյցերինը՝ Ավայանին, Պատերինը՝ Սահակ Աղիբեդ-Մելիքյանին, և այլն:

Սկզբում փորձերն ինձ ձոտ էին լինում, իսկ մեծ պատի վերջերում
անցանք քաղաքային Քաարոնի բեմը:

Այստեղ չեմ կարող չհիշել մի ծիծաղաշարժ անցք, որ տեղի ունե-
ցավ փորձերի առաջին իսկ օրից և որը Ֆրանց իբրեւ աննկզատական հիշո-
ղություն այդ պիեսայում մասնակցողներին համար:

Պատերի գերը, ինչպես ասացի վերեւ, հանձնեցինք Սահակին, իմ հին
բարեկամ, Քաարոնի անձնանվեր աշխատակիցներից մեկին, որի համար
Քաարոնից ստացած վարձատրությանը երբեք նշանակությանը չուներ և
որը մինչև օրս էլ Ֆրանց է միշտ անկեղծ բարեկամ հայ Քաարոնին, և
պատրաստ, հարկավոր եղած ժամանակ, հանձն տոնել ամեն տեսակ դե-
բաղատարության:

Այն տեսաբանում, որտեղ Պատերը, կառավարության կողմից ուղարկ-
ված լինելով Կարլոս ավագապետի ձոտ, սորան համոզում է անձնա-
տուր լինել, Սահակ բարեկամս հանդիմանելով ինձ, իբրեւ ավագանիներ
արյունաբերու խմբապետի, արտասանում էր այսպես՝

— Դու արյունաբերու խմբապետ:

Ամեն անգամ փորձի ժամանակ, եւ ուղղում էի այդ շարաքախո-
տ խնդապետը խմբապետի, բայց միշտ ներկայացման ժամանակ, քանի խո-
ղացել ենք այդ պիեսան, խմբապետը զարձալ Ֆրանց էր խնդապետ:

Միայն զերջին տեղամ, կարծեմ ապրիլի 29-ին 1873 թ., երբ կրկնեցինք Քիֆլիսի ամատային թատրոնում, ևս սպասնացա Սահակին, որ բնմի իսկ զերա ևս նորա անխճալ ժենդապետը և կուզեմ խմբապետի, բռնելով նորա մորուքից:

Սահակը մտածեց և խոստացավ ներկայացման գիշերն անպատճառ խմբապետ արտասանել:

Հասանք այդ տեսարանին. լարված սպասում էի, որ Սահակը իսկույն բզուրս կտրաքաղենք յուր ժենդապետը, և ինչքան մեծ եղավ իմ դարձանքն, երբ նա, շփելով յուր փառավոր մորուքը, մեծ ապլումբով, հայացքն ուղղելով աչքերիս մեջ, ճշաց:

— Դու արյունարբու խմբապետ:

Միծաղը քիչ էր Ֆուս մեծ խեղդեր:

— Այո՛,— կրկնեց Սահակը,— դու կախաղանի կերակուր խմբապետ...— և այնպես սաստիկ էր շեշտում այդ զերջին բառը վանկը, որ ամբողջ խումբը քիչ էր Ֆուս միծաղի ճիշ բարձրացներ:

Դառնանք գործին:

Շատ ցավում եմ, որ Ավագակմերի առաջին ներկայացման աֆիշան չուներ և ճշտությամբ չեմ հիշում նորա ներկայացման օրը¹¹⁶:

Դահլիճում ահագին բազմություն կար, բողկացած Քիֆլիսի զանազան ազգությանց ինտելիգենտ գասակարգերից. բնմի կուլիսները խցկված էին ուս և գերասաններով: Այդ ամենը այն աստիճան ողորել էր մեր գերասաններին, որ մեզանից ամեն մի գերակատար իրան այդ գիշերվա ներսն էր համարում:

Ամերիկյանը գերազանցեց իրան, Սաթենիկը յուր փոքրիկ դերով ազմկալի ծափահարություն բարձրացրեց, և ամբողջ ներկայացումը մեզ, գերասաններին համար դառավ մի տեսակ հաղթության տրոֆեյ: Այնուհետև Ավագակմերը Ֆուս մեր սեպերառարում, հաջորդություն գանելով թե ներկայացման և թե մուսաքի կողմից:

Իսկ մեր այն ժամանակվա լրագրությունը՝ Մշակը և հանգուցյալ Մեղում՝ դարձյալ բազմականացան յուրյանց քննադատության սոփոքական լսելոնական ռոնով՝ բայիսնչ գերասանը լավ խաղաց, այնինչ գերասանը վատ, և պրծավ:

Այս ներկայացումից հետո մենք տվինք Շուշանիկ ողորդությունը հօգուտ Քիթևան Արամյանի¹¹⁸ և նա հեռացավ Քութայիս, որտեղ և ամուսնացավ Սմբատ Կարինյանի հետ:

ՃԱՆԱԳԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԻ

22

Փոխանակ ամառվա չոգերին Քիֆլիսում տեղործ Ֆուս, ևս առաջարկեցի խմբին այցելել Գորի և տալ այնտեղ մի երկու ներկայացում:

Նվ որովհետև միակ գերասանուհի Սաթենիկով դժվար էր գործ տեսնել, զեռեցինք հեռագրել Քութայիս՝ Արամյանին, որ նա ևս զա Գորի, մասնակցելու մեր երկու ներկայացումներին:

Նվ ահա հայ թատրոնական խումբը հունիս ամսին, եթե չեմ սխալվում, բողկացած մուսավորապես տասն և չորս անձերից, ուղևորվեց Գորի,

ուր մի քանի օր առաջ գնալով՝ եւ պատրաստեցի սենյակներ խմբի համար Գորու միջուհար հյուրանոցում:

Մենք Շուշանիկ ողբերգությունը, ամբողջապես թե մի կտոր, չեմ հիշում, ներկայացրինք Տեր-Ստեփանյանի վրացերեն թարգմանությամբ, որը համալսարանական կրթության տեր անձն լինելով՝ մեզ շատ նպաստեց մեր գործունեության մեջ:

Առհասարակ Գորի կատարած ճանապարհորդությունը անօգուտ եղավ խմբի համար, որը և շուտով դարձավ Թիֆլիս, բայց Սաթենիկից, Քեթևան Արամյանից և Ամերիկյանից, որոնք վճռեցին գնալ Քութայիս և այնտեղ եւ հաջողացնել մի երկու ներկայացում:

Եվ որովհետեւ եւ ծառայության պատճառով անկարող էի հետեւել ընկերներին, ուստի Մաքսիմ խմբի հետ դարձաւ Թիֆլիս¹¹⁷, Քութայիսում հաջողվել էր նորանց երկու թե երեք ներկայացում տալ՝ հայերեն և վրացերեն լեզվով խառն՝ և Սաթենիկը Շուշանիկի վրացերեն ղերակատարությամբ, իսկ Քեթևանը վոգելիների մեջ մեծ հաջողություն էին ունեցել: Օգտատու ամսին Քութայիսից վերադարձան Սաթենիկն ու Ամերիկյանը և մենք վճռեցինք պատրաստություն տեսնել ձեռքս սեղոնի համար:

ԱՊՐԱՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵՐ ԴԱՇԻՆՔԸ

23

Մենք վճռել էինք այդ տարի մի քանի կանոնավոր և հաջողակ ներկայացումներ տալուց հետո կազմել մի փոքրիկ կոկիկ խումբ և գնալ Գոլիս: Խումբը, կամ ավելի լավ է ասել՝ ընկերությունը պիտի կազմված լիներ Սաթենիկից, Արամյանից, Ամերիկյանից, Ավայանից և ինձանից, Մաքսիմ հարկավոր եղած անձնավորությունները վարձով պիտի լինեին:

Այս նպատակով մենք կազմեցինք մի շարք ներկայացումներ ձրադիր և սկեսերինք փորձերը՝ սկզբում Սաթենիկի բնակարանում, հետո ուրիշների մոտ:

Այդ սեզոնին տրված նշանավոր ներկայացումներից էին Քուլթ խաղացողի կյանքը, որի մեջ Ամայիսայի՝ թուզթ խաղացող Ժորժի կնոջ գերում Սաթենիկն այնպիսի մեծ հաջողություն ունեցավ, որ նորանից առաջ այդ գերը կատարողներից ոչ մեկը չէր ունեցել:

Հետո նմանապես մեծ հաջողությամբ նա կատարեց մեծ քաղաքագետ և հայրենասեր Ռիչլիյի Նոբելավակի գերը:

Առհասարակ այդ սեզոնում տրված ներկայացումներին մի առանձին կենդանություն և այլույժ տվող Սաթենիկն էր, թե յուր զգայուն խաղովը և թե յուր երգեցողությամբ, ինչպես Տրովատորից¹¹⁸ Ադուլենայի «Ո՛հ, այդ խառնչի բոցը», միևնույն օպերայից կոնտրալտոյի մասից մի ուրիշ կտոր, «Եթե նույն», և այլն, որը նա կատարեց թատրոնի օրկեստրի ներգաղնակությամբ:

Երբորդ թե չորրորդ խաղից հետո Ամերիկյանը հանկարծ պաշանջեց տալ նորա օգտին մի ներկայացում, պատճառաբանելով, որ նա փոխել է իր դրամավորությունը մեզ հետ միասին այցելելու Գոլիս, և որ առավել օգտավետ է համարում ընկերության համար, որ նախ ինքը միայնակ գնա, ծանոթանա այնտեղի հանցամանքներին և ապա մեզ մանրամասն տեղեկություն տա, որ հետո մենք կարողանանք մեր գնալն-չգնալն վճռել:



Գեօրգ Զճէկյանը 1870-ական թվականներին





Մկրտիչ Ազատյանը երիտասարդ հասակում

Այս բանը ինձ սաստիկ վրդովեց, բայց ընկերներիս հետ խորհրդակցելուց հետո, վճռեցինք տալ նորան յուր ուզած ներկայացումը և այնուհետև շարունակել մեր գործը մինչև սեզոնի վերջը:

Ամերիկյանը խնդրեց յուր ներկայացման համար Այքեզ ոյթիմ, հանդուցյալ Երեցփոխյանի՝ Մոսկվայի հայ վաճառականների կյանքից գրած հաղորատրով վոդեկիլը, որի մեջ լվացարար Ակուլինայի գերը կատարեց Յոն Բրենսբը, ինչպես և Ավագակնիքից Ֆրանց Մոորի կախվելու տեսարանը: Վերջում արվեց զանազան երգերից և արտասանություններից կազմված զավեշտ:

Այդ ներկայացումից Ամերիկյանը վերցրեց մոտ 200 ռուբլի, որով և չառապարհ ընկավ գեպի Պոլիս¹¹⁹:

24

Քեկ ըստ լատինական առածի՝ մեռածների մասին կամ լավը պետք է հիշել կամ ոչինչ, բայց այնուամենայնիվ ես պարտք եմ համարում կանոց առնել իմ մեռած ընկերոջս վերա և խոստովանիլ միայն ճշմարտությունը, որի արտահայտությունը գուցե իմ մահից հետո Մեա անհայտ:

Շատ անգամ ես հայտնել եմ այն կարծիքը, եթե Ամերիկյանը մի ուրիշ, առավել լուսավոր ազգի սերունդից լիներ և ունենար բարձր կրթություն, գուցե նա գերասանությունից առավել մեծ գործունեության ապագա ունենար:

Ամերիկյանը մի խելոք, եռանդոտ և վերին աստիճանի հեռատես անձնավորություն էր:

Դերասանությունը նորա համար բացի այն՝ որ զապափարի նվիրման մի պարագայումն էր, նաև գործիք էր ապրուստի և միջոց ժողովրդականություն ստանալու: Եվ եթե այս վերջին նորա երկու ձգտումներին պատահում էին խոչընդոտներ, նա ամեն տեսակ միջոցների գիմելով՝ աշխատում էր հեռացնել նորանց:

Եթե պատահում էր, որ ես հասկանում էի նորա գիտավորությունը և իմ քնական կոշտ պարզամտությունովս հանգիստանում էի նորան, նա այդ չէր մոռանում և սկզբում թեև զիջում էր անում, բայց հետո մի այնպիսի անսպասելի հարված էր հասցնում, որ ես Մեռնում էի շվարած:

Շատ օրինակներից ես հիշում եմ մեկը, որ երբեք չեմ կարող մոռանալ:

Ինչպես ասացի, Ամերիկյանը ավեց յուր վերջին խաղը և այնուհետև պիտի հեռանար Պոլիս: Կարծում էր, որ իրա հեռանալով խուճբը ես պիտի դադարի գործելուց, զրկվելով այնպիսի մի զորեղ ուժից, ինչպիսին ինքն էր, բայց տեսավ, որ ես մտադիր եմ առանց իրան ես շարունակելու մեր խաղերը¹²⁰:

Գրիգոր Իզմիրյանը մի հացկերույթ ավեց, ուր հրավիրված էին Մշակի խմբագիր Գրիգոր Աբծրունին, իշխան Միքայել Բեհրությանը, Սուեզուկյանը և ուրիշ շատերը, որոնց անունները այժմ ես չեմ հիշում, և վերջապես Ամերիկյանը և ես:

Ճաշի ժամանակ կենացներ առաջարկելու միջոցին իշխան Բեհրությանը մի անասի ակնարկությունով, ինչպես ինձ թվաց, շոշափեց Ամերիկյանի՝ իբրև գերասան մարզու արժանավորությունը:

Ամերիկյանը, որ այդ մամանակնստան էր կողքիս, փափաց ականջիս: — Գեներգ, դու պիտի պաշտպանես ընկերոջդ պատիվը:

Ես զրդովեցի սաստիկ և ըողոցեցի Բեհրուժյանի հայտնած կարծիքի դեմ իմ ընկերոջ վերաբերյալ: Քանի զնաց մեր խոսակցությունը տաքացավ, որի միջոցին Ամերիկյանը չէր դադարում ինձ գրգռելուց... Հետգնահե խոսակցությունը փոխվեց վեճարանության և հասավ անձնականի:

Հետևանքն այն եղավ, որ ես ճաշից հետո խնդույն դուրս գնացի, իսկ Ամերիկյանը մնաց նորանց հետ: Մյուս օրը այդպիսով կտրվեց իմ ծանոթությունն Քատրոնի ըողոր վերոնիշյալ ջերմ բարեկամների հետ:

Հետո... խոսու էհիշողություն... Մյուս օրը Ամերիկյանը գնացել էր ամեն մեկի մոտ այցելության, արդարացրել էր յուր պնդման և մեղադրել ինձ իմ կողքիս վարժունքիս համար:

Ամերիկյանի հետանալուց հետո երեսն եկան երկու նշանավոր ումեր, այն է՝ Ավայյանը, որը, եթե ոչ իրովին, գոնյա մասամբ փոխարինեց նորան և Ամիրան Մանդինյանը, որ իրեն լավ կրթված երիտասարդ և շնորհալի կոմիկական գերասան հայանվեցավ մեր փոքրիկ խմբի մեջ:

Ինձ մնում էր հիմա կազմակերպել խումբը, որոշել սեպերատուսը համեմատ մեր ումերին և գտնել մի հարմարավոր դահլիճ ներկայացումների համար:

Գաղափային Քատրոնը այդ մամանակ կապալով վերցրած ունեին Յարլոնդին անունով ամուսինները¹²¹։ Ուստի ես ստիպվեցա դիմել գերմանական տիլեմբի վարչության, որը գտնվում էր Գոյովինսկի պողոտայի վերա Չիթախովի աներում, և որը ուներ բավականին լավ հարմարացրած փոքրիկ բեմ և ընդարձակ դահլիճ:

Սկսեցինք այնտեղ մեր ներկայացումները հոկտեմբերի մեկից, վճարելով ամեն անգամի համար, հիսունական թուրքի դահլիճի վարձ:

Կանացի ումերը կազմում էին ա. Մաթևոսիկ, օր. օր. քույրեր Շամիրամ (հետո Ավայյանի ամուսինը) և Մանդինյան¹²², իսկ տղամարդկանցից պիսովոր ումերն էին՝ Ա. Մանդինյան, Ավայյան և ես:

Այդտեղ, այդ փոքրիկ բեմի վերա մենք ալիքն առաջին անգամ Կանանց կրքարամ Մոլիեռի կոմեդիայի իմ թարգմանությունս¹²³, կրկնեցինք մեծ հաջողությամբ Քալք խաղացողի կյանքը, Պեպո, Փանդած օբախ, Վենետիկի վաճառական և այլն: Այնպես որ այդ սեզոնի ընթացքում մենք կարողացանք առաջ տաններկու ներկայացում, առանալով միշտ բավարար մուտք:

Այդ մամանակամիջոցին երեսն եկավ Տեր-Դավթյանի գերասանական ընդունակությունը, որի խաղից ես հափշտակվելով՝ գուշակում էի նորա համար աղագայում աաղանդավոր գերասանի համբավ:

Այդ սեզոնով վերջացավ թե խմբի կանոնավոր գոյությունը և թե համերաշխի զործունեությունը: Մեծ պատից սկսած՝ խմբի անդամները ցրվեցին դեռ ու զեն: Պատահում էր, որ մի քանի հոգի խմբվում էին Թիֆլիս, գարձյալ աալխ էին մի քանի ներկայացումներ իրանց անձնական կարիքը հոգալու համար:

Ահա թե ինչպես հայ թատրոնական խումբը, սկսելով յուր զործունեությունը 1863 թվականից մի քանի անձան տեղական պիեսաներով, առանչորս տարվա ընթացքում, առանց որեւէ նյութական միջոցի անընդ-

հաստ գործելով՝ համեմատ յուր ուժերին կազմեց ապագայում մի համեմատ, բայց նշանավոր սեպերառւար:

ՊԵՊՈՅԻ ՎՐԱՅ ԲԵՄ ՀԱՆՆԵՐ

25

Մի քանի զարգացած վրաց երիտասարդներ, որոնց պարագլուխները պիտի համարել այն ժամանակվա Դրոնքա անվանված վրաց լրագրի խմբագրի Գեորգի Ծերեթելուն և բանաստեղծ Ալիկի Ծերեթելուն, սկսեցին զբաղվի իրանց թատրոնի վերանորոգությունով¹³⁴։ Բայց որովհետեւ հին վրաց կանոնավորված խումբն արդեն ցրվել էր, ուստի երիտասարդները իրանց միջի տնջվական երիտասարդներից խումբ կազմեցին։ Մի քանի ներկայացուցիչներ տալուց հետո¹³⁵ վրաց խումբը դարձյալ դադարեց գործելուց։

1875 թվականին¹³⁶, երբ մեր թատրոնի գործն էլ դադարել էր կանոնավոր ընթացք ունենալուց, կազմվեց Թիֆլիսում դարձյալ մի նոր խումբ, որոնց պարագլուխներն էին վրաց հայտնի, գործունյա և եռանդոտ գործիչ, բարձր դիրք ունեցող աստիճանավոր Դիմիտրի Դիպիանու աղջիկը և աղան¹³⁷։, որոնց հոր սպանումը Ստավրոպոլում Թեոֆիլ Գաղտնիքով պատած մի եղելություն։

Դրանք գիմել էին Սուևդուկյանին՝ խնդրելով, որ նա յուրյանց բեմի համար թույլ տա թարգմանելու Պեպոն վրացերեն։

Սուևդուկյանը հանձն էր առել թարգմանելու ինքը յուր հեղինակությունը, օգնությամբ վրաց դրականության հայտնի գործիչ իշխան Էրիստովի։

Երբ թարգմանությունը պատրաստ է լինում, նորանք Պեպոյի երկ-րորդական դերերը իրանց մեջ բաժանելուց հետո՝ խնդրում են Սուևդուկյանին գիմել ինձ, որ ես հանձն առնեմ Պեպոյի գերակատարությունը։

Պետք է ասած, որ ես մեծ համակրանքով եմ վերաբերվում առհասարակ դեպի բոլոր վրաց գործունեությունը։ Հանձն առա նոցա առաջարկությունը։ Վերցնելով դերը՝ տվի արտագրելու հայերեն առերրով։ Երբ համաքվեցինք առաջին փորձին ընթերցումն անելու համար, վրացիք հայտնեցին, որ իրանք մտադիր են բարեգործական նպատակով մի քանի ներկայացուցիչներ տալ բացառապես Սուևդուկյանի թարգմանություններից։ Միևնույն ժամանակ խնդրում էին ինձ մասնակցել ամեն մեկի մեջ իմ հայերեն կատարած դերերովս և հանձն առնել սեփականորեն պաշտոնը։ Ես պատասխանեցի, երբ նպատակը բարեգործական է, պատրաստ եմ ձրիաբար հանձն առնել մասնակցելու նորանց խաղերին։

Հասավ ներկայացման օրը։ Մի շարաթ առաջ տոմսակներն արդեն սպասվել էին։ Դանլիճում ստեղծվելու տեղ չկար։

Թատրոնը լի էր վրաց և հայ հասարակությունով։ Առաջին կարգի բազկաթոռներում վրաց բարձր արխատեղրատիան էր նստած, կազմված մեներալներից և գնդապետներից, զանազան բարձր աստիճանավոր վրացիներից։

Բեմ դուրս գալուս պես ամբողջ դահլիճը զգրդաց ծափահարությունից։ Ես փոքր ինչ շփոթվեցի, բայց խելույն ուշքի եկա։ Սկսվեց խաղս։ Պետք է ասել՝ ես շատ լավ էի արամագրված և ուղղ պատճառով Պեպոն, չնայե-

յով վրացու ականջի համար անախորժ արտասանութեանս, շատ փառավոր դուրս եկաւ. Ամեն իմ մեկ բեմ մտնելս և դուրս գալս կատարեալ օվազիւ էր ¹³⁷,

Մյուս օրը ԴրոնքաՅ, որի այդ ժամանակվա խմբագիրն էր Մեսիի օգգանունեով մի երիտասարդ, մի ոգևորված հոգովածով գերակատարութեան համար ինձ շատ էր գրգռեց:

Խնդրեցին կրկնել Պեպոն, որը այս անգամ ևս ունեցաւ միևնույն հաջողութունը: Ինձ գոգում էին թէ վրաց լրագրութունը և թէ վրաց հասարակութեան չրջանները:

Երրորդ ներկայացումն տվին էլի մեկ զոհ-ի թարգմանութունը ¹³⁸, որի մեջ ևս հանձն առաւ Բրիլիանտով հարուստ վաճառականի գերակատարութունը:

Այդ պիեսայի ներկայացումն ևս թէ խաղի և թէ մուտքի կողմից միևնույն հաջողութունն ունեցաւ:

<ՄԵԱԿ ԼՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՄԸ> ¹³⁹

26

Թիֆլիսի հրաշալի, բարեխառն առավոտներից մեկն էր: Ամերիկյանը և ևս, Էկաֆե Նվրոպա՝ սրճատնում նստած, վիճում էինք, միմյանց համոզում, թէ թէ ներկայացում ինչքան մուտք կտա, մեր պետք է գնալ, մւմ ինչդրել, մը հայ չինովիկին գիմել, մը գերասանին համոզել, և այլն, և այլն. մեր խոսակցութեան առարկան թատրոնն էր:

Հանկարծ մտաւ սրճատուն մի երիտասարդ, կարճահասակ, նիւար, նորաստեղծ ձևով. դա նոր մտքով էր, որին ևս մեկ անգամ ևս տեսած էի միևնույն կաֆեում, բայց չգիտէի նորա մով լինելը:

Ինչպես ասացի, կանուխ առավոտյան էր, այնպես որ, բացի Ամերիկյանից և ինձանից, կարծեմ ոչ ոք չկար սրճատնում:

Երիտասարդը մտնելուն պես խորը հոտաշունք քաշեց և, չնկատելով մեզ, մոտեցաւ լուսամուտին և անորոշ ձևով կիսանստեղծ մարմարոնի սեղանի վերա:

Ամերիկյանը փսփսաց ականջումս՝

— Դա Արծրունին է:

— Ի՞նչ Արծրունի,— հարցրի ևս:

— Դրեգոր Արծրունին, նորեկը արտասահմանից:

— Որ Դաշիանյան գաղտնի գաւառովութուն է անձւմ:

— Այն, բայց կարծեմ այլևս չի հաճախում ուսումնարանը: Ինձ ծանօթ է, քեզ ևս խելոյն կծանոթացնեմ:

Ընկերս մոտեցաւ նորան, ողջունեց և ներկայացրեց ինձ:

Միակեցիւք ընդհանուր խոսակցութուն:

Եւր ծանոթ երիտասարդս բացվեց, սկսեց դանդաղով մեր հասարակութեան անտարբերութիւնից:

— Իսկ մենք թէ պիտի անենք, — ընդմիջեցի ևս. — Նայեցեք, մենք չենք հուսահատվում. համարյա տաս տարի է, որ մենք տանում ենք մեր ուսերի վերա հայ թատրոնի գաղափարը և չենք հուսահատվում:

Եվ այս անով, հետզհետե բացվելով նորա առաջ, սկսեցինք նորան խրախուսել, և, անցնելով մի առարկայից մյուսը, կանգ առինք այն կետի վերա, որ Թատրոնի հետ զուգընթաց հարկավոր է հիմնել և մի լրագիր, նոր, Թարմ ուժերով, նոր մտքերի Թարգման:

Արժրուներն սթափվեցաւ, ձգտաց և հայանեց, որ միևնույն միտքը նա ունի և այդ միտքը փայփայում է յուր մեջ և որ մեր ծանոթներից մեկը, Շահվերդյանը նամանակեա խրախուսում է նորան հրատարակել մեկ լրագիր:

Այդպէս՝ հասարակ խոսակցությունից սկսեցինք կազմել իրողություն: Այնուհետև մեր փոխադարձ տեսակցությունների արդյունքն այն եղավ, որ գոյացավ մի փոքրիկ խումբ՝ հետևյալ անձների իրա՝ Գրիգոր Արժրուներ, Շահվերդյանից, Պերճ Գոռյանից, Իզմայիլյանից, Ամերիկյանից և ինձանից:

Ուրեմն ապագա լրագրի խմբագրությունը, որի անունը դեռ չէինք որոշած, կազմում էին վեց անձնավորություն և երեք գաղափարի տեր մարդիկ. Իզմայիլյանն և Շահվերդյանը—մեկը ծայրագույն, մյուսը ներս-դամիա կոմսոպոլիտներ էին. Գոռյանը և ես հայրենասերներ էինք, իսկ Գրիգոր Արժրուներն և Ամերիկյանը դեռևս անորոշ, այսինքն իրանց ուղղությունը և գաղափարը իրենց մեջ փակած գործողներ:

Մեր տեսակցությունները լինում էին սկզբում միևնույն, այն ժամանակվա հռչակավոր Եղափն Եփրոպած արճատնում, հետո, երբ երեք տեսակ գաղափարատեր մարդիկն մտքառելով՝ հասանք միատեսակ համոզման, այն է՝ նոր ուժերով նոր լրագիր հրատարակել հայերեն լեզվով, տարածել նորան ամեն տեղ, բազարից սկսած մինչև օտար կաշվում ներփակված արխատկրատ և բուրժուա հայ ընտանիքների շրջանը, մենք որոշեցինք այնուհետև Գրիգոր Արժրուներ սեռյակներից մեկում կազմել մեր նիստերը:

Հավաքվելով Արժրուներ մօտ, մենք ունեինք Միխայիլ անունով մի ծառա, որ սովորեց միշտ մի տեսակ լավ հյուրասիրել մեզ: Երբ մտնում էինք, նա փոքրիկ սալփեաներով թեյ էր տալիս, որի նշանակությունը ազգասեր Գոռյանցի, ինձ և կոմսոպոլիտ Շահվերդյանի համար գծվար ըմբռնելի էր:

Հետո, երբ փոքր ինչ վիճարանում էինք և պատրաստվում մերձեցաւ միմյանց գաղափարներին, հավասարիմ Միխայիլը բերում էր միրգ (խաղող և այլն) և երկու շիշ սպիտակ և կարմիր գինի: Այդ նշանակում էր, ինչպէս Գոռյանը և ես շատ ուշ եղրակացրինք զկեր ու կորիւն, այսինքն՝ բանդ տես, նիստը փակվելու վերա է: Գոռյանցը դա անմանեց զվերջին հարց:

Այդպէս կարգավորվեցան մեր նիստերը, այն է՝ շաբաթը մեկ անգամ, երկուշաբթի երեկոյանները:

Որոշեցինք ապագա լրագրի համար կազմել ծրագիր և հանձնեցինք այդ աշխատանքը Շահվերդյանին և Իզմայիլյանին, վիճարանութանց միջոցով կանխապէս մշակելով լրագրի գործունեության շրջանը, որի անունը կնքեցինք ՇԱՄԿԷ, բացասելով ՔԱՆՅԱՄԱՊԷ և այլն սորա նման անունները:

Հետագա նիստին ներկայացվեցավ ծրագիրը, որ բաղկացած էր հետևյալ մասերից՝ 1) առաջնորդող հոգոված, 2) քաղաքական տեսություն, 3) ներքին տեսություն, 4) բանասիրական, 5) դատաստանական և 6) ֆելիետոն:

Աշխատությունը բաժանեցինք մեր մեջ այսպես՝ առաջնորդող հոգովածները գլխավորապես վերաբերվում էին Գրիգոր Արծրունու աշխատության, որ պիտի կոչվեր խմբագրապետ, քաղաքականը՝ Իգմայրիյանին, ներքին տեսությունը՝ Շահվերդյանին, ֆելիետոնը՝ Ամերիկյանին, բանասիրականը՝ Պոռյանին և դատաստանականը՝ ինձ:

Բացի այդ, մենք միաձայն որոշեցինք հրավիրել Պալասանյանին լեզվի վերա հսկելու համար, թեև Արծրունին սկզբում չէր համաձայնում:

Ամեն մեկը պիտի առանձին մասի խմբագիրը լիներ, հետևապես վեց անգամներս կազմում էինք վեց խմբագիրների ժողով, որոնցից մեկը պիտի կրեր խմբագրապետի կոչում, բայց որը, առանց ընդհանուր խմբագիրների ժողովի կարգադրության, չպիտի խառնվեր ոչ մեկի խմբագրության գործունեության մեջ:

Ամեն մեկ տպագրելու հոգոված, առաջարկված թե խմբագիրների կազմից և թե դրից, առնուշտ պիտի կարգացվեր խմբագիրների ժողովում և, տպագրելու որոշումն կայացնելուց հետո, ուղարկվեր տպարան, տպահանձնավեր մասնավոր խմբագրի կարգադրության:

Ծրագիրն առաջարկվեցավ կառավարության հաստատության:

Երբ արդեն մենք բոլորս, ուրախ տրամադրության ներքո, օրեցօր ապստում էինք մեր ծրագրի վավերացմանը, սկսեցինք նկատել, որ Գրիգոր Արծրունին հետզհետե սկսում է թուլանալ, նայել գործին անաարբեր և պատրաստվում է համարյա հրաժարվել գործունեությունից:

Ինչքան ջանք, ինչքան երիտասարդական աշխույժ և ոգևորություն էր պետք մեր կողմից, որ չթողնեինք հուսահատվել նորան...

Ենթադրեմ, Արծրունու այն ժամանակվա անձնական հարաբերությունները չուր հոր հետ գուցե իրավունք էին տալիս նորան տատանվել, որովհետե այդ հարաբերության առթիվ նորա նյութական միջոցներն այնքան ապահով չէին (թեև հազարապատիկ ապահով էին մեր ամեն մեկիս միջոցներից), այնուամենայնիվ մենք ոգևորված էինք և այդ էր պատճառը, որ վերջը կարողացանք համոզել նորան չհետանալ գործը, հայտնելով, որ մեզանից ամեն մեկս, շնայելով մեր շքավոր դրության, պատրաստ էինք մասնակցել ֆուսին, եթե այդպիսի մի հանգամանք պատահի:

Իսկույն կազմեցինք ցուցակներ և հանձն առանք ամեն մեկս ցրել տպագա Մշակի համարները թե գավառներում և թե թիֆլիսում:

Արծրունին, ինչպես երևում էր, աչքի առաջ ունենալով այդ փոքրիկ խմբի եռանդը և կամենալով ապահովացնել տպագա լրագրի դրականական նյութերի պաշարը, նյութեր պատրաստելու համար ուղղով օրեր աշխատում էր թե ինքը և թե աշխատացնում էր ուրիշներին:

Ես, զորօրինակ, հիշում եմ, ինչպես մի քանի շաբաթ շարունակ առավոտները կանուխ մտնում էի մեր տպագա խմբագրության սենյակը և տկար ֆրանսերեն լեզվի տեղեկություններով, զանազան ֆրանս-առանքներ

բառադրքների օգնությամբ, Թարգմանում էի մի ինչ որ Secours mutueen^{*} մեկ պրոտեստանտ քահանայի կարծեմ ճառախոսությունից, Իմ այդ ջերմ հոսանք աշխատանքս Մշակի էջերում տպագրելու տեղ չունեցա՛մ, որովհետեւ հունվարի մեկին, 1872 թվականին նորա առաջին համարը լույս տեսնելուց հետո, թե Արծրունին և թե ես համոզվեցինք, որ կարոտություն չկա այդպիսի աշխատանքներով զբաղեցնելու Մշակի ընթերցողներին, քանի որ առաջին իսկ համարի լույս տեսնելու օրը այնքան ինքնուրույն նյութերի պաշար էր պատրաստած իրա՝ Արծրունուց և Թագած քաղցած խմբագիր անդամների ձեռքով, որ ամբողջ հինգ ամիս կարող էր բավականացնել:

Այդպես, 1 հունվարի 1872 թ. փարատվեց ճգնաժամը:

Հիշում եմ լավ, ինչպես առաջին կորեկտուրի վերա թափվեցանք ամենքս գիշեր ժամանակ, Մելիքաշվիլու տպարանում: Ի՛նչ երջանկություն էր... մեկը ուղղում էր տառասխալը, մյուսը դրաշարին էր խրախուսում, երրորդը տպողին, մեկը թռչկոտում էր ուրախությունից խենթի նման, մյուսը երգում, երրորդն անկյուն հեռացած մամտում: Իզմայիլյանը յուր ծայրահեղ կոսմոպոլիտությունն էր քարոզում, այնինչ Շահվերդյանը (այդ ժամանակ տպարանում ֆիզիկապես ամենից շատ աշխատողը) գիշանում էր զեպի հայերի բարեկամության խնդրը. Գոռյանը հավատացնում էր, որ մի ուրիշ առավել լավ ռոս և Վարդիթերշ հսկես հրատարակել Մշակում, Ամերիկյանը և ես ապագա թերթիկի միջոցով Թատրոնի տպագրան էինք փայտալուծ... Յնճը... Ինչեցնենք վարագույրը:

Ինչպես ասացի, հունվարի մեկին լույս տեսավ Մշակի առաջին համարը. Ամեն մեկս մեզանից իրան երջանկության ամենաբարձր աստիճանին հասած էր համարում այդ ժամանակ:

Հեռվհետե մեր շարաթական նիստերը կարգավորվեցին և ամեն մեկս աշխատում էինք կարողացածին չափ. Մեր նիստերին այցելում էին այն ժամանակվա նշանավոր հայ երիտասարդներից շատերը, որոնք մեզ խրախուսում էին և խոստանում փառավոր տպագրա՝

Ես վերեն ասացի, որ մենք վճռել էինք, առանց ընդհանուր ժողովի վճռի, ոչ մի հոգված չուղարկել տպարան, բացի աննշան լուրերից:

Հինգ թե վեց համար դուրս գալուց հետո, մի անգամ մենք ունեցանք սաստիկ ազմկալի վեճաբանություն պ. Արծրունու մի առաջնորդող հոգվածի առթիվ, որ և որոշեցինք չտպել, Զատասկար համարելով նորա բովանդակությունը այն ժամանակվա մի նուրը հարցի վերաբերյալ^{**}.

Ինչպես ասացի, վեց խմբագիրներս պատկանում էինք երկու որոշ և մեկ անորոշ կուսակցությունների: Վեճաբանության ժամանակ անորոշ կուսակցությունը կազմում էին Արծրունին և Ամերիկյանը. Արծրունին միշտ հարցեր առաջարկելով և նախազգուշ դիրքը բռնելով՝ սպասում էր կուսակցությանց եզրակացության, և հետո միշտ պ. Իզմայիլյանի աջակցությամբ հաջողեցնում էր հարցը անցկացնել յուր ուղածի պես:

^{*} (Ֆրանս.) Փոխադարձ օգնություն:

^{**} Արծրունու առաջնորդողը շուտփելի է կղել զինվորագրության հարցը:

Այսպես շարունակվում էին մեր խմբագրական նիստերը մինչև Րաֆֆիի երևալը, մեր մեջ, որ ամեն անգամ մտնում էր մի-մի ահադին տեսարակ դրած կոնստանդին: Սկզբում նա խմբագրական գործերին չէր խառնվում, այլ կարգավորվեց և հանձնելով յուր Վարսակաստանի նամակները՝ Րաֆֆի ստորագրությամբ, հետանում էր խաղաղ և անվրդով, բայց հեպտենտե քառասուն տուն դնելով—ինչպես ասում են թիֆլիսցիք, նա սկսեց մեծ ազդեցություն ևնք բերել ու: Արծրունու վերա:

Կարճ ժամանակում մեզ ամենքիս համար նկատելի եղավ, որ ու: Արծրունին օրեցօր սկսում էր մեզանից անկախ գործել և միշտ ամեն մեկ հարցի ժամանակ ավելի մեծ ուշադրություն է դարձնում Րաֆֆիի հայտնած կարծիքներին, քան ընդհանրության վեհին:

Մի քանի ամսից հետո բաժանորդների թվի ավելանալովը Մշակի նյութական միջոցները սկսեցին օրոսաօրե լավանալ: Րաֆֆին արգեն ու: Արծրունու աշխուժում ստացել էր հեղինակություն: Ամերիկյանը նմանապես յուր սուր ֆելիետոնական գրվածքներով (եճաքումս ստորագրությամբ) կարողութուն էր դարձել խմբագրության համար: Եվ որովհետև խմբագրության գործերի բարգավառ պատճառով հարկավոր էր մի անձնավորություն, որ միշտ խմբագրության մեջ գտնվեր, նորա ընթացիկ գործերին վերահսկեր մի որոշ վարձատրությունով, ահա այդ պաշտոնը ևնք բերելու նպատակով Րաֆֆին և Ամերիկյանը սկսեցին մրցել միմյանց դեմ:

Ամերիկյանը, որ հույսը դրել էր խմբագրողների համակրության վերա, աշխատում էր մեղմով ազդել ու: Արծրունու վերա, այնինչ Րաֆֆին, արգեն նախատեսելով խմբագրության քայքայումը, գործում էր ուղղակի, հազորդակցվելով անմիջապես իրա՝ Արծրունու հետ: Վերջի վերջո Րաֆֆին տարավ հաղթությունը և Մնաց Մշակի մշտական վարձ ստացող աշխատակցի:

Պոռչանը մեկ նիստի ժամանակ առաջարկություն արավ, որ այսուհետև դրի անցնվին Մշակի թե մուտքը և թե ծախսը, որպեսզի մեզ ամենքիս հայտնի լինի թե մեր օգտի և թե ֆուստի խնդությունը: Այս առաջարկությունը, կարծես, ծանր թվաց ու: Արծրունուն, որ և այնուհետև սկսեց ավելի անկախ վարվել:

Այսպես, զօրօրինակ, մի օր հանկարծ նիստի ժամանակ, երբ պիտի որոշվեր մյուս համարում ազգային հոգվածների բովանդակությունը, ու: Արծրունին սկսեց կարգաւ արգեն ապարանից բերած մի ծախսակիտ առաջնորդողի կորեկաուրը:

Այդպեղ արգեն պարզվեց, որ ու: Արծրունին այլևս խմբագրողների կարողություն չի զգում և ուղում է գործել միայնակ և բոլորովին անկախ ուրիշներից:

Այդ օրվանից, ահա, սկսեց հեռանալ քայքայվել մեր խմբագրությունը, որի միակ ինքնագլուխ տերը դառավ այնուհետև ինքը՝ ու: Արծրունին¹¹⁰:

ԱՄԵՐԻԿԱՆԻ ԴԱՌՆԱԼ ՊՈՒՄԻՑ

Ամերիկյանը Պուլիս գնաց մեծ հույսերով: Նա չէր ճանաչում Պուլսոկյանքը և կարծում էր, որ կարող է այնտեղ պատիլ, թատրոնի գլուխ

անցնիլ և մի կողիկ խումբ կազմելուց հետո՝ հայաբնակ քաղաքներում ներկայացուցանել տալ:

Մեր ունեցած սեպերառուարը նա ամբողջապես օրինակել տվեց և վերցրեց հետը:

Սկզբում, ինչպես պատմում էր, նա ունեցել էր մեծ հաջողություն¹³¹, այնպես որ շատերը բարձրաստիճան էֆենդիներից հետաքրքրվել էին նորանով, անգամ երևելի Օսման - էֆենդին այն աստիճան մասերմացել էր նորա հետ, որ ընկերաբար էր վարվելիս եղել:—

Այնպեղ նա հաջողությամբ տվել էր Պեպան, Շիլլերի Ավագակները, Սեր և Սախապաշարմուցը և այլն, բայց հետո ընկել է Քշվառ վիճակի մեջ: Այդ նորան այն աստիճան վհատեցրել էր, որ նա հիվանդացել էր թոքախտով և շտապել էր դառնալ Թիֆլիս:

Թեև նա Պոլիս գնալիս ինձ Մաս բարե անգամ շատով, բայց դառնալուն պես եկավ ինձ տեսության:

Երկու տարվա ընթացքում նա աստիճան փոխվել էր: Նիհարել էր և հիվանդի կերպարանք առել:

Մեր տեսակցությունը սրտաշարժ էր, մենք համբուրվեցինք, նա ինձ խնդրեց չհիշել անցյալը և մի կերպ հնարք մտածել փոքր ինչ ապահովելու յուր վիճակը:

Կոռջ հետ խորհրդակցելուց հետո, վճռեցինք մի երաժշտական երեկույթ առն նորա համար, որը և մի քանի օրում հաջողեցրինք Ներսիսյան հին ուսումնարանի դահլիճում¹³², Այդ երեկույթից Ամերիկյանը ստացավ մոտավորապես 500 ռուբլի և փոքր ինչ կարգի բերեց յուր գործերը և սկսեց բժշկվել:

Բայց բժշկությունը թնչ կարող էր անել այն սարսափելի ախտի դեմ, որ բուն էր գրել խեղճի կուրծքի մեջ:

Նա, բացի յուր գլխի հոգսը քաշելուց, պետք է և մտածեր յուր քրոջ մասին, որի պահանջները ողորմելուն հասցնում էին հուսահատության:

Բժիշկներն, ի պատիվ որոնց (բժիշկ Քուշարյան և Բարյան) պիտի տեսել, առանց որեւէ ակնկալության, մեծ հոգս էին տանում հիվանդի մասին, անգամ զեղոբայքը շատ անգամ իրանց հաշվով էին բերել տալի զեղատանց, տեսնելով հիվանդի անելք գրությունը, խորհուրդ տվին նորան գնալ հիվանդանոց, որտեղ նա մի ասանձին սենյակ վերցնելով՝ կարող էր առավել հանգիստ կյանք վարել և պատշաճին հսկողություն ունենալ:

Ամերիկյանը լսեց բժիշկների խորհուրդը և երեկույթից Մնացած փողից վարձեց Միխայիլովյան հիվանդանոցում մի լուսավոր լավ սենյակ, ուր և տեղափոխվեց շուտով:

Հիվանդանոց մտնելուց առաջ մի անցք պատահեց Ամերիկյանի հետ, որը պատճառ դառավ մի անիրավացի լրացրական բանակովի և որի հետեւիանքը շտապեցրեց խեղճ գերասանի վախճանը:

Ամերիկյանը կամենալով ազատվել առն վարձելու ծախսից, գիմեց Մշակի խմբագրին, որ նա յուր քարվասարայի գատարկ խանութներից մեկը ընտելության համար իրան հատկացնի Արթուրին, ավելի լավ է տեսել, Մշակի այն ժամանակվա աշխատակից, Թերոս, բայց Արթուրնու խորամանկ արքանյակը, որը միևնույն ժամանակ կառավարում էր և Արթուրնու անձնական անտեսական մասը, մերժեց Ամերիկյանի խնդիրը, բացառելով,

որ քարվանսարայում ընդունված չէ որեւէ ընտանիքի, անգամ անհատի գիշեր-ցերեկ կեցութեան համար խանութներէ որեւէ համարից մեկը տալ։

Այդ մերժումը սաստիկ վիրավորեց Ամերիկյանին և նա մի սաստիկ մազձոտ հոգիւմ գրեց Արծրունու դեմ, կարծեմ Մեղու-ում։

Այդ հոգիւմը նշուք դատով և զանազան բացատրութեաններէ աւարկաւ եղավ տեղական ուստաց մամուլում։

Մշակի վերոհիշյալ արբանյակը մի ստոր, քառը և հանգուղն ոճով պատասխան գրեց Ամերիկյանին, հայհոյելով նորա անգամ անձնավորութեանը¹²³։

Այս բանը վերջին հարվածն էր՝ նորա հիվանդութեանը ավելի սաստկացավ և նա մտաւ հիվանդանոց, ինչպէս ասացի։

Այդ անցքը սաստիկ տագնապութեան արագ նաեւ Միքայել Բեհրու-թյանի վերա, որը շարունակում էր՝ մի կարեւոր մամանակ խոռով Յաւուց հետո՝ ինձ հետ միշտ բարեկամ լինելու՝ նա ևս մտաւ բանակրօթի մեջ և ուստաց լրագիրներէց մեկում սաստիկ պատասխան գրեց Մշակի անխիղճ արբանյակին, մատնացույց անելով Ամերիկյանի հիվանդ և հուսահատ դրութեանը։ Ինչ ասել կուզի, որ ևս ամեն որ ալցելում էի հիվանդանոց խեղճ ընկերոջս և կատարում էի նորա որեւիցէ հանձնարարութեանը։

Մեկ օր, ճաշից հետո, ըստ սովորականին մտաւ Ամերիկյանի մոտ և նկատեցի, որ հուզված է։ Իմ հարցիս, թե ինչպէս է յուրյան զգում, նա մի տեսակ վճռողական ձևով պատասխանեց։

— Գե՞տի, ես մի քանի օրից հետո կմեռնեմ...

Սա սաստիկ ցնցվեցաւ, նա նկատեց...

— Այո՛, — շարունակեց, — ես զգում եմ, ես գիտեմ հաստատ, որ մի քանի օրից մեռնելու եմ...

— Լսի՛ր, ինչորեմ, — պատասխանեցի ևս հուզված։ — Թո՛ղ այդ մտայն մտածմունքը, դու կատողջանաս և մենք դարձյալ կակսենք գործել միասին...

— Ո՛չ, ո՛չ, մի խաբար քեզ սնտոխ հուշերով, վճռված է։ — ասով խեղճը և լսեց։ Հետո նկատելով, որ արտասուքները թափում են աչքերիցս՝ ժըպտալով գիմեց ինձ։

— Գետի՞ ֆան, մոռացի՛ր բոլոր իմ արածները, որոնք քեզ վիրավորել են երբեքից, այժմ դու ևս իմ միակ այն ընկերը, որը պիտի տա հասարակութեան իմ կենսագրութեանս...

Սա արդեն սկսեցի արտասուել այնպէս, որ քիչ էր մնում հեկեկայի, բայց զսպեցի ինձ և ասի...

— Խնդրեմ, Միհրգան, թո՛ղ չոտիտուր մտածմունքներդ, դու չես մեռնի, ինձ բժիշկները հուշս են տալի, որ դու դեռ երկար կապրես։

Սա, հայանի բան է՞ ստեցի, որովհետեւ ինձ բժիշկները ասել էին, որ նա երկար ապրելու չէ։

— Լսի՛ր, — ընդհատեց նա, — թո՛ղ չոտի բժիշկներիդ կարծիքը և չսիր ինձ ուշագրութեամբ, որ կարողանաս ճշտութեամբ նկարագրել իմ կյանքի...

Վերկացաւ տեղիցս և վճռապէս հայտնեցի, որ եթե նա կշարունակի այդ տեսակ տխուր խոսակցութեանը, ես կհեռանամ։

— Լն՛վ, լն՛վ, նստի՛ր ծիծաղելով ասաց նա, — դու գիտես, բայց հետո հիփոշմանես, որ չուզեցար լսել ինձ։ Թոսենք ուրիշ բանի վերա։

Քիչ ժամանակից հետո Մնատ բարյալ մասցի և սաստիկ հուզված, կարճատեղ աչքերով հեռացաւ բարեկամին մօտիցը:

Անցած մի քանի օր, Ամերիկայանը ուզեցած տեղափոխուիլ յուր քրոջ մօտ, որը կենում էր Կուկիայի Ալեքսեակի անվանված փողոցի մի փոքրիկ սենյակում:

Հանկարծ մեկ օր, երբ մեր տանը, ուր կային և մի քանի հյուրեր, մենք նոր նստել էինք ճաշի, քույրս, որ բնակվում էր մօրս տանը, միեւնոյն Ամերիկայանի կացած փողոցում, ներս մտավ գունաթափված:

— Եղբայր— բացականչեց նա— Ամերիկայանը սպանեց իրան, բայց դուք բժիշկները օգնեն, դեռ հոգին չի ազանդել:

Իսկույն վազեցի դեպի Քուլարյանը. ճանապարհին պատահեցի նորան, որը յուր կառքով գնում էր այցելելու տարաբախտ ընկերոջս:

— Օգնի՛ր, բժիշկ,— երեխայի պես բացականչեցի և նստելով նորա կառքը, պատմեցի լսածս:

— Շտապել է,— պատասխանեց նա ինձ,— նա երեք օրից հետո պիտի մեռնէր:

Մտանք սենյակը: Զարհուրելի և անմոռանալի տեսարան: Նա պառկած էր մեջքի վերա մանճակալում, կուրծքի ձախ կողմը մերկացած և կողքին հասակի վերա ընկած էր մի մեծ, գինձորական սխտեմի ունդիւր: Ոչինչ փոփոխութիւն կերպարանքում, այնպես որ կարելի էր կարծել, թե քնի մեջ է:

Բժիշկը վերցրեց ձեռքը, լսեց կուրծքը և դառնալով ինձ ասաց— ամեն բան վերջացած է: Գնդակը ուղիղ սրտին է դիպել:

Ահա ինչպես վերջացրեց յուր կյանքը երեւի տաղանդավոր հայ դերասանը, որ դեռ շատ օգտավետ կարող էր լինել թե՛ հայ թատրոնին և թե՛ մեր նորածին գրականությանը, որի մեջ նա յուր ֆելիտոսներով նմանապես մեծ ընդունակութիւն էր ցույց տված ¹³⁴:

Պետք էր մտածել թագման համար. հանգուցյալի տանը չկար և ոչ մեկ կողակ:

Այդպիսի ժամանակ մեր հարուստներին դիմելն իզուր կլինի, որովհետեւ նորանց ո՛չ Ամերիկայանների կյանքն է հետաքրքրում և ո՛չ մահը: Մնում էր մեր, ինչպես ասում են՝ «չլուստախօսներս» ¹³⁵ մեջ հանգանակութիւն բանալ: Այդ միջոցով հավաքեցինք մոտավորապես, լավ չեմ հիշում հիմա, կարծեմ երկու հարյուր ուսուլի, որից ծախսը համեստորեն անելուց հետո, Մնացածը հանձնեցինք նորա քրոջը:

Թե՛ դերասաններից և թե՛ հայ թատրոնի բեմը համակրող անձերից հավաքվեցինք քառասնաչափ հոգիք և վերցնելով դագաղը ուսերիս վերա, տարանք Հովարարու գերեզմանատունը, ուր և հանձնեցինք հողին, մի քանի ցածրանականներ արտասանելուց հետո ¹³⁶:

ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Մեռավ Ամերիկյանը, այդպիսով Քիֆլիսի տառնց այն էլ սպառված հայ գերատանական խումբը զրկվեց յուր ամենանշանավոր և գործունյա գլխավոր անդամներից մեկից և այնուհետև հայ թատրոնական հետադադործունեության ասպարեզը մնաց հին ուժերից մնացած երկու անձերի, այն է՝ իմ ամուսին Սաթենիկին և ինձ, շրջապատված մի քանի նորուսդերատաններով:

Հայ թատրոնական բեմը դարձել էր արգեն պահանջ հայ հասարակության համար, ուրեմն պետք էր պահպանել նորա գոյությունը, վերանորոգել նորա գերատանական ուժերը:

Ահա այդ ժամանակ իմ մեջ միտք ծնվեց դիմել Կ. Պոլիս, և այնտեղից մի քանի ուժեր հրավիրել: Եր միացնելով մեզ հետ, շարունակենք կիսաքայքայված գործը:

Վճռեցի որեիցե միջոց ձեռք առնել մտադրությունս իրադրծելու համար: Այդ պատճառով դիմեցի Սուևդուկյանին, տառնց որի խորհրդի ես շատ անգամ քայլ չէի անում թատրոնական գործի մեջ:

Սուևդուկյանը համակրեց իմ մտադրությունս և այնուհետև մենք վճռեցինք ասպարեզ հանել այնպիսի մի դիրք և ազգեցություն ունեցող անձնավորություն, որի միջոցով և կարողանայինք հետաքրքրել այդ հարցով հայ հասարակությանը:

Այդպիսի անձնավորություն մենք համարեցինք իշխան Յազոն Թուսանյանին:

Ինքը իշխանը, իբրև գեղարվեստասեր մարդ, հայտնեց իր պատրաստակամությունը ձեռքից եկած ոչ մի միջոց չխնայել գործը հաջողացնելու համար:

Նա հանձնարարեց ինձ մի փոքրիկ ծրագիր կազմել, որից իմացվի, թե խմբի կազմակերպությունն ու թե՛նորա նյութական միջոցները, շաբաթական մի ներկայացում տալու համար, թատրոնական սեզոնի միջոցում ինչպես կարժի:

Ես առաջարկեցի կազմել խումբ, բաղկացած 12—16 անձից, որոնցից երկուսը կամ երեքը անհրաժեշտ համարեցի հրավիրել Պոլսից, այսինքն մի երիտասարդ գերասան ժեռն պրեմիեր դերերի համար և երկու գերասանուհի:

Ամենամեծ վարձատրությունը, իմ կարծիքով, ամսական ոչ առավել, քան ութսունական ուսուցիչ հարկավոր էր վճարել պոլսեցոց, իսկ Յապահոնի վարձատրել ներկայացուցիչից գոյացած մուսթիքը:

Իշխանը հաճանեց իմ միտքը և խոստացավ մի քանի օրում ստորագրություններ հաճաքել և կազմել թատրոնատերերի ժողով, որի միջից և ընտրել մի մասնաժողով, որին հանձնելով ստորագրությունից գոյացած գումարը՝ առկա նորան հայոց թատրոնի զեկավարությունը:

Կարճ միջոցում իշխանը հաճաքեց մինչև յոթ հազար ուսուցիչ և ապա գումարեց մի փառքիկ ժողով՝ Ալեքսանդր Հաֆանյանի տանը, որտեղ և կազմակերպվեց մի Մասնաժողով, որի պատվավոր նախագահ ընտրվեց Յազոն Թումանյանը, իսկ գործնական նախագահ՝ իշխան Նապոլեոն Ամատունին:

Անդամներ ընտրվեցին Արզար Հովհաննիսյան, Գրիգոր Արծրունի, Դարբինի Սուսուկյան, Ստյոյի Փիթոյան, և ուրիշներ: Խմբի անժխոր ընտրեցին ինձ, Սուսուկյանի իրավասության ներքո, և մինչևույն ժամանակ հանձնեցին ինձ Մասնաժողովի քարտուղարության պաշտոնը:

Ինձ հանձնարարվեց տեղական ուժերից խումբ կազմելուց հետո գնալ Գոլիս և վարձել այն ուժերը, որ ես հարմար և անհրաժեշտ կգտնեմ:

Այս առիթով Մասնաժողովից ստացա հետևյալ պաշտոնական գրությունը՝

«Մեծապատիվ պ. Գ. Ջմրկյան.

Հայ թատրոնի Մասնաժողովը յուր այս ամսվա 14-ի նիստում, իմ նախագահությամբ, հանձնարարեց ինձ առաջարկել Ձեզ՝ ուղևորվել դեպի Կոստանդնուպոլիս, հրավիրելու մի քանի անձինք, զերասանական խումբ կազմելու համար Թիֆլիսում, որպիսի նպատակի համար և Մասնաժողովը իրավունք է տալիս Ձեզ գործել հետևյալ պայմաններով. Ա. Կապել և որոշել սկզբնական զբաղման պայմանագիր այն զերասանների ու զերասանուհիների հետ, որոնց օգտավետ կգտնեք հրավիրելու Թիֆլիսի հայ թատրոնի համար: Բ. Առաջարկել վարձ առաջնակարգ զերասաններին և զերասանուհիներին մինչև 100 ուսուցիչ. իսկ երկրորդ զերեր կասարողներին մինչև 60 ու Գ. Առաջիններին առաջարկել ամեն մեկին երկու կնի-կնս ընկնիք, իսկ երկրորդներին ամեն մեկին կնս ընկնիք, և այդ վարձման ժամանակամիջոցը պիտի համարվի ներկա տարվա սեպտեմբերի մեկից մինչև 1880 թվականի սեպտեմբերի մեկը:

Հաղորդելով Ձեզ մասնաժողովի սույն որոշումը, քաջառնությամբ, մեծապատիվ պարոն, որ դուք ոչինչ ջանք չեք խնայի արդարացունի Մասնաժողովի Ձեր վերա ունեցած վստահությունը, հրավիրելով այնպիսի տաղանդի տեր անձինք, որոնք սրտով նվիրված լինելով գործին, մի զեղեցիկ հիմք կդնեն ապագա թատրոնական գործի շինության և բարելավության: Ընդունեցեք պարոն, իմ հարգանքաց հաղատությամբ.

Իշխան Ն. Ամատունի.

1879 Նոյեմբ. 18:

Մասնաժողովը նախ և առաջ զբաղվեց ներկայացուցիչների տեղի որոշումով և վճանց վարձել Արծրունիների թատրոնական նորակառույց շենքը, առաջարկելով Գրիգոր Արծրունուն մի քանի բեմական հարմարություններ ավելացնել յուր շենքի մեջ:

Այդ առաջարկութեան պատճառով Արծրունու և Մասնաժողովի միջև ծագեց մի տեսակ տարաձայնութիւն, որի հետեւեալն եղավ այն, որ Մասնաժողովը զենեց վարձել քաղաքային թատրոնը, որը նախ ունէր բեմական բոլոր հարմարութիւնները, և հետո, որ նորա գիշերային մուտքը երեք անգամ առավել կարող էր լինել, քան Արծրունու թատրոնինը¹⁸⁷:

ԵՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀՈԳՍԸ

Դեռ զարնանից եւս սկսել էի մտածել խմբի կազմակերպութեան մասին: Տեղական ուժերի ժողովելը հեշտ էր, Թուս էր ինձ գտնել Պոլսի մեջ այնպիսի մի անձնավորութիւն, որ կարողանար ինձ տեղեկութիւն տալ իմ ցանկացած գերատեսնական ուժերի մասին, որպէսզի գնալով Պոլիս եւ մասնակ չկորցնէի սորան-նորան գիշերելու:

Ան այդ ժառով գրազոված մեկ որ պատահեցի փողոցում հանգուցյալ փառասան զոհար Շիշմանյանին (Մերենց), որը նոր էր եկել Պոլսից իր անբախտ (այժմ հանգուցյալ) օրիորդ աղջկա հետ:

Սա հայտնեցի նորան իմ մտադրութիւնս և նա առաջարկեց ինձ յուր պատրաստակամութիւնը՝ մասնացուցց անել Պոլսո մեջ այդպիսի մի անձնավորութիւն: Այդպէս խոսելով մենք մասնք շնորհակալ կոչված հյուրանոցը և շարունակեցինք մեր խոսակցութիւնը:

— Նախ և առաջ, — շարունակեց Մերենցը, — ես ունեմ մի երիտասարդ աղջկան, որը ծանոթ է Պոլսո բոլոր գերասանների հետ և առհասարակ լավ է ճանաչում Պոլսո ամեն մի տեսակ գառակարգը: Սա ձեզ մի հանձնարարական նամակ կտամ նորա անձան: Դնացե՛ք Պոլիս և Զարեհի հետ ծանոթանալուց հետո (այդպէս էր նորա եղբորորդու անունը) ուղղակի վարձեք նորա միջոցով մեր ցանկացած մարդիկը:

— Բայց, — ավելացրեց ծերունին, — այնտեղ կա մի երեւելի երիտասարդ գերասան, որի ազգանունն է Աղամյան (ծերունին չառաց, որ Աղամյանը յուր ազգականն է), որին ձեռք բերելը ձեզ համար մեծ գյուտ կլինի: Անգամ, եթե կկամենաք դուք նամակ գրեցե՛ք նորան և հրավիրեցե՛ք, և նա խորհրդակցելով Զարեհի հետ, կզանի ձեզ համար գերասանունիք:

Աղամյանի անունը ես լսել էի արդեն իմ հանգուցյալ ընկեր Ամերիկյանից, իրեն շնորհալի և թատրոնին վերին աստիճանի անձնանվեր մեկ երիտասարդ գերասան:

Վեռվեց դիմել ուղղակի Աղամյանին: Իսկույն վերցրի նորա հասցեն և մյուս օրն եեթ գրեցի մի մտերմական նամակ:

Մեկ ամսից եւս այնպիսի մի ոգևորված պատասխան ստացա, որ բոլորովին հափշտակվեցի դասած ծանոթութիւնովս:

Անս նորա նամակները:

25 ապրիլ, 1879 Վ. Պոլիս.

Անծանոթ աչացս, այլ սրտիս ծանոթ, եղբայրս պ-ն Չմէկյան:

Ապրիլ 4 թվականով գրած սիրալիւր և սրտաբախ նամակնիդ ընկալաւույն ամառն 24-ին, և ահա փութամ պատասխանել ձեզ անհապաղ:

Մըջանիկ կհամարեմ անձս, գոնե ի սրտե և ի հետուստ ճանաչելու համար ձեզ նման ինձ զգայակից և մտերմ artiste մը: Ձեր նամակին



Մարենիկ Ջազկյանը 1879 թվականին





Աճիբա՛ն Մանգի՛բա՛ն

մեջ գտնված վեհաժողովի և պարզ ոճը և մանրամասն եռանդը հայտնի կու-
պացուցանեն, թե արժանի էք այդ անվան, և միանգամայն. bohème* ը-
լալու: Երբ էլեկարական զորութիւնը երկաթե անդգա թելերու միջնոր-
դութիւնով կրնա հաղորդութիւն մտցնել հեռավոր և իրարու անձանոթ
աշխարհաց մեջ, ինչեւ մեր հոգիներու: Բանական զորութիւնը չի պիտի
կարենա ծանոթացնել մեզ միմյանց մեր սրտին զգացած թելոց վերա ներ-
գործելով, որքան ալ իրարմէ հեռի ըլլանք: Հոգին ավելի բանական և ճշ-
մարիտ է, քան էլեկարականութիւնը:

Ահա ես ալ հաժապի եմ, որ Դուք իմ ամենամեղիմ բարեկամս եք,
ուսուալով, որ Դուք ալ այնպէս կընդունիք զիս:

Ձեր նամակին մեջ կարգալով և խմանալով, որ Թիֆլիսու արզոյ մո-
ղովուրդը զգացել է հայ թաւրոնի մը կարեւորութիւնը և անոր համար
պատվովոր անձինք մասնաձողով մը կազմել են, մեծ ուրախութիւն
իմացաւ Ռոզինան, ևս այդ բանին սիրույն համար, հոս Պոլսո մեջ, մինչ
այդ երեսասարգութիւնս մաշեցուցի, թե իրը դերասան, թե դերասանա-
պետ régisseur ուսանելով և ուսուցանելով, և հազիվ կրցեր եմ փոքր ինչ
կենդանի պահել արվեստին սերը, զոնե՛ դերասանաց մեջ. կարծեմ թե
հոս կրած աշխատութեանցս արգիւնքը և պատուը Թիֆլիսի մեջ պիտի
կարող ըլլամ քաղել:

Մեր այստեղի մողովուրդը քիչ մը էգոիստ է, և ազգասեր չէ: Ռու-
սիո հայ եղբարք ավելի կսիրեն ազգն ու ուսումը. ասոնք սիրելը հայուն
առաջին պարտքն է: Ամերիկայան բարենիշառակ բարեկամս ոսկորախքը
միայն բազմական է ըստծիս ճշմարտութիւնը հաստատելու, որո մահը...
հաճատացե՛ք եղբայր, անմոռանալի վիշտ մ' է ինձ համար: Երանի թե չեա-
նաչեի զինքը բնափ:

Հոս ազգութիւնը կղերին և կրօնքին խաղալիք է. հոս ուսման գրք-
քերը խաղի թղթերու հետ կփոխեն. այստեղի մողովուրդը չուայ է զովեւ-
որ մասին. կտաքնան, կվիճեն, կծափահարեն, ձեռքդ կսեղմեն, դերդ ինչ
լով կատարեցիր կըսեն... լրագրոց մեջ զովեստները անձրեկ պես կտեղան,
և օթյակ մը առնելու մեծ դժվարութիւններ կ'առուցանեն:

Եթե այս caprice-ներուն համբերեցիրք, այն անձանց սիրույն հա-
մար էր, որք զոնե՛ ձեռքերուն եթե բան մը չի գա, սրտի մոտք միշտ մեր
բարիքը ուզած են, մանավանդ Օրթադուլի մեջ գտած քաջալերութիւնս
անուրանալի է: Կան երկրիս մեջ այնպիսի բացառութիւններ, որոնց բա-
րեկամութիւնը պարծանք և պատիվ է մարդուս, որոնց պարագլուխն է
բազմահմուտ և պատկառելի բարեկամս, հարգոյ տոքթիւր Շիշմանյան,
որն որ Դուք կվայելե՛ք այժմ... իմ ալ կարգս պիտի գա:

Վերջերս հինգ խաղի մեջ զազիացվոց հետ զազիերեն լեզվով կատա-
րեցի երկու premier և երկու jeune premier դերեր, որոնք նյութապէս և
բարոյապէս վարձատրեցին զիս. սակայն մեզք որ գործը տեղագիւտ չէր,
կրնայի Գազդիս երթալ իրենց հետ, սակայն միացի, և ուղեցի ավելի ազ-
գիս ծառայել, քան թե օտարին, բարեկամաց խորհրդին անսալով:

* (Ֆր.) Բառացիորեն բնականութիւն, բուրժուական երկրներում ազգիս են
կոչում ինտելիգենցիայի չլրանի ախ մարդկանց (գլխավորապէս նկարիչներին, երաժիշ-
տներին, գերասաններին), որոնք նյութապէս անաղաճ են, և թեթեւօրէն, անկանոն
կյանք են վարում: Նեղ անհատապաշտութիւնն ու անձնաբերութիւնը նրանց բնորոշ
հատկութիւններն են:

Աւրեմն, սիրելիս, գանք մեր խնդրույն, որմէ շատ հետաքննք. Ձեր առաջին պայմանին մեջ կհարցնեք ինձ, թէ կարճդ եմ գալ Թիֆլիս և հետեւ ընթերցման զերառանուհի. ես ալ պատասխանելով՝ կըսեմ, թէ ես ինքս կարող եմ գալ, երբոր կամենաք, բայց դերասանուհի մը հետս ընթերցումս քո փոքր ինչ գովաբանութիւններ կան, որովհետեւ եթէ Ձեր ուզած պայմաններով ալ գտնվի, գիտցե՛ք, որ պահանջող են սաակի մասին. Մտերս ճանչցա մի քանի օրիորդք, որոնց մեջէն միայն մեկ հասար կարող է լավ դերասանուհի ըլնել, որ մեր ուզածին պէս belle et piquante* միանգամայն bonne musicienne, avec disposition très dramatique:** Կաշխատեմ զինքն համոզել, ինքը սակաւին բեմը ելած չէ, սակայն համոզված եմ, թէ մինչ այդ ելլողներէն լավագոյնս պիտի ըլլա:

Աւրիշ երկու հատ ալ կան, որք բուն դերասանուհի են. մեկուն անունը օր. Միքանույշ, մյուսինը օր. Գուրաբիկ. ասոնց առաջինը ըստանշելի ձայն ունի և բավական լավ կերպի և կենդանացնել, ըստ կարի գեղեցիկ է, ալ երկրորդը միջակ բան մըն է. Այսուհանդերձ այս անձինք ամսականով կարելի է ունենայլ Դուք խնդրեմ գրեցե՛ք, թէ Մասնաժողովը որքան կարող է վճարել ամսական դերասանուհի մը, և ես իմ կողմանէս խոսքով, թէ Ձեր կողմանէ, բարեհաճեցե՛ք ինձ իմաց տալ գրութեամբ: Աս ալ կուզեմ իմանալ, թէ իմ Թիֆլիս գալուս, անպատճառ դերասանուհի մը ընթերցում պարտական եմ ինձ հետ: Որովհետեւ ավելի գշուրին պիտի ըլլա իմ Թիֆլիս գալուս վերջը ընթերցումս զայն Գուսին, եթէ ես ճամբա չելած չկարենամ հաջողիլ ուրիշ կերպով: Հայանցեցե՛ք Ձեր կամքը անհապաղ:

Դաւով գ. պայմանին, այսինքն իմ աշխատութիւնս սպասած եկամուտիս, որ պիտի ըլլա, կըսեք, բաժին մը դերասանաց մեջ ընդհանուր գումարէն, ծախքերն հանելէն վերջը. Սակայն այս մասին Ձեր եղբայրական բարեկամութիւնն կենդանի, որ հոգում ինձ ունենալիք երեկույթիս հետ, փոխանակ ինձ ալ բաժին մը տալու, իբր օտար երկրէն եկած, իրավունք ունենամ որոշյալ ամսական մը ունենալու. մեր բարեկամութիւնը հաւասար իրավունք կուտայ ինձ, որովհետեւ Պաշտօնի մեջ անգամ, երբեք բաժինով աշխատած չեմ, միշտ կամ երեկույթ առած եմ և կամ ամսական. Բարեհաճեցե՛ք Ամերիկայանի խմբին մեջ 14 օրանոցան սակի ամսական կըստանայի, այսինքն 150 ռուբլի և շուտիկ այս ծախքերը (միշտ տանս կամ բարեկամաց տան մեջ բնակիլ չբովիբովիով), ինչ ծախք որ սպարուստիս և գանազան պետքերու համար պիտի ունենամ օտարութեան մեջ ի Թիֆլիս:

Հուսամ, եղբայր, այնպէս կարգադրե՛ք, որ առնելիք ամսականս օտար երկիր երթալու արժեանս և թէ ի գարձիս օգուտ մը ունենամ նյութապէս, իմ ծնողացս ալ քրտինքնս կաթիլ մ' ալ անոնց բաժին հանելով:

Յետեանք, բարեկամս, որ վատահելով և հավատալով Ձեր անդին բարեկամութեան, ամենայն ինչ համարձակ հայտնեցի, միացյալը Ձեր եղբայրական հոգոյցը կհամեմեմ. գիտեմ որ իմ բարեքս և օգուտս կուզե՛ք, ուստի գործեցե՛ք որպէս և կամիք:

Ընդունեցե՛ք նախ Դուք և մասնավորապէս Ձեր համեստասուն տիկինը իմ շնորհակալութիւնս անկեղծ երախտացս հետ, պատկերներդ ինձ գրկելու:

* (Ձր.) Գեղեցիկուհի և ուշադրագ:

** (Ձր.) Լավ երաժշտուհի և լավ գրաժառանգական ոգի ունի:

վհանձն մտադրության համար, որոնց կապահանք անհամբեր, և ես այսօր կերթամ իմ լուսանկարս շինել տալու, որպեսզի հաջորդ անգամ Ձեզ զբրկելու փոխարեն պատվույն արժանանամ։ Սակայն կխոստանամ Ձեզ, որ Թիֆլիս հասնելուս, ես ինքս կտալի վրա յուզաներկ պիտի նկարեմ Ձեր պատկերները ընական մեծությամբ, որպեսզի հիշատակ և ընծա մը ունենաք ինձմե և զիս հիշեք միշտ։

Ուրեմն, սիրելի բարեկամս, այդ սեղմելով կիւնդրեմ, որ չուշացնեք Ձեր սիրելի պատասխանը, որպեսզի հարություն տանք հայ թատրոնին, որս փափագող թեամ Ձեր մտերիմ եղբայր՝

Պ. Լ. Աղամյան

Լ. Գ. Երբ ամեն բան կորոշվի, բարեհաճեցեք զրկել համարու ծախքը և, եթե կարելի է, քիչ մը բան տվելի, մեկ քանի պիեսաներու ծախքի համար։ Վերջը այդ գումարը, որ պիեսաներու համար կիւնդրեմ Ձեզնե, իմ հաշվես կարող եք ստանալ։ Մի ժողովանք հարգելի տղերքուր Շիշմանյանին տալ իմ ողջույններս և հարգանքս։ Կարգացեք իրեն, եթե կուզեք, իմ համար։

Նույնի։

Ինչ հոգի, ինչքան անկեղծ արտահայտություն և պատրաստություն ծառայելու սրբազան գործին...

Քիչ է որ հափշտակվեցի ևս, այլև հափշտակեցրի և ամբողջ Մասնաժողովի անդամներին, որոնց հավատացրի, թե Աղամյանը մեզ համար անդնահատելի դուռ է։

15 հունիսի, 1879 թ. Կ. Գալիս։

Նոյալիս պարոն Չմշկյան

Մայիս 10 թվականով գրած ողջախոս նամակնիդ ստացա՝ Ձեր և Ձեր ազնիվ Տիկնոջ պատկերներու հետ, որոնց համար հայտնում եմ Ձեզ իմ խորին երախտագիտական շնորհակալությունս։

Նամակիս կամ հետագրին ուշանալուն պատճառը այն էր, թե պատասխանի մը կապահանք մեկ քանի դերասանուհյաց կողմանե, որոնց հետ որպէս խոսած էի, ինչպես որ հարկ էր խոսելը։ Ըսելով իրենց, թե բառիկա գովելի ապագա ունեցող գործի մը սկզբնավորությունն է, և թե մենք ալ պարտական ենք փոքր ինչ զիջողություն ընել մեր կողմանե, և թե լավագույն է պատվավոր դերասանուհի ըլլալ հայոց մեջ, պատվավոր և բարձր շրջանի անձանց խիստնության տակ բարոյապես պատիվ ստանալ, որ ազնվական արգիւտի մը տեր ըլլողին պարծանք և ուրախություն է, քան թե յուր պարտքը և ըրածը չգիտցող directeur-ի մը՝ իշխանության տակ օտար լեզվով ներկայացում տալու։ Վերջապես, ըսի իրենց, թե ինձ ալ առաջարկվեց ամիսը 18 ոսկի և ես ալ մերժեցի, ինչպես որ ծանոթ է պն. Զարեհ Շիշմանյան, նյութական շահը artiste մը պահանջը ըլլալուն համար։ Վերջապես մեղադրելի բան է, ըսի, բնական նյութականին ծառայելը։

Անա տված պատասխանին իմ ըստնեբուն։ Առաջիկ և Սիրանուշ Երկու անբաժանելի քույրերը Պոլսո մեջ կպահանջեն Երկուքը միասին 30 ոսկի, իսկ Թիֆլիս գալու համար կրկինը, այսինքն 60 ոսկի։

Պ. Աղամյանն անհաբուժ և Գալիս թատրոնի զեկամբ Վարդանյանին, որը ներկայացուցեք էր առիթս թուրքերէն լեզվով։

Այս երկու քույրերը հանդգնեցան այսպիսի գումար ձեռնամուկել, մինչդեռ երկուքն ալ, իբր երգիչ և իբր գերասանուհի, անհամեմատ կերպով շատ ստորին կհամարվին օրիորդ Մարի-Նվարդի՝ գրամատիք դերասանուհւոյն հետ, և ազնոփական և ուսումնական երգիչ օրիորդ Տ. Գալնդերայանի հետ բազդատելով (այս օրիորդը հաճեցաւ վերջապէս, ի սեր թատրոնի պատակար նպատակին, գալ Քիֆլիս առանց մեծ պահանջողության)։ Օրիորդ Նվարդ ալ. Ֆասուլյանցիանցի հետ Նախիջևան իջած է և հոն եղած պատահարներուն պատճառով հիմա կվախեն օտար երկիր երթալ։ Կարծեմ Ֆասուլյանցիանցը Ձեզ ալ ծանոթ է... հետևաբար կըսե թե՝ զգված է թատրոնին։ Ձեր հետադրին պատասխանած օրս յուր նամակին հաղատելի, որն որ իմ նամակին մէջ կըրկեմ Ձեզ իբր աղապայց։

Միւրելիս, Դուք ինչ գրել էիք, թե երկու գերասանուհւոյց միասին կարող եք առաջ 125 ուսուրի և մեկ մեկ քննեֆիս և միանշամայն կըսեիք թե այդ գումարը ուզածիս պէս բաժնեմ։ Սակայն, գիտեցք բարեկամս, մտերմաբար կըսեմ Ձեզ, թե այդ գումարեն ևս չէի նուսար, թե զո՛ւ ըլլան, որովհետեւ շատ քիչ է երկուսի նամար, այսուհանդերձ ևս այդ գումարի մինչև 80 ուսուրին առաջարկեցի օրիորդ Մ. Նվարդին, որ համապատեցեք ավելի արժեւ։ Սակայն ինքը կուզէ արդեն թատրոնին հրամարիլ։ Քերես Ձեր կողմանե ուղղակի իրեն նամակ ձեզ գրվի, 80-ին վրա 10 ալ ավելացնելով, գուցե հաճի գալ։ փորձեցեք, թե կուզեք։

Նամակս լրացնելի հետո պիտի իջնեմ ուղղակի Օրթադուզ. հոն պիտի տեսնվիմ առջըյոր Մինասյանի զովակի՝ օրիորդ Էֆիկի Մինասյանի հետ, զոր պիտի ֆանած համոզել և վարժեցնել զինքն արասասնության և ձեներու, որովհետեւ ազնիվ ընտանյաց օրիորդ է և զեռ թատերաբեմ կլած չէ, եթե հաջորիմ կհետադրեմ Ձեզ, այլ թե հակառակն ըլլա, այն առնն արգո Մասնածողովը գուցե կամենա *engager** ընել հոն, ինչպես որ Դուք ըսեք էիք *amateur*** օրիորդներեն մին, գրամատիկական գերերու համար, զորն որ մարզելու. նոցք, թե Ձեր ժամանակը չի ներե, ևս հաճե՞ն կառնեմ։

Գուռ գերասանուհիք, կամ սրանց լավագոյնները, զոնե 10 կամ 15 սուկի ամսական առնելու վարժված են այստեղ ոչ իրենց արվեստին համար, այլ *pour leurs beaux yeux****, ուստի զարմանալի չէ, որ Ձեր ազնորական նպատակը չբարձրենելով՝ ավելին պահանջեն։

Կարծեմ առայժմ ավելի շահավոր է *amateur* օրիորդ ձեզ վարժացնել. ներեցեք այսուհանդերձ իմ դիտողության, որովհետեւ գերասանուհիք քիչ շատ պահանջող են, Դուք գիտեք։

Օր. Տ. Գալնդերայան, զորն որ դիպվածով հանչցա և իմացա, որ Գուռն մեկնելու միջոց ունի, անմիջապէս առաջարկեցի Քիֆլիս գալ. արդեն լսած էի յուր համբավը *concert*-ներու մէջ, հովանեցաւ ինքը գալ հետս միայն երգելու. համար եմքոպական եղանակներ, ինչպես որ ուզեք էիք։ Դրամայի համար շատ ընդունակություն ունի, սակայն չուզեց. այլ հույս ունեմ, որ հոն կհամոզվի զեր առնել, հաղա միայն երգել, զո՛ւ կըլլա քննեֆիս և 60 ուսուրի ամսականով։ Սակայն ավելի արժելը, առանց կողմակցության կըսեմ, պիտի տեսնեք և գտաեք։ Ձեզ բոլորովին վստահացնելու

* (Ձեք.) ներգրէի, վարձի.

** (Ձեք.) Սիրելի.

*** (Ձեք.) Իրենց գեղեցիկ աչքերէ համար.

համար հիշյալ օրիորդը յուր ստորագրությունը կրկնե Զեզ, որ նամակիս մեջ պիտի գտնեք:

Գալով ինձ, ես ալ սիրով հանձնե կանեմ ի սեր այդպիսի զեզեցիկ նպատակի մը արգել Մասնագործին և Զեր առաջարկած պայմանները. եթե փոքր դիտողություն մ'ալ ունիմ, այդ ալ այնքան անփաս է գործին, որ հոն ալ կրնամ ըսել, հուսալով, որ կընդունվի:

26 հաս ընտիր եվրոպական պիեսաներու թարգմանությունները հաճաքելով կըրազվիմ, որոնք տպւած չեն՝ այլ ձեռագիր են, և իմ repertoire-ի մեջ պահասները գնելով. կարծեմ գնելու և օրինակելու վարձք յուրաքանչյուրը ծախան ուսուցիչի պիտի հասնի: Եթե կհաճիք, հաշվելով զրկեցեք ինձ ամբողջ գումարը շուտով, ուրկից եթե բան մը ավելնալու ըլլա, կամ Զեզ կվերագարանեմ: Իսմ ուրիշ նոր պիեսներ կգնեմ. կրնաք վստահ ըլլալ, այլ այնպես կերել ինձ, թե այն գումարը սուղ չըլլալն զատ, շատ աման է: Մինչև 10 օրեն որոշ պատասխան մը կուղարկեմ Զեզ, կըրասանուզիմ մասին հետազոտի, և այն ատեն անշուշտ և Գուք որոշելով մեր ճամբա կլլելու օրը, կըրահաճեք ուղարկել երեք կամ չորս հոգով ճանապարհի ծախքը, ինչպես որ որոշված է:

Գառկերներս 16 օրեն պիտի ունենամ պատիվ Զեզ ուղարկելու. առայժմ սեզմելով Զեր ձեռքը, թեմ մտերիմ Զեզ, ըսելով՝ ցտեսություն, կըրայր:

Բարյացակամ Պ. Հ. Աղամյան

P. S. Հարգո պարոն Գարրիել Մունդուկյան մեր հայ թատերագրին իմ հարգանաց ողջույններս տալու շնորհ ընելնիդ կխնդրեմ:

Նույն:

Կ. Պոլս. 23/11 հունիսի 1879.

Ներայր Զնչկյան

Եթե երբեմն նամակով կամ հետազոտով տալիք պատասխաններս ուշացուցի, մի կասկածիք. թե անհոգությունն է պատճառը, ընդհակառակը, դիպածք երբեմն այնպիսի արգելքներ կհանեն, որ մարդուս մտքին անգամ չանցնի, ու շփոթություն ու վհատություն կպատճառեն շատ անգամ:

Օրինակի համար, օր. Գալենդերյանցը համոզելու համար ամիսներով աշխատեցա և երբ հաջողեցավ, յուր ստորագրությունն ալ առնելով Զեզ զրկեցի և ալ սիրտս հանդարտեցավ. Օր մ'ալ հանկարծ, երբ սենյակիս մեջ նստած երկու գրագիրներու հետ պիեսներ կօրինակեինք, մարդ մը եկավ օրիորդին կողմանե իմաց տալու ինձ, թե՝ օրիորդը այն օրվան նախորդ իրիկունը սաստիկ հազով առատ արյուն թքած ըլլալով և ստիկա թռչախտի հիվանդություն (որով արդեն յուր ամուսնացած քույրը վախճանված էր) յուր վրա ալ ժառանգական սկզբնավորությունը կարծելով, կվախենա, որ չըլլած թե ինքն ալ նույն ախտեն ունենա, ուստի այս պատճառով չի պիտի կարենա որևէ օտար երկիր երթալ. հոս նախ ինքզինքը բժշկաց խնամել պիտի տա: Կարծեմ ներողություն խնդրելու համար նամակ մ'ալ գրեք է Զեզ, որուն մեջ կիմացնե եղբւր բանավոր պատճառներով՝ հակառակ յուր խոստման Թիֆլիս չի կարենալ գալ: Ինձմե ալ կխնդրե, որ այդ բանավոր պատճառները կես առ կես ըստարեմ. սակայն յուր ըսելուն հարկ չկար,

ինձ արգեն պարտք և պետք էր գանձնք Ձեզի բացատրելու Իսկ ես, եզրայր, այս որ չսեցի, չեք կրնար երևակայել, որքան սառնեցա, վնասեցա:

Այժմ եթե ինքն ալ գալու հաժմանությունն տա, ես չեմ կարող ընդունիլ, խորհելով, որ գուցե զորավորագույն կլիմայի մը ազդեցությունը արտաքին ըլլա յուր առողջությանը, հայնժամ, իրող, անտանելի կըլլա իմ խզճին խաթը և պատասխանաւորությունս:

Օրիորդ Մինասյանն ալ անկարող եղա՞մ համոզելու: Երեկ նորին հեռագիր ստացա Ձեզնե, որով ինձ արտոնություն կուտայիք որոշել ինձեն դերասանուհւոյն ոտճիկը և repertoire-ի ծախքը և դրամատիկ կին մը գտնել: այլ հաժմատեցեք խնդրեմ, որ ցալժմ ինչ որ չեմ բրած, ավելին աշխատեցա և պիտի աշխատեմ ալ, մինչև որ ներկայանալի դերասանուհի մը գտնեմ, գործին պատգամօրութենէն քաշալերովելով: Մարի-Նովարդին հետ գատ, մորուն հետ ալ շատ խոսեցա համոզելու համար. վերջապես անոր պատասխանը գիտեք: Մնացալ դերասանուհւոյց մեջ ալ կան հաջողակներ, սակայն անոնք ալ Թատրոնին տարեկան հասույթին չափ վարձ կպահանջեն գրեթե. իրավ է, որ Ձեր տգած ոտճիկը ոչ թե երկու այլ մեկ հոգիո ալ չբաժնիր (որովհետեւ ավելին կարող են շահել այստեղ): այսուհանդերձ իրենք ալ այդքան պահանջող պետք չէ որ ըլլան:

Ձեր հեռագիրը երբ ընդունեցա, անմիջապես Միրանույշ և Ասադիկ անբաժանելի քույրերը կրկին տեսնելու դացի, որ համոզեմ: Երկուսը 500 ոտւրի ամսական պահանջեցին, այս օրիորդները, թեպէտ դրամա ալ կներկայացնեն, բայց ավելի chanteuses* կհամարվին: Հետեալաբար ժանպայման բարոյական կինձ պահանջեցիք, սակայն ես և ոչ մեկը մտերմաբար կհանաչեմ, ինչ որ բւեմ, սխալ ըսած կըլլամ գուցե. այս ծանր պատասխանատւություն է, որ գժմար է ստանձնելու: Եթե այս ոտճիկի խնդիրը չըլլար, կարճեմ վաղուց լրացած էր դերասանուհւոյ խնդիրը:

Անձնական գործերս թողած, գիշեր-ցերեկ դերասանուհւոյց և repertoire-ի գործով կզբաղվիմ, և աշխատությունը ինձ համար հաճույք մը պիտի համարիմ, եթե հաջողելու ըլլամ: Ամէն օր, Ձեր նամակներովը գինյալ, դերասանուհի որսալու կելնեմ: Ինչպէս առաքցալք շորտորդ մարդկանձ էին, ես ալ եղա այժմ որտորդ կնկան, բայց խոստովանեցեք որ իմ պաշտոնս ավելի ծանր է, բարեկամ: Ձեր նամակները խոնուն և franchement** գրված, ազդեցություն ունեն իրենց վրա, կուրախանան, կփափագին գալ, սակայն ոտճիկի խնդիրը կվհալեցնեն գիրենք, ասոր ես քնչ ճար կրնամ ընել:

Այլ երեկվան հեռագրեն ուժ առի, կրկին Մ. Նովարդի հետ տեսնվելու համար, որն որ ամենեն ավելի կարեւորագույն է մեզ համար, իբրե drama-tique և եթե չհաջողիմ, 135 ոտւրին ամբողջ, միայն անոր ոտճիկ սահմանելու, պիտի ստիպվիմ և միանգամայն ստիպված պիտի ըլլամ իրեն հետ առնելու նաե իրեն մօտ ազգական ալ. Մանահայան կոմիկ դերասանը, որ բեմական աշխատությանց մեջ ալ հմուտ է բաժական, ոտճիկ մ'ալ անոր որոշելով, որովհետեւ զաժակները և կինը Պոլիս պիտի ձգե և դա հոն: Մ. Նովարդի մեկ ուրիշ ազգականին դացի խնդրելու համար իրմե, որ զօրիորդը համոզե թիֆլիս գալու: Նա ինձ պատասխանեց, որ տեթե Մ. Նովարդը հոն երթա, պետք է որ յուր պայմանագրությունը երաշխավորվի Ձեր կող-

* (Ֆր.) Երգչուհիներ:

** (Ֆր.) Անկեղծորեն, էջմարտորեն:

մանե Գոլտո մեջ բնակվող Ձեզ ծանոթ վաճառական կամ որեէ ազգեցություն ունեցող անձի մը ձեռքը: Ահա բառ առ բառ ինձ ըսվածը, որ Ձեզ կծանուցանեմ, որպեսզի եթե հետագրի մեջ հաջող լուր մը տամ Ձեզ, անմիջապէս այդ *garant-ը** պատրաստ ըլլա հոս:

Իմ առեկը, ինչպէս որ ըսեր էիք տառապիւ ջան թե 100 աուրի ամիսը՝ պիտի ըլլա, բայց որոշ գումար մը չէիք գրած, սակայն հետո, պ. Ջարեհ Շիշմանյանին ուղղված պ. տաքթյոր Շիշմանյանի մեկ նամակին մեջ ցույց ավել ինձ հետեւյալ խոսքերը, որ արդո պ. Արզար Հովհաննիսյանը ըսեր է պ. Շիշմանյանին, թե տարիէն 150 աուրի ապահովված կ'ամսարժի: Այն ատեն ես ալ ընդունեցա պայմանները և իմացուցի Ձեզ իմ ասկից առաջ գրված նամակովս: Ուստի, եղբայր, խնդրեմ որ այդ գումարը բարեհաճեք որոշել և երաշխավորել պայմանագրութեան մեջ Արզո մասնաժողովի ստորագրութեամբ, որ բավական է ինձ համար: Աս ալ ըսեմ, որ ես երկու պատճառի համար է, որ Թիֆլիս զաւ փափագեցա. շահու համար չէ, այնչափ շահը հոս ալ կրնամ գտնել, եթե արժեստին դեմ եղած բաներուն և վարդովյանի թատրոնի անկարգութեանը անտարբեր ըլլամ: Ասիկա չեմ կրնար ընել, որովհետեւ չեմ սիրեր, այլ կ'աշտեմ արժեստ (Դուք գիտեք, ինչ ըսել է արժեստ սիրելը): Այլ բուն պատճառը՝ կանոնավոր ու պատվովոր գործ մը ընելն է նախ:

Երկրորդ իմ առաջնութեանս, որ ճանապարհորդութեան մը կարող է. այսուհանդերձ շահ մ'ալ պետք է, եթե չէ ավելի կամ հաճախար այս տեղին շահուն, գոնե անկից ոչինչ չվազ, որ ճիշտ պ. Արզար Հովհաննիսյանի ըսած գիշն է, որմե ավելի զոնգութեան ընելու կարծեմ Դուք ևս չեք ուզեր:

Խնդրեմ նաեւ, որ կարելին եղածին չափ շուտով զրկվի ինձ repertoire համար նշանակած գումարս, (որն որ կարծեմ քիչ մը ավելի պիտի ըլլա նոր Թարգմանված ընտիր պիեսներուն համար), որպեսզի (քովս ունիմ 10 հասար չափ, գործնք վճարելով, ստի) մյուսներն ալ տանեմ որինակողաց քովն՝ իրենց իրավունքը վճարելով, և ամենքն ալ մեռքիս տակ պատրաստ ունենամ: Առայժմ ուրիշ ըսելիք մը չունենալով, կեղծեմ մտերմարար մեռքներնիդ, հուսալով՝ որ մտաբեր կտեսնվինք:

Մնամ Ձեզ անձնվեր եղբայր՝

Պ. Հ. Աղամյան

Հ. Գ. պ. Ստեփան Օղուլլութեան անուն ճարտարարկեստ հայ ժամագործը գրեթե բոլոր Եվրոպան շրջած ըլլալով, մեծ փափագ ունի Թիֆլիս քաղաքն ալ տեսնել, և քանի որ հայաբնակ քաղաք է, կ'փափագի քանի մը ամիս նստել հոն. սակայն խնդրեց ինձմե, որ տեղեկութեան ուղեմ Ձեզն՝ իբրեւ տեղացի, որքան որ ձանձրութեան է Ձեզ, բարեհաճեցեք տալ Ձեր կարծիքը, թե արդոք վերոհիշյալ անձը (որ քաջ ծանոթ և մտերիմ է պ. Շիշմանյանին), կրնա հոն յուր արժեստը գործել, թե չէ միշտ, գոնե յուր քանի մը ամսվան հոն գտնված միջոցին տաանց փեսավելու ապրել: Խնդրեմ, շատ երախտապարտ պիտի ընեք գիշը, որոնց համար ես ալ կանխավ շնորհակալ կ'ըլլամ:

Նայմ:

* (Ձբ.) Երաշխավորութեան, ապահովութեան տվող:

Ձեր սղմովունի տիկնոջ իմ հարգանաց հաժախութեք և ողջույններս մատուցանելնիդ կիսեղբրեմ:

Նամակիս մեջ պիտի գտնեք ընտրյալ պիեսներուն ցանկը և լուսա-
նկար պատկերներս, զոր պատիվ ունեմ ուղարկել Ձեզ:

Հ. Գ. Նամակս փակած ատեն այս բողբիս լուր առի թի նոր drama-
tique գերասանունի մը կա եղեր յուր սղգական գերասանին հետ, որ հետս
դաւ փափաղել էն. զանոնք հիմա տեսնելու պիտի երթամ:

Նույն:

Վեռցի շտապել Կ. Պոլիս:

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԻԼՁԵՎ ՊՈԼԻՍ

Մասնաժողովի պաշտոնական հանձնարարությունը ստանալուց հետո,
որով ինձ առաջարկում էին վարձել քսա իմ բարեխառնության մեկ գերա-
սան և երկու գերասանունիք նամական ոչ առավել քան 100 ո. ոտերկով,
ևս հունիսի 20-ին ընտանիքս՝ երկու մատաղահաս երեխաներովս՝ ուղար-
կելով Մանգլիս անվանված ամառանոցը, նույն ամսի 29-ին ճանապարհ
ընկա գնալի Պոլիս:

Օ՜, եթե ես գուշակն, թե այլևս չպիտի արժանանամ համբուրել վե-
րադարձիս իմ հոգույս հատոր մատաղ զավակներին¹²⁸, գուցե, խոստովա-
նում եմ, ես չէի գնալ Պոլիս:

Ինձ ճանապարհակցում էր բժիշկ Փուշարյան, որը արտասահման գնա-
լով, ցանկացած անցնիլ Պոլսով, գլխավորապես ինձ հետ ընկերակցելու
նպատակով:

Երկաթուղի նստելով ես շատ լավ արամադրված էի և միշտ ծիծաղում
էի, սրախոսություններ անում, բայց մյուս օրը, երբ մենք նստեցինք
շողենով, մի անսակ մոռյլ տխրության մեջ ընկա, այնպես որ Փուշար-
յանը զարմացել էր իմ հանկարծակի փոխվելու վերա:

Այդ օրը, ինչպես հետո իմացա, ժողովի տղա զավակս երեք օրվա
մեջ թաղելուց հետո, հոգին հանձնելիս էին եղել և մեծ աղջիկ զավակիս:

Այն, կա ուրեմն մի շորթորդ չափուհի ևս բնության խորհրդավոր կա-
նոնների մեջ:

Օղեսայից ես հեռագրեցի Ադամյանին, որ հանդիպե ինձ Պոլսո նա-
վահանգստում հուլիսի մեկին թե երկուսին, լավ չեմ հիշում:

Միևնույն ժամանակ մենք տեղեկություններ հաժաքեցինք այնտեղ
Պոլսո հյուրանոցների մասին և վեռցիք իջնել Վլադսեմբուրգ անվան-
ված հյուրանոցում:

ՊՈԼՍՈՒՄ

Երեկո էր, որ մենք հասանք Բոսֆորի նեղուցը և այնտեղ գիշերե-
ցինք: Մյուս օրը գեղեցիկ, պայծառ օր էր: Ծա գմայվեցի այդ նեղուցի տե-
սաբանով, թեև շատ անգամ կարգացել էի նորա շքեղ և բանաստեղծական
գիրքի նկարագրությունը:

Երբ սկսեցինք մոտենալ նավահանգստին, հանկարծ շրջապատեցին
մեզ զանազան գիրքի և մեծության նավակներ, որոնք մեր շողենովին մո-
տենալուն պես դուրս էին թռչում նրանցից զանազան հասակի և հոգուստի

ժարդիկ և չորհենալի պատերով կառվի պես վեր ժողցնելով, ընկնում էին տախտակամածք, որը՝ մի կտոր թուղթ ձեռքին, որը՝ զանազան իրեղեններ:

Սկզբում ես կարծեցի, թե դռն մի տեսակ սրիկաներ են, որ պիտի կոշոպտենին մեզ, բայց ինձ հասկացրին, որ դռն կամ զանազան հյուրանոցների ծառայողներ են և ամեն մեկը հրավիրում է ճանապարհորդներին յուրյանց հյուրանոցը, կամ մանրամասններ են և մտել են առնետն աղբանքներ ծախելու:

Նախահանդատում չդատ Աղամյանին, և մենք ստիպվեցանք հարց ու փորձ անելով հասնել Ելուեքսեմբուրգ անվանված հյուրանոցը, Պերայի թաղում:

Ծովային ճանապարհորդութունը սաստիկ աղվեց ինձ վերա և ես հիվանդացա, բայց չուզեցա անկողին մտնել:

Եկավ շուտով և Աղամյանը: Մենք պատահեցինք կորիզորում և ճանաչեցինք միմյանց, որովհետև փոխադարձաբար ուղարկել էինք մեր լուսանկար պատկերները միմյանց:

Թե ինձ և թե լիճի Քուշարյանի վերա Աղամյանի տեսութունը շատ լավ աղցեցութուն արավ:

Մենյակը մտնելուն պես նա այնպես բնականացավ մեզ հետ, որ ինձ թվում էր, թե ես վաղուց է ինչ նորա հետ ծանոթ եմ:

Մի քառորդ ժամ նստելուց հետո Աղամյանն ինձ խնդրեց առանձնանալ և խկույն ուղեց մեկ հարյուր ուսույի ի հաշիվ յուր ապագա վարձարության: Խկույն հանձնեցի իր ցանկացած հարյուր ուսույին և խնդրեցի մյուս օրն իսկ առաջնորդել ինձ յուր դաս՝ գերասանուհիներու մոտ:

Մյուս օրը, արգարև, Աղամյանը եկավ, և մենք, ուղեկցությամբ լիճի Քուշարյանի, այցելեցինք օր.օր. Աստղիկ և Միրանույշ գերասանուհի քույրերին:

Որովհետև ես տկար էի և մեր հյուրանոցից մինչև գերասանուհիներու տունը բազմական հեռու էր, ինչպես ասավ Աղամյանը, այդ պատճառով մենք կառք վարձեցինք, և կես ժամ համարյա ճանապարհորդելուց հետո, կանգնեցրինք մեկ ձորաշեն փողոցի սկզբում, ուր անհնար էր իջնել կառքով:

Այդտեղ մենք մտանք մի երկուհարկանի փայտաշեն տուն և բարձրացանք վերի հարկը:

Փոքր ինչ սղոսել տալուց հետո, մտան Աստղիկ և Միրանույշ քույրերը, համարյա կիսամերկ: Քուշարյանը և ես չվարած նայեցինք իրարու երեսին: Քուշարյանը մզուաց և ուսերին ասավ ինձ, որ երևի այստեղ այդպես է ընդունված:

Ինչևիցե, ես ուղղակի դիմեցի մեծ քրոջը՝ Աստղիկին, որն ինչպես երևում էր, միայն ուներ իրավունք պայման կապելու:

— Հուսով եմ, օրիորդ,— սկսեցի ես,— որ դուք ծանոթ եք իմ առաջարկած պայմաններին հետ, և մենք երկար ժամանակ չենք կորցնի նորից հարց բարձրացնելու:

— Այո,— պատասխանեց օրիորդը,— միայն թե մեր առաջարկած պայմանները շատ ծանր են, վարձատրութունը շատ քիչ է:

Ես հայտնեցի, որ երկու քույրերին միասին կարող եմ առաջարկել ամսական 180 ուսույի, և դորանից բարձր իրավունք չունիմ, մանավանդ, որ թատրոնական Մասնաժողովը միջոց չունի դորանից շատ վճարելու:

Երկար զիճարանությունից հետո հայտնեցին, որ նոքա երկուսով 300 ուսւրուց պակաս չեն կարող ընդունիլ, և մենք զուրա եկանք:

Տուն դառնալուց հետո Աղամյանը հրապարակ հանեց մեկ հին գերասան, նա Պոլսո գերասանական խմբի անդամներէն էր, հետեապես որք և լով ծանօթ էր Պոլսո մեջ գտնված բոլոր գերասաններէ և գերասանուհիներու հետ, և որք մի շնչին զարմարությունով կարող է ինձ համար թէ գերասանութիւնը ճարել և թէ սեպերտուար մեռք բերել:

Ներկայացավ մի կարճահասակ, ծաղկատար և արագաշարժ աչքերով մարդ, որի ազգանունն էր Մաղաքյան:

Հայտնի բան է, առաջին իսկ ծանոթությունից հետո այս սիրելի պարոնը, ըստ պոլսեցոց սովորութեան, մեկ ոսկի ծախսի փող ուղեց և այնուհետև նա խոստացավ այնպես անել, որ շրթները Աստղիկները ոտքիս գան:

Այդ մարդու հետ ծանոթանալուց հետո ես ստիպված եղա մի տեսակ ոգիսականութեան անել Պոլսո մեջ, թափառելով մեկ թաղից մյուս թաղը, գերասանութիւնը որոնելու:

* * *

Վերջապես Քուշարյանը գուշակելով, որ այդ մարդու, անգամ իբր Աղամյանի վարժունքի մեջ մի տեսակ անորոշութեան կա, առաջարկեց Մաղաքյանին տոմսակներ վերցնել մեր երկուսիս համար թուրքերին լեզվով արժող ներկայացման համար, որ տալիս էր այդ ժամանակ հայ գերասանական խումբը, չգիտեմ մի ինչ որ թաղում, վարչութեամբ նախկին գերասան Վարդգիսյան էֆենդու:

— Մենք կտեսնենք,— համոզեց ինձ բժշկապետը,— թե ինչ ումեր կան գորանց խմբի մեջ, և այնուհետև զուկարող ես առանց ուրիշների միջամտութեան ուղղակի հարակցել նոքանց հետ:

Մեկ քանի ժամից հետո եկան Մաղաքյանը և Աղամյանը և հայտնեցին, որ այդ երեկոյան ներկայացումը հետաձգվել է: Նա համառացի:

Երբ Քուշարյանին ու ինձ սկսեց հաղթել հիվանդութեանը, քրքրեկապետը հայտնեց, թե ինքը շարունակելու է յուր ճանապարհորդութեանը գեղի Վիեննա, հետեապես և ինձ խորհուրդ տվեց երկար չմնալ Պոլսում: Նա խնդրեցի Աղամյանին, որ վերջացնի գործը: Նա հայտնեց, որ ինքը անձնապես պատրաստ է իսկույն ուղեկցելու ինձ, սակայն գերասանութիւնը չեն ճարձում ցանկացած գնով...

— Ուրեմն ինձ մնում է հետանալ այստեղից, որովհետև ինձ առավել հարկավոր են գերասանութիւնը, քան թե անգամ հանճարավոր գերասան:

— Բայց ես այնտեղ գերասանութիւնը կպատրաստեմ մեզ համար,— ընդ-միջից Աղամյանը:

— Ոչ, ինձ պատրաստի գերասանութիւններ են հարկավոր, եթե այդպիսիք չեն ճարձի, այն ժամանակ մենք մեր գերասանութիւններով էլ կբաժնանանք:

Ինչպես երևաց իմ այս վճռողական պատասխանը ունեցով իր ազգացութեանը, որովհետև մի քանի ժամից հետո եկավ Մաղաքյանը և հայտնեց, որ Վաստիկները չհամաձայն են 200 ուսւրիով պայման կապել:

Այս լուրը անմիջապես հայտնեցի Աղամյանին:

— Ուրեմն մեզ Յետո՛ւ է իսկույն պայման կապել օրիորդների հետ մի օրեւ նոտարի միջոցով

Սա մոռացաւ ասել, որ Վլադիսլավ Բորիսովիչը հյուրանոց իջնելուն պէս մենք հարց ու փորձ անելով՝ դասնք այն բանկային հիմնարկութիւնը, որտեղ ծառայում էր Զարեհ Շիշմանյանը։ Աննախանձելի հարտաբապետական մի մասլլ շէնքում էր տեղափոխւած այդ բանկային հիմնարկութիւնը, որի մութ նախամուտքում մենք ստիպւած եղանք մի քառորդ ժամ սպասելու, մինչեւ արժանացանք պարոնի տեսութեանը։

Աս հանձնեցի նորան իր հորեղբոր նամակը, և քանի որ այդտեղ հարմարութիւն չկար երկար խոսակցելու, խնդրեցինք, որ նա շնորհ բերէ մեր բնակարանը։

Մյուս օրը ճիշտ նշանակված ժամին նա եկավ մեզ՝ մօտ։ Դա մի գեղեցիկակազմ երիտասարդ էր, նորա թե խոսելու ձևը և թե շարժվածքը եվրոպական ուսանողի տպավորութիւն էին տնում։

Միմյանց ողջունելուց և կարե խոսակցելուց հետո ևս իմացա, որ նա արդէն տեղեկութիւն ունի իմ Պոլիս գալու նպատակի մասին և պատրաստակամութիւն հայտնեց ամեն կերպ աշխկցել ինձ, որ հանձնարարութիւնս հաջողվի։

Առաջին և իսկ խոսակցութեան նյութը Աղամյանը եղավ։

Զարեհը երկինք բարձրացրեց թե Աղամյանի առաքինութիւնը և թե նորա հազվագյուտ տաղանդը։

Վերջապէս հավաքվեցինք Ղալաթիա ասած թաղը, նոտար Մրապիոն Հեքիմյանի գրասենյակը, ուր մեր պայմանները ձևակերպելուց հետո, վերցրինք ամեն մեկս պայմանագրութեան մի-մի օրինակ և իսկույն գնացինք լուսանկարիչ Արդուլլան եղբայրների մօտ, մեր պատկերները հանել տվինք և գերասանուհիների ու Աղամյանի լուսանկարներն իսկույն ուղարկեցի Մասնաժողովի նախագահ՝ իշխան Ն. Ամասունուն։ Այնտեղից մենք դատանք մեր հյուրանոցը, ուր Քուշարյանցը պատժիկից Փրանսիական մի լավ ճաշ յուր հաշվով։

Դեռ երիտասարդական օրերիցս իսկ հափշտակված լինելով Հեքիմյանի գրվածքներով, ևս շատ փափագում էի նորա տեսութեանը և շատ ուրախացա, երբ ինձ հաջողվեց ոչ թե միայն տեսնել նորան, այլև մի տեսակ բարեկամական հարաբերութիւն ունենալ նորա հետ Պոլիս եղած ժամանակու։

Մի բան միայն ինձ շատ խորթ թվաց. այն մարդը, որ յուր գրվածքներում այնքան հաշիւեաւոր էր հանդիսանում, յուր ասն մեջ, յուր ընտանիքում, անգամ յուր գրասենյակում, օտար ընդունել էր զարծածութիւն։ Ընտանիքում հունարեն, իսկ գրասենյակում ու ծանոթների մօտ՝ թյուրքերեն։

Այլ է գաղափարի տես լինել, այլ է դադափարը զարծադրել իմանալ։

Մենք ծանոթացանք և մի ուրիշ լուսավոր անձնավորութեան հետ, նախկին Մանգլումի եփքյար թյուրքաբարբառ լրագրի խմբագիր Փանոսյանի հետ, որն ուներ թեև տարօրինակ կարծիք հայութեան առաջագիժութեան մասին, սակայն պարզ և ազնիվ ընտելորութեան տեղ մարդ էր։

Պայմանները գրելու ժամանակ Հեքիմյանը խնդրեց մյուս օրը գնալ

հանկու Մերիեմ-Գուլիի մոտ, հմուտ փաստաբան և ազգային ժողովի երեցփոխաններից մեկը, որը կամենում էր ծանոթանալ մեզ հետ:

Սուրբ ալիքն էր և վեպերն էր, որ մյուս օրը Քուչարյանը, Աղամյանը և ես կիջնենք նախահանդիսաբար, ուր պետք է դիմագրեմ մեզ Հեթիմյանը և այնտեղից շոգենաով նստելով՝ կերթանք „İles des princes“* անվանված կղզին, ուր ամառ ժամանակ բնակվում է պ. Մերիեմ-Գուլին:

ԵՐԱԺԻՇՏ ԶՈՒԽԱՃՅԱՆ

Օրը զեղեցիկ էր, ծովը հանդարտ. մենք ճանապարհ ընկանք առավոտյան ժամը 10-ին և ժամը 1-ին հասանք այդ կղզին:

Ինչ հրաշալի կղզի, Բնչ զեղեցիկ գիրք ունի, Բնչ հրանալի բուսականություն... Տները, կարծես, փաթաթված են կիտրոնի և ուրիշ անուշահոտ ծառերի, խաղողի տերևների և հազար ու մի զմայլեցուցիչ բուսականություն մեջ:

Պ. Մերիեմ-Գուլին մեզ ընդունեց մի փառավոր, քնն համեստ զարդարված դաշիխում և ներկայացրեց մեզ մի քանի տիկիներին և օրիորդներին: Դորանց՝ ամենքն էլ նորա ազգականներն էին:

Ինքը Մերիեմ-Գուլին միջահասակ, վայելուչ կազմվածքի տեր մարդ էր, սուր, սև աչքերով:

Դահիխում դրված էր մի գաշնամուր և կլոր սեղանի վերա զանազան խմիչքներ՝ արսենա, կոնյակ և այլն:

Մեր մտնելուց հետո, հինգ բաղն շանցած, ներս մտավ մի պարոն, կարճահասակ, մոտավորապես քառասուն տարեկան, և մի երեխա մոտավորապես 14 տարեկան:

Ամենքը հրճվանք հայանեցին դորանց դալու պատճառով:

— Գարոն Զուխաճյանն յուր զավակի հետ, — ներկայացրեց մեզ Մերիեմ-Գուլին:

Մենք սեղմեցինք իրարու ձեռքը:

Մթթե սա այն հայտնի հայ կոմպոզիտորն է. Արշակ օպերայի հեղինակ Զուխաճյանը, զարթեց հարց գլխումս, որի պատասխանը ստացա իսկույն պարոնի և նորա զավակի արարքից:

Հայրը նստեց գաշնամուրի մոտ, զավակը կանգնեց մոտը. մեկը սկսեց հնչեցնել, մյուսը երգել սաստիկ խաղաղ և աշնով մի քանի ազգային եղանակներ, նույն Զուխաճյանի հեղինակություններից:

Քուչարյանը հարցրեց երեխայի և այնի խաղաղության պատճառը:

— Անտանելի սովորությունն կա մեր մեջ, — պատասխանեց Զուխաճյանը, — ամեն մի տոն օր ես և զավակս կանուխ առավոտից ստիպված ենք պատիլ ծանոթ-բարեկամներիս տունը՝ նորանց փոքր ինչ զվարճացնելու. նպատակով, և այդ պատճառով զավակս փոքր ինչ հոգնել է շատ երգելուց:

— Ինչպես — չհամարեցի ես — մթթե գուք պարտական եք զվարճացնելու ուրիշներին, երբ ինքներդ զեղարվեստի գործունյա անձ եք:

— Է՛հ, պարոն, — պատասխանեց հայ կոմպոզիտորը, — շարունակելով հնչեցնել գաշնամուրը, — դեռ այստեղից մի տասը տուն պիտի այցելենք, այդպես է ընդունված այստեղ:

* (Ֆր.) «Իշխանաց կղզին»:

Մի քանի եղանակներ ևս շատապով ամեկուց և երգելուց հետո, հայր և որդի մեաք բարյալ մասն ամենքին ու հետացան:

— Այս ինչ տեսակ սովորութիւն է եղել սորանց մեջ, — ասացի ես ուսաներն Քուշարյանին:

Նա ուսերը վեր քաշեց միայն:

Այդ բաժական շէր, մեզ սպասում էր մի ուրիշ աշխնդակ սովորութիւն ևս վկա դանդիլ:

Մեզ հրաժիրեցին սեղանատուն, ուր սկսեցինք ճաշել թե չէ, դեռ տանտերը, հետո Հեքիմյանը սկսեցին խրթին ճառարանութիւններ անել, ապա բոլոր սեղանակիցները գիմեցին Ադամյանին, խնդրելով, որ նա բախտարան մը գոցեա:

Ադամյանը, որ իմ կողքին էր նստած, վեր կացալ տեղից, հագալով սկսեց ծաքեղ ձայնը:

Այս ինչ բան է, մտածեցի ես, սորանք երեխ ինձ ել բախտարան մը ապիտ կատարել տան, իբրեւ ուսանալոց դերասանների ներկայացուցիչ:

Հենց Ադամյանը բերանը բաց արալ, որ մի ինչ որ սրտաշարժ բախտարան մը գոցեա — ես ընդմիջեցի:

— Մեր մեջ, պ. Մերիմ-Փուլի, — դարձա ես տանտիրոջը, — սովորութիւն չկա, որ ճաշի ժամանակ հշուր դերասանին զանազան տեսարաններ կատարել տան, — ասացի և ծածուկ, պինդ քաշեցի Ադամյանի սեղինգոտից*:

Նա ներողութիւն խնդրելով, որ փոքր ինչ տկար է և արամադրված չէ, հրաժարվեց խաշտառակ բախտարանը գոցելուց:

Քուշարյանը հասկացալ իմ նեղ դրութիւնը, և վերցնելով բաժակը, մի այնպիսի հայրենասիրական ճառ արտասանեց, որ պոլսահայքս հափըշտակվեցին և մոռացան Ադամյանի և իմ դերասան լինելը:

Նորան պատշաճաժօր կերպով խրթին գրաբարով պատասխանեց Ս. Հեքիմյանը: Ծաշը վերջացալ:

* * *

Հետեյալ օրը, Ադամյանը խնդրեց այցելել յուր հորեղբայր՝ ծերունի կաթօրիկ եպիսկոպոսին,¹²⁰ որը ընկալվում էր Բեռլոյք-Տերե կոչված թաղում: Շատ սիրալիր ընդունելութիւն գտանք մենք այնտեղ, թե ծերունի եպիսկոպոսի և թե նրան չքաղապատող՝ Ադամյանի հորաքույրերից և մորաքույրերից:

Երեկոյան, փառաժօր ընթրիք անելուց հետո, սկսվեց ընդհանուր խոսակցութիւն այն ժամանակվա ուսութիւնքական պատերազմի առիթով Հայաստանում պատահած անցքերի վերաբերյալ:

Մեկ գիշեր այդտեղ մնալուց հետո, մյուս օրը մենք, հայտնելով մեր խորին շնորհակալութիւնը պատկառելի ծերունուն և նրա գերդաստանին՝ նորանց հշուրասիրութիւն համար, դարձանք Պոլիս մեր ընտկարանը, ուր մի քանի օր մնալով, իմ և թե Քուշարյանցի հիվանդութիւնը սաստկացալ մաշկ պատճառով Քուշարյանը թողեց Պոլիսը, իսկ ես մտա անկողին և երեք օր, ստանց ուշքի գալու, սաստիկ տաքութիւն մեջ պառկած մնացի անկողնում:

Հետո սկսեցի փոքր առ փոքր ուշքի գալ: Եվ երբ առաջին անգամ նայեցի երեխանցս լուսանկարներին, որ կախած ունեի գիմացս պատի

* Հատուկ ձեռք երկար ուշաբուսի:

վերա, սիրտս լցվեց և սաստիկ լաց եղա, կարծելով՝ չլինի թե մեռնեմ և չկարողանամ գրկել նորանց։ Այն ինչ նորանք գերեզմանումն էին։

Ազամյանը միշտ նոր-նոր բժիշկներ էր բերում, որոնք գալիս էին, նայում, մեղիտինները վերցնում և խորհուրդ տալիս, որ շուտով հետանա՞մ հայրենիքս։

Երբ փոքր ինչ կազդուրվեցի, Ազամյանը առաջարկեց ինձ դնալ դարձյալ մի քանի օրով Բեռլու-Տերե, որտեղի օդը առողջարար պիտի լինի ինձ համար։

Սա հարցրի Ազամյանին, թե կարճ կ՞մ արդյոք այնտեղ մի մաքուր հյուրանոց գտնիլ, որի մեջ կարողանայի մի քանի օր անցկացնել։ Ազամյանը հավաստեց ինձ, որ շատ երևելի հյուրանոցներ կան այնտեղ, և երբ եկանք Բեռլու-Տերե, նա տարավ ինձ մի կեղտոտ հյուրանոց։

Այդ հյուրանոցը միշտ լիքն էր թուզթ խաղաղոգներով և զանազան կասկածելի անձերով։

Այդտեղ Ազամյանը հավանել էր մի սենյակ վերին հարկում, որի պատուհանները և պատշգամբն ուղիղ ծովի վերա էին բացվում. սենյակում ոչ մահահալ և անզամ ոչ մի աթոռ կամ սեղան կար։

— Ետա լավ սենյակ է,— ասաց ինձ Ազամյանը, երբ մենք, բարձրանալով „soi-disant“ հյուրանոցի վերնահարկը, անցանք մի քանի օրուր և մտալլ գիրքով սենյակներ և դուրս եկանք ծովին նայող փոքրիկ, ամայի սենյակը։

— Եվ ահա այս մարդը,— ցույց տվեց նա մեզ հետևող մի գիթիտարի դարարազցու,— հասկանում և խոսում է ռուսերեն, շատ լավ կ՞առաչե մեզ։

— Ի՞նչպես,— բացականչեցի ես,— այս ամայի սենյակի մեջ, ծովի վերա, պիտի մնամ գիշերները մենակ, առանց մի որևէ հարևանի և առանց կենսական հարմարությունների։ Ո՛չ, շնորհակալ եմ, չեմ կարող, եթե ուրիշ առավել օրինավոր հյուրանոց չկա այստեղ, թույլ տվեք ինձ այս գիշերը անցկացնել մեզ մոտ, իսկ վաղը դառնանք Պոլիս և շտապենք ճանապարհընկնիլ դեպի Թիֆլիս։

Այդ գիշերն անցկացրի Ազամյանի հարգելի ազգականների սիրալից հյուրընկալության և հովանավորության ներքո, և մյուս օրը դարձանք Պոլիս, ուր Զարեհը, իմանալով, որ մի երկու օրից մենք պիտի դնանք հանձնեց մի ծրար Ազամյանին, խոսք առնելով նորանից, որ չբանա մինչև վերջին կայարանը՝ Թիֆլիս։

Այդ ծրարը պարունակում էր իմ երեխանց մահվան բոթը։

Վերջապես մենք նստեցինք Վահե ընկերության ԷՎեսթիթե շոգենավը և մի օր ու մի գիշեր անցկացնելուց հետո Բոսֆորի վերա, որովհետև այդքան մամանակ տևեց շոգենավի փրատված մեքենան նորոգելը, մենք սլացանք դեպի իմ կարոտյալ հայրենիքս, դեպի սիրելի գերդաստանս։

< Ծ Ո Վ Ի Վ Բ Ա >

Ազամյանի Թիֆլիս բերելու լուկ նպատակս էր նորան մեռնողների գերեք տալու, այսինքն այդպիսի գերեք գրամաներում և կոմեդիաներում, թե պատահեին։

* (Ծր.) Այսպես կոչված, այսպես անվանված։

Այդ առիթով մի օր, երբ միայնակ նստած պալուրի վերա, խորատուզոված էին հանգարա ծովի սքանչելի տեսարանով ու գելֆիններին որքն-թաց լողալով շոգենավի շուրջ, Ադամյանը հարցրեց ինձ, թե թե՛ տեսակ գերեր եմ ես կատարում։ Սա պատասխանեցի, որ գերերս զբան-պրեմիերի* գերեր են։

— Ուրեմն իմ խաղացած գերերս թե՛ պիտի լինեն։

— Այն, ինչ որ ունիք մեր սեպերատուարի մեջ և ինչ որ հարմար կտեսնենք մեր սեպերատուարից հանձնելու մեզ։

— Ի՞նչ տեսակ, զորօրինակ, գերեր են լինելու այդ մեր սեպերատուարից։

— Ժեան-պրեմիերի գերեր, հասկանալի է։

— Ձեք կարելի, որ սեփնյորի պաշտոնը ինձ հանձնեիք։

— Առայժմ անկարելի է, իսկ հետո կտեսնենք։

* * *

Ժանի շոգենավը առաջ էր ընթանում, այնքան մի տխուր, որտամաշ զգացմունք էր տրեւում ինձ, չնայելով, որ մենք կազմում էինք մի փոքրիկ և ուրախ ընկերություն, բազկացած մեզ՝ գերասաններիցս, մեր շոգենավի բարի, երիտասարդ Ֆրանսիացի կապիտանից, Պալտ մի պատվավոր ընտանիքից՝ երիտասարդ գեղեցիկ կնոջից, յուր երկու փոքրիկ զովակներով, որը գնում էր Պարսկաստան ամուսնու հետ միանալու և մի գուրիացի վաճառականից, որ բոլոր ժամանակ աշխատում էր Ադամյանին և գերասաններին երբեք մատչելի դարձնել վրաց լեզուն։

Շատ էր նպաստում նաև ընկերությունը ուրախ տրամադրություն մեջ պահելու օր. Միրանույշը, որ պալուրի վերա ժողվելով յուր շուրջ մեզ բոլորիս, երգում էր զանազան եղանակներ թե Ֆրանսիական օպերետներից և թե հայերեն եղանակներից։

Անցնելով Տրապիզոնի մոտից, որտեղ մենք մի քանի ժամ կանգ առանք և որտեղ իջավ շոգենավի վերա գտնված բաշխողուկների մի բազմություն, զբանավորված գլխից մինչև ոտը, որը շատ հավանական է, որ պիտի գնար ասպատակություն խեղճ հայերի գուլգերը։ Այդտեղ իջավ նաև Ադամյանը՝ այցելելու քաղաքը։ Սա զմայլեցի այդ քաղաքի գեղեցիկ դիրքով, այնինչ, ինչպես քաղաքից ետ դառնալով Ադամյանը հագորդեց, դա մի զզվելի և կեղտոտ ստիական քաղաք է եղեր։

Վերջապես սկսեցինք մոտենալ Բաթումին. այդտեղ ևս կանգ առավ շոգենավը։ Սա օգուտ քաղեցի այդ հանգամանքից, մտա քաղաքը՝ տեսակցելու իմ կրտսեր եղբորս հետ, որ բնակվում էր յուր կնոջ հետ այդտեղ։ Առաջին հարցս եղավ, հայտնի բան է, գերդաստանիս մասին։

Եղբայրս նմանապես լսեց երկխոսնցս մանվան մասին։

Մեզ այցելեց շոգենավի վերա տեղային ժեներալ կառավարիչը յուր սփրապով։

Այսօրեկից հեռանալով դեպի Փոթի, երկու ժամվա ճանապարհ կար մինչև նավահանգիստ հասնելը, մեզ դիմավորեց մի փոքր շոգենավ, զարդարված պարսկական դրոշակով. առնելով իր վերա բոլոր ճանապարհորդներին, ոլոր-մոլոր պտույտներով մեզ հասցրեց նավահանգիստը։

* (Ֆր.) Առաջին գրամատիկական տեսակների գերեր։

Դեռ չմտեցած եզերքին, հեռվից ևս նկատեցի իմ ընկեր գերասան Սուքիասյանին և նորա մոտ կանգնած տեղական պարսից կոնսուլին, որ ազդով հայ լինելով ու ազգական Սուքիասյանին, կամեցել էր պատվել մեզ՝ յուր գրողակով զարգարելով փոքրիկ շոգենաժը ու անձամբ գիծադրելով մեզ։

Եզերքը իջնելու պես, հայտնի բան է, մենք փաթաթվեցինք բնկերոջ և հետ ու ևս ներկայացրի նորան Աղամյանին ու օրիորդներին։

Նա ևս լռեց երեխանցս մահվան մասին։

Մանկասցանք մեզ պատմող կոնսուլի հետ, որը իսկույն առաջարկեց մեզ օթեանել յուր բնակարանում։

Մաքառառան չինովներինքի հետ մեր հաշիվները վերջացնելուց հետո, որը շատ հեշտացրեց կոնսուլը, մենք գնացինք նորա մոտ և դասնք մի գեղեցիկ բացած սեղան, համեզ կերակուրներով և խմիչեղենով, հանգերձ շամպանիայով։

Մյուս օրը կանուխ, հյուրասեր տանտիրոջը շնորհակալություն հայտնելուց հետո, մենք գնացինք երկաթուղու կայարանը, ուր մեզ սպասում էր իմ հին ծանոթ գնդապետ Ազեքստեղը Մելիք-Հայկազյանը, երկու գեղեցիկ փնջերով։ Նա շատ ցավեց, որ չկարողացավ ընդունել մեզ մեր գալըստյան իսկ օրը և ցանկանալով նորեկ գերասաններին հաջողություն, բաժանվեց մեզանից գնացքի երկրորդ զանգը տալուց հետո։

Երկաթուղին, որ բոլոր մամանակ անցնում էր անառտի միջով և գտնազան ծառազարդ զատիվայրերով, ապշեցրեց պուսնյաններին, մանավանդ Աղամյանին, որը տեսնելով մի որևիցե գեղեցիկ տեսարան, այն աստիճան հափշտակվում էր, որ ցանկություն էր հայտնում ապրել հայրության այդպիսի մի երջանիկ անկյունում, հետո բազմամարդ քաղաքներից, Պատանելով մի որևիցե տնակի, որը գտնվում էր մի անառտոս լեռան գլխին կամ ձորում առանձնացած լեռան ստորոտում, լսյաժամովալ ծառերի շվաքում, դառնում էր ինչ հարցով՝

— Զ՞ք կաբելի արդյոք Թիֆլիսում այդպիսի մի բնակարան գտնել ինչ համար, մի հարկանի, ցածր տանիքով, շրջապատված ծառերով, որի առաջը վազելիս լինի մի փոքրիկ առվակ։

< Թ Ի Յ Լ Ի Ս Ո Ւ Մ >

Վերջապես, երեկոյան մամը տաս և կեսին, հասանք Թիֆլիսի կայարանը, ուր ընդունեց մեզ Մուսղուկյանը, յուր պաշտոնական ժեներալի համազգեստով¹⁴⁵։

Վարձեցինք երկու կառք. մեկի մեջ տեղավորվեցին Աղամյանը, Սուքիասյանը և Սիրանուշը, մյուսում՝ Մուսղուկյանը, ևս և Ասադկը։

Մենք իշանք բնութսիտա անվանված հյուրանոցը, որը գտնվում է Գուլովինսկի պրոսպեկտի վերա։

Այնտեղ էին իշխան Ամատունին, Արզար Հովհաննիսյանը, մեր բանաստեղծ Պատկանյանը (Գամառ-Քաթիպա) և մի քանի ուրիշները Մասնաժողովի անդամներից, որոնց չեմ հիշում։

Մասնք գահլիճը, ուր պատրաստված էր մի շքեղ սեղան ընթրելու համար։

Ներկայացրի իշխան-Ամատունուն և մյուսներին Աղամյանին ու գե-



Պետրոս Աղամյան





Emilia

բասանուհիներին, նստեցինք ընթրիքի. ևս նշմարեցի ամենքի երեսի վերա մի տեսակ տխուր արտահայտութիւն և ամենքը, կարծես, շտապում էին, որ շուտով ընթրիքը վերջանա և բաժանվինք միմյանցից:

Փամի մոտավորապես երկուսին, երբ մեր հյուրերին տեղավորեցինք յուրյանց համար պատրաստված սենյակներում, և ևս կամենում էի վերցնել իմ պայուսակա ու ճանապարհիս իրեղենները, որ դնեմ կառքի մեջ ու գնամ իմ բնակարանս, Արզար Հովհաննիսյանը, որի ընտանիքը Բորժոմի ամառանոցում էր, առաջարկեց ինձ գնալ յուր մօտ անցկացնել գիշերը, որովհետեւ իմ բնակարանում գուցե, ևս մենակ լինելով, չկարողանամ հանգիստ գիշերել: Ընդունեցի նորա առաջարկութիւնը և չորս թե հինգ անձերի ընկերակցութեամբ, որոնց մեջն էր և Պատկանյանը, մենք գնացինք Արզարի տուն:

Մտանք նորա կարինեաը, կայքրինք սրգարները և սկսվեց ընդհանուր խոսակցութիւն, որից երևում էր, որ ամենքը մի ինչ որ բան ունին տակու. ու չեն վստահանում:

Ես մոտեցա Արզարի գրասեղանին, և տեսնելով նորա որդու պատկերը, հարցրի նորա ընտանիքի և երեխայի առողջութեան մասին, բռնելով պատկերը ձեռքումս:

Հանկարծ մոտեցավ ինձ Արզարը և ձեռքը դնելով ուսիս, ասաց.

— Խրախուսվիր, կգրայր Գեորգ, դու պետք է սկսես նորից ապրիլ... դու ոչ ոք չունիս այլևս գրկելու, բոլորը մեռել են...

Ես շփարեցի, բայց կարծելով, որ բարեկամս մի տեսակ ծագրածութիւն է անում, սկսեցի ապուշի պես ծիծաղել:

— Ծիծաղելու բան չկա, քաջացիր Գեորգս:

— Ի՞նչպես, — հարցրի ու զգացի մի տեսակ անբնական ցնցում ուղեղիս մեջ և արտասուքը վազեց աչքերիցս —... Ի՞նչպես, — կրկնեցի ես, — կինս, որդիքս...

— Բոլորը... — պատասխանեց Արզարը:

Ես հնկեկալով ընկա նստարանի վերտ: Մտիս մեջ զգում էի մի զարհուրելի, աննկարագրելի ցավ և հառաչում էի վիրավորված զազանի նման: Արզարը մոտեցավ և դարձյալ ձեռքը դնելով ուսիս, այժմ մեղմ ձայնով ասավ...

— Ո՛չ, Գեորգ ջան, կինդ ողջ և առողջ է, միայն երեխայդ չկան:

— Երկժուռ ևս, — մըռնջացի ես:

— Երկուսով միասին, շաքաթուկիսվա մեջ:

Թողնե՛ք այս տխուր հիշողութիւնները.....

Մի քանի օրից հետո, երբ ևս փոքր ինչ ուշքի եկա, հավաքեցի տեղական գերասաններին, մտքրի նորանց մեջ մի քանի թե արական և թե իգական նոր ուժեր, որոնց թիվը բոլորը միասին (բացի պոլսեցիներից) կազմում էին 12 հոգի, այն է՝ չորս գերասանուհիներից՝ Սաթենիկ Ջմիկյանից, տ. Ավայանից, օր.օր. Վարդուհուց, Մելիքյանից, զլխավոր գերակատար գերասաններն էին՝ Ամիրան Մանգիւրյանը, Մուքիսայան, Ավալյանն և ես¹²:

Տեղական 12 գերասանների ոռճիկը բոլորին միասին որոշված էր ամ-

սական 435 ա., այնինչ երեք պոլսեցիները պիտի ստանային 300 ա., ընդամենը ուրեմն ամսական ոտճիկ 735 ա.: Քաարոնի վարձ հինգ ներկայացման համար պիտի վճարվեր 750 ա., տֆիշաների, տոմսակների, ակեվիպիտի, գերեր արտագրելու և ուրիշ անակնկալ ծախսերի համար 40 ա., ընդամենը ուրեմն 1525 ա.: Հաշվելով միջին թվով ամսական հինգ ներկայացումից ամեն մեկի ստանալի մուսթը 300-ական ոտւրլի, իմ կարծիքով գեֆիցիտը երբեք 25 ա. ավել չպիտի լիներ:

Ահա այդ հաշվի վերա հիմնվելով, Քաարոնական Մասնաժողովը յուր դործունեությունն սկսեց սեպտեմբերի 3-ից 1879 թ., այդ օրը ներկայացնելով Սեր առանց համարման պիեսան:

Հասարակությունը պոլսեցիներին ընդունեց բուռն ծափահարություններով, և խաղը վերջանալուց հետո գուրս կանչեցին նորանց և ինձ. նորանց լավ խաղի համար, ինձ՝ հաջող ընտրողությանս համար:

Պոլսեցիներին Թիֆլիս բերելու օրից, ես աշխատում էի ծանոթացնել նորանց ինձ ծանոթ հայանի գերդաստանների հետ: Մանավանդ պ. Աղամյանին ես իմ գովասանքներովս այն տեղը հասցրի, որ նա մի տեսակ պաշտելի առարկա դարձավ երիտասարդության համար: Այնքան հափշտակվեց նորանցով հայ հասարակությունը, որ իրանք անգամ զարմանում էին իրանց հաջողության վերա, որովհետև երբեք Պոլիս կամ ուրիշ թուրքական քաղաքներում ոչ թե այդպիսի համակրանք վայելած չէին, այլև միշտ հասարակությունը վերաբերվել էր դեպի նորանց, ըստ ընդունված սովորության, իբրև մի անարգ և ամոթալի արհեստի տեր մարդկանց հետ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ
ԳՈՐԾԻՉՆԵՐ





ՄԻՆԵՐԴԱՏ ԱՄԵՐԻԿԱՆ

Ներսես կաթողիկոսին, պատահում է պարթև հասակով, զերին աստիճանի ազնիվ, Վասպուրական աշխարհից գաղթած մեկ մարդ, Հովհաննես Ամերիկյան անունով, Հայրապետը (այն ժամանակ եպիսկոպոս էր) սիրում է Հովհաննես Ամերիկյանին, հովանելով նորա միջոցով գործունեությունը, և տալիս է նորան մի քանի նշանավոր հանձնարարություններ, որ և նա կատարում է մեծ նշառությամբ: Դորանից հետո, երևի Ներսեսի շնորհիվ, Սրապիոն եպիսկոպոսը,* որին պատկանում էր, ինչպես ասում են, Ծին-Ուսպան գյուղը Ախալցխայի մոտ, պսակում է յուր քրոջ աղջկան, Շուշան Ալան-Փերգյանին Հովհաննեսի հետ և հանձնում է նոցա վարչության այդ գյուղը և նորա շրջակա հողերը:

Այդ ամուսնությունից ծնվում են մի աղջիկ Անայիս և հետո 1843 թ. մայիսի մեկին Հովհաննես (Մինդրատ) Ամերիկյանը:

Մեկ քանի ժամանակից հետո մեռնում է Սրապիոն եպիսկոպոսը և յուր կալվածներն անցնում են հոգևոր կառավարության ձեռքը:

Ներսես կաթողիկոսը այդ ժամանակ այցելում է Ախալցխայի շրջակա գյուղերը, ի միջի այլոց և Ծին-Ուսպան գյուղը, և նորից պատահելով այդ ժամանակ Հովհաննես Ամերիկյանին, դարձյալ փալափալում է նորան, առնում է նորա որդիբուհաց յուր հովանավորության ներքո, որովհետև Հովհաննեսի կնոջ մահից հետո երեխաները մեռնում են որր. աղջկան հանձնում է յուր ազգականներին՝ Շահապիգյանների ընտանիքին, իսկ փոքրիկ Հովհաննեսին 10 տարեկան հասակում հանում է Ախալցխայի ծխական ուսումնարանից և տալիս է Ներսիսյան ազգային ուսումնարանը, որի անտեսական հոգսերը քաշելիս է լինում Հովհաննես Ամերիկյան-հայրը, լրացնելով այդ աշխատանքի մեջ յուր երեսուն և մեկ տարվա ձրի ծառայությունը, բավականաչափով միայն Ներսես կաթողիկոսի խրախուսիչ կոնդակներով: Հովհաննես Ամերիկյան-հայրը վախճանվեցավ Ներսիսյան ուսումնարանում 104 տարեկան հասակում 1876 թ. և թողեց մեկ քանի նշանավոր ձեռագրեր, որոնցից երեւում է, որ ծերունին, երեխայական հասակից սկսած մինչև մահվան վերջին ժամերը, եղել է հոգով միշտ երիտասարդ և զգայուն բանաստեղծ¹²³,

* * *

Մանուկ Ամերիկյանը, զարգանալով հետզհետե Ներսիսյան ուսումնարանում, սկսում է գրազգիլ այն ժամանակվա նորածին հայ գրականությունը, որի պատվական ներկայացուցիչն էր Էշխուսիսափայլ¹²⁴ ամսագիրը:

* Սա այն Սրապիոն եպիսկոպոսն է, որ կաթողիկոսությունից զաւրածվ Հայաստանից ետքը Կիկեղոս գիշեր, Մանք. հեղ.:

և զբուսէ և մեկ ստանալոր ներսես կաթողիկոսի անակնկալ մահման տպագրութեան ներքո:

Այդ ժամանակներու և էր, որ ներսիսյան ուսումնարանի աշակերտների մեջ ծագում է թատրոնական գաղափարը և այդտեղ Ամերիկյանը հանդիսանում է այդ պատանիների խմբի պարագլուխը: Նորա ձեռքն է բռնում Միքրզատ անունով մի ողբերգութիւն և հիմք է դնում առաջին հայ թատրոնական ներկայացմանը Թիֆլիսի մեջ¹⁴²:

Այդ ներկայացման շնորհիվ փոքրիկ Հովհաննես Ամերիկյանին կնքում են բնկերները Միքրզատ անունով, և այնուհետև մինչև մահման որը նա ևս հայ հասարակութեան համար Միքրզատ անվանակոչութիւնով:

Պատմում են նմանապես, որ Ամերիկյանը, բացի թատրոնական զբաղմունքից, արժարժում է յուր բնկերների մեջ սեր դեպի լրագրութիւն, ուսումնարանի մեջ հիմնելով մեկ փոքրիկ ձեռագիր թերթ, ուր երեսն էին դալիս (բացի ուսումնարանի շրջանում պատահած անցքերից) փոքրիկ գեղեր, ստանալորներ և այլն¹⁴³:

Այդ ժամանակներում ուսումնարանի մեջ ծագում է մեծ խռովութիւն տեսուչ Արզանյանի ու մեկ քանի հոգաբարձուների դեմ, և հասնում է մինչև այն աստիճանը, որ հոգաբարձութիւնը ստիպւանութեան ուժին է դիմում երեխաների ազատամբութիւնը զսպելու: Ամերիկյանն այդ համադամանքում ցույց է տալիս իրան հալատարիմ բնկեր և հերոս երեխա յուր ստատիկ ընդդիմադրութեամբ¹⁴⁴:

1863 թվականին¹⁴⁵ առաջին անգամ իրրե գերասան հրապարակ է դուրս գալիս Ամերիկյանը Պերճ Պոռչյանի, Սուքիասյանի, Մատինյանի գերասանական խմբի մեջ, Թիֆլիսի քաղաքային թատրոնում Արշակ Բ. ողբերգութիւնում Դրաստամատի դերում: Հենց առաջին բեմ դուրս գալուց նա գրազեց ժողովրդի ուշադրութիւնը և համակրութիւնը յուր դերի որոշ և ազդու արտասանութիւնով և ուժեղ դիպիտայով: Չնայելով նրա մարմնի մեկ նշանավոր պակասութեանը, մանավանդ գերասանի համար (նորա ոտի մեկը կարճ էր մյուսից), հազիվ հազ կարելի էր նշմարել այդ պակասութիւնը բեմի վերա, որովհետև նա քայլում էր մեծ զգուշութեամբ և երբեք չէր մոռանում ծածկել այդ պակասութիւնը հանդիսականներից:

Արշակից հետո նա դուրս եկավ Սամել ողբերգութեան մեջ Վահանի դերում, որի մեջ նմանապես մեծ ընդունելութիւն գտավ:

Այդ երկու համարչա թե միատեսակ դերերը փորձելուց հետո, տաղանդավոր գերասանը վճռել էր յուր մեջ, որ նա ընդունակ է միայն ողբերգական դերեր կատարելու, բայց հետագա հանգամանքները ստիպեցին թե նորան և թե հանդիսականներին փոխել այս կարծիքը:

Ինչպես հայտնի է, շուտով այդ խումբը, որի ամենադիպիտայոր ուժն էր Ամերիկյանը, երկպառակաւից և Ամերիկյանը յուր ամենաընդունակ բնկերների հետ անցավ դեպի մյուս խումբը, որ գտնվում էր պ. Միրիմանյանի հովանավորութեան ներքո:

Այդ խումբը շուտով կազմեց մեկ առանձին ընկերական մարմին, որի պարագլուխներն էին Ամերիկյանը, Սուքիասյանը, Մանդինյանը և հոգւածին հեղինակը:

Այդ ընկերութիւնը գտնվելով ժամանակավորապես տասներկու հոգաբարձուների վարչութեան ներքո, փորձեց առաջին անգամ թե՛ տեղական,

թէ թարգմանական գրքածննդի մեջ բեմ դուրս գալ, մի կողմը թողնելով հին պատմական անհամ գրքածննդը: Առաջին անգամ 29 հոկտեմբերի 1863 թ. ներկայացրին հանդուցյալ բժիշկ Տեր-Գրիգորյանի ժլատ անունով կոմեդիան երեք արարվածով: Այդ պիեսայի մեջ Ամերիկյանը վերցրեց մլատի գերբ, որ սքանչելապես կատարելուց հետո, համոզվեցավ, որ ոչ թե միայն ողբերգական գերասան է, այլ գլխավորապես երևելի կոմիկ:

Այդ ներկայացումից հետո գերասանների և հոգաբարձության մեջ տեղի ունեցած այն երկպառակուքյունը, որի մասին ես մանրամասն խոսել եմ իմ թատրոնական հիշողությանս մեջ:

Ամերիկյանը թեև ներկա չէր այդ զեպքին, բայց միացավ հոգաբարձության գեմ բողոքող գերասաններին հետ, որից հետո կազմվեցավ մի անկախ և ինքնուրույն թատերական ընկերություն:

Դորանից հետո սկսվում է Ամերիկյանի գերասանական գործունեության նոր շրջան, որ միշտ զարգարելով նորա գլուխը գափնյա պսակներով, իջեցրեց նորան գերեզման, գնելով նորա վերա վերջին անժոռանալի հիշողության գափներն, որ անդադար պիտի հիշվի խղճուկ հայ թատրոնի պատմության էջերում, քանի կենդանի կլինի նա:

Ընկերոջս մահից հետո հանձն առնելով կենսագրողի տխուր պարտավորությունը, այն ընկերոջ, որի հետ ես գործել եմ 1863 թվականից¹⁴⁶ մինչև 1873 թ., մինչև նրա հեռանալը Պոլիս, որի հետ կրելով հայ թատրոնի գործիչների գառն լուծը, որի տակ երբեմն ճշգիւ կնք, երբեմն ուրախացել, այն ընկերոջ, որի հետ ունեցել ենք երբեմն անբավականություններ, բայց որի հետ և անցրել ենք շատ ուրախ ժամեր, ես կաշխատեմ լույս հանել միայն այն, ինչ վերաբերում է տաղանդավոր գերասանի գործունեության շրջանին:

Մինչև ժլատի ներկայացումն Ամերիկյանը, ինչպես ասացինք վերև, համոզված էր, որ նա լավ ողբերգական գերասան է: Բայց ինչքան նա վսեմ էր և անմեծան Արշակ Բ. մեջ Դրաստամատի գերում, Սամելի մեջ Վահանի գերում, միևնույն ձևով վսեմ և անմեծան էր կոմիկական գերերում:

Տաղանդավոր գերասանը նորանով է զանազանվում սովորական գերասանից, որ յուր բազմակողմանի ձգտումներով, մարդկության մեջ թույլ թե վեհանձն կողմերը ըմբռնելով, այսինչ գերում ստիպում է հանդիսականներին հեկեկալով ծիծաղել, այսինչ գերում գողալ սարսափից կամ լաց լինել խղճահարությունից: Այդ տաղանդներին էր Ամերիկյանը:

Ամերիկյանին չեն հաջողվել միայն երկու դրամատիկական գերեր, այն է Սանատրուկ արքայի գերը Սահղույա անվանված ողբերգությունում և Կարլոս Ծ-ին՝ Էսմանի պիեսայում: Դրա պատճառն էր առաջինում գերի անընդհատությունը, իսկ երկրորդ զեպքում գերասանի այն ժամանակվա զնոսահասությունը, և քուցե մեկ կողմից գերասանական սաբոթյուն (ensemble) թուլությունն էր և մյուս կողմից հանդիսականների անդադարաւս լինելը Վիկտոր Հյուգոյի բարձր գաղափարներն ըմբռնելու:

ժխտելից հետո Ամերիկյանը խաղացել է լուրջ Գեսախնդի գերը Սեր և Յախապաշարմունքը անվանված կոմեդիայում, Բերմոն պանդոկապետի գերը Քուզը խաղացողի կյանքում, Գարասիմ Յակուլիչի գերը Խարաբուղայում, Սարգսի գերը Էլի մեկ զոհում, Արուսյանի գերը Պետր կոմեդիայում, Կարապետի գերը Խոտորճակիմ-խոտորճակում, Դասպարի գերը Նինոյի ճըլ-ճըլվիում: Բացի այս և ուրիշ գերերը մեծ պիեսաների մեջ, որոնք ևս չեմ հիշում, ոչ մեկ փոքիկ համարյա չի անցկացել, որին շատանակներ Ամերիկյանը և որոնց իմաստալի գերակատարությամբ չհիացնեի հանդիսականներին:

Ամերիկյանը ամեն տեղ յուր կատարած գերում հանդիսանում էր իբրև սեռեծաղործ-գեղարվեստացետ, քան գերասան: Նա գերազանցեց մասնավանդ երկու խաղացած գերերում, այն է՝ Գարասիմ Յակուլիչի և Շիլլերի Ավագակիմի Պրանց Մոորի գերում: Մեկի մեջ Նորա բեմ գուրս գալուց մինչև պիեսայի վերջը հանդիսականները ծիծաղում էին անընդհատ, մյուսում գերասանի խաղից սարսուռում և զոզում էր մոզզվուրդը:

Այո՛, նա լացացնում էր և սաքսափեցնում:

Մի բան դարձյալ արժանի է նկատության. Ամերիկյանը, որ սովորական խոսակցության ժամանակ չէր կարող մեկ երկու խոսք ուղիղ արասանել Քիֆլիսի բարձրագույն, տեղական պիեսաների մեջ խաղալիս, բեմի վերա հնչում էին բռնեքը բուն իսկ Քիֆլիսցու նման:

Այս սոցերը գրելիս, երբ ևս աչքիս առաջ պատկերացած եմ ասնում հանդուցյալ ընկերոջս ծանր հիվանդությունից մաշված պատկերը, մտաբերում եմ այն անցյալը, որի մեջ գործում էր մեկ փոքրիկ ընկերություն, ևս զարմանում եմ, թե ինչպես էին կարողանում այդ մի քանի անհատները, առանց դրամական միջոցների, առանց գոնե բարոյական խրախուսանքի, զբաղված ամեն մեկը յուր ընտանեկան ծանր հանգամանքներով, առաջ տանել թատրոնական գործը, պատերազմել ամեն մեկ քայլում հազար ու մեկ արգելքների դեմ: Եվ Ամերիկյանը այդ ընկերության գլխավոր ումերից մեկն էր:

Նա համոզված եմ, որ եթե Ամերիկյանը ծնված լինեի ուրիշ հանգամանքներում և ուրիշ ավելի լավ զարգացած հասարակության մեջ, Նորա գործունեության շրջանը առավել լայն կլինեի և նա կկատարեի գեղի մարդկային առավել բարձր գաղափարներ, քան թե մեր հասարակության մեջ, ուր նա թատրոնական գաղափարի համար զո՛ւ գնաց իր նման զգայուն գործիչների հետ, ինչպես են Մատինյան, Միրադյան և Դեթման Արամյան, զո՛ւ գնաց այն ժամանակ, երբ Նորա հազվագյուտ տաղանդը, անցնելով փորձառության զանազան դասերից, կազդուրվել էր Նոր, թարմ, հաստատ գործնական ուժով:

Դառնանք դեպի ընդհատած պատմությունը: 1864 թվականից¹⁴⁷, երբ այդ փոքրիկ ընկերությունը առավ՝ վարչության սանձը յուր ձեռքը, նա սկսեց գործել անընդհատ և այդ թվականից սկսած մինչև 1865 թվականը, այն միջոցը, որ չնայելով Քիֆլիսի քաղաքային թատրոնում խառնական օպերայի լիակատար թագավորության, հայ թատրոնի գերասանական ընկերությունը այնուամենայնիվ մրցելով համարյա խալալական օպերայի դեմ՝ տալիս



Միհրգան Աբրահամ





Արամ Բաղդասարյան

էր ամեն մեկ թափոնական շրջանում, այսինքն հոկտեմբերից սկսած մինչև մայիսի վերջերը, երկու շաբաթվա մեջ մեկ ներկայացում, երբեմն և երկու, միջին հաշվով 20-ից մինչև 24 ներկայացում:

1865 թվականին Ամերիկյանը, Մանդինյանը և հոգվածի հեղինակս, ճանապարհորդվեցին Շուշի, Ալեքսանդրոպոլ և Երևան, որտեղ և առաջին անգամ արժարձից հայ թատրոնի դադափաբը, բացի Ալեքսանդրոպոլից, ուր արդեն հայ հասարակությանը թատրոնական ներկայացումները հետ ծանոթացել էր շնորհիվ մեկ քանի եռանդոտ հայ երիտասարդների (պ.պ. Հայկազունի և Աղամջանյան), որոնք մեզ ընդունեցին մեծ հարգանքով և սիրով:

Այդ հիշած քաղաքներում, ինչպես և Թիֆլիսում Ամերիկյանի տաղանդը մեծ ուշադրություն դարձրեց յուր վերա, թե ողբերգական և թե կոմիկական գերերում¹⁴⁵:

* * *

1866 թվականից մինչև ճանապարհորդելը Պոլիս, Խարաբալա պիեսայի ներկայացումից հետո, օրեցօր ուժեղացավ Ամերիկյանի տաղանդը և հասավ յուր ամենարարձը զարգացման:

Նորա վերջին խաղը, Թիֆլիսից մեկնելուց առաջ, Ֆրանց Մտորի դերում, բարձրացրեց նորան այն փառավոր աստիճանին, որին արժանանում են միայն քիները¹⁴⁶, մակրոգիները¹⁴⁷ և այլն:

* * *

1870 թվականից սկսված ընկերության ուժը սկսեց հեռանալ սպառվել. սպառվեցավ և հասարակության սերը դեպի թատրոնը:

Ամերիկյանը տվեց յուր վերջին հրաժարական ներկայացումն Ավագանիքը դրաման և հեռացավ Թիֆլիսից Պոլիս:

Թիֆլիսի մամուլը ցանկացավ հաջողություն երևելի տաղանդավոր գերասանին և հույս դրեց, որ Պոլիս հասարակությանը կգնահատե նորան:

Այնուամենայնիվ Ամերիկյանին չէր հաջողվել Կոնստանդնուպոլսում: Նա նախ սկսել էր մասնակցել Վարդուխանի թատրոնական ընկերությանը¹⁴⁸, ապա նորա հետ անբավականություններ ունենալուց հետո, կազմել էր առանձին խումբ և վերջիվերջո ընկճվելով անհաջողություններից, վերադարձավ Թիֆլիս հիմա՞դ օրից նա այլևս չկարողացավ վերագրանել յուր առողջությունը և ապրուստի կարոտ լինելով տվեց մեկ քանի ներկայացումներ և կոնցերտներ, որոնց առիթով և Մշակը մի քանի անվայելուշ խոսքերով վիրավորեց մահամերձ հիվանդին:

Մեռնող տաղանդը տեսավ իրան սարսափելի չքավոր դրության մեջ, վիրավորված այն անձինքներից, որոնց զրականական հաջողության գլխավոր պատճառն էր եղել, յուր ուժը վերանորոգելու հույս չունենալով՝ փետրվարի 5-ին ներկա տարվա, ժամի մեկին, ճաշից հետո, իրեն տարճանակով ապանեց:

Վերջացնելով իմ մեռած ընկերոջս կենսագրությունը, ես այնքանը կարող եմ ասել, որ շնա արավ այն, ինչ որ կարող էր անել^{*} և որ Թիֆլիսի հայ հասարակութայնը, չնայելով զանազան սնտոի երևիալոյց կրճե-

* Լատինական հայտնի ասածվածքի իմաստի փոփոխած ձևն է:

րին, չմտադրով հարգել չմահամերձ հիվանդ, ինքնասպան, հազվագյուտ աստղանգին՝ Երեմի ծիծաղեցնող և լացացնողը՝ հերոս գերասանին, վերջին Քնաս քարովը՝ տալ նորա գերեզմանի վերա... Եվ եթե նա ուներ պակասություններ... Ո՞ր նշանավոր մարդն է եղել կատարյալ:

ՍՏԵՓԱՆԵՈՍ ՄԱՏԻՆՅԱՆ

Մեռեմ, անցեմ, անհետացեմ... Այսպես ենք դատում և մտածում մենք այժմյան թմրած հայերս... Մենք մեռելությունը ոչնչություն ենք համարում, առանց հետևանքի, առանց ապագայի, բացի Եղբայրասյինն կամ Եղծիսայինն՝ ապագան: Բայց այդպես չեն դատում առաջընթաց ազգությունները: Նոքա դատում են ուրիշ տեսակ, նոքա սեփականացրել են յուրյանց ուրիշ գաղափար և հետևելով խառնությամբ այդ գաղափարին՝ մտնում են: Մեռելությունը երբեմն անմահություն է: Մեկ մահից բխում է բյուրավոր նոր՝ կյանք, նոր իրողություն, նոր գոյություն, նոր, պայծառ, շարժվելի՝ բնություն համար, իսկ մեկ համար աննկատելի էություն... Մեկ խոսքով՝ գիտությունը քարոզում է անմահություն, իսկ թմրած ագիտությունը՝ ոչնչություն:

Դրանից է, որ առաջագիմ ազգությունները երբ կորցնում են հասարակության մի որևէ գործունեյա անդամ, սկսում են քննել մեռածի անցյալը, նորա գործունեությունը և գործանով տալիս են նյութ թե գիտության և թե պատմությանը՝ եզրափակել մեռածի օգտավետությունը թե նորա փաստակարությունը ընդհանրության վերաբերյալ:

Իսկ մեզանում... Ծ, մեզանում... եթե մեռնել մեկ որևիցև հասարակության բարեկամ, մտածությունից տանջված, ազգության գաղափարի սիրո նահատակ Ն...¹²³, կամ հասարակության համար որևիցև ուրիշ գործունեյա անձնավորություն, մեզանում այդպիսի անձնավորությունների մահից հետո, թույլ է միայն հիշատակ նորա հետ կից բարեկամների սրբաթի մեջ:

Մեկ խոսքով չկա մեզանում գործի և աշխատանքի դնահատություն: Մենք հետևելով ստոր ետականության նպատակին, բարձրաձայն գոչում ենք թմրանող մեռնի, ապրողը աղբիւ:

Բայց որովհետև պատմությունը ունի յուր օրենքները, այդ պատճառով և մարդկությունը պահպանում է այն անհատների հիշատակը, որոնք աշխատել են հօգուտ հասարակության, գործանից է, որ Հոմերոսից սկսած մինչև մեր դարը մարդկությունը պահպանել է և դեռ շատ դարեր, գուցե մինչև աշխարհիս վերջը պիտի պահպանեն յուր հիշողության մեջը նորանց անունները և գործունեությունը:

Չկա ազգություն աշխարհիս երեսին, որ չունենա յուր մեջ հասարակության համար գործող անձինք, մեծ ազգությունների մեջ գործողները համեմատաբար և մեծ են փոքր ազգությունների հասարակական գործող անձինքներից, ուրեմն և ամեն մի ազգություն՝ փոքր թե մեծ՝ պարտավոր է նվիրել պատմության յուր միջի գործունեյա անձանց հիշատակը: Անա ինչ սկզբունքից դրդած, ևս վերցրի գրիչս, որ հիշելով անցյալիս ապավորությունները, լույս հանեմ իմ մեկ ջանի բարեկամներիս կենսագրությունը, որոնք գործել են հայ ժողովրդի համար, նվիրելով յուրյանց էությունը հայ թատրոնի գաղափարին:

Մտեփաննոս Մատինյան... Այս հազվագյուտ տաղանդը ծնվեցավ 1843 թ. հուլիսի 10-ին Թիֆլիսի Հաճարար անվանված թաղում։ Նորա ծնողները, ուսուցարանական պատերազմի ժամանակվա գաղթականներից էին¹⁵⁵։ Երեխայության իսկ օրից, փոքրիկ Մտեփաննոսը միշտ գրագեղեցում էր թե յուր ծնողներին, թե փոքրիկ ընկերներին յուր սրամաուքյունով և զանազան ծագրածություններով։ 1853 թ. հոկտեմբերի 13-ին, Մտեփաննոսին 10 տարեկան հասակում տվին ուսման Ներսիսյան դպրոցը, որտեղ այդ ժամանակ արդեն ծաղկել էր հայ թատրոնական Ներկայացուցիչների գաղափարը։ Այստեղ փոքրիկ, սրածիտ ծագրածու երեխայի վերա ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, մինչև նա մեկ հասարակ անցքի պատճառով ստացավ ընկերներից բնույթ-ծուլիք մականունը և որից հետո կապվեցան սերտ բարեկամական հարաբերություններ նորա և ապագա հայ թատրոնական գործիչների՝ Ամերիկյանի և Մուքիսայանի հետ։

Այդ անցքի մասին պատմում են հետևյալը։

Ներսիսյան ուսումնասրանի այն անարխիական գրություններից մեկի ժամանակ, երբ արժանավոր տեսչի մեկին,* վախճառու և կրքոտ անձինքների շնորհիվ, մեր հաղեղական իշխանությունը ամեն տեսակ միջոցներով հայածնելուց հետո ուսումնասրանի զեկավարությունը հանձնեցին հանդուցյալ Հակոբ Գարինյանին, մի օր Ամերիկյանի և նորա դասընկերներից մեկի մեջ պատահում է անբավականություն, երեխայական խաղից ստաջացած մեկ այնպիսի չփոթ, այն սովորական աղմուկներից մեկը, որ հրավիրում է մյուս Մնացած երեխաների ուշադրությունը և դառնում է արգեն ընդհանրական աղմուկ, որի վերա դարձնում է յուր տեսչական հեղձությունը այն ժամանակվա տեսչից Գարինյանը։

— Ի՞նչ է պատահել, թիշ,—աղաղակում է տեսուչը, մոտենալով աղմուկ բարձրացնող երեխայոց խմբին։

— Ամերիկյանը ծեծեց այսինչ աշակերտին,—թոթովում են մեկ քանիսը։

— Բ՛լ, այսինչ աշակերտը ծեծեց Ամերիկյանին,—արտահայտում են մյուսները։

Տեսուչը, որ արգեն մոտեցել էր աշակերտների խմբին և վճռել էր սաստիկ պատժել հանցավորին, դատավորի դիրք է ընդունում և պահանջում, որ ցույց տան հանցավորին։

Տարաբախտաբար, այդ անցքի, այսինքն Ամերիկյանի և նորա ընկերի մեջ պատահած անբավականության միակ տկանատես վկա դառնում է միայն Մատինյանը։

Տեսուչը դիմում է տկանատես վկայի խոստովանությանը։ Վկան լռում է։ Տեսուչը ստիպում է։ Վկան թույլ է անվրդով։ Վերջապես տեսուչը սպառնում է պատժել հանդուգն վկային։ Մատինյանը շարունակում է լուռ մնալ, իսկ երբ տեսուչը կամենում է իրագործել յուր սպառնալիքը, երեխա վկան այլևս չի դիմանում և խոստովանում է։ ԵԱտված վկա, վարժապետ ջան,—ասում է նա,—ես մենակ էն տեսա, որ գրանջ աղբորների պես իրարու վրա ծուլի-ծուլի էին ըլումա։

Երեխանց մեջ բարձրանում է սաստիկ ծիծաղ, ժպտում է խիստ դատավոր տեսուչն անգամ և այնուհետև թույլ է Մատինյանի մականունը ԵՄուլի-ծուլի¹⁵⁶։

* Չմէլյանը նկատի ունի Գեորգ Եանյանին։

Այն միջոցում գոյացած ուսումնաբանութիւնը, Պատկանյանի և Կարինյանի հոգաւնագործութեան ներքո այն փոքրիկ գործունէա թատրոնական խումբը, որի մասին ես խոսել եմ թատրոնական հիշողութեան ներքին մեջ։ Զարմանալի բան է, որ այդ երեխայական եռանդոտ շարժողութեան մասնակց, ինչպէս խոստովանել են Մատինյանի ընկերները, նա Մուսա էր անտարբեր գեղարթ թատրոնական գործը, թեւ ընկերութեան մեջ հայանի էր իրրեւ սրամիտ և ծաղրածու։

Վերջապէս 1860 թվականին, գեղեցիկների 22-ին Մատինյանը ավարտեց յուր ուսումը Ամերիկայանի, Մուքիասյանի, Պոռչյանի ու մյուսների հետ միասին¹⁵⁴։ Հենց այդ ժամանակն էր, որ Պոռչյանը դարձել էր թատրոնական խմբի պարագլուխ և ազատվելով Կարինյանի և Պատկանյանի ազդեցութեանից, վարձել էր երկու սենյակ ոչ հեռու քաղաքային թատրոնից և սկսել էին պատրաստել Արշակ Բ. առաջին ներկայացումը՝ Ռուսաստանից նորեկ երիտասարդ ուսանող Շախաթունյանի մասնակցութեամբ։

Արշակի հետ միասին դաժեշտի տեղ պիտի ներկայացնէին Դալալ Դաւա անվանված վոդեկլը, որ այդ իսկ ներկայացման համար գրել էր հանդուցյալ բժիշկ Փուգինյանը։ Հեղինակը մտցրել էր նորա մեջ մի մշնցի մշակի անմասնագործութուն, բայց որը դուրս էր եկել շատ չոր ու ցամաք բան։ Պոռչյանը հեղինակում է այդ գերը նորից և սկսում են փորձ անել խմբի մեջ թե մը խմբի ընկերներից ավելի կարող է իրագործել այդ բնագործութունը։

Մատինյանը, որ իրրեւ հասարակ այցելու գտնվում էր կրկնութեան սենյակում, սկսում է ծաղրել փորձող ընկերոջը և ինքը սկսում է լուի հանաքի համար միայն ներկայացնել յուր գլխում ստեղծած և երեխայական հասակից իմաստասիրած խեղճ, անբախտ, թափառական մշնցուն և ողբում է նորա ազիտորմ շէրվիկիվի, շյաման մեր մամուլաքոթ, քո հողին, ջրին պուրբանձ երգով։

Անշուրտ գերասանները ողբորվում են, չըջապատում են Մատինյանին և պահանջում են, որ նա կատարեւ հիվկիվի գերը։ Երկար ժամանակ Մատինյանը չէ համաձայնվում, բայց վերջապէս վճռում է փորձել յուրյան գերասանութեան մեջ։

Իսկ Թնշ տեսավ կեղտի մեջ խեղդված, եռակնութեան մեջ ամփոփված այն հասարակութեանը, որ նայում էր մինչև այդ որր, խեղճ մշնցու վերա, իրրեւ անասունի վերա, որի հալումաշ եղած պատկերի, պատաստած շորեքի տակից երբեք չէր կարող երեւակայել, տեսնել մարդկային էութեանը, ընտանեկան սիրտ, հայրենիքի կարոտ, յուր սե ու մութ որը սղաղող, հեռացած յուր բժամայնութից, անից, տեղից, օրական ապրուստ աշխատելու համար. մարդ նա տեսավ զլիւից մինչև ոտը, նուրբ և ազնիվ մնացած մարդ։

Մատինյանը ուսումնասիրել էր այդ խեղճալի և համակրելի հայ մարդու տիպը, ուսումնասիրել էր այնպէս, ինչպէս հետազոտում էր յուր առարկական բնութեանը քննող ուսումնականը. գերաստի հաղուստի, շարժվածքի, գրիմի տակից ոչ ոք չէր կարող հանաչել գերաստին, գերաստնը

կատարյալ մշեցի էր, Մատինյանցը և Կիվկիվը անբաժան մեկը մյուսից, մեկ հոգի և մեկ մարմին էին:

Այդպես այն շնչին, անիմաստ և աննշան պիեսային, ինչպես Դալայ Ղազոմ էր, զեղարգվեստագետ գերաստեր ավելց այն բարձր նշանակությունը, որի շնորհիվ այդ պիեսան մինչև այսօր Թուրքիայում է հայ թատրոնական բեմի վերա, թեև Կիվկիվի դեր կատարողները, Մատինյանից հետո, պատկերացրել են բեմի վերա տաղանդավոր գերասանի խաղի պարողիան միայն:

Մատինյանի կատարած դերերը շատ չեն, որովհետև նորա արտահայտած ամպլուայի համար այն ժամանակվա նորածին թատրոնը չուներ ոչինչ: Այնուամենայնիվ երեք դերի մեջ միայն, որոնք են «մշեցի Կիվկիվ», Հաջի Սուլեյման հրեա դալայի դերում, հեղ. Գուրգենբեկյանցի, Ժլատ պիեսայի մեջ ծառայի դերում, նա անմահացրեց յուրյան հայ թատրոնի գործունեությունը:

Գատահել է, որ տաղանդավոր կոմիկին այն ժամանակվա խմբի զեկավարները խցիկ էին զանազան ողբերգությունների մեջ, որևիցե բանջ Սմբատիս կամ Վահանիս և այլն. դերեր կատարելու համար: Նա թեև կատարել էր յուրյան արված դերերը խղճմասանքով, բայց համարյա միշտ չէ անցել այդ բանը առանց որևիցե կոմիկական անցքի: Հիշում եմ, զորօրինակ, ինչպես հանդուցյալը զրահավորված չորրորդ դարու նախարարների եղանակով, կատարում էր Սամվիի մեջ, կարծեմ, ծերունի նախարար Գարեգինի դերը: և այն տեսարանում, երբ ողբերգված ծերունին գոչում է նախարարների ժողովի մեջ «մահ նորան» (այդ խոսքերը վերաբերում էին բունավոր Վահանին) և հանում է յուր սուրը, հանդուցյալը այնպես ողբվորված կատարեց այդ, որ սուրը գուր թափվեց և ընկավ սամպաների արանքը, կուրտեց մեկ քանի լապտեր, և այդպիսով սաստիկ ծիծաղ հարուցեց հանդիսականների մեջ:

Բայց ով որ տեսել է նորան «Դալայ Հաջի Սուլեյմանի» դերում, նա չի կարող չխոստովանել, որ հաղիվ թե որևիցե հայաց բեմ ունեցել է այդպիսի գեղատես և այդպես լի շնորհքով դերասան:

Յուլյց տալու համար մեր ընթերցողներին, թե որքան արդարացի է իմ հայտնած կարծիքս, ես հարկավոր եմ համարում համառոտ պատմել այդ ինքնընտանեցյալ աննշան պիեսայի թուլանդակությունը, որից ընթերցողը կարող է կազմել յուր սեփական կարծիքը Ստեփաննոս Մատինյանի գերասանական ձիրքի մասին:

Հաջի Սուլեյման, զա այն պարսկաստանցի հրեա դալայների նախադաս է, որոնք թափառում են Թիֆլիսի ծուռ ու մուռ փողոցներում և սաղացնում են յուրյանց փառած ապրանքը միամիտ և չքավոր ժողովրդի մեջ, տալով նորանց նիսիա (ապստիկ). ես ասում եմ նախատիպ, որովհետև Մատինյանի ներկայացրած հրեա դալայի տիպը հետզհետե անհետանում է Թիֆլիսից:

Պիեսայի հեղինակը ներկայացրել է հրեա դալային յուր տանը ծալապստիկ նստած փոքրիկ թախտի վերա, հաջվի չոսկը ձեռին, ամփոփված

յուր նիսիաների հաշվետեսությամբ, որ վերջացնելուց հետո համոզվում է, որ կարողացել է արգեն յուր համար մեծ հարստություն կազմել: Ահա համարյա ամբողջ պիեհայի բովանդակությունը: Միայն Մատինյանի պես տազանդը կարող էր ստեղծել այդպիսի թույլ գծագրված մեկ անձնավորությունից այն տիպը, որն իմաստասիրելու համար տարիներով աշխատում են շատ նշանավոր հեղինակներ: Վարագույրը բարձրանալուց հետո մինչև նորա իջնելը ոչ մի սուր աչք, ոչ մի սքանչելի գիտակ չէր կարող գերասանի գրիմի տակից ճանաչել գերասանի անձնավորությունը, նորա երկար մորուքը, խիա հանքերը, նուրբ, բայց ճշկամ շրթունքները, երկայն բեխերը, ոչ մի բան չէինձու չէր թվում. իսկ հագուստը, այն մանրամասները հագուստի մեջ, որ միայն բնական է պարսկաստանցի հրեա գալալին, կոշիկները, զգակը, հրեայի բնական վիճակը. ոչ մի թերություն, ոչ մի անբնականություն չէր կարելի նկատել բեմի վերա մեացրած հրեայի մեջ:

Բացի այս ամենը, գերասանը ուսումնասիրել էր ամենամանրամասնաբար հրեա գալալի խոսակցության ամեն մեկ ձևը:

Ամբողջ կես մամ, մինչև պիեհայի վերջը, գերասանը միայնակ է համարյա բեմի վերա և հասարակությունը ծիծաղից թուլանալով, հետևում է նորա խաղին, նորա ամեն մեկ միմիկային և ձուրագույրը ծածկվելուց հետո, սաստիկ ծափահարությունով զգրգեցնում է թատրոնի դահլիճը: Այսպիսի համակրության արժանանում են միայն տաղանդները:

Մատինյանի նման կյանքից բխած ձիրքերը չեն բավականանում յուրյանց շրջակա կյանքի մասերը միայն ուսումնասիրելուց. նոքա աշխատում են ըմբռնել ամբողջ այն կյանքը, որով շրջապատված են: Կիվիվ, Հաջի Սուլեյման, այդ հերոսները չեն միայն նորան շրջապատող կյանքը, որի շրջանակը մեծ է՝ բաղկացած անթիվ խողովակներից՝ Կիվիվիվից, Հաջի Սուլեյմանից, այլևայլ անձնավորություններից: Մանկության հասակում, շնորհալի երեխան ըմբռնում է Կիվիվիվի և Հաջի Սուլեյմանի գոյությունները, մեկի՝ թափառական, հայրենիքից աքսորված, բռնության և բարբարոսների հալածանքներից աքսորված մշեցուն, որին երեխայի ծնողները մեկ կտոր հաց տալով, կարծում են բարեբարություն են անում, այնինչ այդ տարաբախտ հայ գաղթականը, հացը շաղախելով յուր աղիոգորմ արտասուքի մեջ, ուտում է հիշելով յուր թճեմը, յուր թՄշու Սուլթան սուլը Կարապետը և յուր խզնուկ ու մոռացված երկիրը, մյուսի՝ այն թափառական հրեային, որը հալածված ամենքից, սողորել է թափառել երկրից երկիր և յուր անվերջ թափառական կյանքում սողորել է խաբեբայություն: Մատինյանը յուր մատաղահաս հասակում ըմբռնել է այդ անձնավորության՝ գալալ հրեա Հաջի Սուլեյմանի տիպը: Նա տեսել է ինչպես Հաջի Սուլեյմանը, բեռնավորված յուր ծանր բոխով, մտել է յուր ծնողների կամ նորանց հարևանների տունը, բոխչեն բաց անելիս, նորա միջի փառած ապրանքները ցույց տալիս, մեկ արասանոց կտորը երկու արասով ծախելիս և այլն: Մեկ խոսքով, նորա զգայուն մանկական բնավորությունը ըմբռնել է այն, ինչ որ նա յուր երեխայական զգացմունքներով շողափել է յուր շուրջը, մեկնել է յուր գեոահաս ուղեգրով մարդկության լավ և վատ կողմերը, ճշմարտությունը և ստությունը:

Երեխան առնում է այն հասակը, երբ նորան տանում են ուսումնա-
րան, Լերսիսյան դպրոցը, տանում են Հավաքարի թաղից Վանքի թաղը:
Այդ հետաժոր ճանապարհի վերա մեյզան անվանված բազարումը, մեծ պատի
միջոցին, նա նկատում է մեկին, որը կանգնած մի փոքրիկ թաթախի
մոտ, լիքը բակլայով, կշեռքը ձեռին, անդադար կրկնում է, հրավիրելով ցան-
կացողներին «Մարութանի բակլայ», այսինքն՝ ընտիք, լավ եփած, վրեն սոխ
կոտորած, ազ արած, մեկ խոտքով համեղ բակլայ:

Տպագորությունը Թում է երեխայի մեջ:

Բժիշկ Փուգինյանը գրում է Հազար քումնանց կարա տնունով մեկ
ուրիշ վոգելի, որի դործող անձինքներից մեկն է ծառան (Մարութան անու-
նով):

Բանաստեղծ դերասանը, ուսումնասիրած արգեն յուր մեջ բակլայ ծա-
խող, բազարի մեջ գտնված տիպը, որ անդադար բղավում է բակլայ, բակլայ,
Մարութանի բակլայ, «Հազար թումնանցի» տիրոջ ծառա Մարութանի գերը
ստանալուց հետո, մտածում է ստեղծել հեղինակի աննշան ծառայի գերից
մեկ կենդանի ծառայի, բուստա (ինչպես ասում են թիֆլիսցիք), «հետ եկած»
ծառայի գեր: Իսկ այդ ժամանակներում Թիֆլիսի մեջ կային վաշխառու հայ
ընտանիքներում՝ գյուղերից բերած, սովածությունից ծախված՝ փոքրիկ հայ
դուռացի երեխաներ, որոնց վաշխառու ընտանիքը բանեցնում և պահում
էր անասունի նման: Մատինյանը մտնում է յուր գեղարվեստական ձեռ-
քի միջոցով այդ երեխա ծառաների շրջանը: Նա գտնում է, որ նորանք,
երեխաները, դեռահասներ են և այդ պատճառով ազնա են երևում յուրյանց
պառզ օգեստ վաշխառու ընտանիքներում: Պետք է բողոքել, վճռում է յուր
մեջ գերասանը և հնարում է, առնելով յուրան նյութ՝ Մարութանի բակլայ
ձախողի հագուստը, կոպիտ շարժվածքները և խոբիտ ձայնը, յուր գիտած
երեխա ծառաների միամտությունը և ստեղծում է այն Մարութան ծառա-
յին, որի գերը բեմի վերա այդպես շնորհքով ստեղծելու համար լուսավոր
հասկացողությամբ զարգացած հասարակությունը կպսակեր դափնիներով
դերասանին, իսկ... Թողնենք տխուր եղբակացությունը:

Նոր կազդուրված թատրոնական խումբը, որ գոյացավ այդ ժամանակ
պերճական և մշուս ընկերության դերասաններից, սկսվեց կանոնավորվել,
դիմելով դեպի նոր ունակական ուղղությունը: Ժամանակի բերմունքը ի դեպ
պարզեց այդ խմբին մեկ բարի և լուսավոր բանաստեղծ անձնավորու-
թյուն:

Բժիշկ Տեր-Գրիգորյանին:

Դա գրեց ժլատ անունով պիեսան, որի հետքը այժմ կորած է «ի պա-
տիվ» նորա մերձակա ազգականների և մասամբ հանգուցյալի անհոգության:
Այդ պիեսայի մեջ հեղինակը նկարագրել էր մեկ ծառա, մեկ, ինչպես
հիշեցինք վերև, հետ եկած, ուստա, խորամանկ ծառաներից մեկին, այնպի-
սի ծառա, որին ստեղծել էր բեմի համար Մատինյանը յուր արտիստական
երևակայության ազդեցությամբ ասել:

Այդ ծառան այնպիսի մեկ անձնավորութիւն է, որին զերասանը եւ հեղինակը նկատել էին հատիկներով, իսկ այժմ նորանցով լիքն է ամբողջ Թիֆլիսը։ Այդպիսի ծառաների բնատիպերը գոյանում են Ղազարից, Ղաւարապից, Գյանջուց, Սրեանից, Աքուլիսից եւ այլ հայաբնակ տեղերից Թիֆլիս եկած միզերաբլներէից*։

Տեր-Գրիգորյանի ժլատի մեջ Մատինյանը ցույց տվեց հայ հասարակութեան այդ նկարագրած տաժանակիր հայ ծառայի բնավորութիւնը։

Ժլատը սաստիկ բարոյական կեղտի մեջ խեղդված մեկ անձնավորութիւն է։ Դա Մուկիեի սոսկալի տիպերին նմանվող այն մարդկանցից մեկն է, որի համար կյանքի միակ նպատակն է դանձր, ունենալ փող, դիզել, կիտել նորան ամեն տեսակ միջոցներով, գրազվել նորանով, ուրախանալ, արածել նորա համար եւ մեռնել ի սեր նորա։ Ղազարից, զուցե Շամշադնից կամ ուրիշ սորա նման մոռացված ու կորած երկրից, ռաբաբախ գյուղացի ընտանիքներից, 16 կամ 17 տարեկան հասակի երիտասարդը օրական հաց որանելու պատճառով թափառելով գյուղից գյուղ, գաղափարից գաղափար, վերջապես հասնում է Թիֆլիս, Անդրկովկասյան քաղաքներից այդ մեծ քաղաքը, որտեղ գյուղացին պիտի սովորի շխիւք, քաղաքային ամենավերին իմաստութիւնն եւ այլն... Դալիս է Թիֆլիս սովածութիւնով, յուր գեռահաս գրութիւններից թմբած մի օրեկից համեստ Գրիգոր կամ Պոզոս, դիցուք, զազախեցին, ընկնում է Թիֆլիսում թափառող անգործների սարսափելի չըջմանը... Պատում է, թափառում է, մնում է օրերով գիշերներով սոված եւ վերջապես ընկնում է քաղաքում հոշակված հարուստ, բայց ժլատ մարդու տունը։ Այդ տանը, այդ ընտանիքի ազդեցական կյանքում, նա սկսում է իրան զարգացնել համեմատ յուր ազգայի, ազնիւ պարոնի (տիկինի) ցանկութիւններին ու սովորութիւններին, որը կարելի է բովանդակել երկու խոսքի նշանակութեանց մեջ, այն է՝ խաբել եւ չղոքորթել ամեն մեկ գիշգիշում, խաբելով ավելի ազգանովացնել յուր գրութիւնը, չղոքորթելով ցանկալի լինել ամենքին։

Անձ ինչպիսի բնավորութիւն հայ ծառաների դերեր էր ուսումնասիրել արտիստը, որի տեսակներից մեկին ցույց տվեց հասարակութեան ժլատ պիեսայում։ Մատինյանի տաղանդի օրբստօրե զարգանալու եւ ուժեղանալու հետ ավելանում էր եւ նորակազմ հայ թատրոնական խմբի ուժը, որի համեմատ տաբաբախաբաբ սկզբից օրբստօրե նվազել եւ ընկնել բարոյականապես հայ թատրոնի հոգաբարձական վարչութիւնը։

Վերջապես այդ երկու հակառակ՝ մեկի խմբի առաջընթաց ձգտողութիւնից եւ մյուսի հոգաբարձուաց սխալ ընթացքից ծագեցավ այն ախուր եղելութիւնը, որ խումբը բաժանվեց հոգաբարձութիւնից եւ սկսեց գործել ինքնանկախ, առանց հոգաբարձութեան հովանավորութեան եւ կողմնապահ խնամատարութեան։

Գուցե արտիստին վիճակված էր մարդկութեան նոր, շատ ուրիշ, առավելապես հայութեան զանազան շրջանների միջից շատ տիպեր ուսումնասիրել, բայց այդ եղելութիւնը դառավ համարյա ամենապիտավոր պատճառը հայ թատրոնական բեմից Մատինյանի հեռանալուն եւ որից հետո նա չապրեց երկար ժամանակ։ Խմբի գլխավոր ուժերը որոշեցին ընդդի-

* (Ծբ.) Թշմառներից, գժրախներից։

մազքել հոգաբարձության տնիքովացի մի պահանջին, և հաժաքվելով մեկտեղ, որոշեցին հոգաբարձության նիստին, ուր հրավիրված էր ամբողջ խումբը, բողոքել այն անակերպության դեմ, որ պիտի առաջարկեր հոգաբարձությունը, այն է՝ միայն մեկ գերաստանունուն նախագահել մյուս մեացած երկու գերաստաններին՝ որ-որ. Գալիանից և Արամյանցից և առաջնահարգ գերաստաններից: Գերաստանների խորհրդած ության ժամանակ Մատինյանը չեկավ, միայն հայանել էր մեկ ընկերոջ բերանով, որ նա համաձայն է ընկերության վճռի հետ և կբողոքե միասին նորանց հետ:

Կայացավ հոգաբարձական նիստը, բազկացած միայն երեք հոգաբարձուներից՝ Գ. Իգմիրյանից, ըմբիկ Տեր-Գրիգորյանից և Բ. Պոսոբյանից:

Տարաբախտաբար հանգամանքները փոխվեցին: Հոգաբարձությունը ընկնելով թևե տվեց դարձյալ մեկ քանի ներկայացումներ, յուրյան հաժաարելով մեացած մեկ քանի ինքնակոչ գերաստանների և միայն երկու շնորհքով անձնավորությունների, Խ. Նվարզ (Սոֆի) Մելիք-Նազարյանցի և Մատինյանի մասնակցությամբ, բայց չուտով դադարեցրեց հավիտյան յուր գործունեությունը, թողնելով թատրոնական ասպարեզը աշխույժով և եռանդով լի գերաստանական ընկերությունը:

Այսպիսի իրողություն հայտնվելուց հետո Մատինյանը համարյա դաժանաբան է յուր ընկերներին, ապաստարում է յուր սիրած, փայփայած սրբազան գործի դեմ:

Սա իրավունք եմ ապիս ինձ բացատրելու այդ իրողությունը շատ հասարակ ձևով, որ չի կարող ոչինչ արատ ձգել համակրելի գերաստանի հիշատակի վերա:

Այն տեղեկությունների հիմանց վերա, որ ես հաժաքել եմ նորա ազդեականներից և մեկ քանի նորա մտերիմ բարեկամներից և անգամ իմ ունեցած նորա հետ կիսակառուր (այն ժամանակ մենք պատկանում էինք հակառակ կուսակցությունների՝ նա հոգաբարձական, ես խմբի ընկերության) խոսակցություններից, Մատինյանի նպատակն էր մի փոքրիկ գումար հաժաքել, որ նորանով շարունակեր նա յուր ուսումը:

Սով շատ պարզ բան է, որ այն ժամանակ, այն սոսկալի շինծու հոգաբարձական հովանավորության ներքո ղեկավար երիտասարդը չէր կարող ուրիշ կերպ նայել յուր ապագա վիճակի ապահովության, եթե ոչ հուսալ ուսում անելու համար մի որոշ գումար հաժաքել հոգաբարձական հովանավորության միջոցներով: Նա իբրև բանաստեղծ, հաժառում էր հայ թատրոնի իրագործվելուն միայն հոգաբարձության ազդեցության ներքո, և այդ պատճառով, Նվիրված լինելով թատրոնին, նա պիտի ընթանար այն ուժով, որ համարում էր կատարյալ և ազդու հասարակության առաջ:

Սով նա գնաց այդ ճանապարհով, բայց սխալունքը բաժանեց սիրունուն սիրեկանից՝ հայ թատրոնին սրբելի արտիստից...

Մատինյանը գնաց Մոսկվա, նպատակ ղեկելով յուրյան վաճառականության միջոցով հաժաքել փոքրիկ գումար և շարունակել այնտեղ յուր ուսումը, բայց այդտեղ նա հիվանդացավ, դարձավ յուր հայրենիքը, որտեղ արգեն գործում էր այն ընկերությունը, որին սկզբում նա հավատ չընձայեց և մեռավ երիտասարդ հասակում: Թողնելով սգի մեջ թե յուրյան հարգող և պաշտող ընկերներին, թե յուր սիրած հայ թատրոնական բեմը¹⁵⁵,

Լուս ու մուշ, երկար տանջվելուց հետո, Բաքվում մահկանացուն կնքեց երբեմնի ուժով լի, տազանգավոր զերտաճ Արտաշես Սուքիասյանը՝ Նա վախճանվեցավ աշնայի մի անհայտության մեջ, որ Բաքվա տգատաժիտ երիտասարդության մեջ ոչ միայն չգանձվեցավ մեկը, որ փոքր ի շատե տեղյակ լինելով մեր ազգատիկ բեմի պատմությանը, հազորդեր այդ տերալի յուրը թիֆլիսի հայ մամուլին, այլ մինչև իսկ նրա հուզարկավորության օրը հազիվ երեք թե չորս հոգի են եղել հետևելիս խեղճ, մոռացված գերասանի դագազին։

Վաթառնական թվականների սկզբում հանգուցյալը աշնայի մի ուժ էր, որ անհասկանալի էր առանց նրա մասնակցության մի որևիցե խաղ բեմ հանել։ Նա միևնույն ժամանակ հայ թատրոնի հիմնադիրներից մեկն էր։

Արտաշես Սուքիասյանը ծնվել է թիվով քաղաքում, ուր նրա հայրը՝ Տեր-Ալեքսանդրը ավագ քահանա էր։

Ինձ հայտնի չէ նրա ծնվելու տարին, բայց այսօրը գիտեմ, որ Նա մեռավ մոտավորապես հիսուն տարեկան հասակում։

Հանգուցյալը Միհրգառ Ամերիկյանի հետ միասին ավարտելով Ներսիսյան դպրոցում յուր ուսման ընթացքը, նրա հետ նվիրեց իրան հայ թատրոնական բեմին և պերճական խմբի գործունեությունը զաղալից հետո հանգուցյալը Ամերիկյանի, Սեդրակ Մանգինյանի և ինձ հետ միասին սկսեց գործել մինչև 1865 թ., երբ մենք՝ Ամերիկյանը, Մանգինյանը և ես ճանապարհորդեցինք դավաճները։

Այդ յուր կարճ գերասանական ասպարեզի միջոցին Նա ստեղծեց՝ Դալա-Ղազոյի գերե Փուլինյանի պիեսայում, Ոսկան Պետրովիչի գերը Սուրգուհյանի Գրիբովան սարքը խնր է վողեկում և Լիսայունը՝ Տեր-Գրիգորյանի Էս էլ քի մոցիբլաթիմ պիեսայում։

Բացի այդ՝ թարգմանական դրվածքներում Նա մեծ հաջողությամբ կատարում էր ուղտյորի* և կոմիկների գերերը։

Վաթառնական թվականների վերջերը Նա տեղափոխվեցավ սուրբերի պրիստովի պաշտոնով Վաղարշապատ¹⁵⁶, ուր Ուլլուխանովի պատվավոր ընթանիքի դատեր հետ ամուսնանալուց հետո, 1879 թվականին նորից եկավ թիֆլիս և նվիրեց իրան գերասանության, և ապա 1881 թ., խեղճ հայ թատրոնի կործանվելուց հետո, հեռացավ ընդմիշտ գերասանական գործունեությունից¹⁵⁷։

ՔԵԾՎԱՆ ԱՐԱՄՅԱՆ

Ղազարի դավառումն է գտնվում Միլիթի գյուղ՝ անունով բնակավայրը, որի առաջից փոքրիկ գետակ է վազում, շրջապատված գեղեցիկ անտառով։ Սրանից տասնյակ տարիներ առաջ, մի հիանալի զարնանային տառվոտ, գետակի եզերքին Տ կամ Ծ տարեկան մի փոքրիկ երեխա էր նըստած, որ Նայելով ջրի սրընթաց հոսանքին, զողոթնուն ձայնով, լալով և երբեմն հեկեկալով մի տխուր երգ էր երգում բայաթիի եղանակով։ Երե-

* (Ծը.) Այն գերերը, որոնցում պատկերված են իբրտական, հաճախեք բարյախոտական երկարալունջ գառապանությունների հեղձած մարդկանց կերպերները։ Թատրոնական անպիտան իմաստով--բարյաթան (սեղանի)։

խան շատ աղքատ էր հագնւոյմ կամ, ճիշտ տառած, նրա վրա միայն ցնցոտիներ կային, որոնք նրա մարմնի մերկութիւնն անգամ չէին ծածկում. երգելով այդ տխուր երգը, երեխան մտաբերում էր յուր դորովագուժ ծնողներին, որոնք նոր էին մեռել, թողնելով նրան, մատաղահաս աղջկան, որբիկ աշխարհիս երեսին. այդ երգով ու լացով նա միխթաւում էր իրեն, յուր կրած անբախտութեանց փոխարենը և նայելով ջրի հոսանքին, հետեւում էր նրա հետ մի ուրիշ աշխարհ, ուրիշ երկիր, ուր մարդիկ առավել բարի են, քան նրա եղբայր Առաքելի կինը, որը միշտ ծնծում և անարգում էր որբիկ աղջկան, որը ամեն մեկ հարմար կամ անհարմար զեւքում ի սրտե ցանկանում էր, որ նրան տգրգը տանե՛ն, ժամէր խեղզե՛ն և այլն, և այլն, այսպիսի սիրտ ճճւող ժաղթանքները: Հաց եղած ժամանակը նա նրան օրերով հաց չէր տալիս, ծնծում էր նրան, երբ երեխան քաղցած յալիս էր:

Այդ որբիկը, այդ երեխան էր ազազա երևելի գերասանուհի՝ 60-ական թվականների նորածին հայ թաւրոնի և հետո վրաց ընձի ուժերից մեկը՝ Քեթևան Արամյանը¹¹⁵.

Այդպիսի շեղումութեան մեջ էր զանգում նա, երբ մի օր նրա միակ տեղ և եղբայր Առաքելը, Թիֆլիսից վերադառնալով, հայտնեց երեխա Քեթևանին, թէ նրան պիտի տանի և հանձնի. Թիֆլիսի երևելի բնասնիքներից մեկին, Փոքրիկ Քեթևանին այդ լուրը մեծ ուրախութիւն պատճառեց, որովհետեւ նա կարծում էր, թէ հետանալով գյուղից, յուր ծննդավայրից, նա կարող էր երջանիկ լինել, ազնիւ լավ մարդկանց մեջ զանգել:

Բերին երեխային Թիֆլիս և հանձնեցին մեկ ձեռ իշխանուհու հովանավորութեան. Չորս թէ հինգ տարի Մնաց նա այդ իշխանուհու տանը: Մեկ քանիսի առածներով իշխանուհին նայում էր նրան իբրեւ որդեգրի, իսկ մշտաների՝ հասարակ աղախնի. Երբ իշխանուհին վախճանովեց, նրա որդիքը բաժանովեցան և Քեթևանը Մնալով նրանցից մեկի տանը, մի փոքր ժամանակից հետո զրկվեց և այդ պաշտպանից: Այնուհետեւ Մնալով անտեղ անապին միջոցի, նա ստիպովեցավ մանել ազախնութեան մեկ ոռւս աստիճանավորի տուն, որտեղից և անցավ մեկ քանի ժամանակից հետո Կարինյանի տունը, ուր և գտավ մեծ խնամատարութիւն և կարեկցութիւն. Կարինյանի կնոջից, և որտեղ նա փոքր ինչ կազդուրվեցավ և զարգացավ: Այդ այն ժամանակն էր, երբ Կարինյանը և Պատկանյանը սկսեցին իրենց համար նոր խուճը կազմել՝ նիկողայոս Միրիմանյանի և Շադրինովի աջակցութեամբ և պատրաստովում էին տալ Վարդան Մամիկոնյան ողբերգութիւնը, որի համար հարկավոր էին գերասանուհիք: Այդ օրից հանդես եկավ իբրեւ գերասանուհի և Քեթևան Արամյանը *quasi*—օրբորդ Գայիանէն հետ միասին. Սկզբում նրա վրա նայում էին այնպիսի մեկ գերասանուհու, որը ընդունակ կարող է լինել միայն փոքրիկ դերեր կատարելու տեղական զբոլմաների մեջ, և այն ժամանակի հասկացողութեան համեմատ փոքրիկ բաներ երգելու թէ պիեսայի մեջ (երբեմն շատ անտեղի) և թէ անարակտնորում:

¹¹⁵ (Հատ.) Իբր թէ, կնք, զրեթէ:

Դա այն զերասանուհիներին էր, որոնք մի քանի ժամանակ շարունակ ոտների վրա ստանում Նիկողայոս Միրիմանյանից:

Մինչև զերասանական խմբի ընկերության կանոնադրվելը, որի ամենաշունամոլոր ուժերից մինն էր և Արամյանը, զերջինս չէր կարող ցույց տալ ոչինչ այն զեղարկեսական արժանազորությանններից, որոնք հետագա ժամանակներում արտահայտեցին նրա մեջ հաղթանակաւ տալանդ: Ինչպես Ստեփաննոս Մասիսյանը, ինքն ըստ ինքյան, յուր մտավոր ուժի ազդեցության ներքո, գիտելով այս և այն տիպերը ժողովրդի մեջ, մարմնացնում էր նրանց մի սրերիցն Մարութանն ծառայի, թե հրեա շէնքի Սուլեյմանին էր զմեջն և այլն զերերում, այնպես և Քեթևան Արամյանը զընկեր էր յուր ախուր երկխոսական անցյալում իրեն պատահած կանանց բնավորությանները և ամեն մեկ յուր խաղացած զերի մեջ ցույց էր տալիս հասարակության, որ ծանոթ է, ուսումնասիրել է այն կնոջ կամ աղջնկա զերը, որ հանձն էր առել ներկայացնելու:

* * *

Հիշել այստեղ մի առ մի հանդուցյալի զերերը՝ մենք զժողարանում ենք, այսքանը միայն կատենք, որ նրա ամպլուան շատ ծանր և բազմակողմանի էր: Մերեք ոչ մի ներկայացում չի պատահել՝ թե տեղական, թե եվրոպական սեպերատուրից, որ նա չժամանակեցեր զոնյա մեկ պիեսայի մեջ: Հիշենք ամենազլխավորը:

* * *

Խաբարաւայի մեջ նա կատարում էր իրարու բնավորությանց հակառակ երկու զեր, այն է՝ Մասիսյանցի մոր Քեթևանի և տղեղ հարսնացու Երիտր Մարգարիտի զերերը: Մեկինը՝ վաթսուն տարեկան ծեր կնոջ, իրեն երջանիկ համարող, բարեմիտ, հին ազանդական մոր զերը: Մյուսը՝ բարբարոս Գարախիմ Յակուլիչի ստրուկ տղիկա, տղեղ, բայց զգայուն, անբախտ էակի զերը: Սա համոզված եմ, որ եթե Խաբարաւայի հեղինակը՝ զրած ունենար յուր պիեսան Քեթևան Արամյանից առաջ կամ հետո, ուրիշ ոչ մի զերասանուհի չէր կարող այդ երկու զերին տալ այն բնականությունը, այն կյանքը, այն իրական կերպարանքը, որոնք հատուկ են միայն Թիֆլիսի կանանց սերնդի այն գասակարգին, որոնց պատկերացրեց բեմի վրա Քեթևան Արամյանը:

Մասիսյանցի մոր զերում հասարակությանը չէ որոշում, չէ բաժանում երկասարկ, մասով ցույց տալու փեսացուի երջանիկ մորը իսկական Քեթևանից: Հասարակությանը տեսնում է Թիֆլիսեցու մոր կենդանի պատկերը բեմի վրա: Նա մեկ ժամ թաքտոն գալուց առաջ՝ տեսել է այդ՝ մորը, զգացել է նրա զգմանքը, երջանիկ մոր ինքնագոհությանը, որբեայրի հաժախարիմ կնոջ հիշողությանը յուր ամուսնու մասին: Նա սիրում, հաղթում է այդ ազանդական պատմի մոր բնավորությանը, որովհետև այդպիսի լուսավոր տիպերը սկսում են սպառվել հեռավոր աշխարհի մայր, Երարի կինն արտասուքը աշխարհի բացականչում է հանդիսականը, զղբացնելով ծափահարությանը թաքտոնի դաշինք, երբ երջանիկ մայրը զգվում և համբուրում է յուր ծնողասեր որդուն:

Նաչնցեք հիմա, թե որդիսի ճարակությամբ և մանրամասն հետազոտությամբ ուսումնասիրել է գերասանուհին յուր մյուս գերը, միևնույն պիտայում:

Այստեղ նա մի աղեղ, միամիտ, բայց զգայուն աղջիկ է, «հրեշ» Գրաստի մեկուկիշիս պես մարդու որդին է, առավել լավ է սանկ, այդ հրեշի շնչավոր առարկան է, մի փայտա, մի ինչ, որը ծանր բեռի պես բարձած է հարուստ, անկիրթ, խաբեբա հոր շնչին, և այդ հոր միակ մտածմունքն է, ինչ միջոցներով ուզում է լինի, անշատովել այդ բեռից, որը հիշվում է նրա որդին, նրա աղջիկ Մարգրիտը:

Մարգրիտը կողմնակի մեծով լսել է, որ մի քաղաքում, շրջակա տեղերի է իրեն, պատահմամբ սիրահարվել իրա վրա, բայց մի է այդ աղան, թնչ է նա, չգիտե, ու զարմանում է և կասկածում, առավել այն ժամանակ, երբ նրան հաղցնում են սիրուն նատալիայի նման, բարձր կրկնակի կոչիկներ, մի խոսքով, աղեղ Մարգրիտից շինծու զեղեցիկութուն են ստեղծում, որ նրանով իսարեն քիզեզ աղին, ինչպես ասում է ինքը՝ Մարգրիտը: Դերասանուհին զգացել է այդ ամեն իրողությունը, նա երկու-երեք շաբաթ առաջ օրերով և ժամերով մտածել է Մարգրիտի ամեն զգացողություն ու գրություն մասին և ինքը զգացել է միևնույնը. նա աղբյուր է Մարգրիտի կյանքով, մտածել է նրա մտքերով և այդ ամենը միմյանց վրա նրա սրտի մեջ՝ բարդվելով՝ գոյացրել է մի ծածկված հրաբուխ, որ հանկարծ մայրքում է բեմի վրա և գուր և թողնում նրա կուրծքից հանգիստականների առաջ, Մարգրիտը անիծելով յուր ծնված ժամը, յուր սարսափելի ազդեցությունը, լաց է լինում . . . և գերասանուհու աչքերից կաթիլ-կաթիլ թափվում են շատ տարիներով գուցե պահված արտասուքները:

Միևնույն հեղինակի Պեպո անվանված պիեսայում Քեթևան Արամյանը ցույց է առնում մեկ մի ուրիշ շրջանի կին, ուրիշ մայր, ուրիշ մարդ: Այդ պիեսայի բնարանը հեղինակը վերցրել է Թիֆլիսի ստորին գասակարգի շրջանից, այն շրջանից, որտեղ մայրը սիրում է յուր որդուն իբրև սույունը յուր ևագերին, որտեղ մայրը աղբյուր է շնչում. է յուր որդու կյանքով և օրի համար այդ զգացմունքից գուրս չկա ուրիշ նպատակ, ուրիշ մտածմունք: Այդպիսի մայր է պիեսայի հերոս Պեպոյի մայրը՝ Շուշանը: Սա ունի երկու որդի միայն՝ մեծն է ևկնորս Պեպոն, փոքրը՝ Նշանված օրիորդ Կեկելը:

Զգայուն գերասանուհին տարիներով հաղակցել է յուր տխուր թափառական կյանքում այդպիսի ընտանիքների հետ: Նա զննել է ամեն բան, ուսումնասիրել է ամեն մեկ քայլն այդ ընտանիքի, նրան հայտնի է նրա միջի անդամների իրարու հետ ունեցած հարաբերությունները, նա յուրացրել է նրանց կյանքի հայացքները, նրանց մտածելու, նիստ ու կացի, խոսալու եղանակը, անգամ հագուստի մանրամասն մեները:

Այդպես ամփոփված ինքն յուր մեջ, յուր մեացնելու գերի բնարանի հոգով մեջ, նա ազդում է հասարակության վրա յուր ինքնուրույն, բնական ազդու խաղովը, նա ստիպում է այդ հասարակության տխրել, հառաչել և լաց լինել յուր Եսե ու մութ բախտի վրա: Շուշանի գերը Քեթևան

Արամյանից հետո խաղացել են և ուրիշները. այսինքն՝ կատարել են շատ լավ իրենց գերերը, բայց նրանց խաղը հզել է նմանութուն և ոչ թե իսկութուն: Հանդիսականը բավականացել է գերասանուհու խաղով, բայց չէ հափտակվել: Այն, Շուշուն-Արամյանը հափշտակում էր, սրովհետև նա բեմ դուրս գալու պես, արդեն սկսում էր աղբիւլ այն կյանքով, ինչ կյանք՝ որ պիտի ներկայացներ: Նրա արտասանած երևելի խոսքերը եզրահերթ պատուի ու քեզ գեներ տանե, Արուսիկա, երբ պարտաժուռ է վաշխառու հարուստ քաղաքացուն, նրա աղոթքը երբորդ գործողության սկզբում, նրա աննման թե՛ հառաչանքը, որով, այդ մի վանկով, մեկ միջարկութունով՝ միայն արասհայտում է գերասանուհին խեղճ, օխոսի որբեայրի կնոջ լավ թե վատ անցկացրած ու դժվար, տառապանքով լի, անմխիթար ներկան. այդպիսի ստեղծագործության ընդունակ են միայն հազվագյուտ տաղանդները:

Մենք հիշում ենք տեղական դրամաքների մեջ խաղացած գերերից միայն այս երկու ղլխավորները, մեկ հողմը թռչնելով մյուսները, ինչպես Լիլի մեկ զոն պիեսայի մեջ Բարբարեի, հերոս Միքայելի մոր գերը, Խառորենակիև-խառորմակի մեջ Խորամանկ պառավ կնոջ՝ ծերունի Օսեփի զոքանչի գերը, Տեր-Գրիգորյանի Հարս և սկեսուր պատկերի մեջ կովասեր սկեսուրի գերը, և այլն, և այլն, որոնց մեջ գերասանուհին ցույց էր տալիս մեծ ընդունակութուն և բեմական հազվագյուտ ստեղծագործութուն:

Թարգմանական ուսերտուարից Արամյանի կատարած գերերից դուրսավորներն են մարքիզուհու գերը՝ Սպանացի ազնվականի մեջ, Քուզր խաղացողի կյանքը դրամայում՝ պանդոկապետի կնոջ գերը, Սեր և Ուխտապաշարմուքը կոմեդիայում՝ քանաստեղծուհու գերը և Օրելլոյի մեջ Էմիլիայի գերը:

Չնայելով հիշյալ գերերի ծայրագույն հակառակ ընտելություններին, գերասանուհին ըմբռնել էր յուրաքանչյուրի իսկական բնավորութունը, զգացմունքները, ձգտումները և բնական շարժվածքները:

Մարքիզուհու գերի մեջ, օրինակ, նա ղլխից մինչև ոտ սնուպաշտ, ինքնահամբան և անբարոյական պայտատականի կնոջն էր ձևացնում, այն կանանցից մեկին, որոնք անհրաժեշտ էին տաան և վեցերորդ դարից սկսած բոլոր եվրոպացոյց՝ անբարոյականության մեջ խեղդված պայտատականների շրջանում, և որոնք դուրս եկած լինելով ստորին շրջանից, աշխատում են նմանիլ բուն արիստոկրատներին, աղբիւլ, զարդարվիլ նրանց նման և միշտ ծաղրելու առարկա են դառնել: Աննման էր հանգուցյալն այդ գերում՝ նաև այն ժամանակ, երբ մտնելով Դոն Մեզարի բանտը, ուր մեկ քանի բռպեաներից հետո պիտի կատարվեր սրբազնացած օրենքի հիման վրա մի ողորմելի թափառական ուղնվականի մահովճիւղը: Նա հարցնում է անտարբեր ձեռով յուր նման սնտոի մարքիզ ամուսնուն:

— Այս որտեղ ենք, վանք՞ում ենք... և այլն:



Փրիկան Արամյան





Պեղ-բոյ Զճէկունը Պեղ-բոյի գործում

Քուղբ խաղացողի կյանքի մեջ պանդոկապետի, որի համար ոչինչ արդելիս միջոց չկա փող վառատակելու համար, որը զանգվելով մեծ ճանապարհի վրա, աշխատում է ամեն մեկ ճանապարհորդից շահվել ինչքան կարելի է շատ, և որի կարծիքով աղքատին մի կտոր հաց տալը կատարյալ անբարոյականություն է, նույնիսկ եթե այդ թշվառը սովից մեռնելիս իննի, այդպիսի պանդոկապետի կինը, որը ամեն բանում նմանվում է յուր մարդուն և վարվում է նրա ցանկության և բնավորության համեմատ, այդտեղ ևս դերասանուհին, ցույց տալով հանդիսականներին կին մարդու այն կողմը, որը միշտ և ամեն կարգի կնոջ մեջ բնությունը պահպանել է նրան զանազանելու խոտախիրտ այր մարդուց, արտահայտեց սրտաշարժ և իսկական եղելություն, որին ընդունակ է միայն կինը:

Պանդոկում շատ հյուրեր կան, բոլոր նստաբանները համարյա բռնած են: Մտնում է տարաբախտ մարդասպան Քուղբ խաղացող Ժորժը, նրա մտնելուն պես բոլոր հյուրերը սարսափում են և թողնում պանդոկը, ինչու համար և կատաղում է պանդոկապետը: Հարձակվում է Ժորժի վրա և պահանջում է, որ դուրս գնա պանդոկից: Ժորժը փնթփնթալով քթի տակ և հանդիմանելով անզուրկ պանդոկապետին, կամենում է դուրս գնալ, բայց սովից ուժ չի մնացել նրա մեջ, նա հասալում է, թե բաժնոջը որը անտառում պատելով անոթի փորով, հոգնել է և վերջապես քաղցած է: Քարացած սրտի տեր պանդոկապետի համար քաղցածությունը ոչինչ նշանակություն չունի, նրա համար մի բան պարզ է, որ քաղցած մարդը փող պիտի ունենա յուր կերածի փոխարենը վճարելու համար:

Ահա այդտեղ, այդպիսի դեպքում, այդ խոտախիրտ մարդու կինը ցույց է տալիս յուր կանացի սրտաշարժ զղացողությունը և համարձակ դիմում է նրան ասելով.

— Այ մարդ, դա քաղցած է, տանք դրան մի կտոր հաց և մի բաժակ ջուր...

Ո՞վ գաղանարարո պանդոկապետը համաձայնում է կնոջ հետ, թեև բարկանում է.

Այդ ինքնըստինքյան հասարակ խոսքերը կարելի է և կարող է արտասանել շատ բնական ձևով ամեն մեկ դերասանուհի բեմի վրա, բայց հաճառացած եմ, որ շատ քիչ դերասանուհի կկարողանա յուր շարժվածքով, երեսի արձանադրությունով և առանձին տեսակ խզակի ձայնով հայտնել այն զգացմունքը, որ զգում է մարդ այդպիսի ծանր բոլորներին:

Դառնանք դեպի բանաստեղծուհին Սեր և մոխրապաշարմունքի մեջ, Այդ հիմար, պառաված, քաղցած, ինչպես ասում են մեզանում, երեսունութ տարեկան խոզ և ինքնահավան, ոչ ոքի չհավանող օրիորդը, որի համար բանաստեղծությունն, բանաստեղծ, — ինչպես պատմում է նա Մյուլի-վանին, Լոնդոնի երեխի դերասանին, հոգարտ արխտոսիքառ յորդի տանը, Եղինեվանոս, Եղալալա և սրանց պես մարդկանց ներկայությունը — աշխարհիս երեսին բնավ գոյություն չունին, Քեթևան Արամյանցը, որ յուր կյանքում ոչ մի անգլիացու և ոչ էլ այդ տեսակ եվրոպացի կին տեսած կար, այնու-

ամենայնիմ կարողացաւ ըմբռնել այլանդակ օրիորդի բնավորությանը միայն յուր տաղանդի շնորհիմ:

Մնում է մեզ հիշել, հանդգնելով ձեռնամուխ լինելու բանաստեղծների բանաստեղծի՝ Նսիմ Շեքսպիրի ստեղծած գաղափարներից մեկին, էմիլիայի (Յագոյի կնոջ) գերը Օթելլո ողբերգութեան մեջ:

Այն, Քեթևան Արամյանը սովորեց և խաղաց էմիլիայի գերը:

Էմիլիան կին է, և ջահել կին. այդքանը հասկացել էր գերաստունին. նա սիրում է յուր մարդուն, յուր հրեշ մարդուն (չգիտե՞նաւով նրա հրեշտությանը), որովհետեւ այդպէս է հրամայում քրիստոնեական և ափանդական օրհնքը: Բայց թե՛ն նա սիրում է յուր ամուսնուն, միեւնոյն ժամանակ պաշտում է և աննման ու գեղեցիկ, բարեսիրտ Դեզդեմոնային:

Դերասանուհին հանձն է տուել կատարելու այդ գերը, երբ սեբաղործ Յագոն վճռել է արդեն յուր դժոխային «Je tiens l'idée.» մտադրութեանը, անմեղ Օթելլոյին կործանելու համար: Այդ այն տեսարանում է, երբ միամիտ Դեզդեմոնան, լսելով խեղճ, զրպարտված ջահել Կասսիոյի խնդիրքը, վայր է դրում ձեռքից յուր թաշկինակը, որը և պատահամբ գտնում է էմիլիան: Յագոն ուզում է այդ թաշկինակը: Էմիլիան չի կարող հակառակփել յուր մարդու կամքին և չհանձնել նրան մի այնպիսի աննշան բան, որպիսին է մի թաշկինակ, և նա կատարեց ըստ արժանիւնյն:

* * *

Քեթևան Արամյանը զգայուն բնավորութեան տեր աղջիկ էր, ինչպէս տաղանք մենք. նա մնացել էր որր, ութ թե ինը տարեկան հասակում և այդ հասակից նա արդեն ծանոթացել էր կյանքի գաղտնութեան բոլոր տեսակների հետ: Նա զգացել էր իրեն սոված մանկական հասակում, նա լսել էր, որ յուր ծնողները մի ժամանակ ունեւոր մարդիկ են եղել (ինչպէս հետո զգայուն հասակում պատմել էին նրան), նա զգացել էր, որ նրա եղբայր Առաքելը մի խեղճ, թույլ բնավորութեան տեր գյուղացի էր և իր կնոջն ստրուկ մի մարդ, որի համար երեխան, յուր որբիկ քույրը, ծանրութեան էր, և որից ազատվելու համար բերում է նրան ու ձգում է Թիֆլիսի բնականիքների շրջանը և այնուհետեւ մոռանում է համարյա թե քույր ունի աշխարհիս երեսին: Այդտեղ նա օրեցօր զարգանալու հետ միասին, սկսում է թափառել մի բնականական շրջանից մյուսը, երկու հայր տներ փոխելուց հետո, ընկնում է պատահամբ երբորդ գերդաստան, ուստ աստիճանավորի գերդաստան, որտեղ նա, յուր մատաղ հասակում անձանոթ մարդկանց շրջանում, սկսում է սաստիկ աշխատել. մեկ խոտքով դառը քրտինքով և աչքերից արտասուք թափելով է ձեռք բերում այն մի կտոր հացը, առանց որի չի կարելի ապրել: Վերջապէս նա ընկնում է Կարինյանի գերդաստանը, այդտեղ տասնեակից կամ տասնէյոթ տարեկան հասակի աղջկա համար սկսվում է բացվել նոր կյանք, այդտեղ դրա հետ վարվում են զգովանքով, խնամելով. այդտեղ դա առաջին անգամ պատահում է այն երիտասարդութեան շրջանին, որից հետագա ժամանակում կազմվեց եռանդոտ և գործունէա թատրոնական խումբ: Անց այստեղ նա սկսում է մտա-

* (Տր.) Վերջումս արել եմ:

մել, հետզհետե հափշտակվիլ գանազան նոր մտքերով, որբիկ գյուղացի ազնւ-կանից առաջանում է զգայուն և մասնող որիորդ:

Անա այդ մամանակ, այս գերդաստանի մեջ գտնվում էր երիտա-սարց Սմբատ Կարինյանը. Երկու երիտասարդները գտնվելով միշտ միմ-յանց հետ կից, հարակցելով ամեն որ միմյանց հետ, պարտադրով երկուսը միասին թատրոնի գործով, մեկը թատրոնական հուշարարի զբաղմունքով, մյուսը՝ գերասանական, մտենում են միմյանց և ինքնատենքյան գո-յանում է այդ երկու երիտասարդների սերտ բարեկամութունը:

Անց են կենում տարիներ, փոխվում են հանգամանքները, թատրոնա-կան գործը սկսում է կաղել, Ս. Կարինյանը հեռանում է Թիֆլիսից Քու-թայիս, Քեթևան Արամյանը մնում է դարձյալ Թիֆլիսում անտեր, անտիրա-կան, թատրոնը չի վարձատրում նրա աշխատանքը և նա մնում է սոված, համարյա շարաթնկրով, և այնուամենայնիվ պարագում է յուր սրած ստարկայով, մինչև որ թատրոնի գործը բոլորովին դադարում է Թիֆլիսում: Նա հեռանում է Քութայիս, որտեղ և պսակվում է Ս. Կարինյանի հետ, ու-նենալով նրանից մեկ ազգիկ Ասողիկ անունով:

Այդտեղ ևս նա չի հրաժարվում յուր սրած գաղափարից՝ թատրո-նից, սկսում է մասնակցել վրաց ներկայացուցիչներին¹²⁵. Բայց երկարատե ծանր աշխատության շնորհիվ սկսում է նվազիլ ու մաշվիլ օրեցօր՝ սուր-ստփելի թորախտ ցավի ներգործության տակ: Մեռնում է այդ հիվանդու-թյունից հունիս ամսին 1878 թ. Քութայիսում, թողնելով անմոռանալի տխուր հիշատակ յուր կենդանի ընկերների սրտերի մեջ և հափտենական պարծանք հայ թատրոնի պատմության համար:

ԳԱՅԻԱՆՆ ԿԱՄ ՍԱՐԳԻՍ ՄԵԼՐԱՐՏԱՆ

Մեր թատրոնի անցյալում կան այնպիսի ինքնուրույն երևույթներ, որոնք արժանի են ուշադրության և հետազոտության. նշանավորներից մեկն է Եփայիանե գերասանուհու¹²⁶ յույս աշխարհ գալը՝ այնքան մեծ հույ-սերով և հաջողութամբ լի նորա րեմական գործի սկզբում:

Ինչպես հայտնի է, սկզբում, 1863 թվականին, երբ հայկական րեմբ արդեն անցավ Թիֆլիսի քաղաքային թատրոնը և սկսեց իր ներկայացում-ները տալ այնտեղ, այդ մամանակ խմբի մեջ կային քեե լավ գերասա-նական ուժեր, ինչպես Ամերիկյան, Սուքիասյան, Մատինյան և այլն, բայց գերասանուհիների աստիճիկ կարողութուն էր, որովհետե ամբողջ խմբի մեջ կային միակ երկու գերասանուհիներ, այն է՝ Ս. Մելիք-Նազար-յան, որի գերերը գրվում էին վրացերեն տառերով և Քեթևան Արամյան, որ հայկիվ-հազ կապում էր միմյանց հետ վանկերը հայերեն և այնպես սովորելով՝ կատարում էր իր գերը: Եվ այնուհետե, առանց այն էլ տկար գերասանական ցածրա բաժանվեցինք երկու կուսակցության, այնպես ա-սած Իզմիրյանի և Միրիմանյանի, այս վերջինիս մեջ ուր գտնվում էին ամենանշանավոր գերասանական ուժերը և որի պարագլուխն ու ղեկավարը ևս էի¹²⁷, մնացին միայն մի գերասանուհու՝ այն է հանգուցյալ Քեթևան Արամյանի հույսով: Եվ որովհետե այս վերջին կուսակցության բնաբանն էր հետևել ինքնուրույն, ուսուցանի կյանքից առած գրվածքներին և եվրո-պական ռեպերտուարին, ուստի որոշեցինք առանձին ռեպերտուար կազմել հետևյալ գործերից. Սեր և Յախապաշարմուճք, Ով որ քո բաբը չէ, Նրա

Ինչ մի ձգվե՞լ («Не в свои сани не садись») և հանգուցյալ տեր-Գրիգորյանցի պիեսաներից։

Սոֆիա Մելիք-Նազարյանը, որը համարվում էր մեր ամենաընդունակ գերասանուհին, պատկանում էր առաջին՝ Իզմիրյանի կուսակցության. մեզ Ձեռք էր հեռեացրել զանեղ նորա՝ Մելիք-Նազարյանի պես մի ուրիշ գերասանուհի, որ կարողանայինք մեր գիտավորությունները իրազորել։ Նրբ մենք, ողորմելի գերասաններս, այսպիսի ծանր մտառանջության մեջ էինք, եկավ ինձ մաս մի կին, Խարբուխի (Թիֆլիսի թաղերից մեկը) թաղից, Օսաննա անունով և հայտնեց, որ նա պատրաստ է ոգնել և մեզ ներկայացնել մեր կամեցած աղջիկ գերասանուհուն, եթե մենք կխոստանանք, որ զաղանի պահենք մեզ արած առաջարկությունը, որովհետև նորա գտած աղջիկը մի որրիկ է, որը հանձնված է նորա հովանավորությանը և նա պահում է այդ աղջկան իր մոտ և խնամք է տանում նորա մասին։—Միայն,— ազնվացրեց Օսաննան,— պետք է որ դուք մի վարձատրություն տաք, մի որոշ ամսական նշանակելով նորան։

Այդ ժամանակ ես գիմեցի պ. Նիկ. Միրիմանյանին և նա նշանակեց ամսական 25 ռ. Թե այս նորագյուտ գերասանուհուն և թե մյուս՝ Քեթևան Արամյանին, որ պատկանում էր մեր խմբին։

Հենց այդ ժամանակ մենք պատրաստած էինք Վարդան Մամիկոնյան ողբերգությունը։ Նշանակած օրը, 1863 թվականին, զարնան վերջերին¹⁸¹, երբ մենք արդեն սկսեցինք փորձերը, եկավ Օսաննան իր հետ բերելով մտառգահան, մտավորապես 15—16 տարեկան մի աղջիկ, հագնված թևե հասարակ, բայց ճաշակով։ Նա ծանոթանալով մեզ հետ, հայտնեց իր պատրաստակամությունը սկսել փորձը։

Նորան հանձնեցինք Սաթևնիկի զերը և մկրտեցինք բեմի համար Գայիանե անունով։

Փորձին նա այնքան մտածած և ուսումնասիրած էր կատարում իր զերը, որ մենք ամենքս ապշեցինք, զմայլեցինք և հիացանք նորա նուրբ խաղով։

Ներկայացման գիշերը քաղաքային թատրոնը լիքն էր հասարակության մեծ մասի վերջին գործողություն միջոցին Սաթևնիկը պատերազմի դաշտում գիսվածների մեջ փնտրում և գտնում է մերձ ի մահ հերոս Վարդանին, ընկնում է նորա վրա և արտասանում իր մոնոլոգը, ամբողջ դաշտի վրա ծննդվեց։

— Ո՞վ է, Բնշ աղջիկ է... Բնշ հիանալի արտասանություն, Բնշ շնորհալի խաղ...

Մերոսնի հեղինակ Հակոբ Կարինյանը մտավ կուլիս, արտասուքը աչքերին և փաթաթվելով վզիցս, հեծելալով առում էր։

— Օ՛, Գեորգ ջան, ինչ շնորհալի աղջիկ է, ինչ մեծ ունի, և այլն... Դորանից հետո մենք ներկայացրինք Սեր և Եսապաշաքանիք անունով մեղոգրաման, որ թարգմանել էր հանգուցյալ Բաբանյանը։

Այդ պիեսայի հերոսուհին մի հպարտ, անզլիացի հարուստ լորդի աղջիկն էր, լեյլի անունով, որ զանվելով թատրոնում և տեսնելով այնտեղ հայտնի գերասան Սյուլիվանի խաղը, սիրահարվում է նորա վրա և վճռում ամուսնանալ նորա հետ։ Պետք էր տեսնել Գայիանեն, թե Բնշ ներքուքյամբ, Բնշ զեղարվեստական ձևով կատարեց անզլիացի միջոցով զերը։

Նորանից հետո մենք վճեցինք խաղալ ուսուցչ Երենիի գրամատուրգ Օստրովսկու «Не в свои сани не садись» պիեսան՝ Թարգմանությամբ Գեորգ Տեր-Աղեքսանդրյանի, որ Թարգմանել էր Թիֆլիսի բարբառով, Ով որ քու բարը չէ, նրա հինգ մի ձգվի վերնագրով:

Այդ պիեսայում կա մի ուսուցչի որդի, Գուրիայի (Ավդոտայի) զերբ, որը և հանձնեցինք որ: Գայիանին: Գայիանեն մեծ հաջողությամբ կատարեց այդ զերբը:

Այդ ժամանակվա հարուստներից մեկը՝ Նազիրյան ազգանունով, որը ծագումով Ղազախ գավառի Շուլավեր գյուղից էր, և որը սաստիկ համակրում էր հայոց թատրոնը, հափշտակվեց Գայիանի խաղով և կամենում էր նորան ուղարկել իր հաշվով արտասահման կատարելագործվելու այդ արվեստին մեջ:

Հանկարծ յուր տարածվեց, թե Գայիանեն աղջիկ չէ և թե նա մի շքավոր երիտասարդ է, որ սովորում է տեղական քաղաքային ուսումնարաններից մեկում:

Ինչպես, մտածեցի ես, այդ շնորհայի աղջիկը, որ այնպես նուրբ կանացի ճաշակով հազնված է և իր ժամանակին միշտ ներկա է գտնվում փորձերին մյուս գերասանուհիների հետ և որը ընդունված է իմ գերդաստանում իբրև օրիորդ (փորձերը այդ ժամանակ անում էինք իմ ընտելաբանում), մթթե կարող է կեղծել միևնույն այդ աստիճան: Սո չէի հավատում: և դուրս եկավ, որ նա կեղծել էր: Եվ կեղծել էր իր շքավորութունից դժբաղված: Սո չչմած իմ ապավորության տակ, ընկա դեռ ու զեն հարց ու փորձի, անգամ խնդրեցի իմ ուսուցչ Բանտիճի մի կնոջ՝ անցնել կուլիսների ետեք և ինձ հայանել իսկությունը: Վերջապես ճշմարտությունը երևան եկավ և ես համոզվեցի, որ Գայիանեն մի ծաղայալ երիտասարդ է, որը մոտ երկու տարի է մեզ ամենօրյա խաբում էր:

Ամենից շատ վրդովվեց իմ խեղճ ընկեր Ամերիկյանը, որը աղշած հարցնում էր, մթթե կարելի է, որ մի երեխա տղա այդպես ներությամբ կատարե կանացի զերբերը, և, զլխավորը, միշտ շփվելով մեզ հետ, ամենօրյա սոսաջ մեանար մի աղջիկ, որը հետամուտ է գերասանական արհեստին և այնքան մեծ նույսեր է խոստանում ապագայի վերաբերմամբ:

Բանից դուրս եկավ, որ դա Ղազախ գավառի մի խեղճ գյուղացու տղա է, որ գալով Թիֆլիս, մտել էր քաղաքային ուսումնարան և կամենալով մեռք բերել իր ուսման վճարը, համաձայնել էր իրեն աղջիկ մեացնել և այդ միջոցով դուրս կորել թատրոնից ամսական 25 ռ., որից բաժին հանելով Օսանային, Մաքսիմով վճարում էր յուր ուսման վարձը: Այնուհետև Գայիանեն Մաքս հասարակության համար իբրև առասպել, իբրև մի էակ, որ զբաղվեց Թիֆլիսիսների իր բնորոշ քանքարով և ստիթների ավեց հայ հասարակությանը սիրելու հայ թատրոնը և երևան հանելու նորանից հետո գերասանուհիների մի ամբողջ շրջան, որով հայկական բեմը ներկայումս պարծենում է:

Գայիանի արժանավորությունը զլխավորապես կայանում է նորանում, որ նա սիրեց հայ թատրոնական գործը և անձնատուր եղավ նորան իր ամբողջ էությամբ: Տղա Սարգիս Մեհրաբյանից նա ստեղծեց մի որոշ կանացի տիպ՝ կանացիության բոլոր հատկություններով:

(Նրա քառակնից տարվա զործունեության ասորիվ)

Տեր-Դավթյանի տաղանդի հարգողների մի փոքրիկ շրջան զննել է զեկամեքերի 17-ին տոնել նրա քառակնից տարվա զերաւասանական զործունեութան տարեգրաքը, որ լրացել է ներկա 1897թ. մայիսին¹⁰³,

Պետք է ասել, որ հայ բնմը 1863 թվականից մինչև որս, բացի հանդուցյալ կոմիկ գերասան Ստեփաննոս Մատինյանից, չէ ունեցել այսպես անվանված կոմիկ-բրիւլյան* գերակատար, թեև եղել են և կան ներկայումս ինքնուրույն կոմիկ գերասաններ:

Այդ պատճառով անա և ես, համակրելով վերոնշյալ փոքրիկ շրջանի նախաձեռնությունը, պարտք եմ համարում առաջ հայ հասարակության այդ տաղանդավոր գերասանի կարճատև կենսագրությունը:

Դեռք Տեր-Դավթյանը ծնվել է Թիֆլիսի Հովարար անվանված թաղում, 1850թ. օգոստոսի 25-ին: Նրա հայրը ս. Մինաս եկեղեցւոյ միաբան Տեր-Ջաքար քահանայն էր:

Դեռքի ծնվելուց երկու ամիս առաջ Տեր-Ջաքարը վախճանվել է, թողնելով անօգնական յուր ամուսին Վարդիթերին և յուր զավակներին: Երբ Դեռքը՝ յոթ տարեկան է դառնում, մայրը առիւթ է նրան ուսումի ս. Մինաս եկեղեցւոյ ծխական ուսումնարանը, ուր մի քանի ամիս մնալուց հետո Դեռքը տեղափոխվում է Ներսիսյանի հոգևոր դպրոցը: Սակայն այնտեղ որդեգիր չընդունվելով, նա համաձայն յուր մոր ցանկության, սկսում է դպրություն անել ա. Մինաս եկեղեցւում, որպեսզի վերջը քահանա ևնանդրդի յուր հոր ծխի վրա: Մի կարճ ժամանակ դպրություն անելուց հետո, թողնում է քահանա լինելու ցանկությունը և մտնում է մի վաճառականի մոտ, որպեսզի կարողանա այդ միջոցով մի ապրուստ հայթայթել թե յուր որբեայրի մոր (ներկայումս ողջ և առողջ է յուր մոտհաւր յուր տարեկան հասակում), թե յուր փոքրիկ քույրերի համար:

Բախտի բերմունքով այն վաճառականը, որի մոտ մտնում է Դեռքը, լինում է Սահակ Աղիբեզ Մելիքյան անունով մի երիտասարդ, որ այդ ժամանակ նվիրված է լինում նորակազմ հայ թատրոնական խմբի զործունեութանը, որի մասին ես հիշած ունեմ իմ թատրոնական հիշողություններիս մեջ:

1872 թ. այդ հայ գերասանական ընկերության ամենաեռանդուն զործունեութան միջոցին, Սահակը, նկատելով յուր աշակերտի մեջ սեր զեպի թատրոնական ներկայացումները, բերում էր Դեռքին փորձերի ժամանակ մեզ մոտ և մեծ հաճանք էինք նրան փոքրիկ գերեր:

Մի անգամ մեր պատրաստում էինք Հազար թումանոց կարա զոգելի ներկայացումն և պակասում էր մեզ Սարուխան ծառայի գերակատարը, այն գերը, որ ստեղծել էր հանդուցյալ Ստեփաննոս Մատինյանը, Դեռքը վստահացաւ խնդրել՝ հաճանել իրեն այդ գերը:

Դերը պատասխանատու էր, զեր խնդրողը մի անփորձ երիտասարդ, իսկ Հազար թումանոց կարամ մեր այն ժամանակվա հայ թատրոնական թեմի ազգատիկ սեպերատուարի համար նշանավոր, ժողովրդական կյանքից

* (Թբ.) Փայլուն, անխառն, զուտ կոմիկ:



Գեփորց Զճէկյան (Նստած), Գեփորց Տէր-Գալթյան





Մարենիկ Ձմեկյանը Էփեմիայի դերում

տասն մի ֆարս-վոյեյի էր, որի մեջ դուքս էր բերված նահապետական, ամենքին ծանոթ բազկալ Սարուխանի տիպը, որ ապրում էր միայն բազկա ծախելով բաց երկնքի տակ, թե ամառը արևի կիզիչ ճառագայթներն տակ, թե ձյուն-ձմեռվա ցուրտ օրերում:

Փորձը հաջողվեց և Տեր-Դավթյանը հաջողությամբ փոխարինեց Մասինյանին:

Վարժելով և հաշվեղիով հեղհեղ տեղական պիեսների մեջ, ինչպես Պեպոյի մեջ Գիջոյի, էլի մեկ զոհի՝ Սարգսի, եսթաբլայի՝ Իսայու, Յամղամ օջախի՝ Գիթ Մոզու, Ամուսինների՝ Մաստակյանի, Եինոյի Յենվիլու՝ Դասպարի և այլ գերերում, նա անցավ թարգմանական սեպերաուարին, որի մեջ նրա կատարած գերերն են, ուստական պիեսներից՝ Սեվադուշինի (Հոգվով աղքատներ), Շարիխի (Դիմակահամգես), Մուշալինի (եկեքից պատուհաս), եվրոպական պիեսներից՝ Հանսի (Կախարդված պրինց), Ժոզեֆինի (Կարդինալ Ռիշելիս), Սկապենի, Ջոանարելի (Ակամա բժիշկ), Օրգոնի՝ Մուլիեռի կոմեդիաներում, ծագածովի (Արքա Ար), գերեզմանափորի (Համլետ) և արիչ շատ պիեսների մեջ, որոնց մի առ մի թվելը ավելորդ եմ համարում: Գեորգը հանեց միենույն հոշակը, ինչ որ տեղական պիեսներում:

Ինչպես շատերին, նմանապես և Գեորգ Տեր-Դավթյանին հայ թատրոնական բեմը չի վարձատրել այնպես, որ նա կարողանա յուր քսանեհինգ տարվա անխոնջ աշխատությանց փոխարեն հուսալ, ծերության հասակում տեղափոխ ապրել:

Ահա թե ինչու համար, ողջունելով Գեորգ Տեր-Դավթյանի տաղանդին համակրողների ձեռնարկությունը, ի սրտե կցանկանայի, որ հայ հասարակությունը լրջորեն վերաբերվեր զեպի այդ տոնակատարությունը, քի խրախույս ուրիշ մշակ գերասանների:

Շնորհավորական խոսք՝ ուղղված հորեյար Գեվորգ Տեր-Դավթյանին՝
Յրա քառասնամյա գործունեության առթիվ

Սիրելի ընկեր Գեորգ:

Առանձին հաճույքով ընդունեցի Քո հորեյանը կազմակերպող հանձնաժողովից ինձ առաջարկած պատվավոր նախագահի կոչումը: Երբությանը և տկարությունս հնարավորություն չեն տալիս ինձ անձամբ մասնակցելու այս օրվա տոնախմբությանդ, բայց թույլ տուր գոնե երկատյուզ տարահայտել իմ զգացմունքներս:

Ես, կարծեմ, վերջինն եմ նրանցից, որոնք հիսուն տարի սրանից առաջ երազում էին տեսնել հայ բեմը ուժեղացած և հաստատ հիմքերի վրա դրած: Երազում էին և ամեն ջանք գործ դնում այդ երազն իրականացնելու:

Ես բախտավոր եմ, որ այսօր տեսնում եմ մշտական հայ բեմ, տեսնում եմ թատրոնը լի հասարակությամբ, տեսնում եմ հայ գերասանին զնախաղած այդ հասարակությունից և անպայման հավատում եմ, որ մեր մայրենի բեմը կլիճի մնայուն և օրեցօր կառաչալիմ:

Դու, սիրելի Գեորգ, սկսեցի բեմին ծառայել հայ թատրոնի գոյության ամենածանր և աննախանձելի ժամանակները: Միայն սերն էր զեպի

գործը, որով տարվում էի բոլ, և այդ Բո առաջագիմնու գլխավոր գրավականներէց մինն էր:

Շնորհավորում եմ, սիրելի Գևորգ, Բո բեմական գործունեութեան քառասունամյակը, մաղթում եմ Բեզ երկար տարիներ պահպանել առողջութեանդ և եռանդդ, որ, շարունակելով ծառայել հայ բեմին, Բոլ արժանատի ավելին տեսնել, քան ես, ուրախանալ և մխիթարվել, զգալով, որ մեր ջանքերը զուր չեն կորել, այլ թողել են խորին և առողջ արժատներ: Կեցցես, Գևորգ, երկար տարիներ, կեցցե՛ մայրենի բեմը, որի խոշոր ներկայացուցիչներէց մեկն ևս եղել¹⁸³:

ԿԱՐԱՊԵՏ ՄԱՏԻՆՅԱՆ

Հինգշաբթի ներկա ապրիլի 11-ին, բազմանգամ ընտանիք թողնելով, մեռավ մի անձնավորութեան, որ շարաքախտ հայ թատրոնական խմբի հուշարարի տիպոսն էր կրում:

Մեռավ քառասուն և վեց տարեկան հասակում:

Թիֆլիսի հայ թատրոնի ազգատիկ բեմի պատմութեան մեջ հանդուցյալ Կարապետ Մատինյանը երրորդ և ամենաերկար աշխատող հուշարարն է եղել:

1879 թ. սկսած Կարապետ Մատինյանը, չափազանց սիրելով հայ թատրոնը, յուր բոլոր էութեանով նվիրվեց նրա բեմին, հուշարարական ամենածանր արհեստին, չինայելով թե՛ առողջութեան և թե՛ ժամանակի:

Այդ տաժանակիր աշխատանքի ծանրութեանը հասկանալու համար պետք է շատ մոտիկ լինել հայ թատրոնական բեմի գործունեութեանը:

Ուրիշ ազգերի բեմերի և հայ թատրոնի բեմի հուշարարների գործունեութեան մեջ անագին տարբերութեան կա:

Ուրիշ բեմերի հուշարարութեանը մի պնդումն է, որի աշխատութեանը շատ սահմանափակ է. նա կատարում է իր գերը, ուշադրութեան դարձնելով դերասանի դեր գիտենալու կամ չգիտենալու վրա, այնինչ բազմաշարժար հայ թատրոնի կրկնապատիկ բազմաշարժար հուշարարը հետևում է հայ դերասանին թե՛ փորձերի ժամանակ և թե՛ ներկայացման օրը, նրա գերի թե՛ արտահայտութեանը, թե՛ դերասանի սովոր խաղի ձևին՝ բացը բառի ետևից հասցնելով ծուլ, գերը չիմացող և չսովորող դերասաններին, ամեն մեկի գերն ամբողջութեամբ սովորելով, չարձարվելով, տանջվելով, մինչև շնչասպառ լինելը փակված հուշարարի խոնավ փոքրիկ որդում:

Ահա ինչ տանջանքի մեջ է եղել հանդուցյալ, խեղճ Կարապետ Մատինյանը տասնութ տարի շարունակ, որպես հուշարար, և անա ինչու՞ պետք է փնտրել և դանել խեղճի առողջութեան խանգարումը, որի հետևանքն է նրա տարածած մահը:

Անցկացրեց յուր երիտասարդութեան օրերը՝ սովորելով դերասանների գերերը, պարզերես դուրս բերելով նրանց դերակատարութեան մեջ...

Սովոր դերասանը, հաջող վերջացնելուց հետո յուր գերը, ծափահարութեան և եկեցյենների՝ հրապուրանքով հեռանում էր բեմից ինքնագոհ, դափնյա պսակը գլխին, խեղճ հուշարար Մատինյանը հոգնածութեանից շնչասպառ կուրս գալով յուր որջից, ընկնում էր անզոր, ոտաջին պատահած աթոռի վրա, մինչև որ խելքը գլուխը ժողովեր:

եմ մեռաւ այդ անձնավորութիւնը, հայկական թատրոնի այդ ան-
փոխարինելի մշակը, շրջապատման վեց մատաղահաս երեխաներով և երի-
տասարդ տղերով, ամենաշքաւոր դրութեան մէջ, առանց մի որեւիցե հույ-
սի, առանց որեւիցե զբաղման միջոցի:

Թշվառ հակառակորդ հայ թատրոնի ընդհանր մշակ գործիչներէ համար:
Ամերիկայի տղանց իրան՝ չգիմանալով չքավորութեան: Միտացանք
մեռաւ նույնպէս չքավորութեան մէջ՝ թոքախտ հիվանդութիւնից: Մեռան
Մատինյանը (գերասան), Աստղիկը, Ադամյանը, Սուքիասյանը և այլն, և
այլն, բոլորը հիվանդութիւնից, բոլորը չքավորութեան մէջ: Այդ քիչ է...
Թշվառ Սուքիասյանի գիտէր տանից դուրս բերելու համար բազմաշաճ Բաք-
վում հազիվ թէ երկու-երեք մարդ գտնուեցան, որ գիտէր տանն և հոգին
հանձնեն:

O tempora, o mores!!*

Մոռացութեան տանք անցյալը և կանգ առնենք դո՛ւրս այս ներկա
վշտալի հանգամանքի վրա և խեղճ Մատինյանի գիտէի չուրջը մի փոքր
քաղենք մեր մեղքը:

Ահա թէ ինչպէս:

Մեզ ամենքիս քաջ հայտնի է, որ ուրիշները չեն ուզեցաւ և չեն կա-
մեցաւ հասկանալ, որ հայ թատրոնի մշակի մահից հետո պետք է ձեռք
մեկնել նրա որդացած ընտանիքին, միջոց տալ նրանց կերակրվելու և ու-
սանելու: Առտի թող այդ մասին մտածե հայ գերասանական խումբը:

Նախ, հանգուցյալի թաղումից հետո պետք է խոկույն ներկա ամբողջ
հայ գերասանական խմբի ուժերով մի փառավոր ներկայացումն տալ և
նրանից դուրսացած զուտ արդշունքը հանձնել տառապալալ տղի Սոփիային,
որ նա կարողանա շուտ առնել փոքր ինչ, և հետո, պետք է մի սրբազան
պարտավորութիւն գնել Թիֆլիսի հայ գերասանների վրա, որ ինչ խմբի
և ինչ մարդկանց ձեռքին հանձնվի հայ թատրոնական ներկայացումների
գեղը, ամեն տարի որոշել մի ներկայացում ի նպաստ վաղաժամ մեռած
կարապետ Մատինյանի ընտանիքի:

Այդ կէտին գերասանների կողմից թե՛ պարտաճանաչութեան զգաց-
մունք և թե՛ խրախուսանք հայ թատրոնի մյուս մշակների համար:

ԴԱՐՁՅԱԼ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ ՄԱՏԻՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայ գերասանական ընկերութիւնը զգաց յուր պարտքը. նա դուժար-
ովից և վճառք տալ մի քանի ներկայացում հոգուտ որբ, անտեր ու անզ-
ուական մատաղահաս երեխաների և նրանց տարաբախտ մոր:

Դիտե՛ք, ընկերացող, որ եթէ ողորմելի կարապետ Մատինյանի մահից
մի քանի օր առաջ, նրա մեծ տղային շարձակէին գիթազիտից ուսման
վճարը չհատուցանելու համար, գուցե խեղճ հոր անտունելի ֆիզիկական ցա-
վի վրա չափելանար մի ուրիշ բարոյական տանջանք: Երեւակայեցե՛ք այն
հուսահատութիւնը, որ զգացել է այդ բազմաշարժար ընտանիքի տեր
մարդը, երբ տասն և ութ տարի հայ բեմի հուշարարի տաժանակիր աշխա-
տանքը կրկուց հետո, տեսնում է, որ յուր երեխային հետ են դարձրել
ուսումնաբանից...

* (Հատ.) «Մի՛ վաճառակներ, մի՛ բարձեք» (Յիցերոնի խոսքը):

Հասկացե՛ք ողորմելի հիվանդ ծնողի անել գրությունը, Ի՞նչ էք կարծում, այդ հուսահատ գրությունը չԵ՛ք փութացրել հեղ մարդու մահը:

Նորերումս Օգեսայում մի լրագրի թղթակից խելագարվում է, միամբողջ գերդաստան թողնելով առանց մի որևիցե միջոցի, Հրազդանի բնակչությանը ազատելու խնամքը թողնելով, հասարակության ուշադրությունը հրափրեցնել նրա համար աշխատող մշակի թշվառության վրա: Եվ մեկ ամսվա միջոցում տասը հազար ուսույլի հանգանակվեց Ռուսաստանի ամեն մի ծայրից և այդպիսով հասարակությունն ապահովացրեց տառապյալ խելագարի ընտանիքը:

ՄԲԲԵ մենք ընդունակ չենք ձեռք կարկասելու այդպիսի մի ծանր վիճակի մեջ դանդաղ ընտանիքի, որին կերակրողը հայ հասարակությանը երկար տարիներ ծառայելուց հետո, անտեր, անօգնական է թողնում մի գերդաստան՝ բազկացած մատաղահաս երեխաներից և հուսահատ այրիից:

Դերասանական ընկերությունը պատրաստվում է կատարել յուր պարտքը: Մնում է հասարակության, որ նա ևս կատարի յուր պարտքը, առայժմ լցնելով թատրոնի դահլիճը ներկայացման օրը:

Պետք է հուսալ, որ հայոց բարեգործական ընկերությունները ևս կօգնեն գերասանական ընկերության մատաղրությունն իրագործելու, առայժմ գոնյա ցրելով թատրոնի տոմսակները, որ կարելի լինի. մի նշանավոր դուժմոր կազմել հոգուս որդացած ընտանիքի: Մեր բարեգործական ընկերությունների բարոյական պարտքն է այդ, որովհետև հանգուցյալ Մատինյանը յուր հուշարարական պաշտոնով նպաստել է այդ ընկերությունների բարեգործական նպատակով տված շատ ներկայացումներին:

Հուսով եմ, որ տեղական բոլոր լրագրները գերասանական ընկերության գովելի մատաղրության առթիվ չեն զլանալ իրենց խրախուսանքի ձայնը ևս բարձրացնել: Դրան ևս ապաստում մի տուն լիքը որբեր:

Ս Ի Ր Ա Ն Ո Ւ Ց Ե Լ Ե Դ

Միրանուշի հետ ևս ծանոթացել եմ Պոլսում 1879 թվականին, ուր ուղարկված էի հայ «Թատրոնական կոմիտեի» կարգադրությամբ մի երիտասարդ գերասան և երկու գերասանուհի հրափրելու: Թիֆլիսի հայ թատրոնական ներկայացումների համար:

Նա այդ ժամանակ ապրում էր յուր քրոջ՝ շնորհալի գերասանուհի, վաղուց արդեն հանգուցյալ, Աստղիկի հետ, Պանկալթի անվանված թաղում: Երկու քույրերը միասին հայանի էին հայ հասարակությանը «Աստղիկներ քույրեր» անունով:

Մեծ քույրը՝ Աստղիկը, այդ ժամանակ վաշխվում էր արդեն հմուտ գերասանուհու վարկ, այնինչ Միրանուշը դեռ նոր էր երևան եկել և երկուսը միասին այդ ժամանակ ծառայում էին անտրեսպրենյոր Վարդովյանի խմբում, որ Պոլսում թյուրքերեն լեզվով առլիս էր զանազան ներկայացումներ¹⁸⁶:

Թե՛ Աստղիկը, Թե՛ Միրանուշը և Թե՛ Պոլսո Մացյալ հայ գերասանուհիք կրթված էին քառասունական թվականներից ներմուծված հին իտալական շիդայով, որի ռեպերտուարն ամբողջապես կազմված էր զանազան Թե՛ իտալական և Թե՛ ֆրանսիական մեղեդրամաներից:



Սիրանուշ 1880-ական թվականներին





Ամբիկ Զգլյան 1890-ական թվականին

Մինչև անգամ հանդուցալու Աղաժառնը, որին հրաժիրեցի Ասադիկ և Սիրանուշը քույրերի հետ Թիֆլիս, ենթարկված էր այդ մելոդրամատիկական շփուլայի ազդեցության:

Գալով Թիֆլիս, ընտելանալով հեռզնեան մեր՝ գլխավորապես սեռական ուղղություն ունեցող պիեսներին, օրեցօր առաջագիժելով, Սիրանուշը բռնեց առաջնակարգ դրամատիկական էնթենուի տեղը: Նա մասնակցում էր համարյա թե ամեն ներկայացման, որոնց մեջ նրա ամենանշանավոր գերբից մեկն էր Օֆելիայի գերը, որ Սիրանուշը կատարում էր Համլետ-Աղաժառնի հետ աննման կերպով, այնպես որ Թիֆլիսում զանված այդ ժամանակվա ռուսաց խմբի մեջ չկար այդպիսի Օֆելիայի գերակատար:

1881 թ. հետանալով Թիֆլիսից նա այնուհետև մտել էր Պոլսո մի թափառական խումբ, որ ապլիս է եղել Թուրքիայի զանազան քաղաքներում օպերետային ներկայացումներ Թուրքերեն լեզվով¹⁶⁵:

